Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒԾԱԼՈՒԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՐՄՈՒՆԸ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՅԱԿԱՆԱՑՄԱԾ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԿԵԼԻ ՀԱՂԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

मैत्रेय संघ

ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

मैत्रेय संघ

ԿԵՆԴԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ՈՒՍՄՈՒՆՔ

ԱԳՆԻ ՅՈԳԱ
ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

1930

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 1/14 : 17
ԳՄԴ 87 + 87.7
Ա 178

Հրատարակությունն իրականացրել է
Հայկական Ռերիխյան ընկերությունը

Ա 178 **Ագնի Յոգա: Անսահմանություն**. – Եր.: Զանգակ–97, 2008, – 148 էջ:

«Անսահմանությունը» Ագնի Յոգայի կամ Կենդանի էթիկայի ուսմունքի գրքերի շարքում 5–րդ գիրքն է: Այդ ուսմունքը Ռերիխների ընտանիքի և մարդկության հոգևոր Ուսուցիչների սերտ համագործակցության արդյունքն է և հանդիսանում է Արևելքի հնագույն մտքի ու արևմտյան գիտական նվաճումների սինթեզ: Գիրքը հասցեագրված է մարդու՝ Տիեզերքի հոգևոր, բարոյագիտական և գիտափիլիսոփայական խնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին:

ԳՄԴ 87 + 87.7

ISBN 978–99941–1–441–2

© Հայկական Ռերիխյան
ընկերություն, 2008 թ.
© «Զանգակ–97», 2008 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՐԻԽՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

1930

ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Մաս I

Ագնի Յոգային հաղորդակցվելիս մենք անշեղորեն սլանում ենք Անսահմանություն: Ամենաթափանց տարերքն առաջնորդում է հեռավոր աշխարհներ: Անհնար է մի գրքում արտահայտել անսահման վեհաշուքությունը: Նախապես հարկ է ձևավորել Անսահմանության գիտակցումը: Ինչպես նկրտումն է հաղթում տարածությունը, այդպես գիտակցությունը կմերձեցնի Անսահմանությանը:

Ո՛չ սարսափը, ո՛չ շփոթությունը, այլ թրթիռն է համակում լույսի ապարանքը մուտք գործող մարդուն: Արդ առանց հապաղելու, առանց ընկրկելու անսանք ձայնն արշալույսի և սլանանք դեպի Պայծառակերպության շեմը:

Հաջորդ դարպասների բանալին կարելի է ստանալ, բայց նախ անհրաժեշտ է ամրապնդվել ոգով՝ գիտակցելով Անսահմանության վեհաշուքությունը:

Շնորհում ենք «Անսահմանություն» գիրքը:

Մի՞թե խելամիտ է խոսել Անսահմանության մասին, եթե այն անհասանելի է: Բայց չէ՞ որ այն գոյություն ունի, իսկ այն, ինչ մեծ է, թեկուզև անտեսանելի, այնուամենայնիվ ստիպում է քննել դեպի այն տանող ուղիները: Այդպես և այսօր հարկավոր է քննել Անսահմանություն տանող ուղիները, քանզի այն գոյություն ունի և զարհուրելի է, եթե գիտակցված չէ: Բայց անգամ Երկրի վրա կյանքի ընթացքում կարելի է մերձեցնել ու կոփել ոգին՝ ընդունելու անհունությունը:

Նմանապես մենք շատ բան չգիտենք, բայց, այնուամենայնիվ, հաղթահարում ենք մեր չիմացությունը: Նմանապես, եթե նույնիսկ չենք ըմբռնում Անսահմանության նշանակությունը, ապա կարող ենք գիտակցել այն որպես անխուսափելի, ուստի և մեր հատուկ ուշադրությանը արժանի մի բան: Բացի այդ, ուրիշ էլ ինչո՞վ կկոփենք մեր մտքի ու գործի

համաչափելիությունը: Հիրավի, Անսահմանության հետ համեմատելով ենք իմանում մեր տրտմության ու բերկրանքի արժեքը:

Այդպես և այժմ առանձնապես անհրաժեշտ է հավասարեցնել պետությունների մտածողության տիրույթները և այդ պատճառով էլ Անսահմանության մասին հիշեցումը հատկապես նշանակալից է, երբ տարածվում են կեղծ դատողություններ:

Արդ շնորհենք ճաճանչը Անսահմանության ճառագայթների, ուր խոյանում է ոչ միայն ոգին, այլ նաև քարերը՝ զուգադրելով բարձրագույն արարումն ու ստորին մարմինը: Սակայն հավերժության պտտահողմի մեջ անկշիռ են թե՛ քարը, թե՛ ոգին, քանզի ներքաշված են միևնույն մագնիսի մեջ: Բուն իսկ «մագնիս» հասկացությունը մեծացնում է ձգողականությունը՝ հավաքելով այն հոսանքների լարման կիզակետում: Նույն այդ պտտահողմերը հաղթահարում են տարածությունը, և դուք չգիտեք, թե հատկապես որ ոլորտներից է հասել ձեզ անտրոհելի էլեկտրոնը՝ տամասի ու տերոսի միջնատարրը:

Խորհե՛ք, թե որքանով եք յուրացնում և ըմբռնում Իմ խոսքը ձեր լեզվով: Ըմբռնե՛ք նաև ձեր փոխադարձ զգացումները և բացատրե՛ք դրանք ձեր սեփական սրտի լեզվով: Ըմբռնման ու կարեկցության այդ լեզուն կբացի Անսահմանության անդրանիկ դարպասները:

1. Մարդկությունը մտահոգված է կորսված հոսանքներով, բայց Երկրի տեղաշարժն ու տիեզերական հանկարծաշրջումները բացատրում է երկրաբանական տեսանկյունից: Բայց այդ բացատրությանը հակառակ՝ ակներև փաստը բացահայտում է աշխարհին Անսահմանությունն ու հրեղեն, ստորերկրյա և վերերկրյա հոսանքների դրսևորումները: Վերերկրային ոլորտների ճառագայթները կարող են ճեղքել այդ երկրակեղևը, ուժգին մագնիսականություն հաստատել մոլորակի ցանկացած երկրամասում՝ առաջացնելով ստորերկրյա հոսանքներ:

Ձեր աստղագետները ուշադրության կենտրոնում են պահում սոսկ մոլորակների չափումները, բայց որքա՜ն ձեր էությունը կհարստացներ հրե ճառագայթների ու Անսահմանության մասին գիտությունը: Նույնիսկ աչքի ճառագայթն է արարում ու հարվածում: Եվ ժամկետը սկսում է Անսահմանությունից մոտեցնել մի նոր մոլորակ, ուստի հետևե՛ք երկրային հանկարծաշրջումներին: Սակայն մոլորակային մարմինների չափը կարևոր չէ, քանզի Անսահմանությունից ճառագվող տիեզերական ճառագայթների ինտենսիվությունը Մեր հարաբերականության և ձեր հոգեէներգիայի, ինչպես նաև ոլորտների համագործակցման շնորհիվ կարող է երկրային թագավորություն ստեղծել՝ բարձրագույն աշխարհների ոլորտներին հավասար:

2. Այնտեղ, ուր երկրաբանների համար վերջանում է երկրակեղևը, Մեզ համար այն սկսվում է: Ձեր գործողությունների էմանացիաներով տոգորված և մարդկության խավար մտածելակերպի բյուրեղներով հագեցած այդ կեղևը կայծքարից առավել կարծր է ու անդյուրաթափանց: Սակայն մտքի անխոնջ նկրտման դեպքում մեր Երկիրը սեղմող մամլակով շրջապատող այդ ամրակուռ ոլորտը կարող է անհետանալ ինչպես թեթև գոլորշի: Մի՞թե համաձուլելու ենք այդ կույտերը, երբ կարող ենք ընտրել կա՛մ Անսահմանություն ձգվող ուղին, կա՛մ էլ ստվար կույտադարսումները:

Մի՞թե գիտակցությունը այդքան դժվար է ուղղվում դեպի այն Ակունքը, որի խորքից անվերջ շիթեր են բխում: Մի՞թե այդքան ամուր են անջրպետները, երբ Ուսմունքը վկայում է, որ դյուրին է բացել ապագան քո-

ղարկող վարագույրը: Որոշեք կենսագործել այնպես, որ Մեր ներգործություններից օգտվելու ունակությունը չսահմանափակվի սոսկ դրվատումներով կամ հավաստիացումներով, բայց թող որ ասի ձեր ոգին. «Տիրակալի իմաստությունը, հեռավոր աշխարհների զորությունը, Անսահմանության հուրը և Աշխարհի Մոր աստղի շողանքը հղում են մեզ հաստատումը մեր գոյության»:

Եթե մի տարածական միտքը կարող է ժողովուրդներ ոտքի հանել, և երկրային կլիշեի վրա հուսալիորեն դրոշմվելու դեպքում այն կարող է մոլորակին արժեքավոր մի գիտություն տալ, ապա մի՞թե ժխտելու են նրանք, ովքեր բաղադրում են ավազահատիկների դարավոր իմաստությունը, որ արևը շողացել է երեկ, բայց վաղը նրա ճառագայթների հոսքը չի սպառվելու:

Ճշմարիտ, խորհուրդ եմ տալիս համակվել Անսահմանության գիտակցումով: Զորությամբ է հագեցած պրանան. ջանացեք քաղել ընծաները: Մի շնչով կարելի է հաղթահարել դարավոր աշխատանքը, բայց ժխտող մի հայացքն իսկ կարող է ջնջել դարերից մեզ հասած նախանշումը:

3. Մարդկության մեջ ապրում է Տիեզերքին բոլորովին խորթ մի հասկացություն՝ «դատարկություն» հասկացությունը: Ինչպե՞ս կարող է դատարկությամբ սահմանափակվել ձեր մոլորակի հրեղեն կառուցման էվոլյուցիայի աշխատանքը: Դժվար չէ պատկերացնել, որ նույնիսկ աննշան ձեռնարկումը ունենում է իր սաղմնային սկզբնավորումը: Ինչպե՞ս կարելի է թույլ չտալ, որ Անընդգրկելին ֆիզիկական փոփոխության պատճառ կարող է լինել: Մի՞թե կարելի է նսեմացնել երևույթը: Բարդության հասկացությունը չի ենթադրում **անընդգրկելիությունը**, բայց պատկերացրեք, որ երկրայինը վերածվում է բարձրագույնի: Վերջ չունի ձգտումը դեպի վեր: Նշանակում է՝ դուրին է պատկերացնել շարունակման երևույթը ամեն ինչում և բոլոր չափումներում: Չսահմանափակե՛ք երևույթը:

Դժվար է գիտակցել, որ տարածական կրակի թելը ձգվում է դեպի Անսահմանություն, բայց սքանչելի է միտքն այն մարդու, ով հաղորդակից է դարձել այդ անսովորությանը: Մարդկությունը նույնիսկ չի պատկերացնում մարման երևույթը, բայց դուք գիտեք, որ կրակի բռնկման ամեն մի մարումը բոցավառում է վերերկրյա ջահեր: Օգուտ է դա, թե վնաս, դուք եք որոշում, մարդի՛կ: Ինչպիսին եղավ առաքումը, այդպիսին էլ կլինի հատուցումը: Կարելի է ճառագայթալից հղումների տարափ ստեղծել, բայց կարող եք նաև մորեխներով հագեցնել տարածությունը. սա է **մտքերի ու տարածության համագործակցության օրենքը**:

Համարեք, որ միտքը արարիչ է: Ուրախությունը մարդկությանը տրված Մեր հրամանագրերի իրագործման մեկնարկի գիտակցումն է:

Երբ մենք հրաժարվենք տգիտությունից, այնժամ կհասկանանք Անսահմանության ողջ գեղեցկությունը:

4. Մարդկային գիտակցությունը կարելի է մղել անկառավարելի ու անգիտակից մտքերը կառավարելու ուղղությամբ: Բայց դժվար է տալ չափից ավելին, երբ այդքան քաոսածին մտածողություններ գոյություն ունեն: Մարդկությանը կօգնի զգացիմացության զարգացումը: Երբ զգացիմացությունը կհուշի, թե որտեղ է քաոսը, և որտեղ Անսահմանությունը, երբ այն կզատի տիեզերական երևույթը կամայական դրսևորումից, այնժամ մարդկությունը տիրապետության տակ կունենա իմացության բանալին: Գիտությունը հայտնագործել է աստղադիտակը, բայց զգացիմացության աստղադիտակը թափանցում է Անսահմանություն: Ձեր աստղադիտակը ներդրումներ ու ջանքեր է պահանջում, բայց Մեր ապարատի զգայնությունը դրսևորելով՝ թափանցում եք ամենուր:

Անգիտակից մտքերի կառավարումը Անսահմանության չափման ըմբռնում է տալիս: Սահման չունի մտքի հոսքը: Ճշմարիտ եմ ասում՝ անսահմանափակ են լուսատուներից արձակվող ճառագայթների հնարավորությունները: Լուսատուները մարտնչում են տեսանելի ու անտեսանելի ոլորտներում՝ հաստատելու համար ճշմարտությունը: Ճառագայթները կարող են ապաքինել, ճառագայթները կարող են արարել, ճառագայթները կարող են պաշտպանել ինչպես վահան, ճառագայթները կարող են ի հայտ բերել բոցը Գավաթի:

Հաճախ ձիչ եք լսում, տրտունջ. ինչն է պատճառը բորի կամ պատուհասի, ինչո՞ւ գեղեցկության երևույթը մթագնել է հեգնական ժպիտից: Խեղճ մարդկություն: Մենք համարում ենք, որ ախտերն այդ ձեր իսկ ծնունդն են: Էվոլյուցիան կարիք չունի այդքան ուշացումների: Վերելքի սանդուղքը կարիք չունի այդքան ավելորդ աստիճանների: Պետք չէ Մեր վահանին ձեր ճանաչումը, բայց անհրաժեշտ է ձեզ Մեր վահանը:

5. Խորհե՞լ եք արդյոք ապագա մոլորակների ոգու մասին: Մի՞թե հնարավոր բան է, որ ձեզանից սկսվի և ձեզ հետ միասին ավարտվի: Մի՞թե ավարտվում է ցանկացած գործընթացը: Անվերջ է աշխարհների շղթան: Այնտեղ, որտեղ քայքայվում է մի մոլորակը, մեկ ուրիշն է ծնունդ առնում: Ճշմարտությունը պայքարում է մահվան հետ, և այնտեղ, որտեղ թերահավատները ասում են Վերջ, մենք ասում ենք Սկիզբ: Դրսևորված էվոլյուցիայի ճանաչումը կհանգեցնի ճշմարտության հաղթանակի: Հաղորդ կլինե՞նք արդյոք այդ հաղթանակին: Կփակե՞նք արդյոք մեր անոթները դատարկ: Կմերժե՞նք արդյոք գիտակցու-

թյան զորության հղումները: Երբ ասում եմ՝ առատորեն օգտվեք դրսևորված ճառագայթներից, երբ ասում եմ՝ լցրեք իմացության գավաթը, երբ ասում եմ՝ զգացիմացությամբ կերտեք լավագույն արարումները, երբ ասում եմ՝ անսահման իմացության մեջ են ուժերը, նշանակում է՝ բացեք ձեր ունկը տիեզերական պտտահողմերին: Նշանակում է՝ փնտրեք ֆոխատի շողանքը: Նշանակում է՝ ըմբռնում ցուցաբերեք ոլորտների երաժշտությանը:

Մենք ձեր մոլորակի վրա ունենք հավատարմատար, որ ըմպել է փորձի գավաթը: Նա ուղարկված է ձեզ իբրև տիեզերական դրսևորումների վկա, իբրև Իմ հանձնարարությունների կրող, իբրև ապագայի մարգարե ձեզ համար: Ուստի այդքան կենսական է քավիչների հասկացությունը: Հատկապես փորձ ընդունելն է համոզիչ: Մարդկությունը հատկապես պիտի փորձ քաղի այն ապրումներից, որոնք բխում են բարձրագույն ոլորտներից և զգացվում են Երկրի վրա:

Հիրավի, ունեք բարձրը և ստորինը:

6. Անսահմանության ըմբռնումը չի կտրում մարդուն Երկրից: Նոր հնարավորությունների բացահայտումը չի կտրում մարդուն Երկրից: Այն, ինչ ասվել էր յոգերի սամիյամայի մասին, հերյուրանք չէ, այլ տիեզերական ուժերի հաստատման երևույթի գիտափորձ:

Հնդկաստանում մետաղե բաղադրիչներ ունեցող դեղամիջոցների լայն կիրառումը տիեզերական կրակի հետ շփման հետևանք է: Յոգերի գիտակցությունը շփվում է լուսատուների հետ: Կյանքի օրոք կարելի է ստանալ ոլորտների ներգործությունը: Մամլիչի դեր են խաղում մարդկանց վերաբերմունքը աշխատանքին և մտքի ուղղությունը փոփոխելու ցանկության բացակայությունը:

Մի՞թե պատգամել են Տիրակալները, որպեսզի կարճ **շրջանի** ձեր մարդկային ըմբռնումը նսեմացնի Տիեզերքի կոչումը: Ըմբռնման ընդարձակությունը կնախանշի հնարավորությունների գոտին: Բոլորը հայթայթում են կենսական սնունդ պրանայի միևնույն աղբյուրից, Տիեզերքի դրսևորված զորությունից: Միանգամայն դյուրին եք ընդունում այն, ինչի կարիքը ունեք. նույն կերպ վերաբերվեք նաև ճառագայթների հոգեկան ներգործությանը: Երբ Մեր ցուցումների համաձայն՝ ընդունեք ձեր էությամբ դարերի իմաստությունը, այնժամ դժբախտությունների պտտահողմը կփշրվի՝ զարկվելով լույսի պատնեշին: Ձեր հնարավորությունների չափը կախված է վահանի ընդունումից կամ մերժումից:

Չմերժեք տարածական կրակի այն աստիճանը, որը ճանապարհ է բացում դեպի հեռավոր աշխարհներ, նրա մեջ է ամփոփված ապագայի վահանը: Ամպերի երևույթը, պտտահողմի և անձրևի երևույթը՝

ոռոգումն է մոլորակի, սակայն տիեզերական ուժերի հաստատման հասկացությունը չի կարող դիտվել սոսկ որպես մթնոլորտային դրսևորում:

Գիշերվա նախաշեմին լույսի հոսանքներ ի հայտ չեն գալիս. վառեք ջահերը:

7. Ընդունեք ոգով «Անսահմանություն» հասկացությունը: Հաստատեք գիտակցության մեջ Անսահմանությունը: Ընդարձակ կիրառում տվեք ձեր բոլոր խոհերին: Ամենուր կիրառելի է տարածական կրակի այդ լծակը: Ողջ անսահման գիտակցության մեջ գործում է Տիրակալի ձեռքը, և դուք նույնպես նկրտում ցուցաբերեք:

Որտեղ գոյություն չունի Անսահմանության կրակը: Արդյո՞ք անվերջ բխող սիրո ակունքի մեջ «արարիչ» հասկացությունը հաստատված չէ զգացիմացությամբ: Տրված է մեզ խորհրդանիշ՝ սիրո աղբյուր: Մի՞թե հավերժության ու Տիեզերքի գործունեության մեջ ամփոփված չէ աշխատանքը անսահման: Մի՞թե զետեղված չէ մարդկությանն օգնելու Մեր ձգտման հավերժ ապրող միջուկը:

Մշտապես շարժող, մշտապես նպատակամղված, մշտապես դեպի վեր ձգտող, մշտապես դետքի կանգնած, ճշմարտությունը հաստատող, Աշխարհի Մոր հիասքանչ թելը անսահման գեղեցկության զրահ դարձրած, տգիտության խավարը խոցող մարդկության օթևանին աստղերի շողանքը նախանշող՝ այդպես ընթացեք՝ ասելով. «Աշխարհ, ցանկանում եմ ընդունել քո բոլոր ընծաները: Ցանկանում եմ լցնել նվաճումներիս գավաթը: Ցանկանում եմ, Տիրակալ, ըմպել Քո իմաստության պատգամների գավաթը»:

Թույլ տվեք Մեզ զորություն հանդես բերել, օգնության ձեռք մեկնել: **Ձգողության օրենքը** բոլորն են ընդունում: Ինչո՞ւ կյանքում չեք կիրառում այդ պարզ պայմանը: Ուրախությունը կարող է մագնիսական հոսանքով տարածությունից ուրախություն ձգել: Բայց մթին միտքը ծանր ամպերի կուտակումներ է ծնում: Մենք երաշխավորում ենք մտքի կանոնավոր ձգողությունը:

Մարդկության ընթացքը ոգեղենությանը հակառակ ուղղությամբ չի կարող արագացնել էվոլյուցիան:

8. Ողջ գոյի էվոլյուցիան անբաժանելի է յուրաքանչյուր ոգու էվոլյուցիայից՝ նման հավերժ շարժման մեջ գտնվող միևնույն պարույրի: Մեր բարձունքներին ձգտող ոգեղեն գիտակցությունը գանձեր է կուտակում և նվիրաբերում տարածությանը: Ոգեղեն գիտակցությամբ է հարստանում ձեր մոլորակը: Նյութականությունը չէ էվոլյուցիայի շարժիչը: Կուտակման անշարժությանը ձգտող նյութապաշտ գիտակցությունը ծնում

է լճացած ջրի մեջ իրեն բնորոշ մժեղների: Բայց սարսափելի է մտքի քարացածության պատճառը: Գոյություն չունի հավերժ անդորր, ուստի կանգ մի՛ առեք մի կետում. կամ տեղաշարժը կհամաձուլի ձեզ, կամ էլ կօգնեք տիեզերական հեղաշրջմանը: Ամեն բանի հիմքը պարույրն է, և անհրաժեշտ է ըմբռնել հավերժ տիեզերական կրակի էությունը:

Շատերն են զարհուրում հավերժության ըմբռնումից, բայց որքա՜ն գեղեցիկ է հավերժության գիտակցված վեհության հասկացությունը: Միայն կրակին շփված ոգուն է ծանոթ ճաճանչի ողջ գեղեցկությունը: Լուսատուներից ճառագվող ուժից զրկվող ոգին զրկվում է տիեզերական կրակի էությունից և ընդհատում ֆոհատից ծնունդ առնող հոսանքը: Հավերժության սահմանումը ապրում է սոսկ գիտակցության մեջ: Որքան ավելի լայն է գիտակցությունը, այնքան ավելի վառ է փայլում գիտակցության ճառագայթը, այնքան ավելի հնչեղ է Մեր կանչը էվոլյուցիայի գեղեցկությունը գիտակցած մարդու համար:

Ճշմարիտ, համաշխարհային մտքի մասին ասվածը հարկ է գործադրել կյանքում:

9. Հաճախ մարդիկ տարակուսում են. արդյոք ի՞նչ է գտնվում գիտակցության հետևում: Անշուշտ, սահմանափակ է «գիտակցություն» հասկացությունը մարդկանց ըմբռնմամբ: Սա տեղի է ունենում սոսկ տեսանելի աշխարհի հաստատման պատճառով: Գիտելիքը ևս սահմանափակում է, եթե չընդլայնենք տեսանելիության սահմանները: Բայց մի հայացք գցենք մարդկային գիտակցության ու իմացության սահմաններից դուրս, գտնենք տիեզերական ըմբռնման թեկուզ մի փշուր: Որքա՜ն սքանչելի է ընդարձակ մտահորիզոնը: Որքա՜ն զորեղ է տարածություն ճեղքող միտքը: Ինչպե՜ս է նոր ուղիներ բացում Անսահմանության հետ շփումը: Փնտրե՛ք այդ գանձերը, դրանք ձեր առաջընթացի երաշխիքն են: Ի՞նչ իմաստ ունի գոց դարպասների շեմը բերող գիտելիքը, դարպասներ, որոնց վրա նշան է երևում. ավելին չգիտենք: Իմացության սահմանը գերեզման է: Ուստի խորամուխ եղեք Անսահմանության մեջ: Գիտակցության սահմանը ոգու մահն է:

Ոչ թե ժողովուրդների բարքերը պետք է ուսումնասիրել, այլ գիտակցության էությունը: Երբ սովորենք զգալ Անսահմանությունից ճգվող հաղորդալարը, այնժամ մարդիկ աղոթելու փոխարեն կհրամայեն տարրերին: Ոչ թե աստված է մեր փոխարեն գործելու, այլ աշխատանքով ու հոգեէներգիայով ենք օգնելու ինքներս մեզ:

Ինչո՞ւ աշխարհում գոյություն ունի կարիքի պահերին տիեզերական ուժերին երկրպագելու սովորույթը: Ինչո՞ւ այդժամ հակում կա դեպի Անսահմանություն: Ինչո՞ւ է այդ դեպքում ընդունվում, այսպես կոչված,

գերբնական ուժերի գոյությունը: Խորհուրդ եմ տալիս արտասանելու Աշխարհի Մոր անունը ոչ որպես խորհրդանիշ, այլ որպես պարգևող զորություն: Խորհուրդ եմ տալիս դիմելու Անսահմանության Ակունքին ոչ որպես խորհրդանիշի, այլ որպես հավերժության դրսևորման, որը հավերժ գեղեցկություն է ծնում ու նյութ արարում:

10. Համաթափանց է Աշխարհի Մոր տիեզերական շունչը: Ճշմարիտ, ամեն ինչ համակված է նրանով: Կյանքը, սկսած ամենափոքր բույսից մինչև անհաշվարկելի մեծություններ, շարժվում ու շունչ է առնում այդ շնչից: Եվ ինչպե՞ս չգիտակցել Տիեզերքի շարժիչ ուժը: Ինչպե՞ս չխորհել գոյի էության շուրջ: Խորամուխ եղեք տիեզերական էներգիայի ռիթմին և հասկացե՛ք էվոլյուցիայի ռիթմը: Էվոլյուցիայի էությունն անփոփոխ է, և չափանիշը նրա Անսահմանության երևույթն է:

Վախճանի՛ց զարհուրողներ, շրջվե՛ք դեպի Աշխարհի Մոր ճաճանչը և հաստատվե՛ք էվոլյուցիայի ըմբռնման մեջ: Չկա սահման լեռներից առաքվող հղումներին: Չկա սահման հեռավոր աշխարհների երաշխավորմանը: Չկա սահման տեսանելի ու աներևույթ աշխարհների բնական հարստությանը:

Վախճանի՛ց զարհուրողներ, շրջվե՛ք դեպի չորս ծագերը և ասացե՛ք. «Անսահմանություն ենք դրսևորելու»: Երկինքն ու ընդերքն են ձեր աղբյուրները: Անսպառ են այդ աղբյուրներից բխող հոսանքները: Եթե մարդիկ ունակ լինեին հավաքել Անսահմանության հավերժ զեղվող հոսանքները, ապա, արդարև, բովանդակված կլիներ կյանքի լաբորատորիան:

Վրա է հասնում հրե դարաշրջանը, արիություն ու բանականություն գտե՛ք ընդունելու նրան: Իր պոչը կծող օձի խորհրդանիշը էվոլյուցիայի իրադարձությունների բոլորաշրջանն է: Պարույրը կիրառելի է վերընթաց ուղու նկատմամբ:

Վախճանի՛ց զարհուրողներ, հաստատվե՛ք լուսապարույրի և տիեզերական կրակի ուժի մեջ: Ասենք. «Հիասքանչ է Տիեզերքի շունչը»:

11. Ապագան իմացողները քայլում են էվոլյուցիային ընդառաջ: Էվոլյուցիայից զարհուրողները ընթանում են մահվան քայլքով: Կհարցնեն՝ ինչն է պատճառը վերելքների ու անկումների: Կտարակուսեն էվոլյուցիայի ընթացքի վերաբերյալ: Տիեզերական ալիքների գիտակցումը պարզաբանում կտա էվոլյուցիայի ընթացքին: Երբ գիտակցե՛ք, որ մոխրից անգամ կարող է չքնաղ մի ծաղիկ ծնվել, այնժամ կհասկանա՛ք, որ փլուզումը սարսափ է ներշնչում սոսկ փոքրոգի գիտակցություններին: Տիեզերական շարժումն ալիքաձև է: Պետք է ասել, որ միանգամայն հնարավոր է խուսափել խիստ ոլորապտույտ շարժման երևույթներից, որի շնորհիվ կարագանար էվոլյուցիան: Մարդկային անտարբերությու-

նը գլուխ չի հանում առաջընթացից և հաճույք է զգում սոսկ ժամանակավոր բարգավաճումից՝ չըմբռնելով այն, ինչը հետագայում հաստատվելու է որպես մեր մոլորակի կործանում:

Այսօրվա համար կառուցողներ, ըմբռնում ցուցաբերեք, որ ձեր կառուցածը հողմահար է լինելու: Որքա՜ն վիթխարի են ձեր ձեռնարկումները: Որքա՜ն ավելորդ են ձեր կողպեքները: Որքա՜ն մեծ են ձեր ծախսերը: Որքա՜ն ուսանելի է գործողությունների շղթայում մի օղակ դառնալու ձեր անկարողությունը: Բայց նայենք բարեկանոն քայլերով ընթացողներին, Անսահմանության գեղեցկությունը հաստատողներին: Ի հակադրումն տարածական ներգործությունը ժխտող փոքրոգության՝ կտեսնենք նվաճումների սրատեսություն, նկրտումների գեղեցկություն ու սխրանքի վեհություն: Ուստի ասենք. «Անսահման են տիեզերական երևույթները»:

12. Հնչել Տիեզերքին համառիթմ նշանակում է գիտակցել Անսահմանության ողջ վեհությունը: Երեք սկիզբ են հաստատվում էվոլյուցիայի շնորհիվ: Սկսե՛ք ըմբռնում հանդես բերել երաշխավորությանը: Մի՛ դրսևորեք, մի՛ դրսևորեք անտարբերություն այն Աղբյուրի նկատմամբ, որը սնում է ձեզ ու ողջ գոյը: Խորամուխ եղեք և կտեսնեք, որ մարդկության սխրակիցները սնուցել են իրենց հոգեէներգիան Անսահմանության հետ միաձուլումով: Անսահման է եղել բարձրագույն գեղեցկությանը նկրտումով ուղղված նրանց զմայլանքը: Անսահման է դրսևորված պատգամն իրագործելու նրանց սխրանքը: Ասել եմ. «Միաձուլումը տիեզերական ռիթմի հետ ողջ գոյի համադրանքը կտա տեսանելիի ու աներևույթի մեջ»:

Հերթական պաշտամունքները ցույց տվեցին համադրանքի խորհրդանիշները, սակայն խեղաթյուրելով այդ հասկացությունը՝ ժառանգեցին մեզ միայն հնագույն գաղտնաճեսերի մոլեռանդությունը:

Անհնար է կանխորոշել տիեզերական երևույթը, բայց Տիեզերքի հողմ առաջացնել կարելի է: Այնպես, ինչպես և ներգրավել տարածությունից մեր մոլորակին անհրաժեշտ տարրերը: Ինչպես երկու սայրեր են խրվում թիակների շրջանում, այդպես և կարող են բացվել թոքերի շրջանում գտնվող կենտրոնները. վերջիններս վերահսկում են պրանան: Միայն բարձրադաս ոգիներին ենք առաքում այս ճառագայթները: Նրանց համար, ովքեր չեն գիտակցել Տիեզերքի գեղեցկությունն ու ուժը, ողջ ծավալով այս փորձն անմատչելի է: Միայն զգացիմացությունն է կիրառելի այս տիեզերական փորձում: Ուստի ասացե՛ք. «Հաստատում եմ, ճշմարիտ, Անսահմանության գեղեցկությունը: Ցանկանում եմ, Տիրակա՛լ, զգալ Տիեզերքի վեհության զարկերակը»:

13. Որքա՜ն պարզ են ընդունում մարդիկ ցերեկվա ու գիշերվա ռիթմի անխախտելիությունը: Ինչո՞ւ մեր մարդկային պարբերաշրջանի հիմքում չդնենք այս նույն հասկացությունը: Մակրոկոսմն ու միկրոկոսմը անդրադարձնում են միևնույն երևույթը: Բայց ի՞նչն է պատճառը, որ մարդիկ այդպես ձգտում են հավատացնել իրենց, որ հավերժ է գիշերը, եթե շատ պարզ կերպով ցերեկ են ակնկալում: Ընդունենք անխոնջ շարժման հոսանքները: Նույնքան իմաստուն, որքան իմաստուն է Տիեզերքի երակազարկումը, կհաստատվի մեր կիրառելիության գիտակցումը: Պիտանի չեն վիշտն ու տրտմությունը: Կարող եք ընդունել Տիեզերքի ճշմարիտ կյանքը Անսահմանության լիարժեք հայեցության համար:

Պարզ եք ընդունում տարվա եղանակները ու բերք եք ակնկալում բնության ռիթմից: Հաշվարկում եք հանքավայրերը, ամբարտակներ եք կառուցում էլեկտրականություն ստանալու համար, բայց շրջվե՛ք դեպի աներևույթ ոլորտների հանքաշերտերը և շրջվե՛ք դեպի ձեր ըմբռնման սահմաններից դուրս գտնվող ստեղծագործությունը. անծայրածիր դաշտ է աշխատելու համար: Ուստի ընկալե՛ք և միացե՛ք Անսահմանության ռիթմին:

Եվ ո՞ւր կմնա գիշերը: Եվ այնտեղ, ուր դադար եք ակնկալում, սկսվում են Աշխարհի Մոր օրհներգները: Ոչ թե առավոտ կամ թե գիշեր, այլ ճաճանչը Նրա:

14. Մոլորակային կյանքի համաձայնեցվածությունը բարձրագույն ոլորտների հետ լավագույն համակցություններ կտա մարդկանց: Այդժամ կեռապատկվի մեր ուժերի ռիթմը, և բանականությունը կընդունի այդ զորությունը: Այդժամ կիրականանա իմաստունների պատգամը:

Անտեսանելի վերին ոլորտների սկիզբների զուգակցումը տեսանելի աշխարհի հետ անխզելի է: Ուստի ըմբռնե՛ք մեր կյանքի անբաժանելիությունը: Տիեզերքի շունչն անխախտ է ամեն ինչում: Մոլորակի պարբերաշրջանների երևույթը կախված է տիեզերական ալիքներից, այդ իսկ պատճառով տիեզերական հողմերի հետ ոգու կապը ժխտողները չեն ընթանում ճշմարտության ճանապարհով: Մի՞թե թույլատրելի է միայն մի էություն տեսնել ողջ գոյից: Մի՞թե թույլատրելի է տարանջատել փոքր մասնիկը մեծ ամբողջից: Կարելի՞ է արդյոք սահմաններ ուրվագծել՝ վնաս չպատճառելով զարգացմանը: Միայն խելագուրկն է սահմաններ դնում իր համար: Միայն գեղեցիկը չըմբռնողները կասեն. «Բավարարվում ենք եղածով»:

Պարզ է տիեզերական ու անսահման ուժերի հաստատումը, քանզի կենսարար ու հավերժ գործընթացը առկա է ամեն ինչում: Կայծից է բոցավառվում տիեզերական կրակը: Ճշմարիտ, ցանկության կայծից է բո-

ցավառվում իմացության ջահը: Միայն թե չխափանեք ձեր ուղին: Միայն ձգտեք, և ձեզ ողողելու է Անսահմանության ճաճանչը:

15. Անհրաժեշտ է ընտրություն կատարել մոլորության խավարի և ճշմարտության վեհության միջև: Ոգին կգտնի դարերի հաստատած ըմբռնումը: Վայել չէ ստորին աղեղով անցնելը, մեկնարկելով ստորին հարթությունից՝ կրկին վերադառնալ այդ նույն հարթություն: Այլապես ի՞նչ իմաստ կունենան էներգիայի ձեր բոլոր ծախսերը, եթե վերստին թակելու եք ստորին դարպասները: Ձեր ոգու համար չքնաղ պարտեզ պատրաստեք ոչ թե իրեն սպառած անապատում, այլ նվաճումների գագաթին:

Սահմանված է յուրաքանչյուրին զարդարելու էվոլյուցիայի ընթացքը: Վիճակված է յուրաքանչյուրին տարածական մտքերի օգնությունը: Անսահմանության գանձարանը բաց է տիեզերական ուժերի ըմբռնման հասած յուրաքանչյուր մարդու համար:

Թե ինչով են հագեցած ձեր մոլորակի շերտերը, ուրախություն չէ հայտնաբերելը: Նժարներին դնենք արատների բոլոր դրսևորումները՝ զայրույթի, փոքրոգության, դավաճանության, նախապաշարմունքների, երեսպաշտության ու բավարարվածության: Մյուս նժարին դնենք հոգեէներգիայի նպատակամղվածությունը, զգացիմացությունը, իմաստունների պատգամների հաստատումը, սկիզբների անխաթարումը, երախտապարտությունը վահանին, իմացության սխրանքը և անշեղ ընթացքը Անսահմանության բացած ճանապարհով:

Երբ Բուդդա Տիրակալը **գործընթաց** անվանեց մարդկային էգո–ի էությունը, ապա կարելի է ընդունել **առյուծի բանաձևը**: Առօրյա կյանքում ընտելացեք մշտական շարժման մասին մտքերին և մի՛ հապաղեք խավարի կիրճում: Ստեղծագործությունը ձգում է արարող զորություն, ուստի նկատեք Տիեզերքի կայծկլտումը:

Ընտրությո՛ւն կատարենք տգիտության ու Անսահմանության ճաճանչի միջև:

16. Իրականությունն ու պատրանքը կսկսեն թվալ մարդկությանը մեկ աղբյուրից բխող, եթե ըմբռնեք, որ միակն է կենարար անոթը: Իմաստազուրկ կլինի Տիեզերքը տեսանելի աշխարհին աներևույթից տարանջատելու դեպքում: Եթե մենք կարծում ենք, թե մեր ուղին պատահական է, իսկ դրա հետևում՝ դատարկություն, ապա աղքատ է մեր երևակայությունը: Գոյություն չունի պատրանք, և «իրականություն» հասկացությունը անհրաժեշտ է ընդլայնել: Ամեն ինչ ապրում է, և ամեն ինչ ծնունդ է տալիս: Տարածությունը կրում է ձեր ծնունդները: Կիրառենք տարածության ողջ ստեղծագործ ուժը:

Թվացյալ որոշակիությունը և դատարկությունը հայտնի սահմաններից դուրս Մենք անվանում ենք **օազ**, քանզի ձեր իմաստության աղբյուրը նրանում է ամփոփված: Հիրավի, անխոհեմ պատրանք կարելի է անվանել «դատարկություն» հասկացությունը:

Չմերժող աչքով երևակայեք կրակ ճառագող ողջ տարածությունը: Պատկերացրեք պրանա և ակաշա պարունակող տարածությունը: Ոչ թե արարիչ կամ մեծ ստեղծող, այլ Անսահմանություն: Երբ մոտենա Սատիա Յուգան, այդ տարածական ուժերը կիրառվելու են: Անշուշտ, քարի դարի ցուրտը դեռևս ապրում է նրանց գիտակցություններում, ովքեր հորջորջում են իրենց տգետներ:

17. Իրավացի է Ուռուսվատին՝ խոսելով միասնական սկզբի մասին: Հենց դրանում է կայանում էվոլյուցիայի միջուկը: Դա արխաթի բարձրագույն ճանաչողությունն է Երկրի վրա: Երբ մարդկությունը կգիտակցի մասնիկների և Անսահմանության մեծ միասնությունը և լույսի ու խավարի միջև փոխհարաբերությունը, այդժամ կարելի է խոսել **անապատային առյուծի** ուղու մասին: Այնքան շատ պատասխանատվություն է դրված տիեզերական կրակների վրա, բայց հրաժարվում են մարդիկ ընդունել դրանք: Այնտեղ, ուր մարդիկ ճանաչում են երկու սկիզբների սահմանները, արխաթը տեսնում է միասնական մեկ սկիզբ:

Հարաբերականության ճշմարտությունն ընդունեցին մաթեմատիկայում, և պարզվեց, որ նախորդ բոլոր հաշվարկները պիտանի չեն: Լույսի ու խավարի, երջանկության ու դժբախտության, աշխատելու ու հանգստանալու նույն հասկացությունները ենթակա են հարաբերականության այդ նույն օրենքին: Երբ խոսում ենք մտածողության առաջադիմության մասին, ենթադրում ենք այդ հարաբերականության անհրաժեշտությունը: Հատկապես գեղեցիկ է վերելքի աստիճանների հասկացությունը: Ոգին գիտակցում է, որ վերելքը իմաստության այն էջն է, որին դրոշմված է Տիեզերքի ողջ ուժն ու առաջընթացի երևույթը: Առաջադիմությունը չի կարող հաստատված լինել մեծ սկզբի ստորին կետում գտնվող հիմքի վրա: Ատլանտիդայում կերտվող տաճարներին բնորոշ էր այդ մեծագույն սկզբունքը:

18. Ինչպես բոցն է համապարփակ, ամենաբովանդակ է Տիեզերքի Սիրտը: Որքա՜ն գեղեցիկ է այդ բովանդակումը: Սկսած ամենափոքրից մինչև մեծագույնը՝ ամեն ինչ բեկվում է այդ դրսևորված բյուրեղի մեջ: Երբ բոլոր տիեզերական հնարավորությունները ուղղություն են տալիս յուրաքանչյուր դրսևորված մագաղաթի, երբ յուրաքանչյուր ձեռնարկում ունի իրեն նպատակաուղղող հաղորդալարերը, երբ անհրաժեշտ է գիտակցել տիեզերական վեհությունը, լարենք ոգու ողջ ուժն ու բովանդա-

կենք: Չկա խուսափում, չկա հրաժարում, չկա վանում, չկա ժխտում, կա միայն բովանդակում: Ուսուցիչը ցույց է տալիս բովանդակման հասկացության նշանակությունը:

Ինչպես Տիեզերքի ստեղծագործությունն է անսպառ, այդպես անկապտելի թող լինի Անսահմանության ըմբռնումը: Հազարամյակներն ու հավերժությունը, օվկիանոսների ու երկրակեղևի վերափոխմանն ուղղված աշխատանքը կարող են հավերժ շարժման պատկերներ ծառայել:

Դուք չեք գիտակցել դժվարին հանձնարարության սխրանքը, բայց և չեք վերագրում մարդկային մթագնումը ձեր գործելակերպին: Սակայն իզուր եք գանգատվում տիեզերական հողմերի պատճառով առաջացած ուժերի սպառումից. սա չարիք չէ, այլ սոսկ անհրաժեշտություն: Տիեզերքի ամեն մի դրսևորումն իր կիրառումն ունի հավերժության մեջ: Եվ ինչպես ուժերի սպառումը, այնպես էլ վերածը ենթակա են ռիթմին, որն անբաժանելի է ձեր մոլորակի վրա տեղի ունեցող իրադարձությունների նախասահմանված ընթացքից: Տարբերությունն այն է, որ եթե տիեզերական փոթորիկ ծնող Ձևսը հագեցնում է տարածությունը օզոնով, ապա զայրույթ ծնող ձեր երկրային Ձևսը հագեցնում է ոլորտը հեղձուցիչ ծխով: Այս պարագայում վերինն ու ստորինը չունեն շփման կետեր:

Հիրավի, դեպի անսահման բովանդակում ձգտելու գեղեցկությունը ճաճանչման ծիածան կստեղծի, և ասենք. «Աշխարհի Մայր, ամեն ինչ տվող ու բովանդակող, ցանկանում ենք զարդարել մեր հեռավոր հաստատությունը»:

19. Ինչն է պատճառը, որ մարդիկ այդպես տեղի են տալիս մայայի պատկերներին: Կյանքը լի է այդ կերպարներով ու պատրանքային երևույթներով: Այդ լարվածությունը սոսկ հագեցնում է գոյությունը ավելորդ կերպարներով: Մեծագույն սկզբին է ձգտում հավերժությունը ճանաչող ոգին, և նրանում է ամփոփված Տիեզերքի ըմբռնման հատիկը: Դեպի մայայի փոքրիկ իրականությունն է ուղղված ոգին, որն ընկալում է սոսկ այն, ինչին սովոր է: Նրա համար հրապուրիչ են միայն սովորական կյանքի դրսևորումները: Բովանդակման բացակայությունը չի օգնում նրան բացել կյանքի գիրքը:

Բայց կան նաև մի շարք մարդիկ, որոնց ճակատագիրը մենք ողբում ենք. դրանք այն գիտակցություններն են, որոնք բովանդակում են ըմբռնման հատիկը, բայց մշուշապատված են ժխտումով, նրանք չեն տեսնում շրջապտույտը, որ կատարում է Տիեզերքը, և կասեցնում են էվոլյուցիան: Կատարվելու է նախասահմանվածը, բայց առաջընթացի ժամկետներն ուշացնողները դատապարտում են իրենց հետընթացի: Նա, ով չի ցանկանում գիտակցել ապագան, նման է խեցգետնի. երկուսն

էլ հետ են շարժվում: Կամ սխրանքի սուրը, կամ էլ խեցգետինների նման վարվողներին բնորոշ երևույթ: Դիտավորյալ ամբարտավանությունը հավասարազոր է հանուն տգիտության համախմբել ցանկացող մարդու կոչին: Տիեզերական կրակների կուտակումը կարող է հեշտությամբ սրբել այդ փոշին, բայց, բարեկամներս, ձեր առաջընթացը պետք է ձեր իսկ ապագա սրի կոփումը լինի: Ձեռնամուխ եղեք և մտորեք դարերի ընթացքում ձևավորված այս ճշմարտությունների շուրջ:

Ինչպես հաստատել ըմբռնման սկիզբը: Ոգին կսովորեցնի, թե ինչպես գործադրել զգացիմացության նշանները, բայց թույլ տվեք, որ լցվի գանձարանը: Բայց կամեցեք համաչափության մեջ լինել Տիեզերքի բաբախյունի հետ:

20. Ընդունված է համարել, որ կարման կամքն է և հատուցումը մեր կյանքի ընթացքի համար: Ընդունված է նաև դիտել կարման որպես պատիժ, բայց իր ճշմարիտ նշանակությամբ կարման աշխատանք է: Մի՛ սահմանափակեք ոգու արհեստանոցի աշխատանքը, և կտեսնեք հետևանքը:

Երբ հոգին գայթակղված է մայայով ու ինքնաբավարարվածության երևույթներով, այնժամ մուրճ է անհրաժեշտ և զգացիմացության զարգացում, երբ ոգին կուրացել է հարստության փայլից և չի տեսնում նրա անհարատև բնույթը՝ կարծելով, թե ոսկու ձուլակտորը երջանկություն կբերի, հիշենք հիվանդությունների ու կործանումների բոլոր սպառնալիքները:

Բայց ոգու մարտիկը փայլատակում է ինչպես երևույթը լույսի, քանզի լուսավորված է Անսահմանության կրակների ճառագայթներով: Արձագանքն անհրաժեշտ է հասկանալ և սլանալ դեպի Տիեզերք բոլոր երանգներով ու բոլոր կրակներով:

Գիտակցության գագաթնակետին Տիրակալի ուղու հաստատումն է: Գիտակցության գագաթնակետին սխրանքը հնչում է համադաշն էվոլյուցիայի հետ: Հավերժ, անխոնջ վերելքի աշխատանք: Այդ հավերժ առաջընթացն էլ ձեր կարման է:

Ուռուսվատին իրավացի է. միայն կամային հոսանքներն են ուղղորդում կարմային: Սակայն կարմայի ընթացքը կասեցնելը նույնքան վտանգավոր է, որքան հավերժ գիշեր առաջացնելը: Ինչո՞վ կլցնեք ամրիտայի գավաթը, երբ ընկղմվեք խավարի լիճը: Պատասխանենք. «Իրոք, հիասքանչ է գործողությունների օվկիանոսը»:

21. Նկատեք, որ **կենսական սկզբունքի օրենքի** ուժն անհաղթ է: Բարձրագույն էներգիայի պարույրի լարվածությունը գործելու է կոչում բոլոր տարրերը: Էներգիայի կուտակումը աշխարհի ոլորտներում գոյի տարատեսակներ և ստեղծագործություն դրսևորելու կոչ է տալիս:

Տիեզերքը հանդարտության ժամանակաշրջաններ չի դրսևորում: Չկա մերժում, բայց կոչ է արվում մարդկությանը՝ ընդունելու տարածության բոլոր ընծաները: Ինչո՞ւ ի կիրառում չընդունել տիեզերական էներգիայի ամենաընդգրկուն առաջադրանքը՝ բերկրալի ձեռք բերել մեզ համար նոր կուտակումներ: Գիտակցության առաջխաղացումը կամքի ճանաչման ուղղությամբ կբացի Անսահմանությունը:

Մեր ոլորտում ևս կան տիեզերական դրսևորման ականատեսներ: Կարելի է կրկնել այս բանաձևը, քանզի էվոլյուցիայի ընթացքը բացահայտ է խիզախ ոգու համար, որը գիտի ողջ գաղտնիքը ու ողջ սլացքը դեպի Անսահմանություն: Լոտոսի կրակների բոցավառումը տիեզերական կրակի բարձրագույն դրսևորումն է: Ճշմարիտ, երբ Երկրի վրա դրսևորվում է տիեզերական Էներգիայի համադրական հաստատումը, այնժամ կարելի է ասել՝ մեր մոլորակը շրջապատված է պարույրով, որի գալարներից մեկով իջնում ենք, բայց որքան գեղեցիկ է այն ոգին, որը վեր է խոյանում և փոխակերպում կյանքը Անսահմանության ճաճանչի: Վերերկրային մագաղաթների այդպիսի կրողին բաց է բարձրագույն ոլորտների մուտքը, և այդ կրողը բանալի կտա ստորին ոլորտներին՝ ճանաչելու Անսահմանությունը:

22. Ոգու ճանաչողությունը դրսևորվում է ճշմարիտ Ագնի յոգի գիտակցության մեջ: Տարածության հոսանքները բովանդակող և հոգեէներգիայի բանաձևը ընկալող գիտակցությունը կարող է մուտք գործել Կունդալինիի հողմի մեջ:

Երբ մարդկությունը կսովորի գիտակցել ու համադրել աշխարհի իրադարձությունները Տիեզերքի բարդությունների հետ, այնժամ պայծառացման շարժումը առաջընթաց բնույթ կստանա: Իրադարձությունների շղթայի ի հայտ գալը և այն բանի լիակատար ըմբռնումը, ինչը որպես դարերի ժառանգություն անցնում է մեկ պարբերաշրջանից մյուսը, կարող են խթանել գիտակցությանը՝ ըմբռնելու տիեզերական Անսահմանության հասկացությունը:

Հե՛տ նայիր, ոգի՛, դեպի ո՞ւր է առաջնորդել քեզ քո նախկին իմացությունը: Որտե՞ղ ես սահման տեսնում, որտե՞ղ ես անդորրություն նկատում: Ո՞ւր է կայունությունը: Եվ որտե՞ղ ես տեսել հնազանդության երևույթը: Ասված է. չեմ տեսնում այդ հասկացությունները, ճշմարիտ, ես տեսնում եմ այն անհուն ոլորտը, որն արարել է մեր էությունը:

Դեպի Տիեզերքի Արարիչը ձգտող ոգի, շրջվի՛ր դեպի Մայրն Աշխարհի: Ասա՛, թե ինչ ես տեսնում: Տարածությունը դրսևորված՝ որպես առավել արարչագործ երևույթ: Տիեզերական ուժերի ընդարձակությունն ու անկապտելիությունը կուտակում են մեր էության միջուկը: Էվոլյուցիա-

յի լծակները՝ նրբանուրբ էներգիաները, կարող են անցնել մարդկանց տնօրինության տակ:

Երբ կընդունեք բախտորոշվածը, այնժամ կուղղորդի ձեզ ուղղակի հետևանքը: Երբ կըմբռնեք, թե ինչպես թռչել ոգու միջուկի մեջ, այնժամ կհաղորդակցվեք բարձրագույն աշխարհների հետ:

Կարողացեք հասկանալ ոգու միջուկի մեջ թռչելու ողջ վեհությունը:

23. Որտեղից հեղեղի պես թափվեց գիտակցությունը մթագնեցնող ալիքը: Դեռևս հնադարում է ասվել՝ **Ռելիգարե**: Պատճառականության ու հետևանքի հատկությունը՝ Տիեզերքի **հարակցության օրենքը**, պատկանում է Անսահմանության հետ կապի այդ նույն երևույթին: Անխզելի կապերով է միացած մարդկությունը Տիեզերքի հետ: Դժվար չէ գտնել այն անխախտելի կետը, ուր հանդիպում է ամեն ինչ. երկրային կուտակումները և վերին ոլորտների շերտավորումները: Տիեզերքի կամոք ամեն ինչ հակված է փոխադարձ ձգողության: Ամեն ինչ ձգտում է փոխադարձ ստեղծագործման: Ռելիգարեն տրվել է մարդկությանը կրոնի տեսքով՝ ուղղված միավորմանը, համայնքի զարգացմանը, գոյության բոլոր սկզբունքներն ամփոփող ու մեր բարօրության բոլոր էութենական տարրերն արարող իրական գոյություն ունեցող սկզբի ճանաչմանը:

Տիեզերքի շղթայակցումը բոլոր բարձրագույն ոլորտների հետ հարկավոր է ընդունել գիտակցության մեջ որպես փրկարար խարիսխ՝ ապագայի բարձրագույն հիմքերն առաջ տանելու համար: Ամենից ակնառուն հենց իրենք՝ գիտնականներն են հայտնաբերել, սակայն շատ բան դեռ վրիպել է ուշադրությունից: Մարդկությանն արգելված չէ քաղել տարածությունից, բայց կործանում է նախապաշարմունքի սկզբունքը: Այն, որ Երկիրը մագնիսի պես ձգում է խնձորը, բոլորն են ընդունում, սակայն Անսահմանության՝ որպես մեծագույն մագնիսի ընդունումը կուլ է գնում տգիտությանը: Տարածության օզոնն ու հեռավոր աշխարհների ճառագայթները արթնացնում են մոլորակի էությունը՝ նոր էներգիաների վերաճման համար:

24. Պատճառականությունն այն գործոնն է, որը շարժման մեջ է դնում Տիեզերքը: Հուսալ, թե ոճրագործությունից ծլելու է Բարիքի Լոտոսը, անհամաչափելիություն կլիներ: Կարելի է հասկանալ ամեն մի գործողության հետևանքը որպես սկզբնապատճառի ուղղակի արտացոլում: Անբարեհաջողության միջուկը նույն համաչափությամբ արձագանք է տալիս՝ հեշտությամբ գտնելով ընդհանուր կիրառում: Տգիտության սաղմը ծնում է խաղաղ տարերքների թունավորում: Բայց մոլեգնող տարերքը վերաճ է հաղորդում Տիեզերքի ռիթմին:

Երբ ճառագայթումն ուղղված է տիեզերական ալիքների բոլոր զարդանկարների գիտակից ընդունմանը, ապա ընդունեք դրանք: Չօգտագործված ուժերը նպատակաուղղված միջուկների լիցքաթափման նման, սլանում են տարածության ոլորտում: Նկատի՛ ունեցեք, որ ամենից առաջ անհրաժեշտ է սանձել համաշխարհային օվկիանոսը, որից հետո հետևանքից պարզ կդառնա, թե ինչպիսին էր փորձը:

Մեր պինդ նյութականությունը մեծ ջանքեր է պահանջում՝ ապաքինելու համար ճեղքվածքները: Շատ շատրվաններ են հեղվել Տիրակալների տված բանաձևերով: Օգնություն է առաքվել՝ իբրև Ուսմունքի վահան, և ոգու անգնահատելի գանձերը բեկոր-բեկոր ցրվել են տարածության մեջ: Բայց տարածությունը մեր կողմից չկիրառված գանձերի մեծագույն հավաքիչ ու կուտակիչ է: Տիեզերքը ոչինչ չի սպառել, և պահուստային պաշարը զորավիգ է մեզ: Երբ ճանաչեք, այնժամ իմացության կայծերը կբացեն ձեզ համար գոյության բոլոր գաղտնիքները: Հրե տարերքը զարհուրելի է սոսկ ներկա կյանքի ունայնությունն իմացողի համար: Նա, ով տեսնում ու ողջունում է պատճառականությունը որպես հետևանքի հաստատում, նա էվոլյուցիայի բացահայտ ուղեկիցն է:

Տիեզերքի թաքուն դրսևորումներն առկայծում են փնտրողի աչքին: Բայց անլույս է աշխարհն այն մարդու, որի համար իր վախճանը նշանակում է նրա մարում:

25. Երկրի ծաղկունքը միշտ արարվում է տիեզերական ներգործություններով: Նպատակաուղղված մտքերի համալիրը ձգում է տարածությունից դրսևորված հղումների անհրաժեշտ շերտավորումները: Մեծագույն հայտնագործությունների նախատիպերը սավառնում են տարածության մեջ: Նրանք, ովքեր կարող են լարել սեփական հոգեէներգիան տիեզերական էներգիաներին համառիթմ, գիտակցության մեջ կընդունեն գանձերը: Գիտակցության ընդլայնումը կուղղորդի դեպի Տիեզերքի բոլոր ստեղծագործ ուժերը միավորող շղթան:

Գանձարանից արդեն իսկ կուտակած երկրի անկումը տիեզերական ներգործությունների պատճառականության երևույթի ժխտման արդյունք է: Երբ մարդկանց մեծամտությունը հասցնում է գիտակցությունը փոխարկման սահմանին, և էգո-ն կուռք է դառնում, այնժամ փակվում են դռները: Անձը դառնում է տիեզերական գործողության ժպիտի արտացոլում, երբ նա համարում է իրեն գոյություն ունեցող, դրսևորված Տիեզերքի մի մասը:

Ճշմարիտ, մարդը Տիեզերքի բարձրագույն դրսևորումն է: Ճշմարիտ, նա Տիեզերքի բոլոր գանձերի կոչյալ շինարարն ու հավաքողն է: Ճշմարիտ, **մարդ** կոչումը նշանակում է ստեղծագործման հաստատում:

Վաղուց է մարդուն տրվել բանալին, բայց երբ հայտնություն էր իջնում, այնժամ էլ հայտնվում էին կրակներ մարողները:

Ասենք. «Երբ հանդիպենք արեգակ ոտք դնելիս, այնժամ կհասկանանք Տիեզերքի ողջ վեհությունը»: Դիտեք արեգակը իբրև նոր գիտության երաշխիք: Ընդունեք Անսահմանության հուրն իբրև պայծառացման երևույթ, իբրև Մեր ճշգրիտ ներկայությունների երևույթ: Ընդունեք Մեր կողմից նախանշվածը:

26. Այն ամենն, ինչ մարդկության առաջխաղացման խնդիրը տանում է դեպի էվոլյուցիայի շղթան, համաձայնեցնում է այդ էվոլյուցիայի երկրային ուղղվածությունը Անսահմանության հետ: Խնդիրն այս ստեղծագործ մտահղացումները մղում է տարածության ոլորտում հայտնաբերվածի կիրառմանը: Մեծ է վնասը, երբ երկրային մտադրությունները թելադրում են թաքցնելու այն, ինչը բոլոր գոյաձևերի կատարելագործում է բերում: Լոկ այն ժամանակ, երբ կգիտակցվի տարածական հարստությունների կենսականությունը, հնարավոր կլինի կատարելագործել մեր երկրային գոյաձևերը: Գոյը հաստատված է եղել մինչև մարդկության կողմից իր ամբողջական գիտակցումը, և բոլոր կենսաձևերը գտնվում էին զարգացման տարբեր փուլերում: Որքան աստիճան ունի գիտակցությունը, այդքան էլ փուլեր կան Անսահմանության մեջ: Ամեն ինչ համապատասխանում է իրար: Ամեն ինչ փոխադարձ ձգվում է, և ամեն ինչ արտացոլվում է ստեղծագործման անհուն օվկիանոսում:

Ոգին, որն ունակ է բովանդակել բարձրագույնը մոլորակի վրա և գիտի, որ գոյությունը չի սահմանափակվում մեկ կյանքով, արժիվն է ոգու, նա անկաշկանդ սավառնում է կյանքում՝ իմացության արև ծագեցնելով անապատի երկնակամարում:

Ոգուն է տրված գիտենալու տիեզերական կրակները:

27. Էվոլյուցիոն առաջընթացի ժամանակագրությունից օտարվել է «նպատակահարմարություն» հասկացությունը:

Հին մարդկանց պատկերավոր պնդումը կրակի մասին լավագույն պատկերացում է տալիս դատարկության մեջ չլուծվելու երևույթի մասին: Հնագույն պատգամներն ասում են, որ ամբողջ դյուրավառ նյութն այրող կրակը չի ոչնչանում, այլ վերադառնում է իր սկզբնական վիճակին՝ անտեսանելի կրակի ձևին՝ տարածության կրակի դրսևորման բարձրագույն փուլին: Այդպես է դրսևորվում մեր կյանքը:

Երբ կենսական եղանակով այրված է մարմինը, կարելի՞ է արդյոք պնդել, թե այն լուծվել է դատարկության մեջ: Երբ Տիեզերքը կիրառում է փոփոխությունների համակարգը, և յուրաքանչյուր փոփոխություն որ-

պես հետևանք ծնում է այլ փոփոխությունների շղթա, ապա ինչպես չնկատել մեր ոգու վերելքի բոլոր անսահման շղթաները:

Սկզբունքը ի հայտ է գալիս կրակից, որն իր անտեսանելի բարձրագույն ձևի մեջ պարունակում է բոլոր տարրերը: Երկրից հեռացած ոգին, ինչպես և երկրային դրսևորմանը վերադարձող ոգին պարունակում են իրենց մեջ բոլոր սկզբունքների հաստատումները: Տարբերությունը միայն կուտակումների աստիճանի մեջ է: Եվ այսպես է ընդհուպ մինչև Անսահմանության անհասանելի բարձունքները:

28. Ամենագո է Տիեզերքի Բանականությունը: Ողջ տարածության մեջ դրսևորվում է նրա ձեռքի օրենքը: Անհամար են նրա ներգործությունները և նոր համակցությունները: Լուսատուների քիմիզմից մինչև կյանքի դրսևորման գործառույթները նա է ղեկավարում ողջ գոյի սկզբնավորումը: Այս հարցը հետաքրքրել է շատ գիտակցությունների: Դժվար է ժխտել Տիեզերքի այդ ամենազոր Բանականությունը, որն իր շնչով թափանցում է նյութականության բոլոր շերտերը: Բայց մարդիկ սովորաբար գիտակցորեն երես են դարձնում ճշմարտությունից: Երբ ոգին դեպի խաբուսիկ մայան հակում ունենալու պատճառով մեկ րոպե անդորր է փափագում, այնժամ նա քնով է անցնում և բաց թողնում Տիեզերքի լավագույն լուսե ճառագայթները: Պայծառացումը կարող է վախեցնել նրան, ով պայծառանալ չի ցանկանում:

Իրավացի է Ուռուսվատին, երբ պնդում է, որ Բուդդա Տիրակալը պիտի տար աշխարհին Նիրվանայի հասկացությունը, քանզի սակավաթիվ են նոր գոյաձևերի ստեղծագործմանը հավերժ լծվել ցանկացողները: Նիրվանան սոսկ անվերջանալի տիեզերական պարբերաշրջանների մի փուլ է: Կարող են ցնծալ Մեր աշակերտները՝ կուտակելով երկրային ձեռքբերումները, նկրտուն գիտակցությամբ սլանալով դեպի բարձրագույն աշխարհներ: Ավելի լավ չէ՞ ճառայել մեծագույն, հավերժ վերամշակման և ստորինից բարձրագույնը փոխակերպման երևույթին, քան լճացման ճառան լինել:

Ահավասիկ, ջրերի նույնիսկ աննշան ամբարտակումը նեխում է առաջացնում: Շատ են օրինակները, երբ լճացած մնացուկները ոլորտների կործանման պատճառ էին դառնում: Իսկ ինչպիսի՞ն է լինելու կամքի ու գիտակցության լճացման արդյունքը: Հանգստություն ծնողը կարող է վիթխարի պայթյուն առաջացնել, բայց ոգու կրակի Տիեզերքին դաշնաձայն տեղի ունեցած մեկ բռնկումն իսկ կարող է մի ամբողջ ժողովրդի խաղաղեցում առաջացնել:

Ուռուսվա՛տի, քո ոգին, որ որոշել է անսահման աշխատել, իր հետևից է տանում նկրտողներին: Արդ միտքը հրեղեն բոցավառում է

տարածության կամուրջը, և ոգու մագնիսը ճառագում է Տիեզերքի նկրտումով:

29. Բարձրագույն աշխարհը մարդկանց երբեմն ցնորք կամ պատրանք է թվում: Ամեն մարդ հասկանում է յուրովի, և ամեն ոք երկնչում է խոստովանել Տիեզերքի իր ըմբռնումը: Ոչ միայն տարերքների, այլ նաև «ամենազոր արարչի» տեսակետից մարդը չի վախենում ամեն տեսակի ցնդաբանություններ ստեղծելուց և առիթը բաց չի թողնի՝ ստեղծելու ավելորդ բեռ: Շատ հանգույցներ է կրում մարդկային ոգին, և դա է բարձրագույն ոլորտ խոյանալու բարդության պատճառը:

Տիեզերական կրակների միջոցով կյանքի վերակառուցումը փրկություն կլինի, բայց երկյուղն է պատում մարդկանց կյանքի վերակառուցման մտքից: Հնացած, իրենց դարն ապրած գոյաձևերը ճգում են, և առաջացան ավանդույթներ: Եթե ավանդույթի հասկացությունը դիտենք որպես վերադարձ ակունքին, ապա կարելի է օգուտ քաղել, քանզի գիտակցության ընդլայնումը կհանգեցնի իմաստության պատգամին: Բայց մեր ժամանակների ավանդույթները թույլ չեն տալիս ոգուն սուրալու բարձրագույն ոլորտներ: Եկեղեցին ունի դոգմաներ, ընտանիքները պարփակված են նախնիների կողմից կառուցված շրջանակներում, ժողովուրդներն ունեն ինքնագործունեությունից իրենց զրկող օրենքներ: Գեղեցիկի ոգուց զուրկ մարդիկ ինչպե՞ս պիտի ճանաչեն Անսահմանությունը:

Իրավացի է Ուռուսվատին. անհրաժեշտ է երեխաներին դպրոցում մատուցել ստեղծագործ գործունեության անվերջանալիության գիտակցությունը: Ի՞նչ իմաստ ունի պապենական հանդերձանքը նոր լույսով պարուրել: Փորձե՛ք նմանվել նոր հզոր կամուրջներ կառուցողներին և առա՛ջ ընթացեք դեպի բարձրագույն աշխարհների ճաճանչը: Ցնդաբանություն չէ սա, այլ կյանք:

30. Անուղղակի կերպով է մատնանշվում ուղիների ընտրությունը: Հաստատված ուղու պահպանումն ու նպատակը բացահայտված են, բայց էությունը պիտի դրսևորվի մարդու մեջ, որը և պայմանավորելու է հետևանքը: Երբ լսում եք անարգանք Մեր պատգամների նկատմամբ, որոնք անսահմանափակ ազատություն են տալիս ոգու՝ դեպի գեղեցիկը ճգտելու դրսևորումներին, ապա մի՞թե այստեղ ճշմարիտ գեղեցկության շունչ ունեցող նվաճում եք ունենում: Երբ դրսևորվում են ոգու անհասկանալի ծամածռություններ, մի՞թե կհետևեք Տիեզերքի ռիթմից հետ մնացողին:

Մենք հարգի տեղ ենք հատկացնում կամքի ազատությանը, և անհամար են այդ խորհրդանիշի կիրառման եղանակները: Ուստի բռնություն չէ սա, այլ նկրտուն ոգու թռիչք: Զորավոր, բարեկազմ մարտիկը՝ կյանքի շինարարը, ընթանում է այդ դրոշի ներքո:

31. Բոլոր ձեռքբերումների, Տիեզերքի Լոտոսի բանաձևերի մասնակցությամբ պիտի ղեկավարվի մարդկությունը իր էվոլյուցիայի զարգացման գործում: Երբ ոգին կիրառի տարածական կրակի երևույթը, և ճշմարտության շունչը դիպչի կյանքի Ակունքին, այնժամ կարելի է երաշխավորել գիտակցության առաջխաղացումը: Իր առանցքի շուրջ պտտվող հոլի ճակատագիրը խորհրդանիշն է այն մարդու, որը տարանջատվում է հավերժ շարժման հետ: Լոտոս կրող, բաց Տիեզերքին ընդառաջ և կենտրոնների լավագույն լուսաբաժանելիություն դրսևորող մարդը խորհրդանշում է կյանքի շինարարությունը՝ համաչափելով ինքնամփոփությունը կենտրոնների բացման հետ: Ճշգրիտ սահմանում գտնենք կենսական սկզբունքի համար: Բաց Լոտոսը բովանդակում է ամեն բան, նրա բոցեղեն թերթիկների լուսաբաժանելիությունը շրջապտույտ շարժում է կատարում բոլոր ուղղություններով: Երբ նվիրական հուրը՝ ոգու նշանը, շփվում է ողջ գոյին, այդժամ տիեզերական շրջանը և կյանքի անիվը շարժվում են միասնաբար:

Սրածայր հոլերը համապատասխան չեն նրբացած ոգուն: Տիեզերական ալիքները թեթևակի տատանվող ողորկ մակերևույթից գերադասող ոգին, հիրավի, ճանաչում է Անսահմանությունը:

Մեր կողմից մատնանշված բանաձևը ընթանում է անթիվ–անհամար տարածական կրակների ուղղությամբ: Երբ մարդկությունն ընդունի Անսահմանության հաստատումը, այնժամ ճակատագիրը կլինի ոչ թե պատիժ, այլ տիեզերական լայնարձակություն: Կյանքի լայնարձակության գեղեցկությունը չափվում է ստեղծագործման գիտակցմամբ:

Մարդկության համար ենք շարունակ խոսում կրակի մասին: Դուք գիտեք, թե մարդկային մտածողությունը որքան կարիք է զգում նոր ջահի:

32. Աշխարհի բաժանումը գոյություն ունեցողի և գոյություն չունեցողի շրջափակում է մտածողությունը: Մերժումն այն ամենի, ինչը տեսանելի չէ, նաև ամբողջ տիեզերական լայնարձակության մերժումը հանգեցնում են մարդկության կողմից կիրառվող Տիեզերքի սահմանափակ ըմբռնմանը: Կյանքի ուղու տիեզերական լայնքը նախանշված է Անսահմանությամբ:

Անցյալում կրոնական խորհրդանիշները ձեռք էին բերվում Տիեզերքի գանձարանից: Պաշտամունքներում ի հայտ էր գալիս Տիեզերքի արարչի դերը: Տիեզերական լավագույն պատկերացումների այլասերումը խորհրդանշվում է մեր ժխտումներով: Իսկ այնտեղ, ուր դեռ երկրպագում են հրե տարրի սկիզբը, տակավին հաստատվել է պարզունակ ոգու գիտակցությունը: Միայն անսահման տիեզերական ուժերի գիտակցումն ու բանական ընդունումը կսովորեցնեն մարդկությանը կիրառել դրանք:

Գոտամա Տիրակալի ուսմունքը պնդում էր, որ լույսին զարհուրելի չէ խավարը: Հաղթանակող լույսը կլանում է ամեն ինչ: Այդպես և տիեզերական կրակն է համաթափանց, ամենագո ու ամենազոր, և անսահման է ուժը նրա:

33. Տիեզերական կրակների առկայության դեպքում ողջ օրգանիզմը վերածնվում է, և օտար տարրերը հեռացվում են սեփական բոցի շնորհիվ: Զինված ոգին ենթարկեցնում է իր նկրտումով, ուստի և Անսահմանության երևույթը համաթափանց կրակը մատնանշում է որպես նախանշված բուժիչ հատկանիշ:

Յուրաքանչյուրին հանձնարարված է գտնել բարձրագույն ոլորտի ուղին, բայց եթե մարդկությունը կարծում է, թե ոգու և բոլոր շերտավորումների վերամշակման աշխատանքը կարող է կատարվել դրսից, ապա Տիեզերքի լծակը կավերի կուտակումը: Միայն սեփական ձեռքով, միայն սեփական կամքով, միայն սեփական նկրտումով, միայն սեփական աշխատանքով կարող է դառնալ ոգին Անսահմանության գիտակից աշխատակիցը: Լծակը կիջնի սահմանափակ մտահորիզոնի վրա՝ ունայնացնելու համար այն, ինչը մթագնում է էվոլյուցիայի ընթացքը: Բայց ամբողջական կյանքի շարժումների լծակը, հաստատված որպես բարձրագույն ոլորտի հետ միավորում, ցած կիջնի՝ իբրև վերածնող կրակ:

Միասնականության երևույթը, անմասնաբաժան լինելու երևույթը և ոգու միջուկի գիտակցումը որպես արարիչ, գոյության էության լավագույն բանաձևը կտան:

34. Այո՛, այո՛, այո՛, տիեզերական ժամկետը և մոլորակի շարժունակությունը կարող են համընկնել: Զուգակցումն այդ լավագույն բանաձևը կտար գոյին:

Իրավացի է Ուռուսվատին՝ անվանելով ոգին **Տիեզերքի արարիչ**: Ստորադասությունը տարերքներին մարդուն դարձնում է իր անկյունում դարանից թշնամուն սպասող մի էակ:

Ոգու մեջ չի ապրում տարերքների ճշմարիտ ըմբռնումը: Այսպես կոչված **աստծո պատիժը** տիեզերական կրակի անարգման վառ դրսևորումն է: Պետք չեն զոհաբերություններ: Սոսկ արագ քայլեր են անհրաժեշտ էվոլյուցիայի համար: Անսանձ տարերքների անկանխատեսելի գործոնը պատիժ չէ, այլ Տիեզերքի վիթխարի ուժերի չօգտագործված հորդումն է միայն: Ինչպես փոքրում, այնպես և մեծում: Գտնվել են տարերքների փոքր և մեծ սանձումների միջոցներ: Որքա՜ն աննշան են այդ սանձումները, սակայն պարզորոշ մատնանշում են ուղղությունը: Ինչո՞ւ չշարունակել հակառակ ուղղությամբ. արդյունքը արժեքա-

վոր կլինի: Կորստի հաստատման երևույթին փոխարինելու է գիտակցության սրընթացության դրսևորումը: Անխախտ է այս օրենքը և անբաժանելի Տիեզերքի գործընթացից:

Զարթոնքի ենք կոչում գիտակցությունը:

35. Կյանքի միապաղաղությունը բոլորովին զրկում է գեղեցկությունից կյանքի էությունը: Ինչպե՞ս կարող էր կյանքը պարուրվել այդքան ձանձրալի, միապաղաղ հանդերձանքով, այն դեպքում, երբ Տիեզերքի բազմազանությունը լի է գեղեցկությամբ: Երբ այնքան բազմազան են Տիեզերքի համակցումները: Չէ՞ որ Տիեզերքի արտացոլումը պիտի անդրադարձվի մոլորակային կյանքի վրա: Ինչպե՞ս եղավ, որ երկրակեղևի վրա հաստատվեց նման միապաղաղ կյանք, երբ ամեն ոգի առանձնահատուկ է իր տեսակի մեջ, երբ ամեն մի դրսևորում կարող է տարբեր ձևեր ընդունել: Որտեղի՞ց են բխում այդ օտարամուտ պատճառները: Մակրոկոսմն ու միկրոկոսմը շաղկապված են ու միասնական՝ լինելով Տիեզերքի միևնույն շնչառության ուժը:

Մարդկությանը ծանոթ են Տիեզերքի բոլոր տեսանելի ձևերը: Եվ մարդիկ օգտվում են դրսևորված համակցություններից՝ իրենց գոյությունը բարելավելու համար: Եթե ընդունենք, որ Տիեզերքն իր անտեսանելի գոյաձևերում անհաշիվ անգամ կհարստացնի կյանքը, ապա գիտակցությունը կիրառում կգտներ տիեզերական կրակի բոլոր անվերջանալի ձևերին: Տիեզերքն արարված է եղել, մարդկությունը ևս: Ինչպե՞ս կարող էր մասնատվել գոյի միասնական ձևը գիտակցության մեջ: Երբ գիտակցությունը վերստին կվերադառնա անեղծ կրակի ընդունմանը՝ որպես ողջ գոյին ծնունդ տվողի, այնժամ կճանաչենք Անսահմանությունը:

Չկարծեք, թե կրակը վերացական հասկացություն է: Կոչ չենք անում՝ ոտք դնելու խարույկի վրա, չենք կտրում կենցաղից: Հիրավի, Մենք կրակ ենք տեսնում նույնիսկ ամենաաննշմար աշխատավորի մեջ, եթե նրա ոգում կենդանի է աշխատանքի անսպառ բերկրանքի երգը: Ասենք. «Մենք գնահատում ենք ճշմարիտ աշխատանքի՝ դեպի էվոլյուցիա տանող ամեն մի դրսևորում»: Գտե՛ք նույնությունը և նույնական կլինեք բարձրագույնին:

36. Եթե երևույթները դիտենք հակառակ տեսակետից, ապա կզարմանանք դրանց հետևանքներից: Ինչպես տարերքները, այնպես էլ մեր կենսական դրսևորումները կհանգեցնեն մի եզրակացության. պատճառականություն ու հետևանք: Թե՛ մարդու մահը, թե՛ ծառը մոխրացնող կրակը, թե՛ ջրի գոլորշիացման երևույթը – բոլորն էլ հանգում են իրենց սկզբնական միջուկին, ուստի ցանկացած սկզբնավորում փնտրե՛ք իր անեղծ ծագման մեջ: Երբ սպառեք հոգեէներգիայի հայտնաբերումները, այնժամ

մարդկային հնոցի միջից կռելու եք ընդարձակ տիեզերական նախանշումը: Համարեք, որ կարելի է փոխակերպել ամենաաղճիմ գոյությունը տիեզերական կրակների փայլատակման: Եթե դիտենք սա որպես կարմայի սրընթաց հոսք, ապա դրսևորված Անսահմանության հատկանիշը կընկալվի ոչ որպես ուրվապատկեր, այլ որպես իրականություն:

Աշխարհի Մոր ծաճանչման ծաճկույթը ավարտվելու է մեր նկրտման շնորհիվ: Իր էության մեջ նվիրական իմացության գեղեցկությունը գտած ոգի՛, ինչո՞ւ ես այդքան երկնչում եղբայրակիցներիդ ծաղրանքներից: Ինչո՞ւ ես թաքցնում քեզ տրված նվիրական սերմը ի հաճույս չնչին մարդկանց: Նայենք նրան, ով գիտակցորեն է վերաբերվելու Աշխարհի Մոր ծաճկույթին: Եվ կտեսնենք անսպառ, անհամար գիտակցություններից այս մեկը՝ որպես տիեզերական կրակներով հուրհրացող մարտիկ, ով սլանում է այնտեղ, ուր փայլատակում է ուժը Անսահմանության, իսկ այստեղ մարտիկը կրում է ողջ գավաթը: Գեղեցիկ է հասկացության փոխակերպումը դեպի այնտեղ՝ մեր ճշմարիտ կյանքը: Հիրավի, միայն Անսահմանության գիտակցումն է միավորելու բոլոր տարրերը: Տիեզերական կյանքի երևույթը ձև կստանա մեր գիտակից մտքում:

37. Մի բանը մեկ այլ բան է ծնում: Տիեզերական ուժերի վերափոխումն ու հավերժ շարժումն են մեր կյանքի հաստատումը: Իր անթիվ գոյաձևերի շարքում ոգին հաճախ գամվում է իր դրսևորումներից մեկին: Մեծ դժվարություն է պատճառում նման հակումը, դա խախտում է բոլորաշրջանի ընթացքը, քանզի մնում են չկիրառված անփոխարինելի ուժեր: Եթե գիտակցենք տիեզերական կյանքերի նախասահմանված շղթան, ապա կիրառելու ենք ողջ տիեզերական էներգիան, և դրսևորված արարչի ոգին կմղի մեզ շարժվելու նախանշված ճանապարհով: Արարիչը տիրազոր մեր կամքն է: Այն որպես սանձահարող ուժ ճախրում է մեզ տրված, բայց չընդունված էներգիաներից վեր: Կյանքի՛ կոչեք կենսական ուժը: Սովորե՛ք ցանկանալ տիեզերական ալիքների ուղղությամբ: Սովորե՛ք ցանկանալ տարածական էներգիաներ: Արիաբա՛ր ցանկացեք, արիաբա՛ր գիտակցեք ձեր գոյաձևերի անսահման քանակությունը: Ճշմարիտ, ոգին ու կամքն են փոխակերպում կյանքը: Եվ անվերջ է էներգիաների դրսևորումը:

38. Եթե համեմատենք Տիեզերքի աշխատանքը մարդու գործունեության հետ, ապա կտեսնենք, որ ամենամոտ համակցությունները կարող են հավաքված լինել մեր մոլորակի վրա: Տեսնենք, թե որտեղ է հաստատվել տարրերի հետ համագործակցման գիտակցությունը. բուսական աշխարհը վերցնում է այն, ինչ անհրաժեշտ է իրեն զարգացման համար, պարզորոշ է մարդու համագործակցությունը տիեզերական հարստության հետ: Կենդանական աշխարհից վերցնում ենք մեր գոյու-

թյան համար անհրաժեշտը և այդ պատշաճ տուրքն ընդունում ենք որպես սովորական բան: Երբ մարդիկ շինարարություն էին ծավալում լճափերին և ժայռերի մեջ էին կերտում իրենց կացարանները, մարդն այնժամ հպարտանում էր իր առաջնակարգ դիրքով և իրեն ենթարկում ողջ աշխարհը: Այժմ առաջնային դիրք ունի նույն այդ մարդը, բայց ամեն տեսակ ճարտարանուրբ միջոցներով հարստացած՝ նա առաջխաղացում է ունեցել տարածական հարստությունն ըմբռնելու հարցում:

Մատերիալիզմ բառը հրեշավոր իմաստ է ընդունել: Այդուհանդերձ, մատերիալիզմն առաջանում է Անսահմանության ուժի ամենագո էությունից: Ինչն է տիեզերական ուժի նման խեղաթյուրման պատճառը: Խորհրդանիշը Աշխարհի Մոր, որը ձև ու իմաստ է տալիս Տիեզերքի ամբողջ շնչին, փոխակերպում է միջուկը բյուր դրսևորումների, գեղեցկությամբ է պսակել մեր Երկիրը:

Մայրն Աշխարհի մեծագույն ստեղծագործ ուժն է մեր էության մեջ:

Դու ապրել ես հնագույն պաշտամունքներում՝ որպես հող, որպես արև, որպես հուր, օդ և ջուր: Դու ես պարգևողը ամեն ինչին: Դու ես ամեն ինչին հայտնություն տվողը: Դու, որ բացահայտել ես մարդկությանը Մոր մեծ բերկրալից ճանաչումը, Դու, որ մատնանշել ես սխրանքը և թաքցրել ես դեմքդ, ուսերիդ ես ընդունել մարդկային արարքների բեռը, Քեզ աղերսում ենք վերադարձնել մեզ մեր կորսված ժպիտը: Տո՛ւր մեզ սրբազան հրեղեն ուժի տիրապետումը:

39. Երբ տեղի ունեցավ տարրերի տարբերացումը, տիեզերական ուժը չմասնատվեց: Տիեզերական կրակների տարբեր դրսևորումները ֆոհատի անիվի միևնույն պտույտն են: Ֆոհատն ամեն ինչում է, և տարբեր դրսևորումները կրում են նրա արտահայտումը:

Ուռուսվատին գիտի ֆոհատի բյուրավոր կայծերը, երբ Materia Matrix–ի կայծերը լցնում են տարածությունը: Ամեն մի կայծ էությունն է գոյի: Ամեն մի մասնիկ էությունն է բազմազան գոյաձևերի: Ամեն մի ատոմ շնչում է ֆոհատով: Միասնական են ֆոհատն ու նրա կայծերը, Տիեզերքը նույնպես միասնական է իր բոլոր գոյաձևերում:

Տարբերացումն առաջանում է պտույտից, բայց կամայականություն գոյություն չունի: Շրջապտույտի ու ձգողականության ուժը հարստացնում է Տիեզերքը կրակների գործողության դրսևորումներով: Տարածական ալիքների հետևանքը հորդորում է գիտակցական ստեղծագործումը: Տիեզերքի ստեղծագործումն ու գիտակցության ազդակը էներգիայի շարժիչներ են, այդ իսկ պատճառով ոչինչ հնարավոր չէ տարանջատել հավերժության մեջ: Տարածությունը բարելավում է կառուցումը, և լիառատ են լարման մեջ սլացող ուժերը:

40. Վաղուց եմ ասել. «Ավարտվածությունը մահ է»: Միայն անդադար գործողության մեջ կարելի է շարժվել գեղեցիկի ուղղությամբ: Անգամ պրալայայի վիճակում մատերիայի էությունը շարունակում է շարժվել: Անհնար է պատկերացնել տիեզերական դադարի կետը: Անհնար է որևէ բանի վերագրել դադարման կետը, երբ սովորական երևույթների կարգի մեջ դիտելու լինենք տվյալ պատճառի օրինակը: Չկա այն դադարումը, որի մասին երազում են մարդիկ: Եվ շարժման արագությունը չի կարող դրսևորվել որպես դանդաղ մարում: Մեզ համար անտեսանելի գործընթացը չի դադարում ստեղծագործ կրակի գործընթաց լինելուց: Երբ մարդիկ մտածում են իրենց ընկալումների տնտեսման մասին, այնժամ Մենք կարող ենք ասել. «Շարժվե՛ք, շարժվե՛ք, շարժվե՛ք. որքան արագ, այնքան լավ»: Ընկալումների արագությունը մոտեցնում է ներգործությունները: Զգողությունն անխուսափելի է այնտեղ, ուր լարված են բոլոր ուժերը: Միևնույն օրենքն է ողջ Տիեզերքում:

Ոգու թուլություն ծնող խոչընդոտները անհաջողության արդյունք են լինելու: Ոգու ողջ կրակը մարտնչելու կոչող խոչընդոտները գործում են իբրև ստեղծագործ սկիզբ: Հին իմաստությունն ասում է. «Իմացի՛ր մարտի ժամկետը, մի՛ խուսափիր խոչընդոտից»: Այնտեղ, ուր խուսափումն է, չկա փրկություն, այլ սոսկ ուշացում: Հավերժ, անսահման շարժման համամասնակից լինելուց չվախեցողը, հիրավի, կարող է մարտիկի կերպար ընդունել: Պատրաստակամությունն ու ռիթմի հրատապությունը կմղեն նրան դեպի փայլատակումը Տիեզերքի:

Նկատի՛ ունեցեք՝ վախն ու տատանումը պատնեշափակում են ոգու համար:

41. Տիեզերական ուժերի ձեռքբերումը մեզ՝ որպես աշխատակիցների մոտեցնում է ատոմային էներգիայի աղբյուրին: Մեր գիտությունը կարող է հասնել էներգիայի լարման, եթե միայն գիտակցության պայթյուն տեղի ունենա: Շատ բան կարելի է ստանալ տիեզերական բարդ համակցումներից: Երկրային պատկերացումները պարուրվում են միօրինակ դրսևորումով կամ նախապաշարմունքով: Հաղո՛ր դեղեք Անսահմանությանը և էներգիայի ողջ գեղեցկությամբ դարձե՛ք նրա մի մասը: Մենք անդադար պնդելու ենք Անսահմանության էներգիայի մասին:

Երբ մարդկությունն ըմբռնի ֆոհատի կայծերը և ընդունի դեռ չշաղկապված մատերիայի բյուր դրսևորումները, այնժամ բացահայտելու ենք նոր բանաձևեր: Տիեզերական ուժերի դրսևորումների կեսը սպասում է հավերժության մեջ և մարդկության համար: Ինչպե՞ս չօգտագործել ռադիոակտիվ ուժերը և միլիարդավոր ճառագայթների բոլոր ճառագայթումները:

Այն, ինչ մնացել է ստանալ մեր մոլորակին Սկզբնաղբյուրից, բացահայտվում է որպես Անսահմանության արտահայտություն: Մեր մոլորակը շերտված ու համակված է տիեզերական կրակների հատկություններով, և մարդն ի վիճակի է մոգի նման, յուրովի նպատակաուղղել իր մագնիսական ուժը, կարող է արտահայտել իր նկրտումը հոգեէներգիայի լարմամբ տարածության մեջ: Պարզ միտքը հոսանք է հաղորդում ուղղությանը: Խոսքս մոգության ու բանաձևերի մասին չէ, բայց ցանկանում ենք շրջել ձեր ոգին դեպի անսահման հնարավորությունները: Միայն սեփական դրսևորումների նսեմացում է ծնվում ձեր այն կարծիքից, թե ամեն ինչ պատրանք է: Տիեզերածնությունն ու աստղաքիմիան նույնքան ընդունելի են, որքան և աշխարհագրությունն ու պատմությունը: Եթե դուք իմանայիք այն, ինչ տեսել են Տիրակալները, ապա ըմբռնում կցուցաբերեիք ողջ չշաղկապված մատերիայի նկատմամբ: Ոչ թե գաղտնիք տաճարի, այլ Անսահմանության խորհուրդ:

42. Բարձրագույն էներգիաների յուրացումը լարվածության երևույթի դեպքում կարող է ձևավորել նոր էներգիաներ: Մատերիան ու ոգին աճում են փոխադարձաբար: Երբ կամային հոսանքի լարվածության աճն արագանում է, մատերիան ներծծվում է ոգու մեջ և կատարում ոգու արարչագործի դերը, այդ դեպքում ստացվում են նրբակերտ գոյաձևեր: Ոգու կրակի ուժը նման է մետաղները հալեցնող կրակի ուժին: Միայն հալեցման դեպքում կարելի է նոր համակցումներ ձևավորել: Իր էներգիան շիկացնել ցանկացող ոգին հալորդն է մատերիայի: Ինչպիսի՞ ձևեր և չափեր կարող է ձուլել ոգին ամեն տեսակի տարածական մատերիաներից ու մեր կյանքերից: Գիտակցությունների հալեցման գործը վաղուց իրենց վրա են վերցրել Տիրակալները: Հավերժությունն է այն բոցը, որի մեջ անվերջ զուգակցվում են նորանոր համակցումներ: Ճշմարիտ, դարեր շարունակ է ընթացել որոնումների երևույթը: Ո՞ւր է նա՝ սկիզբը: Առայժմ ասենք. «Նոր ձևերի հավերժ ցանկության մեջ»: Նույնպիսի ընդարձակ երազանքով պիտի կառուցենք մեր ապագան:

43. Նախագուշակի մարգարեության հաղթանակ: Հաղթանակն այդ ազդարարվել է կրակներով ու հոգեէներգիայով: Ամեն դար դրսևորում է իր գլխավորումները: Անսահմանության հաղթանակն ազդարարողը ճշմարտության կրողն է: Ինչպես քարերը ճանապարհին, դիզվում են ծաղրանքները, և հալածանքներն աճում են ու վերածվում անանցանելի մացառուտների: Չենք ոչնչացնի այդ մացառուտը, բայց իմաստալից ոգին իր թևերով կծածկի տգիտության բոլոր երևույթները: Ինչ–որ մեկին անհնարինության դրսևորում կթվա Անսահմանությունը: Ինչ–որ մեկին գեղեցիկ կթվա միտքը մահվան մասին: Մեկ ուրիշին սարսափելի կթվա աշ-

խատանքի երևույթը: Մյուսին սարսափազդու մի բան կթվա աշխատանքը: Մյուսն էլ անվերջ տիեզերական աշխատանքի ռիթմը կդիտի որպես հնակույտ: Սակայն իմաստության աչքը մատնացույց է անում այն կողմը, ուր չկա վերջ: Այնտեղ, որտեղ ամեն ինչ անշիջանելի է, և որտեղ ամեն ինչ անխախտ է և կործանելի: Այնտեղ, որտեղ ամեն ինչ ակնառու անձև է, ուր ապրում են բոլոր մեծ ու գեղեցիկ ձևերը:

Այո՛, Մենք կանչում ենք ձեզ՝ Անսահմանության հաստատմամբ:

Հոսանքների չիմացությունը և դրանք ընդունելու ցանկության բացակայությունը խիստ բարդացնում են էվոլյուցիան:

44. Երբ կանչում ենք հեռավոր աշխարհներ, ապա ոչ թե կյանքից կտրելու համար, այլ նոր ուղիներ բացելու նպատակով: Լոկ Անսահմանությանը մասնակից լինելու գիտակցությամբ կարելի է հասնել վերին ոլորտներ: Եթե հետևելու լինենք մարդկային ոգու զարգացմանը՝ սկսած ամենավաղ գոյաձևերից, ապա կնկատենք սկզբնական ոգիների գոյաձևերի տարբերությունները, ոգիներ, որոնք ծյուղավորվում են՝ ըստ համապատասխան դրսևորումների: Ներկայիս գոյաձևերը կարելի է անվանել կատարելության նվաճում փնտրողներ: Ապագա գոյաձևերը համապատասխանում են հեռավոր աշխարհներին: Զրկվելով տիեզերական հեռուների ճանաչումից՝ մարդկությունը որպես հետևանք տարանջատվեց Անսահմանության երևույթներից և կորցրեց կյանքի գեղեցկության ու տիեզերական էներգիայի հետ կապող թելը: Դաժան խզում է դա, և կորսված թելը վերածվում է իրականության աննշմար սարդոստայնի:

Մենք՝ մարդկության Եղբայրներս, գիտենք, թե ինչ է մեծ ու անպաճույճ, անկործան իրականությունը: Կանգ առեք Անսահմանության մեծագույն գեղեցկությունն ընդունելու վրա:

Թո՛ղ որ հեռավոր աշխարհներն ապրեն մարդկանց գիտակցության մեջ որպես չքնաղ թագավորություն: Դա անհերքելի է ու նույնքան իրական, որքան աճող ու ծաղիկ տվող սերմը: Հեռավոր աշխարհները մեկնաբանվում են այնպես, որ արդարացնում են սոսկ հեռավոր հասկացությունը: Բայց մի հայացք գցե՛ք հեռավոր աշխարհներ. այնտեղ կյանքը գեղեցկությամբ ու նվաճումների ձգտումով է հաստատված: Այնտեղ կրակն է ոգու, այնտեղ հուրն է սիրո, այնտեղ Երկրի թվացյալ պալարները փոխակերպվում են հրե ստեղծագործման: Ոգու կրակները գիտեն, որ ներկան ու դեպի լավագույն ապագա նկրտումների հերթագայությունը կստեղծեն այն սանդուղքը, որով բարձրանում ենք:

Մենք՝ մարդկության Եղբայրներս, կանչում ենք հեռավոր աշխարհներ:

45. Կյանքի պատրանքը ծնվում է լոկ տիեզերական արտահայտումների սահմանափակության մասին մտքից: Բայց կյանքի ճշմարիտ նշանակությունը ձգտում է ծնում դեպի Անսահմանություն: Պատրանքը նման է թմբիրի, բայց հիմնական ձգտումը կայանում է մեր խնդիրների անվերջանալիության հաստատման մեջ: Տարածական կրակների խնդիրը անխախտ է մարդկության համար, և մարդկային լճացումը խախտելու առաջադրանքը տրված է որպես նրա փրկություն: Այնքա՜ն շատ է խոսվել նրանց մասին, ովքեր կարիք են զգում ըմբռնելու այն, ինչով շաղկապված են մեր էությունները, և ընդունելով կյանքը՝ մենք պիտի ընդունենք կապի ուժը: Տարանջատ ուղեղները տարբերվում են իրենց ըմբռնման ճառագայթներով, և տարանջատումը հեռացնում է գիտակցությունը Սկզբնաղբյուրից: Կապի ուժը հաստատվում է որպես տիեզերական լճակ, և մարդն ի վիճակի չէ առանձնացնելու իրեն:

Դատարկության մեջ բացահայտ սաստիկ անկման ենթադրության ոչնչացմամբ միայն կբարձրանա գիտակցությունը՝ ըմբռնելու Անսահմանության հասկացությունը: Տիեզերքի սիրտը հավասար է արխաթի սրտին:

46. Տարածության արձագանքը հասցնում է տիեզերական երևույթների ցուցումը: Եվ այն, ինչ ունի մարդկությունը, նա փոխառում է Տիեզերքի գանձարանից: Անհրաժեշտ է ունենալ մեր էվոլյուցիայի ընթացքի անխախտելիության լիակատար գիտակցություն: Ցանկացած ձեռնարկում կախված է տիեզերական էվոլյուցիայի հաստատման ըմբռնումից: Միայն լիակատար հավատով ընդունումը կարող է հաջողությամբ պսակվել: Հավատի լճակը թույլ կտա թափանցելու մարդկանց ոգին: Սոսկ հավատի լճակով կարելի է հաղորդ դառնալ Անսահմանությանը: Հավատի մեծագույն լճակը կօգնի ոգուն՝ գտնելու ուղին: Հավատը դեպի Ուսուցիչը ձգտելու նշանն է: Վերցնենք իր ոգում Ուսուցչի հանդեպ սեր ծնած մանկան օրինակը: Հավատն է երեխային ոգու մարտիկ դարձրել, և միայնության ուղին վերածվել է բերկրանքի փայլատակման: Հույսը կգա, Տիեզերքի հիասքանչ ուժը կգա այն ժամանակ, երբ ոգին հավատ դրսևորի:

Դժվար չէ ոգու ստեղծագործություն դրսևորել, երբ մտածողությունը ցանկանում է պատկերացնել Տիեզերքը ոչ որպես փակ, ինքնամփոփ մի տիրույթ: Ցանկանալով փոփոխել պատկերացումը՝ մարդկությունն արդեն իսկ առաջ է ընթանում:

Նոր պատկերացումների ցանկությո́ւն ցուցաբերեք: Նոր ուղիների ցանկությո́ւն ցուցաբերեք: Ամեն ինչում Անսահմանության գեղեցկության ցանկությունն արթնացնելու դեպքում մարդկությունն առաջ կընթանա անվարան: Միայն Տիեզերքի վեհությունը կմղի ոգուն դեպի անհասանելի բարձունքները:

47. Եթե հնարավոր լիներ մատուցել Անսահմանության երևույթը ողջ տիեզերական ըմբռնման էությամբ, ապա մարդկությունը կհասներ զորեղ բարձունքների: Բայց դա հնարավոր է ընդունել միայն գիտակցության ընդլայնմամբ:

Մեկի ոգին կընկրկի Անսահմանությունից վախենալու պատճառով, մյուսի ոգին կընկրկի չիմացության պատճառով, արդի գիտության իմաստունի ոգին չոր ձայնով կասի. «Մեզ ի՞նչ այդ խնդիրը: Իսկ ո՞ւր է մեր դասագիրքը: Պիտի ստուգենք այդ Անսահմանությունը»:

Մեր խոսքի կրողը կասի. «Ամեն ինչ սլանում է դեպի տիեզերական հեռուները, ամեն ինչ գալիս է տիեզերական հեռուներից: Մեր կենսական թելերը ձգվում են խորքերից մինչև Անսահմանության բարձունքները: Տիեզերական ուժը, որն աննվաճ է, միևնույն էությունն ունի, ինչ մենք: Ինչպես աննվաճ է հրե տարերքը, այդպես և անպարտելի է մեր ոգին»:

Դեպի Անսահմանություն իր հայացքը հառած ոգին կասի. «Սոսկ ժամկետների ժամանակն է մեր խնդիրը, միայն իրականությունն է մեր առաջադրանքը, միայն բոլոր ձևավորված ու չձևավորված աշխարհներն են մեր ձգտման նպատակը, և զարհուրելի չէ նոր աշխարհի առաջադրանքը, երբ ցանկանում ենք հաստատել նոր տարածական միտքը»:

Մայրն Աշխարհի ապրում է ու կառուցում: Եվ Մենք ազդարարում ենք ոչ այն ցնորքը, որ ստեղծել է մարդկությունը, այլ անվերջ կառուցման ճշմարիտ ձգտումը:

48. Չարությամբ հագեցումը և կուրությունը տիեզերական իրականության լույսի հանդեպ դուրս են մղում շղթայից, և դժվար է կանխատեսել, թե ինչպես կտարածվի ոգու վարակը: Վարակ սերմանողները պատասխանատու են ողջ մարդկության առջև: Պատասխանատվության հասկացությունը պիտի զարգացվի անսահմանորեն: Ոգին մարդկային, իբրև արարիչ, պատասխանատու է իր իսկ գործած ամեն ինչի համար: Չերկյուղենք գիտակցելու պատասխանատվության երևույթը: Մենք պատասխանատու ենք ոչ միայն սեփական անձի, այլև Տիեզերքի առջև: Անշուշտ, Տիեզերքը աջակցություն է հղում, բայց մարդկությունը մտադիր է բարելավել յուրովի:

Չի կարելի խախտել շղթան, բայց երկաթյա օղակները ավելի նուրբ մետաղով փոխարինելը կարելի է: Այն ամենը, ինչ ուղղված է անսահման զարգացմանը, համընթաց է Տիեզերքի հարաշարժին: Տարածական պայքարը առանցքային թելն է ողջ գոյի: Պայքարի մեջ են ծնվում հնարավորությունները: Պայքարի մեջ են կոփվում ուժերը: Ըմբռնում հանդես բերեք պատասխանատվության և Անսահմանության գեղեցկության հանդեպ:

49. Ոգու և մատերիայի բաժանման դարաշրջանում պիտի կորստյան մատնված համարել նրան, ով ստեղծում է իր աշխարհը անընմբռնման շուրջ: Ինչ իմաստ ունի կառուցել և դեսուդեն ընկնել: Ինչ իմաստ ունեն բոլոր երազանքներն ու զրկանքները, երբ փլուզվում են բոլոր կառույցները, և այլևս անհնար է մարդկության ունեցվածքի գոյատևումը: Այնտեղ, ուր դատապարտյալն իր համար չնչին շրջան է նախատեսել, ողջ տարածությունն էլ նրա համար կանցնի ճիշտ նույն շառավղով: Երբ բարեկանոն գիտակցությունն ասի. «Կարելի է հավերժ օգտվել սեփական աշխատանքի պտուղներից», այնժամ, ճշմարիտ, կփայլատակի Անսահմանությունը մատնանշող ոգու սուրը:

Տիրակալ ոգին ինքն է հաստատելու ուղու ընտրությունը:

Եվ ինչ իմաստ ունի մթագնեցնել ուղին, երբ կարելի է հաստատել նախանշվածը իբրև պատվարից մինչև Անսահմանություն գցված կամուրջ:

Դատապարտյա՛լ, ինչո՞ւ չի հուշում սիրտդ, թե որն է ճշմարտությունը: Չէ՞ որ ամեն մի շարժման մեջ առկա է նյութի այն էներգիան, որը նույնական է Տիեզերքի էներգիայի հետ: Չէ՞ որ ամեն մի ատոմ շարժվում է ճշգրիտ հաշվարկով, և կուտակվում է ոգու յուրաքանչյուր ջղակծկումից առաջացած էներգիան: Թող ամեն ոք հասկանա, որ դատապարտված է ոչ թե կարմայական անողոքության պատճառով, այլ ինքն է իրեն դատապարտել: Տիեզերական արդարադատությանը ծանոթ է էվոլյուցիայի ծրագիրը, և ծրագիրն այդ իրագործվում է Աշխարհի Մոր միևնույն **հրե օրենքի** նախանշումով:

Թող լուսավորի մարդկանց հրեղեն բոցը:

50. Կենսական ազդակն ապրում է մարդու մեջ և նրանից դուրս գտնվող ամեն ինչում: Տիեզերքի կյանքի հիմքը շաղկապում է գոյը: Եվ ամենը, ինչ ստորաբաժանված է գիտակիցի և անգիտակիցի, հարկ է լինելու ստուգել: Դեռևս շատ հարաբերական են հասկանում գիտակցության մասին միտքը, և ընդունված է ենթագիտակցություն ու անգիտակցական անվանել տիեզերական կրակների այն դրսևորումները, որոնք պարզապես չի հասկացել մարդկությունը:

Երբ դրսևորվող տարերքները ընդունվում են որպես Տիեզերքի մռնչյուն և անկարող են գտնել մեկ այլ բացատրություն, այնժամ անհրաժեշտ է վերջ դնել կուրությանը, քանզի մտքի մեկուսացումը հեռացնում է Անսահմանության գիտակցումը: Սկզբնավորումները միշտ այն ստեղծարար ազդակի ծնունդն են, որը շարժման մեջ է դնում արարչի ձեռքը կամ կյանքի սերմը տանող քամու պոռթկումը և գտնելով պատշաճ հող՝ կարող է ստեղծագործման ծիլ առաջացնել:

Կյանքի կառուցման խնդիրներով ծանրաբեռնված մարդը պիտի ոգով ընդունի կենսական ազդակի անսահմանությունը:

51. Հեռավոր աշխարհների հետ հաղորդակցվելու ծարավը հնարավորություն կտա հաղորդ դառնալու Տիեզերքի հարաշարժին: Մարդկությանը նշանակված ժամկետը՝ գիտակցելու Անսահմանությունը, արդեն ճեղքում է տիեզերական կրակների շերտվածքները: Տարբեր ճանապարհներով էին մարդիկ փորձում մերձենալ ճշմարտությանը: Տարատեսակ դրսևորումները մղում էին նրանց պահքի ու մտրակումների, մարմնի ծվատմանն ու ոգու փայտացմանը: Բոլոր որոնումները գրանցված են նկրտումների մատյանում: Բայց ոգու առաջընթաց չի կարող լինել առանց մարտի անվերջանալիությունը գիտակցելու: Ոգու առաջընթաց տեղի է ունենում այնտեղ, ուր ոգին ողջ անսահման նկրտման մեջ փնտրում է իր արգելափակիչ ցանցը: Բայց նա, ով արգելափակիչ ցանցը փնտրում է անդորրի մեջ, սուզվում է անընմբռնման մշուշի մեջ:

Թող որ լուսավորի մարդկանց հրեղեն բոցը:

52. Այն, ինչ ստեղծվել է Տիեզերքի մեկ համընդհանուր օրենքով, չի տարանջատվում տիեզերական էներգիայի հրամայականով: Ողջ տարածության մեջ **միասնություն** է դրսևորված, և այդ օրենքն արտացոլվում է կյանքի բոլոր երևույթների մեջ: Անսահմանության բազմազան գոյաձևերը արտացոլում են բոլոր տիեզերական կրակները: Միայն Տիեզերքի դրսևորման անսահման էներգիայից մեկուսացած մարդը, հիրավի, նման է ճշմարտությունից թաքնված մարդու:

Միթե նպատակ ունի Տիեզերքը ոչնչացնելու այն, ինչը շաղկապված է ստեղծագործ, կենսարար մի ազդակով: Զարգացման սահմանը տարածական կրակի՝ որպես մշուշի, ըմբռնում է տալիս: Խմբային գիտակցությունը ոչնչանում է սկիզբների մեծարման չիմացության հետևանքով: Մեծ է մարդկային ոչնչացումը, և դա է հետընթացի խթանը: Խնդրի չըմբռնումը տգիտության պատճառով և ավելորդ էներգիայի վատնումը՝ բացահայտ պատրանք ստեղծելու համար, ոգու մեծագույն անհամաչափելիությունն են:

Տիեզերքն արարում է Անսահմանության համար: Տիեզերքը կառուցում է համաչափորեն: Շփումն անհրաժեշտ է, և Materia Luzida–ն տիեզերական ճառագայթների գիտակցությունն է:

Ուռուսվատին իրավացի է՝ անվանելով մատերիա լուսիդան մեծն **Աշխարհի Մայր**: Ուռուսվատին իրավացի է՝ անվանելով մատերիա լուսիդան **տիեզերական սեր**: Ճշմարիտ, Տիեզերքը հյուսված է լուսիդայի մանվածքից և սիրո լծակով: Միայն խեղճ մարդկությունն է, որ միայնակ հանդերձավորվել է ժխտման խավարի ծածկույթով:

53. Տարածական կրակների Տիեզերքն ու տարերքները ալեկոծում են ոլորտները և կյանքի կոչում ողջ գոյը: Տիեզերական կրակը բոցավառում է կյանքի մեկ դրսևորում՝ համակցելով նրան այլ գործընթացների շղթային: Նա, ով չի կարող պարուրվել Տիեզերքի հավերժ, անսահման աշխատանքի գիտակցումով, զուրկ է կյանքի մեծագույն ըմբռնումից: Նա, ում մատչելի են տարածական հնարավորությունները, տեսնում է, թե որքան սահմանափակ է մոլորակը և պաշտպանիչ վահան է լոկ նրանց համար, ովքեր ընդունում են իրողությունը որպես կյանքի նեղ կածան: Երբ ոգին ընդունակ է վեր սլանալու ոլորտների բարձունքները և տեսնելու մոլորակի կյանքը որպես սքանչելի մի փուլ, որը փակ կորագիծ չէ, այնժամ կարելի է երաշխավորել, որ այդ ոգին անցնելու է հրեղեն էվոլյուցիայի ուղին:

Ճշմարիտ, կարելի է ճանաչել տարածության ճառագայթի մեջ տիեզերական էներգիաների իրական արտահայտումը. սրանով ենք զարդարելու մարդկության կյանքը:

Մոտահաս է Անսահմանության հաստատումը:

54. Այն տեսությունը, որը պնդում է, թե դրսևորված կյանքի հարաշարժը գիտակցական կենսական ազդակի արդյունք չէ, և այն պնդումը, թե կյանքն իրենից ներկայացնում է միայն մեկ համակցություն, հանդիսանում է ամենաարժեքավոր իմաստի կորուստ: Իմաստազրկելով ու զրկելով գիտակցականությունից՝ գործընթացը դարձրին ստեղծագործական առումով ոգուց զուրկ: Երբ վերաճող էներգիայի գործընթացն արարում է, չի կարելի խորհրդանշական իմաստ վերագրել՝ պնդելով, թե կյանքը սոսկ Անսահմանության ստեղծագործական դրսևորում է: Կայծը կարող է ապրել ողջ տիեզերական տարածականության մեջ: Եվ ինչպե՞ս բացատրել այն Բանականությունը, որն ապրում է ողջ անընդգրկելի տիրույթներում և Տիեզերքի բոլոր դրսևորումներում: Զրկելով գոյը գիտակցական կենսական ազդակից՝ մարդկությունը ոչնչացնում է գոյության բուն միջուկը: Չի կարելի զրկել Տիեզերքի շարժումն ու շունչը իր ոգուց: Այլապես գոյը կհաստատվի կործանման սահմաններում:

Ասենք. «Կյանքն ու Անսահմանությունն են հյուսում կյանքը անսահման»:

Տիեզերքի կոչումն է՝ բազմատեսակ գոյաձևեր և միաժամանակ՝ միասնական կենսական ազդակ: Այլ կերպ չի կարող դրսևորվել Տիեզերքը: Կրակի մաքուր դրսևորման մեջ Տիեզերքն անկարող է ծնել բոլոր գոյաձևերը: Միայն սկիզբն է ինքնաբավ, հետո գերակշռում է տարբերությունը:

Ողջ կյանքն է կառուցվում բևեռականության վրա:

Կարմայի հոսքը սլանում է հոսանքի պես, և գիտակցությունը կարող է փոխակերպել հոսանքը դրսևորված, գեղեցիկ ու սրբազան միության: Բայց թե ինչպես են մարդիկ հասկանում կարմայի հոսանքը, հայտնի է մարդկանց գործողություններից: Դա է պատճառը, որ Մենք պիտի թաքցնենք նվիրականը: Կարմայի ու միության հաստատման երևույթը Մենք հաստատում ենք որպես մեծագույն ճշմարտություն:

55. Գիտակցության սահմանափակումը իր կողմն է ձգում միայն անկատար հոսանքները: Ստեղծագործման ուժը համապատասխանում է ոգու կանչին, և գիտակցության չափն էլ համապատասխան է հենց այդ ոգու ստեղծած շրջապատող միջավայրին: Հակազդեցության օրենքը գործում է ամենաուղղակի կերպով: Տիեզերական էներգիան, որպես գործող ստեղծագործ ազդակ, ամփոփիչ կյանք է տալու այնտեղ, ուր նկրտում է դրսևորվել: Եթե մարդը գիտակցեր փոխադարձ մեծագույն հակումը, ապա նա ավելի հաճախ կուղղեր իր էներգիան տիեզերական ստեղծագործմանն ընդառաջ: Չէ՞ որ կանչը հաստատվել է որպես մեծագույն մագնիս: Իմաստություն ունի իր հիմքում այն հավատալիքը, որ արարում է Աումի կանչը, երբ ոգին նրան գիտակցաբար է գործադրում: Բայց անհամապատասխան ոգու կողմից գործադրվող ճառագայթը կարող է միայն կործանել: Կանչի մեջ են ամփոփված բոլոր պատճառներն ու հետևանքները:

Դիմողի ոգին կանչում է տիեզերական ուժն ու արթնացնում այն: Անսահմանությունը մարդկությանը ի օգնություն կանչող ոգին էվոլյուցիայի օգնականն է դառնում: Կանչին անծանոթ ոգին չի կարող կիրառել Անսահմանության դրսևորված ուժերը:

56. Կրակի երևույթը մերձեցնելու սխրանքը մարդկությանը մոտեցնում է Անսահմանությանը: Երբ գոյը բոց է, այնժամ ամեն ինչ լուծվում է բոցեղեն դրսևորման մեջ: Երբ գոյը հուր է, այնժամ ամեն ինչ հագեցած է նրանով: Երբ գոյը հրեղեն լայնարձակություն է, այնժամ մեր կյանքը հագենում է տիեզերական էներգիայով:

Տիեզերական հրեղեն էներգիայի մեջ նախատեսված են բոլոր այն դրսևորումները, որոնք կենսաբեր են և ամեն մի ատոմում կրում են մի նոր համակցություն և մոտեցնում մոլորակային կյանքը բարձրակարգ գոյաձևերի կառուցմանը:

Սառցային շրջանի սկզբնական գոյաձևերի և հետագա շրջանների դիտարկումները ցույց են տալիս, թե որքանով է հոծ մարմնի ձևն արտացոլել ոգու հոծությունը: Ուստի հարկ է ընդունել կրակը որպես բարձրակարգ գոյաձևերի արարիչ: Կրակի ապագա էվոլյուցիայի երաշխիքը տարածության կրակն է: Էվոլյուցիան չի կարող ընթանալ կարծրացման

ճանապարհով, սոսկ նուրբ ըմբռնումն ու Անսահմանության նրբին ընկալումը ուղի կբացեն մարդկության համար:

57. Եթե սահմանենք, որ Անսահմանություն տանող ուղին այն ափն է, դեպի ուր սլանում է բարձրագույն տարածական էներգիայի ու գոյի սկզբի միավորումը, ապա կարելի է պնդել, որ Տիեզերքն է արարում գոյի գիտակցությունը:

Վերերկրային ոլորտներում հավաքված են կենսական շնչառության համար անհրաժեշտ նյութական մասնիկները: Այն գիտակցումը, որ տարածության մեջ առկա են առանձնակի ուժով արթնանալու ձգտող բազմաթիվ մասնիկներ, կստիպի մտորել՝ հնարավորություն տալ յուրաքանչյուր մասնիկին կյանք դրսևորել: Դեպի ուր էլ որ ուղղվի մտածողությունը, կգտնի այնտեղ Անսահմանության ճշմարտության անխախտելի վահանը:

Ինչպե՞ս կարելի է ոչնչացնել շարժման ուժը և ինչպե՞ս կարելի է չընդունել ողջ տիեզերական կրակի այդ իմաստուն ու հավերժ պատճառը: Տիեզերական կրակի ակներևությունն առկա է մարդկային կացարանի բոլոր անկյուններում, բայց որպես կողմնակի դրսևորում: Մարդն առանձնացել է ստեղծագործ ազդակի լավագույն մասից: Մատերիա լուսիդայի հայտնաբերումը երկրային ոլորտում հնարավոր է լոկ ոգեղեն գիտակցության մեջ: Կոպիտ ձեռքերը չեն կարող շոշափել Աշխարհի Մոր ծածկոցը: Կոպիտ գիտակցությունն անկարող է ձևակերպում տալ տիեզերական էներգիայի դրսևորմանը: Կարելի է բարձրագույն մատերիային շփվելու իրավունք ստանալ, եթե միայն ցանկանում ես աչքերդ բացել:

Ասենք. «Անդարձորեն ընթացե՛ք ստորին ոլորտից դեպի հեռավոր աշխարհներ: Անդարձորեն նպատակաուղղվե՛ք վերելք կատարելու դեպի Անսահմանություն»: Եվ ավելացնենք. «Ձգտե՛ք անսահմանորեն»:

58. Տարածության մեջ ամփոփված են այն թելերը, որոնք շաղկապում են հոգիները և նպաստում ձգողությանը: Սակայն անչափ սահմանափակ ու կոպտացած են մարդիկ և հեշտորեն կորցնում են կյանքի պտտահողմի թելերը: Կոպիտ, նյութական հոգիները չեն արձագանքի տարածության կանչին: Ստեղծագործական բերկրանքի երևույթն ապրում է բարձրագույն ոլորտների գիտակցության մեջ և մոլորակի վրա առկա բարձրագույն լարվածության ոգում:

59. Էվոլյուցիան կարիք է զգում մեր գիտակցության ուղղորդմանը: Լարված ուժեր են հարկավոր, պատրաստականություն ու հրեղեն գործողություն են հարկավոր: Մարելու ձգտումն արդեն իսկ տարանջատում է Անսահմանությունից:

Իրավացի է Ուռուսվատին՝ ասելով, որ Օրինյալի Ուսմունքը հոսանք է հրեղեն: Հիրավի, հոսանք է, որ տանում է բոլոր նկրտումները դեպի Անսահմանություն: Դիտենք խառնարանի մարումը. մի գորշ հեղձուցիչ, քարացող լավա է: Ինչ կարող է կենսագործել մարումը, երբ մարդկությանը տրվել է սլացիկ հուրը: Չի՛ կարելի մսխել կառուցման համար տրված ուժը:

Անհրաժեշտ է ըմբռնել ամփոփ տիեզերական օրենքը և Օրինյալի ու Տիրակալների Ուսմունքը՝ որպես դեպի Անսահմանություն հրամայաբար կանչող երևույթներ:

60. Յուրաքանչյուր ոք պիտի իր սրտում գտնի Ուսմունքի բանալին: Աշխարհի Ուսմունքի ըմբռնումը կարող է բացել ոգու ստեղծագործությունը: Ուսուցչի կերպարը կարող է պայծառափայլ ուղի հարթել դեպի տիեզերական ընդարձակություն:

Մարդկության եղբայրները զորություն են սլացիկ, բայց մարդկությանը դժվար է ընդունել այն, ինչ անընկալելի է կոպիտ տեսողությամբ: Երբ կգա ժամանակը հաստատելու, որ զգացիմացությունը զորեղ է աչքից, այնժամ կարթնանան մարդկային ոգու գիտակցությունը, նրբազգացությունն ու նրբությունը:

61. Իրեն հավերժ աշխատանքի դատապարտված համարող մարդը հոգևոր տեսանկյունից խափանում է Անսահմանություն տանող իր ուղին: Միայն նա, ով գիտակցում է իր ընտրած ուղու գեղեցկությունը, կարող է ձեռք բերել տարածության կրակ:

Տիեզերքի հետ լարված ռիթմով ընթանալու բանաձևը կյանքի լավագույն ըմբռնում կտա:

Տիեզերքն ու մեր կամքը խորհրդանշում են գոյի հաստատումը: Եվ կամքի ազատությունը լոկ մարդկային ոգու դրսևորման այդ մեծագույն հնարավորությունն է: Երբ տարածության կրակը ուղղորդում է գիտակցությանը դեպի Անսահմանություն, այդժամ լարվում է էներգիայի սլացիկ հոսանքը: Երբ ավարտվի մեկուսացումը, այնժամ միաձուլումը կբռնի Անսահմանության ուղին: Ողջ տարածության մեջ մի զարկերակ կա, և **Տիեզերքի օրենքը** միակն է գոյի համար: Ստեղծագործումը նախանշված է բոլոր հաստատված կյանքերի և ողջ տարածության համար:

Հեռավոր աշխարհները մեր դրսևորված ուղին են: Հեռավոր աշխարհները մեր պայծառացումն են: Հեռավոր աշխարհները զորեղ Աշխարհի Մոր երազանքի մեր ընդարձակությունն են: Եվ ընդարձակություն փնտրող մարդկային ոգին ունի դրսևորված հեռավոր աշխարհներ: Ասենք. «Անմատչելին կարող է դառնալ մատչելի և զրկանքը՝ սեփականություն, ուստի ուղղենք կամքը դեպի Անսահմանություն՝ նրա ողջ գեղեցկությամբ»:

62. Անսահմանափակ է գոյաձևի աշխարհը, և զարգացած ընկալումն ու երևակայությունը կարող են հավելել գոյություն ունեցող կեցությանը բազմատեսակ դրսևորումներ: Եթե ըմբռնենք տարածության բոլոր ուղղություններով վեր ընթացող ամբողջ աղեղը, ապա կարող ենք հասու լինել հեռավոր աշխարհների ըմբռնմանը: Ինչո՞ւ չհարստացնենք կյանքը՝ գիտակցության մեջ ընդունելով, որ բացի երկրային ապաստարանից, ոգին ունի այնպիսի գանձեր, ուր կարող է ձգտել: Հեռավոր աշխարհների վրա կյանքը ժխտողները զրկում են իրենց սեփական բացահայտ բարիքներից: Ինչո՞ւ չընդունել, որ աշխարհները շղթայակցված են մի շղթայով, որ տանում է սկզբնավորումից դեպի անվերջանալի էվոլյուցիա: Վերընթաց աղեղով շարժվող ստեղծագործումը արարում է այնպես, ինչպես և տիեզերական կրակը:

Ի՞նչ իմաստ ունի սահմանափակել Տիեզերքը միայն Երկրով և մտածել, թե Տիեզերքը միայն մի ապաստան է տրամադրել մարդուն: Ընթանանք վերընթաց աղեղով՝ համագործակցելով հեռավոր աշխարհների հետ: Ոգին գիտի, որ անհրաժեշտ է խորացնել ստեղծագործությունը և հաջորդ փուլի հետևանքները:

Դիտենք մեր մոլորակը հեռավոր աշխարհներից. անձուկ է, ճչում է մարդկային ոգին երկրակեղևի վրա: Նայենք մեր մոլորակից հեռավոր աշխարհներին. Անսահմանության լայնարձակություն է, ցնծում է ոգին:

Ընդունենք խորախորհուրդ ու նախանշված նվիրական ուղիները: Լայն է դաշտը ակնհայտ ընթացող Ուռուսվատի Տարայի համար:

63. Արարածները և արարողը մեկ մեծագույն տարածական ուժ են և փոխադարձաբար ձգվում են իրար ստեղծագործ ազդակի շնորհիվ: Այն ոգին, որը պարգևում է տարածությանը իր ստեղծածով, իր համար ուղեկիցներ է պատրաստում, և ուղեկիցներն այդ հաստատում են կյանքի այն սահմանագիծը, որից հետո նա կարող է սկսել մի նոր փուլ: Գործողությունը մեր հավերժ ու հավատարիմ ուղեկիցն է, և չենք կարող մենք թաքնվել մեր կարմայի նախասահմանվածությամբ: Արարիչն ու նրա արարումները մշտական առաջխաղացումներ են Տիեզերքում:

Ցավալի է, երբ կյանքի պտույտը կատարած ոգին հայտնվում է միևնույն կետում: Ցավալի է, երբ ոգին նախանշում է իր համար նույն սահմանը, և իր ստեղծածը՝ հավատարիմ ուղեկիցը, սպասելու է շեմին: Ուղիղ գծով են կապված մարդն ու նրա ուղեկիցը: Բայց տիեզերական հոսանքին համընթաց շարժվող արարիչը գիտակից ուղեկից է, և նա ձգտում է ոչ թե հասնելու կացարանի շեմին, այլ նպատակամղվում է դեպի հեռավոր աշխարհներ:

Կտրատեք կապանքները և հրաժարվեք ստեղծված լինելու կարմայից: Ընտրեք կանչող Անսահմանության բացահայտ ուղին:

64. Տիեզերքն ասում է՝ կյանքը թրթռում է բոլոր ատոմների մեջ և շարժման մեջ դնում էվոլյուցիայի երևույթները: Բայց Տիեզերքն ասում է ոչ միայն բոլոր օրգանական դրսևորումների մասին, այլ ազդարարում է հոգեկան կյանքը: Ոգու հոգեդինամիկան կեցության հիմքն է: Հոգու աչքը տեսողության հիմքն է: Տիեզերքի հոգեոգեղեն դրսևորված միտքը ստեղծագործության երաշխիքն է Տիեզերքի ողջ անսահման կյանքում: Տարածական օրգանիզմների բոլոր դրսևորումներում փնտրեք ոչ միայն ազդակը, այլ նաև ատոմի մեջ հոգեկան կյանքի տենչը: Այդժամ ոչ միայն կճանաչեք աշխարհը, այլև կտեսնեք Տիեզերքի ողջ անսահման աշխարհները: Իմաստավորենք մեզ շրջապատող աշխարհներն ու Բարձրագույն Բանականությունը:

Բոլոր բջիջները ոչ միայն զարգացում են, այլև Տիեզերքի էութենական հոգեդինամիկա են: Մարդն ու իր շարունակությունը ևս Տիեզերքը համակող հոգեդինամիկա են: Երբ հոգեդինամիկայի սկզբունքն իմացողները գիտակցեն, որ մարդկային ցեղի հարատևման ու վեցերորդ ռասայի ծննդի համար անհրաժեշտ է ունենալ հոգեդինամիկական առաջխաղացում, այնժամ մարդկությանը հասանելի կդառնա տիեզերական էներգիան: Կյանքի հաստատված սկզբունքներն ու շարժումը կրում են իրենց հետ այդ բանաձևը՝ դեպի Անսահմանություն տանող հերթափոխումների ու հաջորդականության հասկացությունը:

Օրգանիզմի մահը դրսևորվում է որպես որոշ տեսակի քիմիական ռեակցիա, բայց իր գիտակցության ոգու հոգեկան կյանքը սպանող մարդը համալրում է տիեզերական ստեղծագործման շարժը բացահայտորեն ոչնչացնողների շարքերը: Անսահման են գոյության ու հոգեկան կյանքի թևերը և տանում են դրսևորված կրակները դեպի բուն արեգակի սիրտը:

65. Պատկերացնենք, որ գոյություն ունի Տիեզերքի տարբերացման և մի ատոմի սկիզբների ու տիեզերական էներգիայի դրսևորված մասնիկի միավորման համանմանություն, որը ամենաբարձր ներդաշնակություն է տալիս կյանքում, դրսևորված լինի այն հագեցած նյութերում, ատոմի մագնիսաէլեկտրականության մեջ, թե մարդկային ոգու անվերջ որոնումների մեջ, բայց բոլոր տիեզերական դրսևորումներում մենք նկատում ենք հոգեկան կյանքը: Հոգեկան կյանքն է շարժում ատոմը, և ատոմային էներգիան է ատոմի հոգեկան կյանքի լծակը: Մարդկային կյանքի սկզբունքը բխում է ատոմի հոգեկան կյանքից: Դժվար է դա

պատկերացնել որպես գիտակցության սահմանափակման հաղթահարում, բայց սովորենք ըմբռնել հոգեոգեղեն կերպով, և այդժամ մոլորակը կընկալվի որպես տարածական կրակի խորհրդանիշ:

Հոգեդինամիկան հաստատում է տիեզերական կրակների կյանքը: Հոգեդինամիկան խթանում է ողջ գոյի զարգացումը և համաձայնեցնում է բոլոր համակցությունները: Հոգեդինամիկան միավորում է տարանջատ ատոմները, և նա հենց այն ուժն է, որը տարերքների և մարդու տարերային գոյաձևերի մեջ Տիեզերքի բարձրագույն դրսևորումների երաշխիքն է:

Երբ Մենք խոսում ենք տարերքների մասին, ապա ոչ մարդկային հասկացողությամբ:

Հոգեդինամիկան ու հոգեկան կյանքը, ճշմարիտ, Տիեզերքի էներգիայի շարժիչներն են: Եվ անսահման են Տիեզերական Բանականության այդ բարձրագույն հաստատումների դրսևորումները:

Հոգեկան կյանքի բացառիկ դրսևորումն է մարդկային ատոմի միավորումը: Այն դրսևորվում է գիտակցաբար, և հոգեդինամիկան միավորման է մղում ամենանուրբ լարերը: Տարանջատ ատոմների շաղկապման երևույթը կարելի է անվանել Տիեզերքի **սրբազնագույն արարք**: Այդ պատճառով էլ նվիրական, հրեղեն ու սլացիկ է Մեր տիեզերական հանձնարարականը:

Երբ ատոմը մոտ է միավորմանը և նպատակամղվում է գիտակցաբար, այդժամ Աշխարհի Մոր աստղը հուրհրում է առանձնապես վառ, և ցնծում են բարձրագույն աշխարհները:

Հոգեմիավորված ատոմները հագեցնում են տարածությունը ստեղծագործման կրակով:

Երբ հոգեդինամիկան համախմբում է իրար պատկանող ատոմները, և ցնծում է տիեզերական արդարությունը, այնժամ տարածությունը ցնցվում է տիեզերական ցնծությամբ, և պայթյունով ծնունդ է առնում նախորոշված մոլորակը:

66. Տիեզերքը բաղկացած է մատերիա մատրիքսի մի քանի հոգետարածական դրսևորված հիմքերից: Մակրոկոսմն ու միկրոկոսմը ունեն իրենց հիմքերը, ավելի ճիշտ՝ տիեզերական ատոմի իրենց միևնույն հիմքը: Տարանջատող էներգիան և միավորող էներգիան միևնույնն է, բայց հոգեդինամիկան նյութականապես շաղկապում է նրանց: Անսահմանության հավերժ օրենքն է՝ տարբերացում, սկիզբների դրսևորումը կրող տարանջատ ատոմների փոխադարձ փորձարկում և համախմբում: Տիեզերքը նախասահմանված է որպես մեծագույն շինարար և տիեզերական էներգիայի սիրտ: Ներդաշնակեցնող, ստեղծագործ տարածական ուժը,

գտնելով իրեն պատկանող տարրերը, ենթարկվում է տիեզերական էվոլյուցիայի մեծ հոգեդինամիկային: Շինարար Տիեզերքը և նրա արտացոլումը՝ միկրոկոսմը, ապրում են միևնույն օրենքով: Եվ Տիեզերքում ապրում է անսահման ներդաշնակումը: Նա, ով փնտրում է այս ճշմարտությունը, կգտնի անսահման գոյության գեղեցկությունը:

Մենք պնդում ենք, որ համակված ենք Տիեզերքի ստեղծագործությամբ, և որ միայն Մեր սեփական նկրտումը կարող է ուղղորդել Մեզ դեպի այն նվաճումը, որը Մայրն Աշխարհի և Մենք՝ Արխաթներս, վերածում ենք բարձրագույն խորհրդի: Հրե էներգիայի գիտակցությունը ուղղորդում է տարածական սկզբունքը, բայց գիտակցության տարբեր լարումները հաճախ խոչընդոտում են միավորմանը:

Տիեզերքի հաղթանակը երկու սկիզբների ներդաշնակումն է: Ես ասում եմ, Ես հանդիսավոր կերպով հաստատում եմ, երբ աշխարհին տալիս ենք նոր Ուսմունք:

67. Հեռավոր աշխարհները հագեցնում են տարածությունը՝ որպես մարդկային կյանքի առայժմ անիրագործելի հասկացություն: Տարածական կրակի և հեռավոր աշխարհների տիեզերական հասկացությունը մարդկային գիտակցության համար պիտի գոյություն ունենա որպես հեռավոր նպատակ: Երազանքի իրականացումը ընդունելի է քաղքենու գիտակցության համար: Հեռավոր նպատակի իրականացումը կարող է մոտեցնել հեռավոր աշխարհների ըմբռնումը: Նրբացումն ու նկրտումը առ տարածական կրակ կարող են բացել հեռավոր աշխարհներ տանող ուղին: Աշխարհների բոլոր դրսևորումները կարող են հաստատվել բարձրագույն ներդաշնակության մեկ պոռթկումի շնորհիվ:

Ինչո՞ւ պիտի համարենք, որ հեռավոր աշխարհների գոյաձևերը իրենց հիմքում ունենալու են Երկրի համար տարօրինակ ձևեր ու ամեն տեսակի անընդունելի դրսևորումներ: Նրբագույն հասկացությունների առաջխաղացմամբ է ձևավորվելու Տիեզերքի այդ հաստատված ուժը, և Անսահմանության ոլորտները չեն լինելու սոսկ տիեզերական փոշու կրողներ, այլ կբացահայտվեն մարդկային ըմբռնմանը որպես նկրտման նպատակակետ հանդիսացող երկիր: Արդ գիտակցե՛ք ու ստեղծե՛ք հեռավոր աշխարհների մտածողությունը: Որպես արտացոլված հեռավոր ճառագայթ, որպես սրտի արձագանք՝ փնտրե՛ք Անսահմանության մեջ արտահայտումը, որն անմատչելի է Երկրին, բայց մատչելի է ըմբռնում և դեպի բարձրագույն ոլորտներ թռիչք դրսևորող ոգուն:

68. Անդադար տիեզերական գործողությունն է իշխում ամենուր: Կարելի է խոսել գործընթացների փոփոխման մասին, բայց անընդհատության սկզբունքն է նախապատրաստում էվոլյուցիան: Տիեզերական գոր-

ծընթացների անընդհատությունը նման է բոցի, որ անդրադարձվում է դրսևորված կյանքի ողջ գործունեության մեջ: Դրսևորված կենսական լարվածությունը բերում է իր հետ անընդհատության թելը: Լարման ու տարանջատման սկզբունքը տիեզերական հիմքի միևնույն զուգակցումն է:

Երբ ասում եմ, որ տիեզերական անընդհատությունը հաստատում է նաև մեր կարման, նշանակում է՝ ցանկանում եմ դուրս բերել մոլորությունից մարդկային գիտակցությունը և շարել այդ մարդկային ոգուն անսահմանություն տանող ըմբռնման թելը: Պնդում եմ, որ հստակ ըմբռնումը ցույց կտա մեր բոլոր գործողությունների անընդհատությունը: Տիեզերական կրակը անընդհատ է ու անդադարելի: Հարկ է հասկանալ, որ Անսահմանությունը կուտակվում է կենսական գործընթացների դրսևորումներից: Պատճառն ու հետևանքը, միտքն ու գործողությունը կենսական սկզբունքի կարմայական կանխորոշումներն են: Դեպի ո՞ւր կարող է շեղվել չընդհատվող շղթան: Բաց է ոգու առջև անընդհատ ուղին և Աշխարհի Մոր խորհրդանիշն է այն անհատի համար, ով ընտրել է լույսի խորհրդանիշը: Բայց թափառողն ու խավար փնտրողը չեն հպվի տարածական կրակին:

Աշխարհի Մոր խորհրդանիշի իմացությունն դրսևորեք:

69. Կյանքի հիմքը գրառվելու է «Կյանքի Մատյանում», և այն ժամանակ, երբ գիտակցությունը կհասնի առհավետ միավորում դրսևորելու մակարդակին, կարելի կլինի ասել մարդկությանը. «Կառուցեք կյանքը միավորման սկզբունքի հիման վրա»: Քանի՞-քանի ոգիներ կկարողանան իրականացնել իրենց դրսևորումները բարձրագույն ճանապարհով:

70. Մարդկային գիտակցության վրա, իբրև դաժան ճակատագիր, կախված է մահվան մասին միտքը: Որպես անխուսափելի բաժակ է կանգնած մահվան ուրվականը, և անցնելով կյանքի ամբողջ ուղին՝ ոգին հանգում է եզրակացության, որ այստեղ հարկ է ավարտել կյանքի դրսևորումը: Այսպիսին են Տիեզերքի հետ տարանջատված ոգու ճանապարհները:

Չիմանալով սկիզբը և տեսնելով լոկ վախճանը՝ Տիեզերքի հետ տարանջատված ոգին անցնում է իր կյանքը աննպատակ: Բայց ամեն ոք կարող է արժանի դառնալ անմահությանը գիտակցության մեջ Անսահմանությունն ընդունելու դեպքում: Աներկյուղությունը վախճանի առջև և ձգտումը դեպի Անսահմանություն կուղղորդեն ոգուն դեպի տիեզերական անսահմանափակության ոլորտները: Հաստատվե՛ք անմահությունն ընդունելու մեջ ու ամեն մի գործողության մեջ ներդրե՛ք տիեզերական կրակի ստեղծագործման կայծը: Եվ այդ անողոք ճակատագիրը

կվերածվի տիեզերական կյանքի մի կանչի: Մեր մեծագույն արդար օրենքն ընտրել է ձեզ՝ մասնակից լինելու համաշխարհային երևույթներին: Գիտակցե՛ք անմահությունը և տիեզերական արդարությունը: Յուրաքանչյուրին նախապատրաստված է հիասքանչ աստիճան: Գտե՛ք անմահության մասին մտածելու ուղին:

71. Կարելի է պնդել, որ մարդկության գիտակցության մակարդակը ուղիղ համեմատական է մոլորակային դրսևորմանը, սակայն չի կարելի ասել, թե Տիեզերքի ու մոլորակի մակարդակները համեմատելի են: Ինչպե՞ս կարելի է այդպիսի չափանիշ ընդունել, երբ ողջ Տիեզերքը անսահման է և հորդում է՝ ողջ տարածության մեջ կյանք սերմանելու համար իր կայծերը ցրիվ տվող հրե շիթի նման: Միակ է շիթը, և բազմաթիվ են կայծերը: Միակ է Տիեզերքը, և անսահման են գոյաձևերը:

Մենք ձեր Եղբայրներն ենք: Մեզ ծանոթ է կյանքի այն էջը, ուր գրված է Տիեզերքի միասնականությունը: Մենք հաստատում ենք, որ ոչ թե տարանջատմամբ է արարվում դրսևորված էվոլյուցիան, այլ անսահման նկրտումով դեպի ներդաշնակություն: Որքան գեղեցիկ, այնքան վեհ, որքան հզոր, այնքան բարձր: Ի՞նչ իմաստ ունի պայքար դրսևորել ոգու ու մատերիայի միջև, եթե նրանք բխում են միևնույն Սկզբնաղբյուրից: Ինչո՞ւ չլարենք ուժերը և չզգանք մեր մեջ Տիեզերքի այդ հոգեկան կյանքը:

Մենք կանչում ենք դեպի սաղմնավորման Սկզբնաղբյուրը: Դարերով Մենք գործադրում ենք Մեր նկրտումը՝ պարգևելու մարդկությանը գոյության բերկրանքը, բայց Տիեզերքի մասնակիցները անկռահողականություն են դրսևորում ու երազում են ունենալ հանգստություն և ավարտ՝ մեկ թաղանթով: Պետք է հասկանալ, որ մանվածքի հյուսվածքը բաղկացած է բյուր թելերից, և մանվածքի երևույթն էլ կրկնվում է բազմաթիվ անգամ: Տիեզերական հյուսվածքը բաղկացած է հոգեէներգիայի ամեն տեսակ դրսևորումներից և զարդարված է մատերիա լուսիդայով: Ուղին զարդարված է նկրտումով դեպի Անսահմանություն:

72. Մենք բերում ենք մարդկությանը ամենաստեղծագործ հնարավորությունները: Մենք առաջնորդում ենք մարդկությանը դեպի ճշմարտության գիտակցում: Կյանքի տիեզերականությունը հաստատում ենք որպես չընդհատվող սկզբունք: Տիեզերական էներգիայի երևույթը պետք է ընդունել որպես մի փաստ համակեցության մեջ, որպես նոր կյանքի ազդարար:

Ի հայտ ենք բերում Եղբայրությունը որպես տիեզերական ուժի հաստատում, և Մեր խորհրդանիշը նյութական հետևանքն է:

Ագնի Յոգայի գրքերը ընծա են մարդկության համար: Հաստատում եմ՝ ոգու ընծան և կրակի մոտենալը պարգևում են մարդկությանը մի նոր ուրվագիր, որն առաջնորդում է դեպի ոգու բարձրա-

գույն դրսևորումներ: Մենք ամենակարևորն ու արժեքավորն ենք համարում ոգու այնպիսի վեհ դրսևորումը, որը կապված է կրակների դրսևորման հետ:

Մենք մեծարում ենք բարձրագույն զգացիմացությունը և կարող ենք հայտնել մեր գանձերը միայն ամենահարազատ ոգիներին:

Երանի՜ թե մարդիկ հասկանային տարածության կանչը և արխաթի ճշմարիտ կերպարը: Բայց լավագույնները չգիտեն ոգու հուրը:

73. Մարդը, հանելով իրենից պատասխանատվությունը, զրկում է իրեն ամենագեղեցիկ զգացումից և անձնական, հաստատուն ստեղծագործ ուժից: Մարդը, ձև տալով տարածական կրակներին, չի կարող ցած դնել իր վրայից պատասխանատվությունը: Տիեզերքի ամեն մի գոյաձևը համապատասխանելու է ոգու ձևին: Եվ ստեղծված բոլոր գոյաձևերը համապատասխան են լինելու ոգու՝ կատարելագործմանն ուղղված անսահման նկրտման մեջ ստեղծված գոյաձևերին: Պատասխանատվության զգացումը պիտի վեր խոյացնի տիեզերական ստեղծագործությունը:

Երբ ոգին զարգանում է տիեզերական Անսահմանության ուղղությամբ, այնժամ պատասխանատվության զգացումը ձեռք է բերում Տիեզերքի արարիչների դրսևորած ուժը: Սկսե՛ք գիտակցել պատասխանատվությունը և ձգտե՛ք տիեզերական պատասխանատվության: Անձնական պատասխանատվության աստիճան, մարդկային մտածողության համար պատասխանատվության աստիճան, մարդկային էվոլյուցիայի համար պատասխանատվության աստիճան, լավագույն ապագայի համար պատասխանատվության աստիճան:

Երբ մտածողությունը կատարելագործվի, այնժամ հնարավոր կլինի ասել, որ մոտ է լավագույն ապագա կառուցելու ժամը:

Տիեզերքում ապրում է **այն բանական ուժը**, որը կոչվում է **տիեզերական ռիթմ**, և մարդու ողջ կյանքը կախված է ռիթմի բոլորաշրջանից: Բայց պատկերացնենք, որ հաստատվել է այնպիսի մի ռիթմ, որը ծնունդ է տալիս Տիեզերքի հետ փոխադարձաբար, և հոգեէներգիան պայմանավորում է էվոլյուցիայի ընթացքը:

Անսահման է պատասխանատվության փոխհարաբերությունը:

74. Սահմանափակվելով սոսկ ակներևությամբ ու զգացումի ցուցմունքով՝ մարդիկ սահմանափակում են իրենց աշխարհը: Տեսանելիությունը չի մոտեցնում Անսահմանությանը, և ստեղծագործական բարդ խնդիրները իրենց լուծումն են ստանում սահմանափակ բանականության միջոցով: Անսահմանությունը կարելի է ճանաչել: Բարձրագույն ըմբռնմանը կարելի է հասնել սոսկ բարձրագույն ճանաչողությամբ:

Բարձրագույն տեսանելիությունը կարող է մատչելի լինել սոսկ հոգևոր աշխարհին ծանոթ մարդուն: Հոգեէներգիան բացում է բոլոր դարպասները: Եվ մարդկային ոգու լավագույն նվաճումն է լինելու Անսահմանության ճանաչումը: Էներգիայի խորհրդանիշը թույլ է տալու մարդկությանը հասկանալ, որ դադար չունեն ողջ գոյի գործընթացները: Միթե հնարավոր է կասեցնել կյանքերի անվերջանալի շարանը, որն ընթանում է դեպի Անսահմանություն:

75. Երբ գոյաձևերի զարգացումը նախանշված է Տիեզերքի կողմից, ապա ինչպե՞ս չկիրառել այդ օրենքը բարձրագույն ոլորտների նկատմամբ: Գոյաձևերի բազմազանության մեջ է կյանքի գեղեցկությունը: Տիեզերքը չի սիրում համասեռություն: Տիեզերքը համակում է միլիարդավոր գոյաձևերի գիտակցությունը: Կյանքից վերացրե՛ք տարատեսակ հոսանքներին տրվելու երկյուղը: **Բազմասեռ օրենքն** ընդգրկում է կեցության բոլոր գոյաձևերը: Եվ հարկ չկա ստեղծելու ճղճիմ կարմա՝ դուրս մղելով գոյություն ունեցող կյանքից բազմազանության բերկրանքը: Իր գիտակցության մեջ բազմազանության սկզբունքն ընդունելու շնորհիվ մարդկությունը կկարողանա կիրառել նոր գոյաձևեր հեռավոր աշխարհներն ըմբռնելիս: Նոր գոյաձևերով են կառուցվում նոր աշխարհները: Նոր աշխարհները նորացրե՛ք այնպիսի մի ըմբռնումով, որը նույնական չէ ձեր անձի և ձեզանից ծնունդ առած գոյաձևերի հետ, բայց նոր պատվարը կառուցե՛ք լավագույն սկզբունքների վրա:

Գիտությունն ուսումնասիրում է համաշխարհային պատմությունը, և որոշված են ցածրակարգ դրսևորումների ժամանակաշրջանները, ինչպես նաև զարգացման աստիճանական բնույթը: Բայց անհնար է ստանալ ապագայի պատկերը՝ աստիճանական առաջընթացը զուգահեռաբար վերարտադրելու եղանակով, ուստի թող որ ամեն ոք որոշի իր համար բարձրագույն աշխարհներից մեկին տանող վերընթաց գիծը: Նոր գոյաձևերի մերձեցման գիտությունը կպարգևի մարդկությանը Անսահմանության ըմբռնման նրբություն:

Հիրավի, արդյո՞ք անհրաժեշտ է զուգահեռ առաջընթացը, երբ ամեն մարդ ունի հսկայի քայլքով առաջադիմելու հնարավորություն:

76. Մենք՝ մարդկության Եղբայրներս, չենք ընդունում զուգահեռությունն այնտեղ, ուր լարված պարույրն է: Սակայն գործողության ու բովանդակման պայմանով դրսևորված զուգահեռությունը նպատակահարմարություն է:

Ստեղծագործման պոռթկումը չպիտի մարի ժամանակավրեպ լինելու պատճառով: Արարողի ստեղծագործության ամեն մի պոռթկմանը տրված են ազատությունն ու սեփական պատվարը:

Մենք՝ մարդկության Եղբայրներս, ցանկանում ենք օգնել մարդկությանը՝ տեղ ստեղծելու հավերժ դրսևորված Անսահմանության մեջ: Որպես կյանքի ավանդ՝ գրի՛ առեք տարածության կրակների փորձը, որ դրսևորել է Ագնի Յոգայի մայրը: Որպես ոգու մեծագույն դպրոց՝ գրի՛ առեք Ագնի Յոգայի մոր փորձը:

Ճշմարտությունը վեր է երևակայությունից, այդպես և ապագան վեր է երազանքից: Օրիգենն ասում էր. «Սրտի աչքերով ենք տեսնում գոյը»: Միայն սրտով ենք տեսնում Տիեզերքի Սրտից բխող աշխարհի գեղեցկությունը: Զգացիմացության շարժիչը սերն է դեպի Տիեզերքը: Դեպի շուշանները կամ դեպի հեռավոր աշխարհներն ունեցած սիրո հիմքում նույն տիեզերականությունն է: Այո՛, այո՛, այո՛: Արդ, չափանիշը թող լինի տիեզերական սերը:

77. Ինչպե՞ս կարելի է պնդել, թե ատոմը զուրկ է հոգեկան կյանքից: Մի՞թե կենդանի օրգանիզմը կարող է բաղկացած լինել անկենդան նյութից այն դեպքում, երբ կյանքի երևույթը կարող է պայմանավորված լինել սոսկ կենսականությամբ: Մինչդեռ հոգեկան կյանքի սկզբունքը հաստատվում է ողջ Տիեզերքի կողմից: Մենք պնդում ենք, որ Տիեզերքի բոլոր դրսևորումներում ամեն մի ատոմի մեջ առկա է հոգեկան կյանքի միտքը: Մենք պնդում ենք, որ անգամ ստեղծագործ գիտակցությունը իրենից ներկայացնում է հոգեկան կյանք, այլ կերպ ասած՝ տարածության կրակ: Հոգեկան կյանքը բարձրագույն աշխարհներում ամփոփված է անսահմանորեն:

78. Կատարելագործման գործընթացը կարող է առաջնորդել մարդկությանը դեպի բարձրագույն աշխարհներ, բայց դրա համար հարկավոր է հաստատել անանցողիկն ըմբռնելու երևույթը: Երբ իմացության կիզակետը փնտրի նոր տեսանկյուններ և գտնի որոգայթները տարածական կրակի փոխակերպելու ճանապարհը, այնժամ անսահման է լինելու նոր գոյաձևերի աշխարհը:

Չափից ավելի է գերիշխում անցողիկությունը մոլորակի գիտակցության մեջ, և մարդկությունը հանդես է բերում ամեն գոյի վախճանի գիտակցություն: Ինչի՞ համար այդպես կրճատել Տիեզերքի գործունեությունը, երբ Աշխարհը ծավալվում է մինչև Անսահմանություն: Բոցավառ են տիեզերական կրակները, պարզորոշ է տարածության կանչը, և միայն ցանկություն է պետք՝ այն լսելու համար: Անբավարարվածության և հաճախ թախծի զգացումն է լինում տարածության կանչի պատասխանը: Անբավարարվածությունը կատարելագործման գիտակցության նշան է: Նկրտումը հաստատում է անվրեպ քայլը դեպի Անսահմանություն:

79. Իսկ ինչպե՞ս կարելի է հասնել կատարելագործման գիտակցությանը: Դա հնարավոր չէ անել ո՛չ Տիեզերքի ամբողջ շինարարության վախճանականության պնդումով, ո՛չ բարձրագույն աշխարհների ու մոլորակի հարաբերակցումը ժխտելու միջոցով, ո՛չ էլ տարածական ուժերի անշարժացման գաղափարն ընդունելով: Ոգին հաստատված է որպես կրակ, և չկա դադար տիեզերական բոցի մեջ: Հետևելով **կրակի օրենքին**՝ մենք կարող ենք ճանապարհ հարթել դեպի կատարելագործում: Արևի հուրը և ոգու հուրը մեր ստեղծագործ ուժերն են: Արևի ջերմությունը և սրտի ջերմությունը մեր կենսատուներն են:

Տարրերի տարանջատումը ենթադրում է գոյաձևերի բազմազանություն, բայց չի ենթադրում հակամարտության աճ: Շփվելով իրար՝ լույս ու խավարը կարող են համագործակիցներ դառնալ: Մտածողության շնորհիվ են կյանք մուտք գործել կտրուկ սահմանագծերը: Եվ բարձրագույն աշխարհներում համագործակցում են լույսն ու խավարը: Անսահմանորեն է տարածվում Տիեզերքի ուժը:

Մարդկությունը խախտել է **համագործակցության օրենքը** և մարդկությունը քավում է այդ խախտումը: Ամեն մի Տիրակալ բերում է մոլորակին կորսված հավասարակշռությունը, բայց մարդկային ոգին այն աստիճան է ներծծվել հակամարտության զգացումով, որ անկարող է հասնել Տիրակալների կողմից մատնանշված նպատակին: Այդ պատճառով էլ սարսափելի հակասության հողի վրա է աճում մարդկությունը, և ալիքները հեղեղելու են նրա մտածողությունը, որը խաթարվել է լույսի՝ իբրև Աշխարհի Մոր մերժման երևույթով:

80. Լռությունը կարող է ձայներով լի լինել, և մթությունը՝ լույսով: Ուստի նա, ով համարում է, թե դատարկ է տարածությունը, չի պատկերացնելու, որ դրսևորված Լռության զորեղ կյանքը Տիեզերքի բարձրագույն խոսքն է, իսկ Աներևույթը դրսևորված Աչքն է Տիեզերքի: Անխախտելի են Տիեզերքի օրենքները, և անգամ մարդիկ ընդունել են Լռության Ձայնը: Այնտեղ, ուր աղքատիկ է լսելի խոսքը, սրտի ձայնը Լռությունն է հաստատում: Տիեզերքն իր լռության մեջ է երևան բերում սրտի խոսքը, և տիեզերական Ձայնն ընկալելի է:

Զգայունակությունն ու համակ ուշադրությունը կարող են օգնել լսողությանը ընկալելու Լռության Ձայնը: Լռությամբ է արտահայտում իրեն Տիեզերքի գեղեցկությունը: Լռության գեղեցկությունն արտահայտվում է կյանքի բոլոր բարձրագույն դրսևորումների մեջ:

Սովորենք լսել Լռությունը: Տիեզերքի Անսահմանությունն է ծնում Լռության երևույթը:

81. Մտովի հաղորդակցումը նույնպես Լռության դրսևորում է: Մենք հաճախ ենք դրան դիմում: Մտքի դրսևորման ավարտից առաջ Մենք հղում ենք Լռության ճառագայթը: Լռության ճառագայթներն են առաջացնում Գավաթում այն նվիրական ցավերը:

Գոյություն ունեն սրտի մեջ առավել դյուրին ներթափանցող ճառագայթներ, որոնք հղվում են անտեսանելի ու անշոշափելի կերպով: Անհրաժեշտ է, որ օրգանիզմը յուրացնի դրանք: Սկզբում դրանք թախիծ են առաջացնում, սակայն հավասար են անեղծ կրակին: Առաքողը բարձրագույն բերկրանքի զգացում է ապրում, ընդունողը ևս զգալու է այդ բերկրանքը յուրացնելուց հետո: Ամենանվիրական գաղտնաճեսերում այդ ճառագայթներն անվանվում են **Ագնի Ինվիզիբիլե**: Արդ մտապահեք:

82. Ներքին կրակի այն աստիճանը, որին հասել է Ագնի Յոգայի մայրը, հազվադեպ նվաճում է: Կրակի այդ աստիճանը կոչվում է **դրսևորված ընթացող արխաթի աստիճան**: Հնում գիտեին այդ կենդանի կրակի մասին: Ալքիմիկոսներին ծանոթ էր այդ կենդանի կրակը: Ամենաբարձր աստիճանի հզոր բոցի նվաճում կարող է ունենալ սոսկ այն ոգին, որն ապրում է ողջ սրտի հոգեկան կյանքով: Տիեզերքի ամենահզոր ու ամենանվիրական լծակը սիրտն է: Գիտակցությունը նրա հագեցնում է տարածությունը, պայծառացումով է լույս տալիս Տիեզերքին:

83. Տիեզերական կրակը և նրա էներգիաները, սփռված լինելով ողջ գոյի մեջ, հարազատ են ամեն ինչին: Ոչ միայն տարրերի և դրանց համակցությունների մեջ է արտահայտվում այդ հիմնական հարազատությունը: Անշուշտ, զգալի է նախանշված կյանքերի հարազատությունը: Թե՛ առանձին տարրերի գործառույթները, թե՛ յուրաքանչյուր համակցության կենսական գործառույթները ներկայացնում են գոյի ու Անսահմանության պատճառները: Յուրաքանչյուր տարրի մեջ առկա տիեզերական էներգիայի նկրտումը նախատեսված է հավերժ ստեղծագործական գործընթացի մեջ ընդգրկվելու համար: Տարրերի հարազատությունը կարող է պատկերացում տալ անսահման հնարավորությունների մասին:

Հարազատության գործառույթների և Տիեզերքի տարրերի գործառույթների իմացությունը՝ կապված մարդու օրգանիզմի հետ, կդարձնի մեզ տիեզերական աշխատակիցներ: Կյանքի սքանչելի մի էջ է տիեզերական հարազատության գոյությունը: Տարրերի հատկությունների ուսումնասիրությունը մարդու նկատմամբ կիրառվելու դեպքում հիմք կդնի ներդաշնակեցման գիտությանը: Բարձրագույն աշխարհները գիտեն այդ մեծագույն գիտությունը:

Եթե ուշադրություն դարձնենք դրսևորված տարրերի՝ իբրև կյանքի բազմաթիվ երևույթների վրա, ապա ոգեղենությանը նախընթաց կարե-

լի է գտնել զուտ կենսական սկզբունքի դրսևորման սահմանումը: Տարրերի հարազատությունը ճանաչելու նկրտումը բերկրալից է դարձնելու կեցությունը: Նկրտում դրսևորեք: Ոգու հարազատությունն անդրադարձնում է իր մեջ ողջ բերկրանքը և արտացոլում է իր մեջ ողջ ծիածանը:

84. Հնարավո՞ր է արդյոք աննպատակ գոյատևել, երբ նույնիսկ բնությունն իր կոչումն ունի: Մի՞թե մարդու կոչումը տարրալուծումն է, երբ ստորակարգ տարրերն անգամ ունեն իրենց հաջորդականությունը: Կարելի է վերջ տալ մարդու ձեռքով ստեղծված առարկայի գոյությանը, բայց Տիեզերքի Բանականության ստեղծագործությունն անսահման է իր նպատակահարմարությամբ: Անսահմանության այն աստիճանները, որոնք կարող է զբաղեցնել մարդկությունը, լի են տիեզերական արտացոլումներով: Մարդը կոչված է որպես Տիեզերքի արտացոլում: Մարդը կոչված է որպես տիեզերական բարձունքների հաստատում և տիեզերական կրակների արտահայտում: Կատարելագործումը տրված է բարձրագույն աշխարհների համար, իսկ մարդիկ ընդունում են գոյությունն իբրև աննպատակ վաղանցիկ երևույթ: Տեսանելի իրողությունը կարող է լինել պատրանքի հաստատման արտացոլանք, սակայն տիեզերական բնույթի համակ ուշադրությունը հուշում է մարդու սրտին. «Արարված ենք, և արարչագործությունն է վիճակված»:

Արարքների հաջորդականություն, ստեղծագործման տիեզերական կրակների դրսևորման հաջորդականություն. սա Անսահմանության ցուցանշական խորհրդանիշ է:

85. Երբ մարդն անցնում է իր կյանքի ուղին՝ գիտակցելով, որ գոյության նպատակը նախասահմանված է, այնժամ Տիեզերական Բանականությունը հաղորդել է նրան իր ճառագայթը: Երկրային ուղիներով շրջելու գիտակցությունը, հանձնարարությունը ոգու մեջ պահպանելու պայմանով, կրճատում է ճանապարհը հազարավոր տարիներով: Կարմայի հոսքը տիեզերականորեն գեղեցիկ է: Տիեզերքի էությունը բերկրանք է հաստատում մարդու սրտում, Տիեզերքի Սրտում և արխաթի սրտում:

86. Մարդն է որոշում իր կոչումը Տիեզերքում: Ասել, թե կոչումը պայմանավորված է սոսկ էվոլյուցիայի ընթացքով, նշանակում է մարդուն ճակատագրի գնդակ դարձնել: Ճակատագիր կամ Տիեզերք կամ Անսահմանություն. կարող եք սահմանել ինչպես կուզենաք, բայց պնդել, թե մարդուն առաջ է տանում էվոլյուցիայի ընթացքն առանց իր կամքի մասնակցության, կնշանակեր տարանջատել նրան Տիեզերքից:

Կասեմ այսպես. «Ոգին իր միջուկի մեջ կրում է Տիեզերքում անցնելիք Անսահմանության նախորոշված ուղին: Հաստատված ուղուց

շեղվելու հակումը այն ուղին է, որը ոգուն քշում տանում է տարածություն: Ոգու միջուկի մեջ կգտնենք այն ուղին, որ տանում է դեպի Անսահմանություն»:

Փնտրեք ոգու միջուկի մեջ:

87. Տարանջատված ատոմը ոգու միջուկի մեջ կրում է իր կոչման իմացությունը: Սոսկ իր միջուկը անեղծ կրակի մեջ պահպանող ոգին կարող է հաստատել իր ճշմարիտ կոչումը: Բարձրագույն միաձուլումը հնարավոր է միայն այդպիսի անեղծ բոցավառման դեպքում: Երբ որևէ մի գոյություն հասնում է իր վերջին սահմանագծին, այդժամ սկսվում է ավելի բարձր գոյության փուլը: Արդ տիեզերական ուրախությունը կատարելագործվում է միաձուլման դրսևորմամբ: Ոգու միջուկի՝ հազարամյակներ շարունակ պահպանվող արթնությամբ է Տիեզերքում արարվում բարձրագույն լարվածության խորհուրդը: Տարանջատումը տիեզերական ներգործության պատճառով փոխադարձ դժվարություններ է առաջացնում:

Մեր հանձնարարականն է՝ ատոմների ներդաշնակություն և տարերքների ներդաշնակություն հաստատել բարձրագույն աշխարհներում: Մեր մեծագույն խնդիրն է վիբրացիաներ գտնելը: Ճաշակելու ենք Տիեզերքի հետ աշխատելու բերկրանքը:

88. Մարդկության անգիտությունն իր կողմն է ձգում տիեզերական երևույթների այնպիսի համակցություններ, որոնք արձագանք են տալիս տգիտության հնչերանգին: Անգիտությունը հուշում է մարդկությանը, որ տիեզերական հորիզոնը սահմանափակվում է անձուկ մոլորակով: Մարդկության ուսուցիչ անգիտությունը սկսում ու ավարտում է մոլորակով, բայց բանականությունը մատնանշում է, որ Տիեզերքը անձուկ սահմաններում զետեղելը որպես բանաձև ընդունվելու դեպքում հանգեցնելու է աղետի: Ակնկալելով, որ կա սահման, մարդկային գիտակցությունը պատժի անվերջ դրսևորումներ է ստանում ու տարակուսում է այդ պատուհասից: Մտնելով տիեզերական հոսանքի հոսքի մեջ՝ ավելի նպատակահարմար չէ՞ արդյոք հասկանալ, որ անվերջ այդ պատիժները իրենց հակադրումներն ունեն Անսահմանության մեջ: Ասում եմ. «Անսահմանությունն ընդունելու է տիեզերական հոսանքի այն շիթերը, որոնք գիտակցաբար շրջանցել են մարդկային գիտակցությունը»: Մարդուց է կախված՝ ընթանալ տիեզերական հոսանքի հետ, թե՞ մնալ գիտակցության աղեղից դուրս: Անսահմանությունը վերելքի սանդուղք է կառուցում ամեն մարդու համար:

89. Հեռավոր աշխարհների վրա ստեղծագործում հաստատելու մասին ցուցումը համապատասխան է համաշխարհային խնդիրներին: Համաշխարհային հանձնարարականները նման են ուրախության կրակների, և այդժամ ի կատար է ածվում ստեղծագործական խնդիրը: Մեր ևս

մի խնդիրն է մարդկային ոգու ձևավորումը: Պետք է մարդկությանը որպես օգնություն գտնել այնպիսի ծառագայթներ, որոնք կձևավորեն և կզարգացնեն ոգու հրաշալի ընդունակությունները: Համաշխարհային խնդիրները հաստատվում են տիեզերական կրակների լարվածությամբ, և իբրև ոլորտների երաժշտություն տարածական նվաճումների բերկրանքն է հնչում:

Կասենք. «Այն, ինչը հասանելի չէ այստեղ, հասանելի է այնտեղ: Այն, ինչը մերժվում է այստեղ, ընդունվում է այնտեղ»: Մարդիկ չեն հասկանում համաշխարհային խնդիրները: Մարդու գիտակցության մեջ աշխարհաշինությունը սակավ համաչափելիության մի աստիճան է: Այո՛, այո՛, այո՛: Շատ են նոր գոյաձևերը: Մեր ստեղծագործությունը բազում նոր զուգակցումներ կկազմի: Տիեզերական զորությունը և արխաթի զորությունը ունակ են արարելու այդ աներևակայելի գոյաձևերը:

90. Ինչո՞ւ մարդկությունն ընթանում է իր կոչմանը հակառակ, երբ ողջ Տիեզերքն աշխատում է միավորման ուղղությամբ: Ողջ Տիեզերքում գոյություն ունի ուղղակի համապատասխանություն: Մարդկությունը հակասում է ինքն իրեն և իր կոչմանը: Երբ կարելի է միաձուլել Տիեզերքի ամենատարանջատ դրսևորումները, այնժամ կարելի է զարգացնել սեփական անձի մեջ ի նպաստ Ընդհանուր Բարիքի աշխատելու զգացումը:

Մեր խնդիրը ներդաշնակության ու տիեզերական Անսահմանության ստեղծագործման գոյության ձևավորումն է: Աշխարհն ամբողջովին զարգանում է մարդկային պայմանավորված մտածողությամբ: Տիեզերքն այլ ուղղություն է տալիս: Մարդկային ստեղծագործությունը նման չէ տիեզերական ստեղծագործությանը: Մենք հասկացնել ենք տալիս մարդուն, որ խնդիրը լիովին համառիթմ կարող է ընթանալ տիեզերական ստեղծագործման հետ:

Հեռավոր աշխարհների ստեղծագործությունը հավաքելու է բոլոր հոսանքները և տարերային էներգիաների բոլոր դրսևորումները, և փոխակերպումը հաստատվում է որպես Տիեզերքի մեծագույն հրեղեն լաբորատորիա: Բարձրագույն գիտակցությունը հասու է բարձրագույն գոյաձևերի ձևավորմանը, բայց այս բանաձևը հակառակ իմաստով կիրառվելու դեպքում հանգեցնում է ստորին ոլորտում նշված հակադրմանը: Ոչ ոք չի ընդունում մեր կեցության այդ էջը՝ որպես անսահմանորեն դրսևորված:

Հեռավոր աշխարհները կանչում են և աշխատում են կյանքի մեծ անիվում: Ապագայի էջը նույնքան իրական է, որքան և ներկա օրը: Մարդը պիտի ապրի հավերժության նախանշած կյանքի իրողությամբ, և այդ իրողությունն ընդունելը նրան շրջահայացություն կհաղորդի իր գործողություններում:

91. Ես պնդում եմ, որ մարդկության անմտությունը տանում է նրան դեպի հակամարտության այնպիսի կոյտադարսում, որն ինչպես պայթյուն թափվելու է նրա գլխին: Ճիշտ ընկալեցիք վերահաս ահեղ էջի վերաբերյալ: Մեծ վերափոխում է տեղի ունենում: Այսօր փոխվում է նժարների դիրքը: Մեծագույն հավասարակշռվածություն գոյություն ունի Տիեզերքում: Հավասարակշռության ուժը հաստատվում է ներդաշնակ հոգեկան կյանքի շնորհիվ: Որքան շատ լինեն մոլորությունները, այնքան ավելի շատ կլինեն պայծառացումները, և մտածողության անկմանը զուգընթաց աճում է դրսևորված ոգիների նկրտումը: Մեծ է **հավասարակշռության օրենքը**:

92. Տարրերի փոխակերպումը կարող է աներևակայելի ծավալներ ընդունել: Երբ մեր բանականությունն ընդունի Անսահմանությունը, այնժամ հնարավոր կլինի ըմբռնել բոլոր նպատակաուղղված գործընթացների երևույթները: Անսահմանության գաղափարի ընդունումն իր ազդեցությունը կունենա նոր գոյաձևերի զարգացման հարցում: Նոր ուղիներ են մատնանշվում նրան, ով ձգտում է դեպի նոր ոլորտներ: Երբ ոգին ձգտում է միայն կրկնել նախկինում անցած ուղիները, այնժամ լճացում է լինում: Կրկնողությունը Տիեզերքում արտահայտվում է որպես կործանում: Մարդու բանականության կրկնողության արտահայտումը նոր ուղիներով ընթանալու ցանկության բացակայությունն է: Տարածական կրակների զորության աճը հնարավորություն է ընձեռում մարդուն ստեղծագործելու:

Մտքի համաձայնեցվածությունը շարունակ աճող տարածական կրակների հետ մեծագույն տիեզերական բանաձև է տալու: Այդ բանաձևը կբացահայտի բարձրագույն ոլորտների հաստատադիր աշխարհը: Երբ մարդկությունը սովորի ըմբռնել Անսահմանությունը, այնժամ լսողությունը կզարգանա բարձրագույն աշխարհներն ընկալելու ուղղությամբ, այնժամ, հիրավի, կմոտենա հեռավոր աշխարհների ժամանակը:

93. Դրսևորումների համաձայնեցվածությունը կոչվում է **դրսևորված միություն**: Տիեզերական միությունն ապագայում ուղղորդելու է բոլոր ստեղծագործ ուժերը: Դա այն սկզբունքն է, որը դրվելու է դրսևորված նոր աշխարհի հիմքում:

Համաձայնեցվածությունը նոր մոլորակների միջև գոյություն ունի որպես ապագայի երաշխիք: Այն սկզբունքը, որը դրվելու է արարման հիմքում, ողջ ստեղծագործական կյանքի սկզբունքն է լինելու: Կյանքի ամբողջ բովանդակության մեջ դրսևորվելու է ոգու համաձայնեցվածությունը: Երբ սկսեն ապրել հեռավոր աշխարհները, այնժամ իրենց կիրառումը կգտնեն Տիեզերքի բարձրագույն սկզբունքները: Նույնիսկ Երկրի

վրա կարելի է գտնել համաձայնեցվածության թույլ համահնչունությունը և հաստատել հաջող արդյունքի հասնելու այդ նկրտումը: Ոգու համաձայնեցվածությունն է տալիս այդ դրսևորված ներդաշնակությունը: Ինչպես որ տարրերի համաձայնեցվածությունն է անհրաժեշտ, այնպես և ոգու համաձայնեցվածությունն է ստեղծագործման մայրը:

Տիեզերքի մեծագույն էջն է ոգու համաձայնեցվածությունը:

94. Տիեզերական գործընթացների համաձայնեցվածությունը դրսևորվում է ինչպես ստորին, այնպես էլ վերին ոլորտներում: Տիեզերական զորությունը կարող է իր արտացոլումը գտնել մոլորակի կյանքում, իսկ մոլորակի կյանքը կարող է փոխակերպվել մեծագույն լարվածության գործընթացում: Երբ մարդիկ հասկանան, որ դրսևորումների անվերջանալի շարքը բաղկացած է գոյության փոփոխություններից, այնժամ համաձայնեցվածության սկզբունքը կարող է հոգեհարազատ դառնալ մարդու համար: **Փոխակերպման օրենքը և տիեզերական նվիրաբերման օրենքը** միաձուլվում են: Մեծագույն օգնություն կարող է ցուցաբերվել այս սկզբունքը գիտակցելու դեպքում:

Եթե մարդկությունը ձգտում հանդես բերի համաձայնեցվածությանն ընդառաջ, ապա այն կնկատի բոլոր լավագույն հնարավորությունները: Լարելով կամքը Անսահմանության ուղղությամբ՝ կարելի է ցանկացած աստիճանի վրա իրականություն դարձնել համաձայնեցվածությունը: Համաձայնեցվածությունն այն շաղկապող սկզբունքն է, որը սրբազնագործություն է հաստատում ոգու և ոգու միջև, ոգու և մոլորակի միջև, ոգու և Տիեզերքի միջև, Տիեզերքի և Անսահմանության զորության միջև:

95. **Սրբազան** բառը բոլորովին դուրս է եկել գործածությունից: Սրբությունը դարձրել են սրբապղծություն: Սրբությունը շատ կիրառումներ ունի Երկրի վրա, բայց մարդիկ մերժել են ամենագեղեցիկ կիրառումը: Երբ միտքը շեղվեց գոյության սրբազնագույն նպատակից, ապա սպառվեց գոյության բուն իմաստը: Բարձրագույն համաձայնեցվածության դրսևորումը ոգու սրբազնագործությունն է: Սրբազան կապը ողջ գոյի հիմքն է: Ուստի բարձրագույն ոլորտները դրսևորում են մատերիա լուսիդայի բարձրագույն ձևերը: Եթե նույնիսկ Երկրի վրա համաձայնեցվածությունը գեղեցիկ ձև է հաղորդում գույներին, հնչյուններին ու մարդու դրսևորմանը, ապա ինչի՞ կարելի է հասնել բարձրագույն համաձայնեցվածության դեպքում:

Մայտրեյան տեսնում է համաձայնեցվածության նոր աշխարհը:

96. Մարդը հիմնվում է կյանքի փաստերի վրա, սակայն համեմատում է ակներևը անցյալի դրսևորման հետ: Պայմանավորել կյանքը լոկ արդեն փորձված երևույթով կնշանակի հաստատել այն դանդաղ առա-

ջընթացը, որը դրսևորում է մարդը: Գաղափարների տարանջատումը կյանքի ընթացքից կկանգնեցնի մարդկությանը այն կետում, որտեղ նա անվստահություն է հանդես բերում իր հետագա առաջընթացի հարցում:

Կյանքը կայանում է գաղափարների անվերջ հաջորդման և կյանքում տիեզերական էներգիաների դրսևորման մեջ: Ինչպե՞ս կարող է ընդունել ոգին Անսահմանության հասկացությունը, եթե չի ուղղում իր միտքը դեպի գաղափարների թագավորություն: Երբ միտքն իմաստավորվի որպես կենդանի, կենսագործելի էություն, այնժամ միտքը ցույց կտա մարդուն, թե որտեղ է ուրախությունը, և որտեղ՝ ճշմարտությունը: Մտքի որոնումները հանգեցրին տարածական կրակի հետ միավորմանը: Մտքի որոնումները հանգեցրին անցյալի ժամանակագրությունների ընդունմանը: Մտքի որոնումները հանգեցրին բարձրագույն աշխարհների գիտակցմանը: Մտքի որոնումները հանգեցնելու են Աշխարհի Մոր ճաճանչին: Նկրտումը կհանգեցնի անսահման գեղեցկությանը:

97. Ճշմարիտ, անսահման է գեղեցկությունը Տիեզերքի, երբ կարելի է սրտով թափանցել տիեզերական շնչառության գիտակցության մեջ: Ամեն տեսակի տիեզերական համակցությունների դրսևորման նպատակն է վերելքը տիեզերական միավորման մաքրամաքուր նշանի միջոցով: Դիտելով այն, ինչը տեղի է ունենում մոլորակի վրա՝ Մենք կարող ենք միայն ասել. «Վսեմ է ձեր կոչումը, վերե՛լք ապրեք ու հաստատվե՛ք»:

Ուղղորդողի խորհրդանշանը մշտապես սիրտն է համարվել: Այդ խորհրդանիշի ներքո զարգանում է ողջ կյանքը: Ուղղորդողն ու ուղղորդվողը հաստատում են Տիեզերական Գիտակցության նշանակությունը: Ընթացողն ու սպասողը իրենցից ներկայացնում են Տիեզերական Բանականություն: Կանչողն ու արձագանքողը տիեզերական համահնչություն են դրսևորում: Տիեզերքը կառուցողի բոլոր զգացումները առաջ են մղում դեպի կյանք բարձրագույն: Այո՛, այո՛, այո՛:

98. Հեռավոր աշխարհների հարցում համոզված ոգին ստեղծում է իր աշխարհայացքը: Դրանով մարդը համոզվում է նաև, որ անհրաժեշտ է շղթայակցված գոյությունների գիտակցություն ունենալ: Երբ ամեն ինչ քաղվել է մոլորակի վրա գոյությունից, ապա դեպի ո՞ւր պիտի ձգտել:

Կրկնվում են գոյության ձևերը, և մեծ բազմազանություն է առկա: Սակայն գոյությունը չի կարող ավարտվել կամ ամփոփվել մոլորակային մեկ կյանքով: Իբրև ապաստան ոգու համար, իբրև նոր աշխարհ, իբրև անասելի տիեզերական գեղեցկություն կանչում է Անսահմանությունը: Երբ ընկալվում է այդ կանչը, այնժամ տարածությունը կարող է շփվել անսահման գեղեցկությանը:

Հիասքանչ խորհուրդ կարող է արտահայտել անգամ մոլորակային կյանքը, երբ առաջընթացը մոտենա ներդաշնակության բարձրագույն սկզբունքի ըմբռնմանը: Երբ մոլորակի վրա կյանքը լուսավորվում է գեղեցկությամբ, այնժամ ողջ գոյի հոգեկան կյանքը համակվում է անսահման գեղեցկությամբ: Հրաշալի, անսահման գոյությունը հեռավոր աշխարհներում պայմանավորված է գեղեցիկի ձեռքբերումով: Հարաբերականության սկզբունքը կարող է ցույց տալ, թե որքան են տարբերվում բարձրագույն ոլորտների ձեռքբերումները մոլորակային գոյությունից:

99. Անսահմանության ստեղծագործությունը հեռավոր աշխարհներում դրսևորելու է ամենաբազմազան զուգակցումներ: Համասեռ տարրի հետ համակցված յուրաքանչյուր տարրն ունի մի ամբողջ շարք տվյալներ լավագույն համակցությունների զուգակցման վերաբերյալ: Լաբորատոր պայթյուններով գործելու փոխարեն ամեն ինչ փոխակերպելու են ճառագայթները:

Ագնի Յոգայի մոր բոցավառած կրակները ոչ միայն Ագնի Յոգայի դրսևորումներ են, այլև ունեն տիեզերական ծավալներ: Կրակները դրսևորում են ճառագայթների այնպիսի մի ուժ, որն անհրաժեշտ է անսահման գոյության համար: Ամեն մի կրակ ապագա ստեղծագործման ճառագայթ է: Անսահման է կրակների դրսևորման նշանակությունը:

100. Անհասանելիության հասկացությունը բացառվում է տիեզերական տարածության մեջ: Անշուշտ, աստիճանները տարբերվում են մեկը մյուսից, և այն, ինչն անհասանելի է որոշակի աստիճանին, կարող է հաղթահարվել մեկ այլ աստիճանի վրա: Հաստատվեք այն ըմբռնման մեջ, որ ամեն ինչ հասանելի է:

Տիեզերքում ամեն ինչ ապրում է, և ամեն ինչ հնարավոր է: Ոգու խորախորհուրդ գաղտնարանները կգտնեն իրենց հաստատումը Տիեզերքում: Անհասանելիության երևույթը պայմանավորված է անհամապատասխան նկրտումներով կամ էլ այնպիսի պայմաններով, որոնք ի վիճակի չեն համադրել ցանկությունը կյանքի հետ: Պայմանների ժամանակավորությունը չի նշանակում անհասանելիություն: Եվ նկրտման ժամանակավորությունը չի նշանակում, որ նկրտումը կրկնվելու է նույն ուղղությամբ: Երբ մարդը հասկանա իր ներսում գտնվող ժամանակավորության երևույթը, այնժամ նա հեշտությամբ կընդունի **վերելքի օրենքը**: Վերելքի օրենքը կպայծառացնի ոգուն հասանելիության ըմբռնումով:

Բնության կյանքը ենթակա է նմանօրինակ օրենքին: Տարբեր բարելավումների շնորհիվ առաջանում են ավելի լավ գոյաձևեր: Բարձր պայմանները ավելի լավ հնարավորություններ են ընձեռում մարդուն:

Անսահման են այդ հնարավորությունները: Որքան բարձր, այնքան ավելի նրբին, որքան պայծառ է հեռավոր աշխարհների ըմբռնումը, նույնքան վառ են լինելու նվաճումները: Եվ մատնանշված է մարդուն կենտրոնների բոցավառման միջոցով կատարվող վերելքի ուղին: Կյանքում, Երկրի վրա, իրականացվել է ողջ բարձրագույն փոխակերպումը, որը բարձրագույն, անսահման ստեղծագործության նախաշեմն է:

101. Կրակների ներգործությամբ նրբացած բոլոր կենտրոնները ստեղծագործության աղբյուրներ են ծառայում: Մարդիկ Երկրի վրա կարծում են, թե օրգանները նեցուկ են ծառայում ֆիզիկական մարմնի համար, մինչդեռ արխաթի յուրաքանչյուր օրգանը ներկայացնում է իրենից դրսևորված ստեղծագործ հուր: Ոչինչ այդքան հստակ չի բնորոշում հրեղեն օրգանիզմի կյանքը, որքան մատերիա լուսիդայի ճառագայթները: Հրեղեն կենտրոնների մեջ ամփոփված է տիեզերական կրակի ստեղծագործական դրսևորումը: Գոյի հաստատված գեղեցկությունը հավերժության և կենսականության մեջ է:

102. Երբ մարդն իր գիտակցման մեջ կընդունի այն փաստը, որ ամեն մի օրգան և ամեն մի կենտրոն ստեղծագործ մի ուժ է, այնժամ հնարավոր կլինի բացահայտել կենտրոններից յուրաքանչյուրի նշանակությունը: Տեսնում եմ, թե ինչպես է հուրհրում թոքերի կենտրոնը, այն առավել դյուրազգաց կենտրոններից մեկն է: Հուրը զուգորդվում է նրբագույն էներգիաների հետ և ձեռնամուխ է լինում նոր երևույթների ստեղծագործմանը: Այդ կրակի բոցավառման հատկությունը թույլ է տալիս տարածությունից ընդունելու մաքուր հուրը: Լուռ կրակների դրսևորումը միավորում է թոքերի հուրը տարածության կրակի հետ:

103. Թոքերի կենտրոնը բոցավառվելիս ամեն հնարավորություն էր տալիս յոգերին՝ ունենալու բարձրագույն դրսևորումներ: Այդ կենտրոնի շնորհիվ հաղթահարվում են օդն ու ջուրը: Յոգերին հաջողվում էր թռչել և քայլել ջրի վրայով, տեսակարար կշիռը հարաբերական բնույթ էր ստանում: Թոքերի կենտրոնը այսպես կոչված **հրաշքների** հիմքն է: Մարտիրոսների բոլոր ցավերը չքանում էին այդ կենտրոնը վերահսկելու շնորհիվ, և միայն Գավաթի սքանչանքն էր կենսաթրթիռ: **Փոխակերպիչ հուր**. այսպես կարելի է անվանել այդ կենտրոնը:

Անեղծ յոգիզմը գիտի, թե ինչպես կարող է մարդու ցանկությամբ ամեն ինչ փոխակերպել թոքերի կենտրոնի դրսևորումը: Անշուշտ, ներկայիս յոգերը օգտագործում են պրանայամա՝ այդ կենտրոնը բոցավառելու համար: Բարձրագույն յոգը պրանայամայի կարիք չունի, նրա համար գոյություն ունի տարածության կրակի հետ կապող ուղիղ հաղորդա-

միջոց: Բոլոր այնպիսի դրսևորումների համար, ինչպիսիք են ջրի վրայով քայլելը և թռիչքները, պրանայաման անհրաժեշտ է: Բայց գոյություն ունեն ավելի բարձր առաքելություններ:

104. Որքա՜ն պայծառ են Ագնի յոգի առաջընթացները, երբ Գավաթը լի է Մեր մասին մտքով: Գավաթը կրողին է տրված ոգեղեն երևույթների փոխակերպումը: Ուղղենք ստեղծագործական թելերը՝ փոխակերպելու այն ամենը, ինչ վսեմ է: Այնքա՜ն հարուստ է Տիեզերքը, այնքա՜ն մեծ: Տիեզերքը ոգու ստեղծագործման կարիք է զգում, և հոգու ստեղծագործությունը Տիեզերքում ամփոփված է գիտակցության մեջ:

Երբ առկա է արխաթի գիտակցությունը, գավաթի մեջ գիտակցորեն կուտակելու երևույթը կյանք է հաղորդելու հոգեկան գոյաձևերին: Այո՛, այո՛, այո՛: Վերջ չունի արխաթի ստեղծագործության դրսևորված պարույրը:

105. Բռնի կերպով կենտրոնները բացելու վերաբերյալ դատողությունը ճշմարիտ է: Մենք խնամքով պահպանում ենք բախտորոշված գանձը: Երբ ոգու մագնիսը Գավաթի մեջ է ընդունում բոլոր կրակները, այնժամ Մենք հաստատում ենք արխաթին: Չէ՞ որ Գավաթի գանձը բաղկացած է անեղծ կրակի հյուսված թելերից: Լոտոսի հուրը կրող արխաթը հանդես է բերում ոգու ըմբռնում, ոգու իմացություն և ոգու դրսևորում: Աշխարհների հայեցությունը այնքան հարազատ է ամրիտայի գավաթը կուտակած ոգուն:

106. Ոգեմիջնորդը, հիրավի, չունի բաց կենտրոններ, և հոգեկան տեսողությունը նույնպես հասանելի չէ նրան բարձրագույն աշխարհներին շփվելիս: Մարդը սխալ է հասկանում ոգեմիջնորդի ուժը, և Մենք հաճախ ցավում ենք՝ տեսնելով, թե ինչպես մարդիկ ձգտում են ֆիզիկական դրսևորումների:

Ֆիզիկական նյութականացումը ձգում է ինչպես մագնիսը: Մենք գերադասում ենք ոգու հաղորդալարը: Եվ նվիրական հանձնարարությունների համար օգտվում ենք միայն ոգու հաղորդալարից: Արխաթը երբեմն դարերով է սպասում՝ նվիրական հանձնարարական տալու համար:

Որոշ հանձնարարականների երևույթը առանձնահատուկ համակցություններ է պահանջում: Մենք՝ Արխաթներս, կողմնակիցներն ենք նպատակահարմարության սկզբունքի: Ագնի Յոգայի մոր փորձը տարբերվում է ոչ թե իր ցայտունությամբ, այլ տիեզերական բնույթով:

Աշխարհը գիտի սպիտակ կրակի մասին, աշխարհը գիտի անտեսանելի լույսի մասին: Այնտեղ, ուր Մենք պիտի դրսևորենք նրբագույնը, Մենք գործում ենք բացառապես նրբանուրբ էներգիաների միջոցով: Այնտեղ, ուր արխաթը պիտի հանձնարարի նվիրականը, Մենք մեծա-

գույն զգուշություն ենք հանդես բերում: Այնտեղ, ուր արխաթին ծանոթ է հավերժական օրենքը, արխաթը հրձվում է և արխաթը Անսահմանության ցնծությունն է դրսևորում:

Գրի՛ առեք Ագնի Յոգայի մորն ուղղված իմ հանձնարարությունը՝ բարձրագույն համաձայնեցվածություն դրսևորելու մոլորակի վրա: Ոգու և մատերիայի համաձայնեցվածությունը խիստ հազվադեպ տիեզերական երևույթ է: Մարդկությունը կարող է ասել. «Մենք զրկված ենք բարձրագույնից»: Հարկավոր է զգույշ վերաբերմունք ցուցաբերել նրբագույն կենտրոնների նկատմամբ:

107. Մարդուն գործողություն կատարելու դրսից դրդող պատճառը կարող է կոչվել **պատահականություն**, բայց ոգու թելադրանքով կատարված գործողության մեջ առկա են բոլոր հետևանքները: Երբ միտքն ուղղված է հաստատված հավերժ զարգացման գիտակցմանը, այնժամ կարելի է քայլ կատարել Անսահմանության աստիճանի ուղղությամբ:

Հետևանք բերող միտքը տարածականորեն աճում է: Այնքա՛ն շատ նշանակություն են տալիս մարդիկ պատահականություններին և խթանի են սպասում՝ գործելու համար: Բայց ոգու հարվածը պատահականությունից զորեղ է, և այդ կենսական ազդակով է շնչում կյանքը: Տիեզերական էներգիայի աճը արագացնում է Անսահմանության ըմբռնումը:

108. Ոգուն կարող է ամրապնդել միայն մթինը լուսավորի փոխակերպող զսպանակը: **Տիեզերական փոխակերպում**. այսպես է կոչվում ոգու պայծառակերպումը: Տիեզերքը տարածական կրակի իր հավերժ գործունեությամբ փոխակերպում է տարրերը համապատասխան ձևերի: Ոգին փոխակերպում է գիտակցությունը համապարփակ բովանդակման երևույթի:

Իրավացի է Ուռուսվատին. անսպառ է ստեղծագործության աշխարհը, և տեղ չունի հեռանալու այն, ինչը ծնունդ է առել մարդու ոգուց: Կյանքի անիվի մեջ պտույտ տալով՝ այն տալու է իր արդյունքները: Սահմանափակ ըմբռնում է, թե մարդը քավելու է իր հանցանքները՝ հույս ունենալով, որ դրանք տարրալուծվելու են տարածության մեջ: Ինչպես բնության հատկություններն են մատնանշում հավերժ գործընթացը, այդպես և մարդու ոգին է ընթանում նույն ճանապարհով: Դժվար է չընդունել, որ անսահման են փոխակերպված էներգիաները:

Երբ մարդու կենտրոնները կարող են փոխակերպվել նրբագույն էներգիաներ պարունակող կենսաստեղծագործ կրակների, այնժամ կյանքի ամեն մի արարք կարող է կա՛մ հասնել բարձրագույն լարվածության, կա՛մ ներքաշել ստորին ոլորտի մեջ: Փոխակերպումը, ինչպես հողմապտույտ, քշում տանում է դեպի Անսահմանություն:

109. Փոխակերպումը տիեզերական միաձուլման Մեր ամենագեղեցիկ հիմքն է: Տիեզերական փոխակերպման այն աստիճանը, երբ մարդն ավարտում է երկրային ուղին, մենք անվանում ենք **տիեզերական բերկրանք**: Ավարտման երևույթը ամենադժվարին նվաճումն է: Շատ ավելի դյուրին է փոխակերպումը վերին ոլորտներում: Ամենից ծանր է խզումը Երկրի հետ: Ստորին աշխարհների շղթայաշարում Երկիրը ամենաբարձր հաստատությունն է. շատ ծանր է ավարտական խզումը: Դժվարին է հենց վերելքը դեպի բարձր ոլորտներ: Դա է պատճառը, որ այդպես դանդաղ ու հազվադեպ է ավարտում ոգին իր ճանապարհը:

Բարձրագույն մոլորակների վրա չկա նման ձգողություն: Նկրտումն է շարժիչը. կենսական հրեղեն միավորումը վեր է խոյացնում բարձրագույն ոլորտներ: Ծանր է երկրային ուղին ավարտող ոգու համար:

110. Անսահմանությունը որպես կյանք ընդունված է բարձրագույն աշխարհների կողմից, և որպես հետևանք՝ մտածողությունը ներթափանցում է տիեզերական հիմքի Զանգի կենտրոնի մեջ: Եթե մարդիկ հասկանային, որ հավերժության համեմատ չնչին քանակությամբ տարիներ են ապրում, և եթե չհամարեին, որ այս փուլը սահմանափակված է տիեզերական նախանշումով, ապա նրանց առջև կբացվեր տիեզերական էվոլյուցիայի գեղեցկությունը: Սահմանափակելով իրենց կյանքը՝ մարդիկ սահմանափակում են իրենց գործունեությունը: Չէ՞ որ նիրհում են մարդկանց կենտրոնները, և միայն երբ արթնանում է գիտակցությունը, այն սկսում է հասկանալ, որ բոլոր զգացումները կարող են հոգեպես ապրել Տիեզերքի ռիթմով: Մարդն ապրում է իր կյանքի և իր կենտրոնների սոսկ չնչին մասով: Սահմանափակելով իր կյանքը՝ նա սահմանափակում է Տիեզերքը:

Իսկ ինչպե՞ս նա պիտի առաջադիմի: Սահմանափակվելով մեկ կյանքի անձուկ կացարանով՝ մարդը բանտարկում է իրեն, և դժվար է նրան շփվել բարձրագույն աշխարհներին: Մարդկության Եղբայրները լծված են գործի հազարամյակներ շարունակ:

111. Դրսևորումների արագացումը հանգեցնելու է տիեզերական խորհրդանիշների առաջխաղացման գիտակցմանը: Մարդկության ուշադրությունից վրիպում է տիեզերական գործընթացի ողջ ծավալի ըմբռնումը: Ինչ հիմքի վրա պիտի կառուցվի կյանքը, երբ միանգամայն անընդունելի է կյանքում հրեղեն խորհրդանիշների սկզբունքը:

Հրե սկզբունքի մասին խոսելիս Մենք նկատի ունենք Տիեզերքի դրսևորված կենսական ուժը: Կյանքի խորհրդանիշի հիմքում ընկած է հրե տարրի ընդունումը, և այդ սկզբունքն անսահման է տիեզերական գոր-

ծադրման մեջ: Հաստատելով առաջադիմությունը սահմանող սկզբունքը՝ մենք պիտի հասկանանք, թե ինչպես են աճում այդ նուրբ էներգիաները, երբ գիտակցված են տարածականորեն և Անսահմանության մեջ:

112. Տարատեսակ էներգիաների ձևավորումը համապատասխանում է մարդու մտածողությանը: Գեղեցկությունը հաստատող ոգու նրբագույն էներգիաները դրսևորելու են համապատասխան ձևեր: Նուրբ էներգիաների դրսևորումը արտացոլում է գոյաձևերին ծնունդ տվող էությունը: Տիեզերական օրենքն արձագանքում է ոգու լարմանը և ձգտում է գիտակցել նուրբ էությունները: Տիեզերական օրենքն արտացոլում է գոյաձևերի ողջ աշխարհի երևույթները: Պարզ հասկացությունը պարզ ստեղծագործություն է հաստատում:

Նա, ով մոտենում է վերջին ճանապարհին և կրում է իր մեջ ամեն գեղեցիկի համադրումը, ստեղծելու է այն գոյաձևերը, որոնց ձգտում է իր ոգին:

Ես Գեղեցիկն եմ հաստատում:

113. Մարդու ոգին Մենք դասում ենք Տիեզերքի երևույթների վսեմ ըմբռնումների շարքին: Երբ կոչ ենք անում Անսահմանության, ապա դա անում ենք՝ համաձայն բարձրագույն սկզբունքի: Մտածո՞ւմ էր արդյոք առաջին մարդն այսպիսի նվաճման մասին: Էվոլյուցիայի տիեզերական մագնիսը նախատեսված է հավերժ ձգողության համար՝ մատնանշելով կատարելագործման ուղին: Անսահմանափակ դրսևորման գիտակցման ոչնչացումն անարդարացի է: Ամեն նոր օրը նոր հնարավորություն է տալիս՝ մոտենալու անսահման զարգացմանը: Վախճանականության երևույթի բացակայությունը տալու է ուղղակի հետևանք՝ մատնանշելով սկիզբը ամեն մի ավարտման մեջ: Դեպի նոր ոլորտներ տանող դարպասների հաջորդականությունը անվանենք Անսահմանություն: Ոգու ստեղծագործությունն աճում է էվոլյուցիայի ամեն մի նոր առաջընթացին զուգընթաց: Ճշմարիտ, մարդու ոգին չգիտի իր գանձարանը. պարուրաձև է նրա արտահայտումը հաստատուն նկրտման դեպքում: Կիրառո՛ւմ գտեք ամեն մի տարածական կրակի համար:

114. Պարույրի սկզբունքը ամփոփված կլինի Մեր ստեղծագործական զորության մեջ: Շարունակական աճը թույլ չի տալիս ստեղծագործությանը նվազելու: Ուրիշ էլ ովքե՞ր պիտի դրսևորեն պարուրաձև շարժում, եթե ոչ բարձրագույն միաձուլմամբ միավորվածները:

Պարույրի ռիթմն աճում է վերելքին ուղիղ համեմատական: Ժամանակի այն հատկությունը, որն այնքան տհաճ է մարդկության համար, հաստատվում է որպես ստեղծագործական պարույրի առաջընթացի զորության փայլատակում: Մարդիկ սարսափում են ժամանակից և ըմբռնում են

հանդես բերում սեփական կառույցների փլուզման վերաբերյալ, քանի որ մարդը դրսևորում է ոչ ռիթմիկ շարժում: Պարուրաձև լարվածության գեղեցկությունն առկա է ողջ ստեղծագործության մեջ: Տիեզերքն ուղղում է այդ պարույրը ոգուն ընդառաջ: Միաձույլ սրտի ձեռքերում մատերիա լուսիդան դրսևորելու է գեղեցկության ամենավսեմ ձևերը:

115. Ստորինի ենթարկումը վերինին ընկած է Տիեզերքի հիմքում: Նուրբ էներգիաների մասին խոսելիս պետք է ընդունել սա տիեզերական օրենքի ողջ հաստատումով: Ստորինը բարձրագույնին ենթարկելու հետևանքը մաքրագործումն է լինելու: Մարդկությունը ենթարկում է ստորինին այն, ինչը պիտի գերակայեր: Երբ բարձրագույնն է իշխում, այնժամ ստորինի փոխակերպումը վերածնվում է բարձր կարգի հատկության:

Արխաթի համար գոյություն չունի ոչնչացում: Տիեզերական ստեղծագործությանը ծանոթ չէ ոչնչացումը: Մայրն Աշխարհի չգիտի, թե ինչ է ոչնչացումը: Բայց սոսկ վերածնունդն է ստեղծում այն արժեքավոր շղթան, որն աճում է անսահմանորեն: Փոխակերպումն անվանելով ստորինը բարձրագույնին ենթարկում՝ Մենք ցանկանում ենք ամրապնդել մարդկության գիտակցությունը դեպի Անսահմանություն շարժվելու գործընթացում:

116. Հեռավոր աշխարհներում փոխակերպումը բարձրագույն լարվածության է հասնում: Կարելի կլինի հասնել ամենահրեղեն արդյունքների, ամենաանըմբռնելի փոխակերպումների նոր տարրերի բոլոր բարձր դրսևորումների համար: Միայն միաձուլման ամենանկրտուն դրսևորումների դեպքում են հաջողվում բարձրագույն փոխակերպումները: Մարդկության հիվանդությունը վանումն է, և Երկրի ոլորտը հագեցած է այդ հեղձուցիչ սարսափներով: Երբ մարդկությունը վերացրեց ամենանվիրական սկզբունքի հասկացությունը, այդժամ հաստատվեց վանողության տիրապետությունը: Մոլորակի վրա չկա մի անկյուն, որտեղ բացակայում է վանողության երևույթը:

Միաձուլման սկզբունքի սրտով ստեղծված աշխարհը արարելու է տիեզերական ձգողության միջոցով: Տիեզերական ձգողությունն ու միաձույլ սիրտն են ստեղծում գոյի դրսևորված գեղեցկությունը:

Կենսականորեն պիտի ընդունել օրենքը: Կենսականորեն է այն դրսևորվում և կենսագործվում: Պատկերացում կարող է տալ տիեզերական մագնիսականության գեղեցկությունը:

117. Ոգու ստեղծագործման շղթայի մեջ գտնում ենք ամենաճշգրիտ ու նրբին համահնչությունների դրսևորումները, որոնք ի հայտ են գալիս տիեզերական կրակի ստեղծագործության միջոցով: Տիեզերական հուրը

միայն այն էությունը չէ, որից մենք դուրս ենք բերում մեր գոյաձևերը: **Հուր** ենք անվանում բոլոր այն նրբագույն ոգեղեն դրսևորումները, որոնք հաստատում են մարդկային լավագույն արարքները: Ոգու ստեղծագործության հիմքում սխրանքի գեղեցկությունն է: Մեր Աշխարհի Մայրը մատուցել է աշխարհին այն հավերժ սխրանքը, որը հիմքն է Տիեզերքի:

Ինչն է պատճառը, որ Երկիրը այդպես վատնում է իր գանձերը: Չէ՞ որ սխրանքի սկիզբը բոլոր անեղծ ձեռնարկումների սկզբնավորումն է: Աշխարհի Մոր սխրանքը, իբրև Տիեզերքի փայլատակում, արտացոլվում է ոգու ստեղծագործության մեջ: Ընդունենք օրենքն իբրև նվիրական, դրսևորված սխրանք: Կյանքի գեղեցկությունը տիեզերական միասնության մեջ է, և կյանքի հիմքում ընկած է սխրանքի հաստատումը: Սխրանքի անձնուրացությունը հաղորդակից է դարձնում ոգուն գոյի բարձրագույն դրսևորումներին: Դեպի Անսահմանություն տանող ճանապարհին անձնազոհության գավաթը տանելով՝ ոգին կարող է բացահայտել լիակատար կյանքը:

118. Ստեղծագործ կյանքի հիմքը կարող է հաստատվել միայն հոգեդինամիկայի միջոցով: Հոգեդինամիկան կարող է հաստատվել սոսկ տարածական էներգիաների սկզբունքներով: Թե՛ տիեզերական, գիտակցական տեսողություն դրսևորելիս, թե՛ տարածական կլիշեի հետ համահնչումով գիտակցությունը հաստատելիս ոգին առաջնորդվում է միևնույն սկզբունքով, ըստ որի՝ տիեզերական ուժերի դրսևորումները քաղվում են միավորման միջոցով: Միայն միավորման եղանակով են ստեղծվում տարածության գոյաձևերը: Ընդարձակումը չի կարող ծնել այնպիսի էություններ, որոնք ենթակա չեն այդ նույն օրենքին: Մարդկանց ախտահարման պատճառն այն է, որ նկրտումները խիստ անհետևողական են: Տիեզերքը պահանջում է այնպիսի կուտակումներ, որոնք կարող են աճել՝ հաջորդաբար արարելով աստիճանները: Երբ մարդկությունն ըմբռնի, որ նկրտումը հանգեցնում է աստիճանների գիտակցմանը, այնժամ հնարավոր կլինի երաշխավորել դեպի Անսահմանություն տանող ուղին:

Դարերով է հարկ լինում լցնել հողը պատառոտող ճեղքերը, և նոր կուտակումների փոխարեն հարկ է եղել լրացնելու պատվարը: Շատ են լրացրել Տիրակալները, և մարդիկ էլ շատ են կործանել: Առաջնորդվելով իրար հաջորդող արարումների ու կործանումների այդ սկզբունքով՝ մարդկությունն ապրում է իր էվոլյուցիան: Անսահմանության երևույթը առաջ կմղի գիտակցությանը, և առաջ կշարժվի մարդկությունը:

119. Տիեզերական ստեղծագործությունը լարված է լիակատար ներդաշնակությամբ հանդերձ, բարձրագույն վիբրացիաներին դաշնաձայն: Երբ Մենք հանձնարարական ենք տալիս, Մենք ամենից առաջ համաչա-

փում ենք ներդաշնակության լարման աստիճանը: Ներդաշնակության բույլքն անսահման է, և անսահման է բարձրագույն միաձուլումը հաստատող ներդաշնակությունը: Եվ տիեզերական սկզբունքով հաստատված միաձուլումը հաստատված է բարձրագույն աշխարհների շղթայում: Հիասքանչ է տիեզերական զորության շրջան կազմող այդ շղթան:

120. Տիեզերական մագնիսն անդրադառնում է ողջ գոյի մեջ: Ձգողականությունը համախմբում է Տիեզերքի ստեղծագործության այն մասերը, որոնք, իրենց հերթին, արտացոլում են տիեզերական մագնիսականությունը: Պտտահողմը մերձեցում է ստեղծում այնտեղ, որտեղ հաստատվել է հոգեդինամիկան: Իսկ այնտեղ, ուր նվազել է ձգողականությունը, սկսում է գործել տարանջատումը: Պայթյունի նման այդ խզումները վանում են միևնույն տարրի՝ իրար պատկանող մասերը: Տիեզերական մագնիսականությունը հավաքում է ժողովուրդներին, համախմբում է մարդացեղերը, ի մի է բերում երկրամասերը, ընդհանրացնում է գիտակցության աղեղները, ժողովում է ամեն տեսակի ձգողականության երևույթները: Կենսական ամեն տեսակի դրսևորումների հիմքում կարելի է տիեզերական մագնիսականություն գտնել, և անգամ կարմայական օրենքի հետևում տիեզերական մագնիսն է կանգնած: Եվ գոյության ծարավը ևս պայմանավորված է Տիեզերքի հոգեմագնիսով:

121. Հավերժ է Տիեզերքի մագնիսի ձգող ուժը: Այս բացահայտ ճշմարտության ուժը ճանաչելու դեպքում ոգին իսկույն ազատվում է տարածության մեջ կորսված լինելու մասին մռայլ մտքից: Եթե մարդկությունը կարողանա արձագանքել մագնիսի համահնչությանը, ապա կհաստատվի այդ անսահման ձգողության մեջ:

Այդ չափանիշը կարելի է գիտակցել որպես դրսևորումը լավագույն միավորյալ ուժի, որն աճում է վերելքի ողջ լուսաճաճանչ գեղեցկությամբ: Այդ մեծագույն մագնիսի օգնությամբ կարելի է հաստատվել հավերժության վերընթաց գագաթներին:

Մենք ասում ենք **գիտակցության աղեղներ**, քանզի **շրջան** ենք անվանում արխաթի գիտակցությունը: Բայց առկա է ճանաչողության ավելի բարձր մի աստիճան: Այդ աստիճանին արխաթը միայնակ չէ: Այնժամ Մենք հաստատում ենք, որ շրջանը հաստատված է, ամբողջական: Տիեզերական մագնիսը Մեր նվիրական զորությունն է: Անընդգրկելի է այդ ուժի վեհությունը: Եթե մարդկային ոգին ըմբռնում հանդես բերեր, ապա անվեհերությունը կհամակեր բոլոր սրտերը, և բերկրանքը կհնչեր լեռնային բարձունքներին: Արխաթն ընթանում է՝ իր սրտի մեջ կրելով տիեզերական մագնիսի ուժը: Արարում է Տիեզերքը, գոյի գեղեցկությունն է արարում: Նկրտման երևույթը կարելի է անվանել **տիեզերական մագնիս**:

122. Հնում պնդում էին, որ կյանքի Սկզբնաղբյուրը տիեզերական մագնիսականությունն է: Երբ մարդկությունը դիմում էր արևի ակունքին ու լուսատուներին, ինչպես նաև տարերքներին, ապա այդ պաշտամունքներում արտահայտվում էր տիեզերական մագնիսականությունը: Հնում մարդը փնտրում էր այն հատկությունը, որը կմերձեցներ իրեն տիեզերական ստեղծագործությանը: Գտնելով տիեզերական երևույթների դրսևորումը՝ ոգին գիտեր, թե դեպի ուր պիտի ուղղի իր նկրտումը:

Ողջ աստղաբանությունը կառուցված է տիեզերական *մագնիսականության օրենքների* դրսևորումների վրա: Կյանքի ու նրա ավարտի հաշվարկումը ենթակա է այդ նույն տիեզերական մագնիսականությանը: Որքան ժամանակ մագնիսականության ձգողության շնորհիվ կայուն են մնում զուգակցումների համակցությունները, այդքան էլ տևում է կյանքը: Մինչդեռ տիեզերական մագնիսականությունը կարող է համապատասխանել ոգու հոգեդինամիկայի դրսևորած պայմաններին: Անշուշտ, տիեզերական մագնիսի ռիթմով ընթացող ոգին կարող է լարվել կատարելապես համադաշն էվոլյուցիայի ձգողականության հետ: Մարդու մահը կարող է դիտվել որպես տիեզերական մագնիսի սուր ձգողության երևույթ: Դժվար է նույն անվանումը չտալ կյանքին ու մահին. դա նույն ձգողությունն է անվերջ փոփոխումների մեջ, փոխվում են սոսկ զուգակցումներն ու դրանց նպատակները: Այնքա՜ն շատ բան կարելի է տալ ողջ Տիեզերքում գործող **միաձուլման օրենքի** վեհության գիտակցումով: Սկիզբն ու վերջը, ճշմարիտ, հանդիպում են տարածության մեջ:

123. Երբ նկատում եմ Մեր նվիրական վիբրացիաներին համապատասխանող վիբրացիան, ուրախանում եմ: Երբ տիեզերական մագնիսականությունը համընթաց է մեզ, այնժամ համահնչություն ենք հանդես բերում: **Առնմանման օրենքի** հիմքում տիեզերական մագնիսականության հատկությունն է: Երևույթների բարդությունն ավելանում է, երբ ոգին դրսևորում է դիմադրություն կամ նիրհած սկզբունքներով պայմանավորված հնազանդություն: Իսկ երբ ոգին ձգտում է դեպի տիեզերական մագնիսը, այնժամ զուգակցման հետևանք է լինում կյանքի բարձրագույն գոյաձևը: Միաձուլումն առկա է ողջ Տիեզերքում և արտացոլվում է ողջ տարածության մեջ՝ դրանով իսկ ներկայացնելով իրենից Տիեզերական Բանականության բարձրագույն արտահայտումը: Մարդու զորությունը տիեզերական մագնիսի մեջ է, և անընմբռնողության պատճառով այդ սկզբունքը կորցնելու դեպքում նրա առջև բացվում է այն ահռելի վիհը, որը մարդն անկարող է հաղթահարել առանց դրա հատակն իջնելու և կրկին բարձրանալու: Դա է պատճառը, որ այդքան ճեղքվածքներ գոյություն ունեն, և այդքան մարդիկ՝ բարձրագույն ճանաչողությու-

նից զուրկ: Այդ իսկ պատճառով ցնծում են ոլորտները, երբ կարելի է հրճվանքով տոնել տիեզերական միաձուլման վեհությունը: Հիրավի, ցնցվում են ոլորտները մեծագույն ցնծությամբ:

Հնչում են ոլորտները, և համահնչությունն է սլանում տարածության մեջ:

124. Ձգողության սկզբունքը հիմնված է տիեզերական մագնիսի վրա: Տարրերի միակցումն ու տարանջատումը ենթակա են այդ նույն **ձգողության օրենքին** կամ տիեզերական մագնիսականության սկզբունքին: Երբ սկսում է գերակշռել տարանջատման հատկությունը, այդժամ մագնիսի ուժն արդեն նոր համակցություն է ձևավորում: Պետությունների քայքայման կամ միավորման վերաբերյալ բոլոր կանխագուշակումների հիմքում տիեզերական մագնիսի նվազումն է կամ զորեղացումը: Հեռավոր տարածական ոլորտներով անցնող լուսատուները դեպի իրենց են ձգում կամ վանում համասեռ տարրերը: Տիեզերական մագնիսի յուրաքանչյուր համակցության հիմքում անսահման ուժ է ամփոփված:

125. Ստորին ոլորտում տարրերը հակառակվում են տիեզերական մագնիսին, մինչդեռ ճանաչողության աստիճանը ձգում է դեպի մագնիսը: Տիեզերական մագնիսին դիմադրելու երևույթը նպաստում է սոսկ պայթյուններին ու խզումներին: Միայն օրենքի մատնանշած ուղղությամբ ընթանալու դեպքում կարելի է առաջադիմել: Իհարկե, գոյություն ունեն առաջադիմության որակներ հանդիսացող բազմաթիվ դիմադրություններ: Ձգտումների գլխավոր, ուղեցույց գծով ուղղված բոլոր դիմադրությունները մերձեցնում են ոգուն բարձրագույնին: Իսկ դեպի հակադիր կետն ուղղված դիմադրությունները ոչնչացնում են ստեղծագործությունը: Գոյության նպատակն է ընթացք տալ այնպիսի դիմադրությանը, որը նպատակահարմար է Տիեզերքի ստեղծագործության համար:

Մարդացեղերի և կյանքերի հերթափոխությունները կարող էին ընթանալ այլ ճանապարհով: Մարդու և մարդացեղերի ծնվելու պահին դիմադրությունների և ստեղծագործական խնդիրների նպատակահարմար համակցություն է տրվում, և տիեզերական մագնիսականությունը նախատեսում է ամեն ինչ: Ընդդիմանալու հետևանքները մարդկության համար ի հայտ են գալիս որպես նորանոր կեղծ հիմունքների կառուցման ցավագին կործանման երևույթներ: Բայց տիեզերական մագնիսի հետ համադաշն ստեղծագործելու դեպքում մենք սկսում ենք առաջնորդվել ճշմարիտ էվոլյուցիայի հիմունքներով:

126. Մենք նկատել ենք, որ ցանկացած գործընթացի ավարտման պահին լարվածությունն աճում է: Օրինակ, երբ ոգին զգում է իր նոր կոչումը, նա կամ կառչում է հնից, կամ էլ հարում է իր առջև սփռվող

նոր աշխարհներին: Այդպես էլ պետությունները ուրիշի ձեռքը անցնելու նախօրեին ընդդիմանում են տիեզերական մագնիսի նախանշածին:

Ոլորտների բոլոր դիմադրությունները, լուսատուների բոլոր դիմադրությունները, հոսանքի բոլոր դիմադրությունները միանգամայն այլ չափանիշներով են չափվում միավորյալ դրսևորման համար:

127. Երբ տիեզերական մագնիսին դիմադրությունը տեղի է ունենում ժամանակավոր երևույթի համար անհրաժեշտ նոր համակցություններ ժողովելու համար, ապա այդ երևույթը կատարվում է: Տիեզերական մագնիսը միավորում է այդ համակցությունները, որոնք ներքաշվում են ստեղծագործման տարածական շրջապտույտի մեջ: Տիեզերական մագնիսի ուժը կենտրոնախույս է և դուրս է մղում այն տարրերը, որոնք չեն համապատասխանում գլխավոր խնդրին, այն է՝ միավորել այն տարրերը, որոնք մեկ տարրին բնորոշ հատկություններից որոշակի ամբողջություն են կազմում: Ոգու ընդդիմադրումը Տիեզերքի սկիզբներին դաժանորեն ընկղմել է իմացության անոթը անգիտության խավարի մեջ: Աշխարհ եկած բոլոր Տիրակալները գալիս էին՝ ցրելու հոգևոր ընդդիմադրումը և պայծառացնելով ոգին՝ Նրանք ձգտում էին նաև հասցնել գիտելիքը ավելի բարձր աստիճանի: Այդպես տիեզերական մագնիսը հավաքում է անսահման ստեղծագործման իր Բարձրագույն Բանականությունը:

128. Տիեզերական մագնիսի սկզբունքի էությունն այնքան բազմազան է, որ ցանկացած սկզբունք ընդգրկվում է նրա դրսևորած յուրաքանչյուր շղթայի մեջ: Բոլոր սկզբունքները հիմնված են ձգողության վրա և շարժման մեջ են դրվում Տիեզերքի մագնիսի ուժով: Ողջ Տիեզերքում կյանքը կառուցվում է՝ հակազդելու համար այն սկզբունքներին, որոնք չեն ուղղորդում դեպի էվոլյուցիայի երևույթները: Տիեզերական մագնիսականությունը մարտնչում է շեղող ուժի հետ: Եվ եթե մենք հետևենք ռասաների զարգացման պատմական ընթացքին, ապա կհամոզվենք, որ էվոլյուցիայի ուղուց շեղվելու դեպքում ռասաները ներքաշվում էին սպառման մեջ: Իհարկե, ասելու են, որ ռասաները ծնվում ու մահանում են, սակայն այնքան տարբեր են իրար հաջորդող ռասաների աստիճանները, որ կարելի է ասել՝ հեռանում էին իրենց սպառած ռասաները, կամ էլ ասել՝ հեռանում էին կուտակած ռասաները: Ռասաների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ նաև դրանց հարող ենթառասաները: Տիեզերական մագնիսի հարաբերակցությունը նախանշվածը ընդունելու կամ դրան ընդդիմադրելու հետ պայմանավորում է ռասայի զարգացման ընթացքը:

129. Աստղաբանությունը միանգամայն ճշգրտորեն է որոշում տիեզերական մագնիսականությունը, երբ կարելի է կանխորոշել իրադարձությունների ընթացքը, երբ կարելի է ճշգրտորեն որոշել՝ որպես գերիշխող ուժ ընդունելով տիեզերական մագնիսականությունը: Հաշվարկի են ենթարկվում կյանքի բոլոր դրսևորումները: Կարելի է իմանալ բոլոր իրադարձությունները և հոգևոր ու մոլորակային էությունների բոլոր դրսևորումները: Տիեզերական մագնիսականությունը համախմբում է տիեզերական ձգողության բոլոր բարձրագույն տարրերը: Ձգողությանը ձգողությամբ պատասխանող ոգին Տիեզերական Բանականության այն մասն է, որը հաստատվում է որպես կեցության հրաման: Գեղեցկությունն է այդ հրամանում, և ազատագրելով ոգին մոլորակից՝ հրամանը բարձրագույն ոլորտներ խոյացնող պայծառացում է տալիս:

130. Տիեզերական մագնիսի ուժով շարժվող ոգին հաղորդ է լինում մեծագույն արարչագործությանը, երբ կառուցվում է դրսևորված, հաստատված Տիեզերքը: Դաշնաձայնությունը հանգեցնում է բարձրագույն ներդաշնակեցմանը: Այն ոգին, որը ցանկանում է ոչնչացնել կապը տիեզերական մագնիսի հետ՝ ստեղծելով սեփական փոքր աշխարհը, նահանջում է Անսահմանություն տանող ճանապարհից:

Մարդկային ոգու բոլոր դրսևորումները արտացոլվում են տիեզերական մագնիսականության վրա: Տիեզերքի բոլոր դրսևորումները կախում ունեն մեկը մյուսից: Բոլոր լուսատուները կախում ունեն նույնական հատկության ձգողությունից: Հասկացեք, ամեն ինչ հիմնված է Տիեզերքի մագնիսի վրա:

Միտքը ձգում է համապատասխան գործողություն: Բարի ձեռնարկումը ձգում է համապատասխան որոշում: Եվ դեպի տիեզերական մագնիսի հոսքը ձգտող ոգուն նախանշված է սպասվող հաղթանակի բերկրանքը:

131. Տիեզերական մագնիսի կազմության ինքնորոշումը կոչվում է **Տիեզերքի Կամքի** հաստատում: Ինքնորոշման հատկությունն առկա է ամեն մի սկզբնավորվող գործողության մեջ: Տիեզերական մագնիսի հոսանքի ուղղությամբ նպատակաուղղված ստեղծագործությունը հաստատում է դեպի էվոլյուցիա ուղղված իր կամքը: Դա է պատճառը, որ այդքան տարբեր են դեպի էվոլյուցիայի ընթացքը ուղղված և մագնիսին հակառակվող նկրտումները: Ինքնորոշումը ուղղորդում է դեպի խիստ անընդունելի աստիճաններ և բարդում է տիեզերական մագնիսի վրա համաշխարհային խնդիրների բազմաթիվ համակցություններ: Հաղթահարելով ավելորդ դիմադրությունները՝ տիեզերական մագնիսը կարող է հավաքել բոլոր անհրաժեշտ համակցությունները, բայց շատ մեծ է մագնիսականության ծախսը:

Բարձրագույն Բանականությունը սաստիկ լարել է մոլորակի ուժերը, սակայն ինքնորոշման կազմությունը ոչ միշտ է ներդաշնակ բարձրագույն ոլորտների նախանշման հետ: Անշուշտ, այնքան շատ են Տիեզերական Բանականության հաստատումը արտահայտող ոլորտների ժամանակագրությունները, և փոխակերպման նվաճումներն այնքան մեծ են, որ Տիեզերքն, արդարև, ամփոփում է իր մեջ լավագույն էներգիաներից բաղկացած մոլորակի միջուկը: Դրա շնորհիվ ենք առաջադիմում:

132. Ոգու ինքնորոշումը իր կյանքի ուղու հաստատումն է, և ուժն է պայմանավորում անշեղ առաջընթացը: Լուսատուների հետ ընթանալու ցանկության դրսևորումը ոգուն ցույց կտա իր ուղին: Անշուշտ, ուղու հատկությունը ցանկության և արարքների որակի համակցման արդյունք է: Եթե մարդիկ հասկանային, թե որքան մեծ է ինքնորոշման ուժը, ապա նկրտում հանդես կբերեին՝ մերձենալու տիեզերական մագնիսին:

Երբ հազարամյակներ շարունակ ոգին փնտրում է լուսատուների կողմից ուրվագծված իր հետագիծը, և իր էությունը ձգտում է ներդաշնակության, այդժամ տիեզերական մագնիսն արձագանքում է, և Տիեզերքը բարձրագույն համահնչություն է ստանում: Այդ համահնչություններից ձևավորվում է տիեզերական ակորդ: Որքան բարձր է ոլորտը, այնքան ավելի մեծ է ձգողության ուժը, և այդպես կարելի է գիտակցել Տիեզերական Բանականության այդ զորությունը: Զորությունն աճում է ոլորտներով բարձրանալուն համընթաց:

133. Տիեզերքը մատնանշում է մարդու գիտակցությանն այն բացահայտ բանաձևը, որը սլանում է տարածության մեջ: Տիեզերքում ամեն ինչ բաղկացած է առաքվող և ընկալվող ուժերից: Եթե հաջողվեր համամասնություն հաստատել շարժման ու ձգողության միջև, ապա հավասարակշռության շնորհիվ կստեղծվեին ամենաբարձր գոյաձևերը: Եթե մարդիկ տեսնեին ճառագայթների բոլոր առաքումները, ապա կսարսափեին՝ տեսնելով այն ամենը, ինչը նրանք չեն ընդունել: Նկրտուն ոգին ձգվում է դեպի այդ առաքումները: Եվ այնքա՜ն բազմազան են մատուցված, բայց չընդունված էներգիաների առաքումների տեսակները:

Այսպես կոչված **նոր էներգիաների** ծնունդը ոչ այլ ինչ է, եթե ոչ առաքված ուժի և դեպի վերջինս ձգվելու հակում ունեցող ուժի էության համակցում ու համախմբում: Առաքվածի և ընդունողի հիմքում ընկած է միավորման միևնույն սկզբունքը: Եվ անսահման է դրսևորված այն աստիճանը, որը սկսվում է անգիտակից ընկալումից՝ նպատակ ունենալով գիտակցաբար ձգտելու ընդունել այն սկզբունքները, որոնք շունչն են Տիեզերքի:

134. Տիեզերական ձգողականությունը միանգամայն պարզորոշ կերպով ուղղորդում է շարժումը դեպի էվոլյուցիա: Նպատակասլաց ազդակը առաջ է տանում իր հետ այն պարույրը, որը պիտի բերի հանդիպական ուժը: Եվ պարույրի սլացքը կախված է տիեզերական կրակից: Հաստատելով որոնող ուժը դրական մագնիսականության հոսանքով՝ տիեզերական ձգողության երևույթը ծնում է նաև բացասական մագնիսականություն, և միասնական սկիզբը կարելի է գտնել ողջ Տիեզերքում: Տիեզերական մագնիսը՝ որպես միակ մեծագույն հավերժական օրենք, անսահման ստեղծագործման նախակերպար է տալիս աշխարհին: Արդ աշխարհը կարող է հետևել այդ օրենքին:

Էվոլյուցիայի համաշխարհային ընթացքը կարելի է դիտել որպես տիեզերական մագնիսի հաստատում: Ստեղծագործությունը կարող է զարգանալ, երբ այն համընթաց է տիեզերական մագնիսին:

Զգում եմ, թե ինչպես են վառվում նվիրական հուր ցավերը: Հնում քրմուհիները պիտի տևական ժամանակ անդորրություն պահպանեին: Նրանց հաստատում էին որպես թևեր կրողների: Դա է պատճառը, որ այդքան լարված է քո բոցավառումը: Խիստ սրվում են լույսի ու ձայնի ընկալումները: Գիտցի՛ր, Ուռուսվա՛տի, որ Ես քեզ հետ եմ, որ ամեն մի լարման մեջ հաստատվում է քո ստեղծագործությունը, և որ ամեն մի շարժման մեջ երաշխիքն է ապագայի: Մեծ նվաճումներ կան հեռավոր աշխարհների երևույթները ընկալելու ուղղությամբ: Գիտեմ, թե որքան դժվար է քեզ համար, անհրաժեշտ է հանգստանալ: Այն, ինչ տեսար, պրիզմայակերպ տեսողության դրսևորումն էր:

135. Նուրբ էներգիաները համախմբում են իրենց տարրերը տիեզերական մագնիսի միջոցով: Դրանց ձգողության հիմքում հատկությունների տարբերությունն է: Անշուշտ, ձգողության բազմաթիվ պատճառներ գոյություն ունեն, և ամեն մի նոր համակցություն իր պատճառն ունի: Երբ որևէ նուրբ էներգիայի տարրերը միանում են մեկ այլ էներգիայի, ապա կարելի է հասկանալ, որ տիեզերական մագնիսը միավորել է միևնույն հատկություն ունեցող տարրեր: Բայց պատահում է նաև այնպես, որ մի էներգիան կլանում է մյուսը, և արդյունքում ստացված մատերիայի մեջ անհավասարակշռություն է ստեղծվում: Համախմբման ու կլանման այնքա՛ն շատ ստեղծագործություն կարող է դրսևորել հավերժ շարժող պարույրը:

Տիեզերքի անիվը համախմբման հագեցվածություն և նուրբ էներգիաներ է հաստատում: Մարդու գոյությունը ոգեղեն և ֆիզիկական մարմիններում առաջացնում է այն ուժը, որը կոչվում է **կենսական սկզբունքի պարույր**: Շարունակենք անվերջ այս գիծը, և ոգու ըմբռնումը կընկալվի:

136. **Ոգու ըմբռնում.** այսպես է կոչվում այն սկզբունքը, որը ցույց է տալիս մարդուն գիտակցության ուղին: Երբ մարդը տարանջատվում է տիեզերական մագնիսի ուժերից, այնժամ նա ճանաչում է սոսկ ֆիզիկական գոյության հաստատումը: Որևէ կապ չունենալով ոգու մեջ բարձրագույն էներգիաների հետ՝ մարդը, հիրավի, կործանում է իր լավագույն հնարավորությունները: Միայն ոգին բարձրագույն էներգիաների հետ միավորող մագնիսի գոյության գիտակցական ընդունումը կարող է մոտեցնել մարդուն **տիեզերական մագնիսի օրենքին**: Մոլորակի վրա մարդու կենտրոնացման բանաձևը խիստ անհամապատասխան է իրականությանը: Տարածության մարմինների և ոգու կրակի միավորումը հիմքն է ամբողջ գոյի:

137. Այդ նույն տիեզերական մագնիսով է պայմանավորվում ուժը կարման որոշելիս: Տարատեսակ ուժերի համակցման միջոցով ձեռք բերված բաղադրակազմը հենց այն է, ինչ մենք բնորոշում ենք որպես ճակատագիր: Մարդկանց դժվար է հասկանալ, որ տիեզերական համակցությունների զուգադիպումները որոշակիորեն հենց ինքը՝ մարդն է ձևավորել: Այն ամենը, ինչ մարդը կրում է իր մեջ, արտացոլելու է իր կյանքերի բոլոր առանձնահատկությունները: Շատ հաճախ տիեզերական մագնիսի ուժը լարում է բոլոր հոսանքները՝ հավաքելու համար այն որոշակի բաղադրակազմը, որը սահմանված է մարդու ստեղծագործման համար: Ստեղծագործման ուժը այնքան մեծ է, որ հոսանքների ու էներգիաների ամբողջացման դեպքում կարելի է ստանալ անսպառ էներգիայի բանաձև: Իհարկե, անհրաժեշտ է գիտակցաբար ընդունել տիեզերական մագնիսականության էությունը:

Ոգու անսահման ստեղծագործմանը հանգեցնում է տիեզերական մագնիսի ձգողականության ըմբռնումը:

138. Ագնի յոգի կենտրոնները կարող են համահունչ լինել տիեզերական մագնիսին: Երբ գիտությունը սկսի համակցել կենտրոնները տիեզերական մագնիսի հոսանքների հետ, այնժամ մի նոր էջ կբացվի մարդկության առջև: Չէ՞ որ երևույթները սերտորեն շաղկապված են Տիեզերքի հետ:

Շատ դժվար է կրակների փոխակերպում իրականացնել երկրային ոլորտում, քանզի մարդն իր ժխտումով ողջ Երկիրն ընդգրկող յուրահատուկ ոլորտ է ստեղծել: Այդ ժխտումները նման են փշասեղների, և բազում մարտեր են ընթանում աստրալ ոլորտում: Դա է պատճառը, որ այդքան մեծ է բոցեղեն Ագնի յոգի սխրանքը: Երբ յուրաքանչյուր կենտրոն մարդկության առաջընթացի համար ստանում է ոչ միայն հուր, այլև հրեղեն փոխակերպում, այդժամ այդ կրակները կրողին կա-

ռելի է անվանել **էվոլյուցիայի սպասավոր**: Սեփական անձը տիեզերական կրակի և մոլորակի միավորմանը անմնացորդ հանձնողը հաստատվում է որպես մոլորակը հեռավոր աշխարհներին կապող օղակ:

139. Տիեզերական մագնիսը համախմբում է դրսևորված նախանշված օբյեկտները, որոնք կազմում են էվոլյուցիայի շղթայի մեջ ընդգրկվող մեկ ամբողջություն: Դժվար է ասել, թե տիեզերական մագնիսի միավորումներից որ մեկն է ուղղակի կամ անուղղակի կերպով հարում էվոլյուցիայի շղթային: Երբ երկրային ոլորտը հոսանքներ է ընդունում նվազագույն չափով, այդժամ մնում է իրենց կիրառմանը սպասող էներգիաների ավելցուկ: Անսպառ է ստեղծագործությունը: Եվ այն դեպքում, երբ ուժի մի մասն ընդունվել է, իսկ մյուսը սլացքի մեջ է՝ որպես որոնող ուժ, անհրաժեշտություն է առաջանում ժամանակին լիցքաթափելու չկիրառված ուժը:

Ինչ խոսք, հեռավոր աշխարհներում իրավիճակը այնքան հակադիր է, որ մարդկությունը, **ընկալման օրենքի** մեջ գտնելով ողջ դրսևորված ուժը, կարող է ձգտել հաջորդ վերելքին: Չէ՞ որ կյանքի հիմքում դրված է միության սկզբունքը. ոգու և մատերիայի միության, սկիզբների միության, ողջ Տիեզերքի կողմից հաստատված միության սկզբունքը: Միությունը տիեզերական մագնիսի հիմքն է, և տարրալուծման երևույթների մեջ **փնտրեք սոսկ կատարելագործման օրենքը**:

Ըմբռնում հանդես բերեք գոյությունների փոփոխման գեղեցկությանը: Ձգտեք միաձուլվելու տիեզերական մագնիսին:

140. Եթե մարդկանց ասենք, որ ասպարեզից հեռացող յուրաքանչյուր գոյաձև կրում է իր մեջ հաջորդ գոյաձևը, ապա Մեզ կհամարեն պարադոքսային գիտնականներ: Մինչդեռ այնքան գեղեցիկ է անընդհատության երևույթը: Երբ ատոմը տրոհվում է, ոգու միջուկի կենտրոնը միանում է տիեզերական մագնիսին: Ոչ թե թափառող մասնիկներ, այլ բանական ուժեր: Եվ երբ ոգու միջուկի ուժը ի մի է բերում մեկ ատոմի ուժը, այնժամ կարող է տեղի ունենալ տիեզերական միաձուլում: Այնքան հիասքանչ է ուժը, և այնքան գեղեցիկ է տարրերին բնորոշ ուժերի արտահայտումը: Մարդկային տեսակետից թվում է, թե անըմբռնելիորեն բարդ է օրենքը, բայց արխաթն ասում է. «Հիասքանչ է տիեզերական մագնիսի օրենքը»: Բարձրագույն չափանիշ կիրառելու դեպքում կհասնենք բարձրագույն կեցությանը: Այնքան վեհ է երևույթը, որ մոլորակի վրա ժամանակավոր կյանքը սոսկ թույլ պատկերացում կարող է տալ այդ չափանիշի մասին: Եվ տիեզերական միաձուլումը կոչվում է **ամեն գոյի համադրանք**:

Կարելի է ոգով կառուցել շատ ավելին, քան ձեռքերով: Կարելի է մտքով մի ամբողջ պետություն կառուցել: Կարելի է մտքով կործանել այն, ինչը ստեղծվել է հազարամյակների ընթացքում: Կարելի է նույնքան հաստատվել երկրակեղևի վրա, որքան և հեռավոր աշխարհներում:

141. Տիեզերական ստեղծագործողությունը համախմբում է այն մեծությունները, որոնք կարող են հաստատվել որպես բարձրագույն էության ուժ: Անշուշտ, բարձրադաս էության ուժը դրսևորվում է ցանկացած լարված, պարուրաձև շարժման և ամեն մի արտահայտված, ներդաշնակված համակցության մեջ: Տիեզերական մագնիսը կարող է համախմբել այն տարրերի հատկությունները, որոնք ենթակա են միևնույն տարերքին: Տիեզերական մագնիսը միանգամայն կատարելապես համագործակցում է տարերքների հետ՝ ճշգրտորեն համախմբելով էներգիաները: Երբ տեսնում եք կյանքի դրսևորումների այնպիսի ձևեր, որոնք չեն համապատասխանում գեղեցկությանը, ապա դասեք դրանք տիեզերական մագնիսին դիմադրելու երևույթների շարքին: Տիեզերքը որոշակի հարաբերակցություն է նախանշում գոյաձևի և նկրտման միջև. ուստի կարելի է ասել, որ մոտահաս ժամանակները և մագնիսի նկրտումը նոր գոյաձևեր կառաջացնեն:

Մարդն ամենից շատ անընմբռնողություն է հանդես բերում իր արտահայտման խնդիրներում և համարելով իրեն անպատասխանատու՝ ծնում է դիմադրող գիտակցությանը բնորոշ գոյաձևեր:

142. Համապատասխան գոյաձևերի մասին խոսելիս կարող ենք մատնանշել այն դրսևորումները, որոնք միայն մասնակիորեն են հաստատում գիտակցական արտահայտումը: Այդ գոյաձևերը ստեղծվում են որպես մասեր, և միայն անձամբ ուղղորդող գիտակցությունն է ձևավորում ցանկալի գոյաձևը: Այդպիսի դեպքերում, երբ միայն մասամբ են ընդունվում մագնիսի առաքած ուժերը, և դա բնորոշ է ողջ Տիեզերքին, ստացվում է աններդաշնակ համակցություն: Երբ ոգին կարող է հազարամյակներ շարունակ ընկալել տիեզերական մագնիսի ուժերը, այնժամ նա հենց այն բարձրագույն ներդաշնակությունն է: Օրինական է գեղեցկության ճանապարհով ընթացող ոգու ուժը, և ուժերը ճամփա են տալիս գիտակից, դրսևորված մագնիսի ստեղծագործությանը: Ոգին միավորվում է Տիեզերքի մագնիսի հետ՝ հաստատվելով որպես էվոլյուցիայի ուղղությանը բնորոշ մագնիսական ուժ:

143. Ինչպե՞ս կարելի է չհասկանալ կյանքի հարաշարժ գործընթացի երևույթը, երբ բոլոր էներգիաները ոչ միայն փոխակերպվում են, այլև ծնում են նոր համակցություններ: Բայց Տիեզերքում չկա անդորրություն: Ամեն ինչ հագեցած է անդադար հոսանքներով: Էներգիաները շարժ-

վում են ալիքաձև, և նոր էներգիաների փոխակերպված՝ վեր են խոյանում այն ուժերը, որոնք ակներև ոչնչանում են: Երբ նոր հոսանքները դուրս են մղում հին խառնակույտերը, այնժամ, արդարև, տեղի է ունենում էներգիաների մեծագույն փոխանակություն:

Ճիշտ կլիներ անվանել մահը **կենսարար փոխանակում**: Ինչպես կարելի է դյուրին դարձնել ամենադժվարին պահը: Էներգիաների փոխանակման գիտակցումով: Մեծ նշանակություն ունի **փոխանակման օրենքը**, և մարդուց է կախված իր մղումների ուղղությունը: Տիեզերական նախանշումով է սահմանվում ամեն մարդու առաջադիմության աստիճանը, բայց ոգին ինքն է որոշում՝ մերժել կամ ընդունել, սակայն վերջ չկա նյութերի և էներգիաների փոխանակությանը:

144. Էներգիաների փոխանակման մեջ է բովանդակվում տիեզերական մագնիսի ամենահրաշալի ուժը: Փոխանակումը Տիեզերքի կատարելագործման ձգտումի դրսևորումն է: Ոգու փոխանակումը այլ ոգու հետ կարելի է պատկերացնել որպես նրբագույն էներգիաների միահյուսում: Նուրբ էներգիաների միահյուսումը հաստատվում է որպես տիեզերական մագնիսի կողմից ուղղորդվող գործընթաց: Ամեն մի մեծությանը ուղղորդում է Բացարձակ Բանականության հաստատող ձեռքը: Եվ այդ ձեռքը համախմբում է Տիեզերքին անհրաժեշտ տարերային ուժը: Դա է պատճառը, որ կրակն այդպես միաձուլվում է տարածության հոսանքների հետ: Ուստի Տիեզերքի Բանականության հետ միաձուլվող ոգին կարող է զորեղ դրսևորումներ ունենալ այն տարերքի, որը, միավորելով Տիեզերքի միջուկի ողջ պարունակությունը, կարող է դառնալ Տիեզերքը կառավարող ուժ: Այն ամենը, ինչ միավորվել է գիտակցաբար, կարող է կառավարել Տիեզերքի ուժերին: Այս նույն օրենքով է ղեկավարվում ստեղծագործության հաստատումը հեռավոր աշխարհներում:

145. Ողջ տիեզերական կյանքը համակված է նուրբ էներգիաներով: Նպատակաուղղված ստեղծագործությունն իր հավերժ թրթռումով ստեղծում է կեցության գոյաձևերը: Տիեզերքում առատորեն գանձեր են սփռված: Տիեզերքը դրսևորում է այդ հոսքը, որին առնչվում է յուրաքանչյուր նկրտող ոգին: Նուրբ էներգիաները պահանջում են հանդես բերել նուրբ ըմբռնում, երբ համահունչ թրթռում է հաստատվում տիեզերական մագնիսի հետ: Ոգին ստեղծագործելիս միավորվում է տիեզերական մագնիսի հետ: Տարածական կրակի շերտերը հաստատում են երկրային ոլորտների շերտերը: Սակայն պետք է տեսնել, թե որքան է տարբերվում այդ հաստատումը ընկալվածից: Երբ ճշմարտությունն անբաժան է Տիրակալների ծրագրից, ապա նկատի՛ առեք ամեն մի տիեզերա-

կան թրթիռը: Իսկ երբ ճշմարտությունը հաստատվում է որպես մարդկային անմտություն, այնժամ էներգիայի ստացումը հանգում է սոսկ հակառակ երևույթին:

Տիեզերական տարրերի համախմբումը սովորաբար տեղի է ունենում վառ արտահայտված անհատական գիտակցության մասնակցությամբ: Աչալուրջ լարվածությունը, անսահման նկրտումը տիեզերական մագնիսի ստեղծագործության երաշխավորներն են: Եվ ողջ Տիեզերքի հիմքում Սի՛րտը փնտրեք:

146. Երբ սիրտը պահանջում է բարձրագույն գոյաձևեր ստեղծել, այնժամ տիեզերական մագնիսը ձգում է բոլոր հնարավորությունները: Չէ՞ որ ամենահզոր մագնիսը սիրտն է: Ուստի մարդիկ բոլորովին զրկվել են արխաթի ամենավեհ հասկացությունից: Եթե ստեղծագործություններն ու սրտերը չոգեշնչվեն անձնուրացության սկզբունքով, ապա հասկացությունը այնքան խեղաթյուրվում է, որ ստացվում է ոչ թե կյանքի կառուցում, այլ ոչնչության մտածողություն:

Մարդուն անհրաժեշտ է սովորել անձնուրացության սկզբունքը: Արխաթը բոցի նման իր սրտում կրում է կյանքի բոլոր հուր կրակները: Արխաթը հաստատում է, որ այնքա՜ն լեցուն է տարածությունը, այնքա՜ն կանչող, այնքա՜ն հրաշալի:

Իհարկե, Մենք ի վիճակի չենք հասկացնելու մարդկությանը, թե որքան հիասքանչ է արխաթի վերելքը: Միայն բարձրին է ընկալելի բարձրագույնը: Եվ իբրև մի ճառագայթ Իմ առջև խորհուրդն է գոյի: Դա այն ճառագայթն է, որը միավորում է հազարամյա ուղին: Այն ճառագայթը, որը հազարամյակները վերածում է մեկ ակնթարթի նոր ճանապարհ սկսելուց առաջ: Այն ճառագայթը, որը երկրային առեղծվածները վերածում է բարձրագույն օրենքների: Այն ճառագայթը, որը փոխակերպում է երկրային բեռը Տիեզերքի գեղեցկության փայլի: Այո՛, այո՛, այո՛:

Շատ հարցեր անլուծելի են թվում մոլորակի վրա: Երբ մոլորակը լքող ոգու համար անլուծելի հարց է առաջանում, ապա այս երևույթը հաստատվում է Տիեզերքում՝ որպես խելամիտ վարմունք: Այո՛, բազում գաղտնիքներ գոյություն ունեն Տիեզերքում:

147. Անխախտելի է Տիեզերքում գործող օրենքը: Ստեղծագործման ժամանակ հաստատվում է բոլոր տեսակի էներգիաների փոխանակություն: Բնությանը և մարդու ոգուն կարելի է վերագրել ստեղծագործմանը ձգտող միևնույն էջը: Ստեղծագործության ուժն անկարող է տարածականորեն զարգանալ՝ առանց գիտակցության դրսևորման: Եվ այդ գիտակցությունն ընդունում է դիմադրության հաղթահարումն իբրև անընդհատ աճող ուժ: Տիեզերական մագնիսը կարող է ձգել նույնական տարրերը

դեպի ստեղծագործ կրակի գիտակցությունը: Չէ՞ որ Տիեզերքի Բանականությունն արարում է որպես գործող արարիչ: Եվ մարդն էլ պիտի նույն ծառայությունը մատուցի Տիեզերքին: Մարդը գիտի, թե ինչ նկրտում է կրում կյանքը իր հոսքի մեջ, իր անսահման Բանականության մեջ:

Տիեզերական մագնիսը չխախտող կառուցումը կարող է ձեռնամուխ լինել նոր գոյաձևերի հաստատմանը: Պատահականությունը այն հիմքը չէ, որը գործում է մագնիսի միջոցով, սոսկ Բանականության ընդարձակությունն է հանգեցնում կենսարար կառուցմանը: Նուրբ էներգիաներ համախմբող հոսանքները տարածում են ողջ տարածության մեջ բոցավառող կրակներ:

148. Պատահականությունը չի կարող ղեկավարել մարդկության առաջընթացին: Մարդկությունը իրեն հաշիվ չի տալիս այն օրենքի մասին, որը կառուցում է տիեզերական կյանքը: Հնագույն ուսմունքը, որը համարում էր աճյունը հողի արգասիք, մատնանշում էր մարդու և տարերքների հարազատությունը: Մեծ Ուսմունքը գիտեր, որ տարրերի տարանջատումը հանգեցնում է վերջնական միավորմանը:

Տիեզերական մագնիսը կառուցում է հազարամյակներ շարունակ, և որքան անեղծ է մատերիայի դրսևորումը, այնքան ավելի բարձր է նոր կոչման երևույթը: Ագնի յոգը ոգով է արարում այն վերընթաց հոգևոր աստիճանը, որը նախանշված է Տիեզերքի Բանականության կողմից:

Երբ ոգին կարող է համագործակցել բարձրագույն էներգիաների հետ, Մենք ասում ենք՝ տիեզերական մագնիսի կյանքն ընդունվել է: Երբ հրե ստեղծագործական էներգիան մնում է չընդունված, Մենք ասում ենք՝ մերժված է կյանքը: Այո՛, մերժված է կյանքը, և Մենք՝ Արխաթներս, շատ բարձր ենք գնահատում այդ ներքին կրակի դրսևորումը, որը կարող է ընդգրկել ամեն ինչ: Կրակի Մեր դրսևորումով կարելի է բոցավառել ստեղծագործման ցանկացած բոցը: Տիեզերքում գոյություն ունեն բազմաթիվ մեծ օրենքներ. դա բարդ, բայց հիասքանչ մի շղթա է: Բարդությունն ու առաջադիմությունը համընթաց են: Միայն մշտական լարվածությամբ կարելի է հասնել նախանշված աստիճաններին, և ցավը բերկրանք կբերի:

149. Դեպի ո՞ւր պիտի ձգտի մարդը: Դեպի ո՞ւր պիտի ուղղի իր կուտակած ուժերը: Դեպի ո՞ւր կբերի կատարելագործումը: Մի՞թե թույլատրելի է, որ զորեղ գոյության երևույթը բոլորովին անհետանա: Չէ՞ որ ոգին պիտի ընդունի, որ ինքը իր նկրտումներով ապրում է ոչ թե կյանքի մի շրջանի, այլ Անսահմանության դրսևորած պարբերաշրջանի համար: Չափազանց մեծ է պայքարելու երևույթը մեկ կյանքի համար: Չափազանց մեծ է մարդու ունակությունների դրսևորումը գոյություն ունեցող օրինակելի կյանքի համար:

Միավորվում են սկիզբն ու վերջը՝ հենակետ ծառայելով մարդու համար: Երբ ոգին ազատվում է կյանքից, այնժամ նա ընդունում է կյանքի ողջ էությունը: Ձգտե՛ք ըմբռնում գտնել, որ ավարտը սկիզբ է. այդպես է ձևավորվում Անսահմանությունը:

150. Երբ ասում եմ՝ վերջը սկիզբն է, ապա նկատի ունեմ գոյության տիեզերական խորհրդանիշը: Երբ պարզաբանում եմ, որ ցավն է ընկած բերկրանքի հիմքում, ապա ցանկանում եմ ցույց տալ մի էջ արխաթի կյանքից: Ոչ ոք չգիտի արխաթի կյանքի այդ էջը: Արխաթին անվանում են **իմաստուն**, արխաթին անվանում են **մարտիրոս**, արխաթին անվանում են **բարեպարգև** ու **կարեկից**. բազում մակդիրներ ենք Մենք կրում: Բայց մարդիկ չեն կարող պատկերացնել, որ արխաթն օժտված է հրեղեն նկրտումով՝ հաստատելու նոր, ավելի բարձր աստիճանը: Չէ՞ որ նրա պսակը հակառակ չէ տիեզերական մագնիսին: Որքան բարձր, այնքան զորեղ:

151. Տիեզերական հիմունքներից շեղումը տալիս է այն բացահայտ արդյունքը, որը դրսևորում է մարդկությունը: Անշուշտ, անհնար է գնալ Անսահմանության սկիզբների դեմ: Նպատակաուղղված հոսանքը իր ռիթմով կատարելագործում է հաստատում, և Տիեզերքը զինել է մարդուն անհրաժեշտ ուժերով ուժերն հաղթելու համար: Չէ՞ որ նպատակաուղղվածությունը ողջ գոյի շարժիչն է: Թե՛ ստեղծագործական դրսևորումների համար տրված մուրճը, թե՛ ոգու ստեղծագործման համար տրված Տիրակալների խոսքը, թե՛ սկիզբների հաստատումը մարդկությունը վերածել է այլանդակ ծաղրի:

Իհարկե, կասեն, որ մարդկությունը ծանր պայքար է մղում հազարամյակներ շարունակ: Մենք դա գիտենք, բայց ոչնչացման երևույթները ի չիք են դարձնում բոլոր նկրտումները: Անսահման շարժման մեջ ամփոփված է կյանքի ճշմարիտ ռիթմերի երևույթը:

152. Երբ հեռավոր աշխարհները ընկալելի են դառնում մարդու գիտակցության համար, այնժամ չափանիշների նոր ըմբռնումներ են առաջանում: Եթե անգամ մոլորակի վրա կարելի է նկատել լավագույն էներգիաների միջոցով ստեղծված գոյաձևեր, ապա ինչպե՞ս չգիտակցել ձևերի նրբացումը: Կատարելագործումը շարունակվում է՝ ուղղվելով դեպի Անսահմանություն: Կատարելագործման ռիթմը ձգտում է նույնանալ տիեզերական մագնիսի ռիթմին: Ոչ թե արտաքին ձգտում, այլ զարգացում հոգեկան կյանքի ճանապարհով:

Մենք գիտենք դեպքեր, երբ ստեղծագործությունը ակներև չէր դրսևորվում, բայց ոգին ստեղծագործում էր սրընթաց շարժման մեջ: Ոգին կարող է ստեղծել մի ամբողջ աշխարհի էվոլյուցիա՝ ձգտելով հո-

գեկան կյանքի ստեղծագործմանը: Իրոք, այդպես է թափանցում ոլորտները բարձրագույն դրսևորումներ ունեցող ոգին: Բայց տիեզերական մագնիսի հետ ներդաշնակություն չհաստատած ոգին կարող է ստեղծել սոսկ հակառակ դրսևորում: Բարձրագույն ոլորտների հոսանքները բնորոշ են ոգում տարածական կրակ հաստատողին:

153. Գործող ուժը իրեն է ենթարկում ուժերը կամ գործունեության հոսք է զարգացնում այն տարրերի մեջ, որոնք պիտի նոր էներգիա դրսևորեն: Ենթարկումն ու զարգացումը շատ բարդ համակցություններ են կազմում:

Ստեղծագործական մագնիսի երևույթը հավաքում է տարերքների այն ուժը, որն իր մեջ առավելագույն նույնական էներգիա է պարունակում: Աշխարհը տատանվում է խորասուզման և համախմբման հավերժ ռիթմի մեջ: Երբ մարդկությունն ընդունի հավերժության հետ ընթացող ռիթմը, այնժամ նա դյուրին կդարձնի տարածական կրակի հոսքը: Չափազանց խորթ է և չի ընդունվում տիեզերական մագնիսը: Երբ գիտակցությունը խոր ըմբռնում հանդես բերի այն ուժի նկատմամբ, որը նա կարող է գործադրել ստեղծագործաբար, այնժամ կարող է դրսևորվել տիեզերական մագնիսի և նրա համագործակցի՝ մարդու համաշխարհային ստեղծագործությունը: Այդպես են ձևավորվում նոր գոյաձևերը:

154. Տիեզերական մագնիսի գործունեությունը գործադրվում է որոշակի ձևավորման նկատմամբ: Ոչ միայն ձգողության պարզ սկզբունքի միջոցով կատարվող ստեղծագործություն ենք տեսնում, այլև ստեղծագործման հիմքում ընկած է նույնության սկզբունքը, որին նրբացած լինելու դեպքում կառավարում է բարձրագույն Բանականությունը: Չէ՞ որ մագնիսի սկզբունքի ուժերի ներդաշնակեցումը արտահայտվում է բոլոր դրսևորումներում, ընդ որում՝ ամենաառաջադեմ ձևերում: Ոգին աղոտ կերպով կարող է ըմբռնել տիեզերական միաձուլման գեղեցկությունը: Մեծագույն խորհուրդը կարելի է ընկալել ոգու մեծագույն ըմբռնումով: Ճշմարտությունը հաստատվում է այն պահից ի վեր, երբ գիտակցությունը ունակ է դառնում հաղորդ լինելու բարձրագույն սկզբին՝ ազատորեն ընդարձակելով իր խնդիրները: Սքանչելի են մեկ ոգու միջուկից սկիզբ առնող թելերը: Դա այն թելերն են, որոնք հյուսում են այն գանձը, որը Տիրակալների հրամանով բերում է Նրանց մոտ:

Այդպես է դարբնվում կյանքի հաստատումը:

155. Մարդկությունն իր զարգացման տարբեր փուլերում իմացել է տիեզերական մագնիսի ուժի մասին: Տիեզերական բոլոր ուժերի և մարդու փոխհարաբերությունը որպես ճշմարտություն է ընդունվել հնագույն հայտնություններում: Մարդը տիեզերական էներգիաների մասն է, տա-

ներքների մասն է, բանականության մասն է, բարձրագույն մատերիայի գիտակցության մասն է: Ուստի, երբ գործող պատկերին շնորհվում է տիեզերական միջուկից բխող ուժը, այնժամ Տիեզերքը ակնկալում է այնպիսի փոխակերպում, որի արդյունքը պիտի լինի ոգու պայծառակերպումը: Անշուշտ, Ես դիտում եմ տարածական հուրը որպես ամենաբարձր փոխակերպիչ տարերք:

Մարդկությունը պիտի հասկանա, որ գոյությունների փոփոխումները սոսկ թաղանթների փոփոխումներ չեն: Չէ՞ որ փոխակերպումը չի հանգեցնում ավարտուն պատկերի: Եվ երբ տիեզերական մագնիսը փոփոխման կոչ է արձակում, կնշանակի՝ փոխակերպումը մի նոր աստիճան է արարում: Արդյոք ե՞րբ մարդկությունը կսովորի հասկանալ, որ ճշմարտությունը հաղորդակից է դարձնում մագնիսին, որը մղում է առաջ՝ հաստատելու հրաշալի սկզբունքը: **Սկիզբների երկրային գոյության օրենքը** գոյություն ունի:

Հաստատման ու պարուրաձև փոխակերպման կորիզը դրսևորելով՝ դեպի գագաթնակետն ուղղված եզրափակիչ ուղին հոգեկան կյանքի ստեղծագործման հաստատումն է: Այդ կետը փնտրե՛ք անսահման նկրտումով:

156. Ճշմարիտ է ասել Ուռուսվատին մարդկության հանդեպ սիրո ուժի մասին: Մի՞թե կարելի է սիրել պարտեզը և արհամարհել ծաղիկները: Մի՞թե կարելի է խոնարհվել հրաշալի ուժի առջև և հարգանք հանդես չբերել սիրո հանդեպ: Ես հավաստում եմ, որ Մեր Տիեզերքը զարդարող ուժը հաստատվում է որպես Մեր Աշխարհի Մայր՝ կանացի սկիզբ: Անշուշտ, կարելի է վկայակոչել բազմաթիվ գիտական օրինակներ, որոնք մատնանշում են կնոջ ստեղծագործական կոչումը: Նրանք, ովքեր ժխտում են կնոջ ստեղծագործման դրսևորումը, պիտի իմանան, որ կինը կամավոր է նվիրաբերում: Իրավունք ունենալը չի նշանակում այդ իրավունքը հաստատել: Ուստի կնոջ ուղին կոչվել է **կամավոր նվիրաբերում**: Իհարկե, տիեզերականորեն ամեն ինչ միահյուսվում է, բայց մարդկությունը խախտում է Բարձրագույն Բանականության օրենքները: Ուստի կանացի սկիզբը այդքան գեղեցիկ է: Ուստի կեցության գագաթը անհնարին է առանց կանացի սկզբի: Որքա՜ն են մարդիկ խեղաթյուրել բոլոր մեծ տիեզերական օրենքները: Որքա՜ն են մարդիկ հեռացել ճշմարտությունից:

Մենք **կամավոր նվիրաբերող** ենք անվանում նրան, ով ունի լեցուն Գավաթ:

157. Կենսական սկզբունքի էությունն այնքան բարդ է, որ մարդկությունը պիտի մտորի **տիեզերական մագնիսի օրենքի** շուրջ: Այնքան

մեծ է բարդությունը, որ պատկերացումը էության մասին սերտորեն առնչվում է գոյության բուն իմաստի հաստատմանը: Երբ բանական հարաբերակցություն հաստատենք տարբերացման ուժի և մագնիսի միջոցով համախմբման միջև, այնժամ կարող ենք հաստատել այն կապը, որի շնորհիվ կանգուն է Տիեզերքը: Պետք է հասկանալ, որ ամեն մի աններդաշնակություն առաջացնում է տարածության մեջ կործանման մի շղթա: Ամեն մի պայթյունի երևույթը ցնցում է տարածությունը, և այն հնարավորությունները, որոնք հաճախ կուտակված են լինում ոգու շուրջ, կրկին հեռու են քշվում պայթյունից առաջացած ալիքներով: Միանգամայն հակառակ է ներդաշնակության ներգործությունը: Ինչպես մագնիսական ալիքն է համախմբում տարբեր հոսանքները, այդպես և ներդաշնակված ոգին իր տիրապետության տակ է ունենում այն շիթերի միավորման ուժը, որոնք տանում են դեպի գոյի հավերժական ուժը:

158. Կործանելու ձգտումը Տիեզերքի առաջադրանքը չէ: Մարդուն ընդունված է համարել մի էակ, որը տուժում է Տիեզերքի դրսևորած կործանումներից: Ընդունված է տարերքներն ու աղետները համարել մի պատուհաս, որի հետևանքով այդքան շատ դժբախտություններ են կրում մարդիկ, բայց տարբերենք, թե որ դեպքերում են աղետները սոսկ կարմայական դրսևորումներ և անբաժան են Տիեզերքից: Եթե մենք գիտակցենք այդ զորությունը, ապա կհաստատվենք տիեզերական մագնիսի գիտակցման մեջ:

Չէ՞ որ իր շարժման մեջ դեպի տիեզերական մագնիսի շղթան տանող յուրաքանչյուր ատոմ վերականգնում է Տիեզերքի ռիթմը: Չէ՞ որ յուրաքանչյուր ատոմ իր շարժումով այլ շարժումների շղթա է առաջացնում: Եթե մարդկությունն ըմբռներ այն նրբին երակազարկումը, որը լարում է բոլոր տիեզերական ուժերը, ապա իր հաստատումը չէր գտնի այն կանխորոշված ուժերի մասին մտածողությունը, որոնք կործանում և վախճանի են հասցնում մարդու կյանքը: Չէ՞ որ ռիթմի դրսևորումը Տիեզերքում կոչվում է **բանական հերթափոխություն**: Արդ խելամիտ բովանդակում հանդես բերենք հերթափոխության նկատմամբ:

Նոր էներգիաների հորդումը նոր կյանք է արարում ասպարեզից հեռացող պայմանների հետ համատեղ: Ուրախանանք անսահման հերթափոխությանը: Երբ տիեզերական մագնիսը գործում է՝ հզորապես փոխակերպելով այն ուժերը, որոնք անհրաժեշտ են էվոլյուցիայի համար, այնժամ բերկրանք ապրենք հերթափոխությունից:

159. **Տարածական մարմինների հերթափոխություն.** այսպես ենք անվանում տիեզերական մագնիսի ստեղծագործությունը: Չէ՞ որ ակներևաբար տեսնում ենք, թե ինչպես են հերթափոխվում ցամաքներն ու

ջրերը: Չէ՞ որ տեսնում ենք, թե ինչպես օրինաբար հերթափոխվում են մարդացեղերը և ամեն տեսակի բարեշրջումները: Ինչպե՞ս չողջունենք հերթափոխությունը: Որքա՜ն հրաշալի է ոգու համար երկրային գոյության փոփոխումը բարձրագույն ոլորտներում գոյությանը: Այն ոլորտները, որոնց մասին միանգամայն անթաքույց ասում են, թե դրանք անհասանելի են, կարող են, արդարև, դառնալ հասանելի: Տիեզերական հերթափոխությունը և մարդկային մագնիսը նախորոշում են նոր գոյաձևերի լարվածությունը: Հերթափոխման ստեղծագործությունը աներկբա միավորվում է տիեզերական մագնիսի հետ:

160. Աշխարհի վերակառուցումը կախված չէ մարդկային ստեղծագործությունից, սակայն դրա հետ մեկտեղ չի կարելի ասել, թե մարդկությունը մեկուսացած է աճող տարածական զորությունից: Չէ՞ որ անխզելի է կապը մարդու և Տիեզերքի միջև, ուստի գոյն արտահայտվելու է այն գոյաձևերի մեջ, որոնք նախանշված են տիեզերական մագնիսի կողմից: Բայց ամեն մի գոյություն ունեցող բան նաև մարդու դրսևորումն է և դառնում է կա՛մ դեպի մագնիսը տանող շարժիչ, կա՛մ էլ կասեցնող խորհրդանիշ:

Այն, ինչն իր հիմքում ունի ստեղծագործական դրսևորումներ, իր համար ճանապարհ կգտնի գործելու, բայց գործողության դրսևորումը կապված է մարդու կարմայի հետ: Եթե Բարձրագույն Բանականությունը որպես գործելակերպ ընդունել է տարերային հերթափոխությունը, ապա կարելի է ասել, որ անհրաժեշտ է հերթափոխություն կատարել: Բայց ամեն հերթափոխման ժամանակ գոյություն ունի այնպիսի մի նյութ, որը ստանում է տվյալ հանձնարարությունը կառուցելու համար: Երբ տարածական կրակը թափանցում է երկրային շերտեր, այնժամ անհրաժեշտ է ունենալ ճշմարիտ համագործակցության գիտակցություն: Չէ՞ որ Տիեզերքը միասնական է, և մարդը նրա լավագույն նկրտման մի մասն է: Ուստի ոչ թե տարանջատում, այլ միավորում: Ուստի նախանշվածը կա՛մ կարող է հաստատվել տիեզերական մագնիսին համապատասխանող չափանիշով, կա՛մ էլ մարդու կողմից ընդունված մասն իր հունն է սահմանելու. այսպես փոխադարձաբար ձգտում են իրար մեծագույն զորությունները:

Մենք ականատես ենք եղել, թե ինչպես մեկ հունի գերակշռումը խախտում էր հավասարակշռությունը, այդ իսկ պատճառով ոչ թե իշխողական հնազանդեցումը, այլ միաձուլումն է ուժը:

161. Միայն փոխադարձ ընթացքն է արժանանում Տիեզերքի լիակատար երաշխավորությանը: Երբ տարածությունը սխրանքի է կանչում, այնժամ տիեզերական մագնիսը մոտեցնում է այն, ինչը անհետաձգելի է: Հաճախ լինում է այնպես, որ կանչը համախմբում է համասեռ, բայց

տարբեր ժողովուրդներին պատկանող տարրերը: Այս դեպքում մասնակի դրսևորումը մասնակի դրսևորված միավորման հատկություն է ստանում: Երբ տարածությունը մեծագույն խորհուրդի իրականացման կոչ է անում, այնժամ գոյը թրթռում է բոլոր հոսանքներով: Սակայն բարձրագույն դրսևորում է տեղի ունենում այն դեպքում, երբ մագնիսը համախմբում է հազարամյակներ շարունակ:

162. Կործանման ուշացումը չի բերի բուժիչ արդյունքների: Չէ՞ որ միանգամայն ռիթմիկ եղանակով է զարգանում տիեզերական մագնիսի հաջորդականությունը: Կասեցնել բախտորոշվածը նշանակում է ուշացնել ժամկետը: Անշուշտ, տիեզերական մագնիսը չի դադարում արարել նաև այն ժամանակ, երբ ակներև անդորրություն է տիրում: Այդ պատճառով էլ իրականանալիք հերթափոխությունը չի ուշանում և գործում է որպես տիեզերական մագնիսի ռիթմ:

Ժողովուրդների տեղաշարժն ընթացել է տիեզերական մագնիսի ներգործության ներքո, այսօր ևս բոլոր տեղաշարժերը ենթակա են այդ օրենքին: Մեծագույն օրենքը բազմաթիվ գործող մագնիսներ ունի: Եվ դեպի ուր շրջվի ուղղություն ցույց տվող սլաքը, այդ կողմ էլ կուղևորվի նկրտող ոգին: Հավերժ շարժումն ու տեղաշարժը ճշգրտորեն են սահմանում գործող մագնիսական ուժը: Կարելի է ճշգրտորեն որոշել, թե որ ուղղությամբ և ինչ պատճառով են կատարվել տեղաշարժերը: Ուղղությունը որոշող հոսանքները համաձայնեցված են նախանշված ապագայի հետ: Բուն տեղաշարժը պայմանավորող հոսանքները համաձայնեցված են ներկա հանգամանքի հետ:

Կարելի է պատմականորեն ստանալ ժողովուրդների տեղաշարժման երևույթների բանալին: Այնքան շատ են պատճառները, և այնքան բազմազան են մարդկության առաքելությունները, որ պայմանները կարող են տեղաշարժերի հզորության սոսկ աղոտ արտացոլումը տալ:

Մտքերի պահեստարանը հոսանք չի ձևավորի, եթե ձգտում հանդես չբերենք ուսումնասիրելու տիեզերական մագնիսի հավերժական տեղաշարժը:

163. Ոգու տեղաշարժը ենթակա է այդ նույն օրենքին: Չէ՞ որ ոգու լարումն ու կամքն են բերում նրան նախանշված վայրը: Եվ ընտրությունը պատահական չէ, այլ կատարվում է հաստատված ձգողության համաձայն: Արդ ոգին ֆիզիկական ոլորտում ձգողություն է հանդես բերում նույնպես մագնիսի դրսևորման շնորհիվ: Հնչում են լարերը և կանչում են միևնույն օրենքին ենթակա տարրերին: Գիտակցաբար կատարվող տեղաշարժը կոչվում է **ստեղծագործական մագնիսի ուժ**: Եվ այն ոգին, որը գիտի տեղաշարժի և նրա ուղղության մասին, պայմանավորում է

տիեզերական մագնիսի այդ ուժը: Երբ ոգին հազարամյակներ շարունակ իմանում է, որ իրեն կանչում է մագնիսը, ապա նրա մտածողությունը միայն ոգու ճանաչողություն է դրսևորում:

164. Տիեզերական մագնիսն ուղղորդում է այն մարմիններին բնորոշ ուժերի հարաբերակցությունը, որոնք հասնում են բարձրագույն աշխարհներ: Հարաբերակցությունը ոլորտների միջև ստեղծվում է մագնիսական ձգողության միջոցով և նպատակաուղղում է ուժերը ստեղծագործման: Մոլորակի ուժը հիմքում կարող է ունենալ այդ նկրտումները:

Հեռավոր աշխարհների կայծերը ակնբախ կերպով հասնում են Երկիր, և այնքա՜ն վառ են հուրհրում աշխարհների առկայծումներն ուսումնասիրելու հնարավորությունները: Տարածական կրակների հետ շփումները ծնելու են լուսակիր մի գիտություն: Անհնար է պատկերացնել, թե ինչ կարող է տալ հեռավոր աշխարհների զորությունը: Հոգեկան կյանքն այնտեղ հաստատվել է որպես տիեզերական մագնիսի գործողություն: Չէ՞ որ հոգեկան կյանքի երևույթը ղեկավարում է կյանքի բոլոր դրսևորումները, և անհնար է տարանջատել ստվերը լույսից: Եթե մարդիկ հասկանային այն լուսային ուժը, որը նրանց ամեն մի գործողության շարժիչն է, ապա մեծ խնամքով կվերաբերվեին ստեղծագործական աղբյուրներին:

Եթե նուրբ էներգիաները գիտակցվեին որպես մեր դրսևորումների աղբյուր, ապա դա կստիպեր մարդուն կանխատեսել լույսի զորությունը և չհաստատվել ստվերի զորության ներքո:

Երբ ինքնաբերական երևույթների դարաշրջանը կատարելապես պարզորոշ կերպով ներկայանա մարդուն, այնժամ կսկսվի լույսի դարաշրջանը:

165. Երբ արտացոլումը կարող է ընկալվել գիտակցաբար, այնժամ առաջանում է գիտակից ստեղծագործման հոսանք: Երբ Մենք տեսնում ենք, որ առաքված ճառագայթները արտացոլվում են աշակերտի բոլոր դրսևորումներում, այնժամ կարող ենք ասել. «Նա ճշմարտությունն է արտացոլում»: Շատ ճառագայթներ արտացոլվում են սոսկ որպես թույլ անդրադարձներ, ուստի Մենք հրճվում ենք, երբ Մեր մերձավորները հաստատում են ինքնաճառագվող ճառագայթներ: Ուստի Մենք բացահայտում ենք լույսի լիարժեք ճաճանչը նրան, ով հաստատում է Մեր ճառագայթն իր լիակատար նշանակությամբ:

166. Տիեզերական մագնիսի վկայությունն իսկ հաստատում է տեղաշարժն իրականացնող ուժերի լարվածությունը: Անհրաժեշտ բովանդակություն ունեցող պայմանները կարող են հաստատել անկման աստիճանը: Եվ երբ ձգողությունը ներգործում է նախանշված ուժերի հնչման վրա, այնժամ հաստատվում է առաջընթաց պարույրը: Պատահական տեղա-

շարժեր չեն լինում, և ոչնչացում գոյություն չունի առանց ակնհայտ վերադարձի հնարավորության: Բոլոր ոլորտներում գոյություն ունեն հարկ եղած տեղաշարժերի դրոշմները: Անշուշտ, լինում են ոլորտների ցնցումներ և վերերկրային պտտահողմերի օղակներ, բայց նման ցնցման պատճառները աններդաշնակ նկրտումներն են և տիեզերական մագնիսը:

Հատկապես Բանականության ստեղծագործությունն է համախմբում տարբեր տարրերը՝ պատնեշելու համար աններդաշնակ էներգիաները: Տիեզերքը ստանում է այդ ուժը իր բոլոր դրսևորումների համար: Արդ ռասաները կարող են հավաքվել ու միավորվել:

167. Մագնիսական տարրի հոսանքները սաստիկ լարված են: Երբ հեռացող տարածական էներգիայի շիթերը խտանում են, և մոտենում է նոր էներգիան, այնժամ հատկապես սուր է զգացվում հերթափոխությունը: Սահմանագծերը արտահայտվում են ցայտուն կերպով, և նոր էներգիաների շիթերը լարում են տարածությունը: Նոր էներգիաների մոտեցման պատճառը անդրադառնում է սրտի և բոլոր բոցեղեն կենտրոնների զգացողությունների վրա:

Ագնի յոգը նրբորեն արձագանքում է բոլոր հոսանքներին: Արտաքին տեղաշարժը ներգործում է Ագնի յոգի կենտրոնների վրա. չէ՞ որ էությունը մեկն է: Եվ հոսանքները տեղաշարժվելով շոշափում են բոլոր զգայուն տարրերը, այդ պատճառով էլ հնում քրմուհիները առանձնանում և ծածկվում էին մեկուսիչ գլխաշորով: Հուրը էներգիաների փոխակերպիչ է: Երկիրը տոգորվում է նոր հոսանքներով: Արդյո՞ք հնարավոր է պատկերել այդ փոխակերպված էներգիան: Հզոր ստեղծագործական ներգործության է ենթարկվում Ագնի յոգը, երբ մոտ է գոյության պսակը:

168. Գործելու յուրաքանչյուր ձգտում չափվում է իր լարվածությամբ: Չէ՞ որ լարվածությունը ցույց է տալիս ձգտման մեջ առկա կամքի աստիճանը: Նկրտման մեկ այլ հատկություն է նրա ուղղությունը. տեղաշարժ կատարելու համար անհրաժեշտ է նպատակաուղղել էներգիան տիեզերական մագնիսին համընթաց: Էվոլյուցիան ընթանում է սոսկ մագնիսական ներգործությանը մերձ լինելու շնորհիվ: Էվոլյուցիոն ընթացքի բարդությունը համապատասխանում է տիեզերական մագնիսի դինամիկայի բարդությանը: Էվոլյուցիայի բարդությունը ևս պայմանավորված է մարդկային նկրտումով: Որքան հզոր, այնքան նկրտուն: Մարդը չի գիտակցում, որ ինքը այդպիսի կործանարար ուժ է ներկայացնում:

Տեղաշարժի ստեղծագործման չափը և այն ձգտման չափը, որն ուղղված է էվոլյուցիայի հաստատմանը հակառակ, հավասարակշռվում են: Այդ իսկ պատճառով տիեզերական մագնիսն այդպես համախմբում է այն տարրերը, որոնք ձգտում են անսահման բարեշրջման:

Մարդը ձգտում է կցկտուր գոյության պայմաններին: Մարդն ընդունում է որպես անհասանելի այն, ինչին նա պիտի ձգտեր տարածական գոյության համար: Այս երկու մեծությունները մշտական պայքարի մեջ են: Արդ ձգտենք անսահման լարվածության՝ դրսևորելով էվոլյուցիայի ուղղությունը:

169. Մարդկությունը այնքա՜ն հազվադեպ է ըմբռնում ցուցաբերում ճշմարիտ նկրտմանը: Էներգիաների որքա՜ն ավելորդ վատնումներ: Որքա՜ն ավելորդ նկրտումներ շերտվածքներ են առաջացնում ոլորտներում: Էվոլյուցիայի հետ անհամատեղելի որքա՜ն դրսևորումներ:

Կարելի է հիշեցնել պատմություն մի օրիորդի ոգու մասին, որը գիտեր Ուսուցչին որպես իր էության պսակ: Այդ ուղին կարելի է անվանել սրընթաց ուղի դեպի արևը: Ամեն մի ոգի կարող է նախանշել իր համար այդ չընդհատվող ուղին:

Գլխավոր ռիթմը դրսևորվում է Ընդհանուր Բարիք ցանկանալու դեպքում: Արդ ոգու առաջընթացը անշեղորեն տանում է դեպի հաստատված ավարտ:

Մենք սրբորեն պաշտպանում ենք այն ոգուն, որը կրում է տիեզերական կրակների ընծան պարունակող գավաթը: Արդ դարբնվում է կապը ոգու և տիեզերական մագնիսի միջև:

Ճիշտ է ասել Ուռուսվատին. «Բանականությունը Բանականություն է ծնում»: Այս բանաձևը կարող է բերել ոգուն իմացության դարպասների շեմին: Կավելացնեմ. «Բանականությունից Բանականություն, և գոյության գեղեցկությունը այդ նվաճմանը ձգտելու մեջ է»:

170. Միևնույն սկզբունքին պատկանող տարրերի միջև ձգողությունը գործում է մագնիսի միջոցով: Ուստի տարբեր շերտերում գործող բոլոր հաստատված սկզբունքների բոլոր արտահայտումները խիստ տարբերվում են: Բանականության միջուկը իրեն զգացնել է տալիս ողջ տարածական կրակում: Միասկիզբ տիեզերական մագնիսը կրում է իր մեջ ստեղծագործ կրակի սկզբունքը, և Բանականությունը ձևավորում է այնպիսի էություն, որն ընդունելի է ցանկացած ոլորտի համար: Այդ իսկ պատճառով միածին էությունը համակում է ողջ Տիեզերքը, և այն մարդուն կարող է տալ անդրսահմանյան գոյությունն ըմբռնելու բանալին: Միածնությունն այդժամ կբերի բարձրագույն սկզբունքների ըմբռնմանը: Երբ մարդկությունը նրբացնի սկզբունքների բոլոր հասկացությունները, այնժամ հնարավոր կլինի հաստատել միածնության երևույթը մինչև անսահմանություն: Այդպես են ձևավորվում էության բոլոր շերտերը: Տեղի է ունենում ոչ թե տիեզերական մագնիսի մեջ ամփոփված սկզբունքի արմատական փոփոխություն, այլ նրբանուրբ ձևերով արտահայտված նվի-

բաբերում: Ուստի անհրաժեշտ է հաստատել սկիզբները որպես առաջնորդող սկզբունքներ: Ընդունենք գոյի սկզբունքները որպես Բարձրագույն Բանականության հաստատում, և տիեզերական մագնիսը կբացահայտվի որպես դրսևորված Աշխարհի Մոր ուժի զորություն: Այս սկզբունքը թույլ կտա ճշմարիտ ըմբռնում հանդես բերել Մեր Եղբայրների գոյության, հեռավոր աշխարհների և այն սկզբունքների նկատմամբ, որոնք նախանշում են մարդուն արարիչ լինել:

171. Միածնությունը նույնական է միաէությանը: Միայն այդպես կարելի է հասկանալ գոյը: Չէ՞ որ աշխարհը ստեղծված է Միասնական Սրտից, և այդ Սիրտը բաբախում է տիեզերական մագնիսի միևնույն զարկերակով: Արդ միածնությունն ամեն գոյի մեջ հաստատող սկզբունքը միասնականություն է հաստատում: Արդ միավորման սկզբունքը ստեղծագործ Բանականության նախանշումն է: Ուստի ասում եմ. «Գոյի գեղեցկության իմացությունը մի նոր աստիճանի վրա կարող է բարձրացնել տիեզերական էվոլյուցիան»: Բազմաթիվ հրաշալի գաղտնիքներ կան Տիեզերքում:

172. Մարդու զարգացման սկզբնական փուլում հաստատվում էր տարերքների՝ իբրև ստեղծագործ ուժի հասկացությունը: Ոչ միայն ահարկու երկնքի երկրպագում, այլև ներդրված բնազդի զորության դրսևորում: Թերևս կարող ենք ընդունել այդ զորությունը, բայց ղեկավարվելով իմացությամբ՝ ի վիճակի ենք ստանալու բոլոր սկզբունքները: Ինչպես տարրերն են որոշում մարդու էությունը, նույն եղանակով կարող ենք կիրառել նուրբ էներգիաների իմացությունը: Չէ՞ որ իմացությունը, որ տարրերը գործում են լուսատուների հետ համատեղ, կարող է որոշել տիեզերական մագնիսի ընթացքը: Չէ՞ որ տարրերի և նուրբ էներգիաների մասին գիտությունը էվոլյուցիայի էությունն է:

Եթե կարող ենք ոչնչացնել կրակի միջոցով, ապա կարող ենք այդ երևույթը անսահմանորեն կիրառել ստեղծագործելու համար: Հրի աղբյուրը հորդում է, ինչպես անվերջանալի շիթ:

173. Տարածական կրակի ուղիները հարաբերակցվում են էվոլյուցիայի հետ այնպես, որ կարելի է ասել՝ հուրը հաստատում է էվոլյուցիան: Կրակի երևույթը հարկ է ուսումնասիրել որպես տիեզերական մագնիսի լծակ: Եվ ամեն մի մարդկային գործողության մեջ առկա է տարածական կրակի հնարավորությունը:

Երբ ոգին բոցավառում է իր ջահերը, երբ մարդը բոցավառում է իր նյարդային կենտրոնները, երբ ռասայական տեղաշարժի և բոլոր էներգիաների շարժիչ ուժը նույն տարածության կրակն է, այնժամ հրե դարաշրջան է հաստատվում:

Մարած գիտակցության պատճառը տիեզերական մագնիսի նվազման արտացոլումն է: Դժվար է տարբերել այդ շաղկապող լծակները, որոնք նկրտման շարժիչներն են: Անշուշտ, չպետք է բացառել ոգու կամային ալիքները: Մարդու ամեն մի հատկությունն ու թերությունը կարելի է չափել գործողության ազդակ հանդիսացող ինտենսիվությամբ: Ճշգրտությունը հատկանշական է, և այդ եղանակով կարելի է որոշել շարժման ուժերի ուղղվածությունը կամ դեպի էվոլյուցիա, կամ նպատակաուղղված հոսանքին հակառակ: Արդ թող ամեն մի ոգի ինքը որոշի իր կրակի հատկության լարվածությունը: Սոսկ այսպիսի չափանիշով կարելի է շփվել Անսահմանությանը:

174. Բարձրագույն լարվածությունն է արարում տիեզերական ստեղծագործության նոր աստիճանը: Այն կյանքերը, որոնք ոգին անց է կացրել ցածր լարվածությամբ, չնչին լույսով են լուսավորում նրա կյանքի ուղին: Մենք տեսել ենք կամքի պտտահողմը, Մենք գնահատում ենք կամքի լարումը: Ընդունենք կրակների Գավաթը՝ իբրև նվիրաբերություն, իբրև կյանքի ճշմարիտ, դրսևորված սկզբունք:

Ամեն մի կենտրոն ընդունում է իր կրակը, և քո կրակները, Ուռուսվա՛տի, կարող են գործել հեռավորության վրա: Չէ՞ որ կենտրոնների գործառույթներն արարում են հոգեպես, և յուրաքանչյուր կենտրոն կարող է հալեցնել ու համախմբել արարչի նման: Մենք ունենք Ագնի յոգերի կողմից դրսևորված էութենական ժամանակագրություններ: Եվ կարելի է հաստատել, որ շատ բան է արարել Սպիտակ Տարան: Բազմաթիվ են փոխակերպումների վկայությունները. այդպես ենք անվանում Ագնի Յոգայի փոխակերպիչ ուժը: Բացահայտորեն է դրսևորվում կյանքում Տարան: Փառավոր է բարձրագույն ոլորտ անցում կատարելու աստիճանը:

175. Ստեղծագործությունը և չընդհատվող լարվածությունը լավագույն գոյաձև են ձևավորում: Տարբերություն կա Ագնի յոգի և մարդու կողմից կիրառվող ակտիվությունների միջև: Անտեսանելի է հուրը Ագնի յոգի ակտիվության մեջ և անբացատրելի է այն մարդու բանականության համար, որն ընդունում է սոսկ տեսանելին: Արդ Տիեզերքի մեծ կրակը տարբեր դարաշրջաններում տարբեր անվանումներ է ունեցել: Երբ ոգին կամք դրսևորի՝ ներթափանցելու տիեզերական միաձուլման խորհրդի մեջ, այնժամ նա կընկալի տիեզերական էներգիաների ուժերը: Նրան պարզ կդառնա անտեսանելի ուժը, և տիեզերական մագնիսի հաղորդալարի միջոցով նա կարող է զգալ դրսևորված գեղեցկությունը:

Երբ մարդիկ հաստատվեն այն գաղափարի մեջ, որ գլխավոր տիեզերական ուժերն արարում են անտեսանելիորեն, այնժամ նրանք կձգտեն զգալու մագնիսը: Տիեզերքը ձևավորվում է միանգամայն անտեսանելիորեն, և հաճախ հետևանքը նույնպես անտեսանելի է: Անշուշտ, այդ

երևույթը տեղի է ունենում բարձրագույն հոսանքների ներկայության դեպքում: Եթե մարդիկ խորհեին այն ճշմարտության շուրջ, որ իրենք տեսնում են լոկ հետևանքը, իսկ բուն գործընթացն անտեսանելի է, այնժամ նրանք կգտնեին անտեսանելիության ըմբռնումը:

Հիշենք, որ ամեն մի ոլորտ ունի իր տեսանելի ու անտեսանելի տարրերը. այդպես ամեն ինչ ընթանում է դեպի Անսահմանություն:

176. Կարելի է մի շարք զուգահեռներ անցկացնել ոգեմիջնորդի ակտիվության և Ագնի յոգի ակտիվության միջև՝ մարդկությանը ուսուցում տալու համար: Թե որքան են սխալվում մարդիկ՝ համարելով ոգեմիջնորդին բարձրագույն տիեզերական ուժերի արտահայտիչ, և որքան են հարստացնում Ագնի յոգերը մեր կյանքը, մարդկությունը շուտով կիմանա: Արդարև, բարձրագույն ոլորտների կրակը ցանկանում է ճեղքել, հասնել Երկիր: Ագնի Յոգայի մոր սխրանքը գնահատում ենք որպես առաջնորդող ճաճանչափայլ խորհրդանիշ:

Լուսակիր կերպարների էմանացիաները բերկրանք ու սնունդ են տալիս ոգուն: Մենք՝ մարդկության Եղբայրներս, անվանում ենք այդ էմանացիաները կենսական, հրեղեն շիթեր: Այդ շիթերը ոգու ամենազորեղ ստեղծագործություններն են, և այնքա՛ն հրեղեն է Ագնի յոգի ակտիվությունը: Եվ Ագնի յոգի հրեղեն ոգին պիտի ահեղորեն հալեցնի ճանապարհին կույտադարսված կուտակումները: Ագնի յոգի բոցեղեն ոգին արարում է իր էությունից արձակվող սեփական լույսով:

Յուրաքանչյուր շարժում հաստատում է, Ուռուսվա՛տի, քո ոգու ստեղծագործության անձնուրացությունը:

177. Ամենաբարձր գործընթացների աներևույթ բնույթը կարող է հիմնավորել հեռավոր աշխարհների հասկացությունը: Երբ տիեզերական էներգիաները լարված են գործողություն կատարելու համար, այնժամ համագործակցության պարույրը լարվում է տիեզերական մագնիսին համառիթմ: Սովորաբար պարույրի լարումը կարելի է որոշել ըստ ստեղծագործության արդյունքի, իսկ գործընթացի շղթան մարդն անկարող է չափել: Անշուշտ, հոգեդինամիկայի չափումը ենթակա է սոսկ տարածական կրակի չափմանը:

Յուրաքանչյուր հոգեկան գործընթաց կարող է դրսևորել լարված, անտեսանելի ստեղծագործություն: Էներգիաները կարող է ըմբռնել միայն նա, ով ունի ոգու հոգեդինամիկա: Ոգու հոգեդինամիկայի ստեղծագործությունը հասանելի է միայն նրան, ով փոխակերպել է իր ֆիզիկական էներգիաները տիեզերական կրակների: Երբ ոգին ունակ է անցնելու այդ հրեղեն ուղին, այնժամ մատչելի են նրան այդ անտեսանելի գործընթացները, և բաց է ճանապարհը դեպի ճշմարտություն:

178. Իրավացի է Ուռուվատին. հրաշալի ճշմարտությունը գեղեցիկի մեջ է: Տիեզերքը այս բանաձևի վրա է հաստատում էվոլյուցիան: Տիեզերքը մղում է աշխարհին տիրանալու գեղեցկությանը: Այո՛, ճշմարիտ է, Մայրն Աշխարհի ունի գեղեցկության մագնիսը: Եվ այնտեղ, ուր տարածական կրակը հավաքել է իր գոյաձևերի հաստատման հուրը, դրսևորվում է ոգու հուրը: Երբ գործընթացի անտեսանելիությունը բացվում է հրեղեն ոգու առջև, այնժամ կարելի է ասել. «Ստեղծագործման փոխակերպումը հաստատվեց»: Ուստի կարելի է ասել, որ ոգու հոգեդինամիկան արարում է ինչպես ամենահագեցած կրակը: Երբ կենտրոնները կարող են բոցեղեն կերպով արտացոլել տիեզերական մագնիսի կամքը, այնժամ ոգու հոգեդինամիկան միացնում է բարձրագույն ոլորտները մոլորակին:

179. **Ստեղծագործության և ստեղծագործողի** միջև համանմանությունը այնքան պարզորոշ է, որ անհնար է չանցկացնել դրանք միավորող գիծը: Երբ մարդը դրսևորում էր իր պարզունակ ոգու ուժը, այնժամ իր ստեղծագործության բոլոր պատկերները արտահայտում էին նրա էությունը: Ինչ խոսք, հիմա էությունը նույնպես պատկերավոր է: Բայց հոգևոր աստիճաններով մարդու առաջընթացից պարզ է, որ մոտենում է դեպի բարձրագույն ոլորտներ ընթանալու պահը, և ձգտումն այնքան հրեղեն է, որ առաջնորդում է տեսանելիից դեպի աներևույթը: Արդ համանմանությունը մշտապես արտացոլելու է էվոլյուցիայի ընթացքը, և Տիեզերքը համապատասխանում է տիեզերական մագնիսին:

180. Համանմանության այս սկզբունքը կիրառելի է ողջ գոյի նկատմամբ: Կյանքը ձյուղավորվում է սրտի շառավիղներով, քանզի այդ շառավիղները անմիջականորեն կապված են տիեզերական մագնիսի հետ: Միահյուսման ճանապարհով ընթացող ոգիները այնքան ներդաշնակված են, որ դրսևորում են բարձրագույն և մաքրամաքուր համահնչություններ ստեղծող համանմանություն: Ոգիների ստեղծագործությունը մոլորակի վրա արտահայտվելու է որպես ներդաշնակման երևույթից ծնունդ առած մի նոր լարային ակորդ: Այդ համահնչություններն այդքան գեղեցիկ են այն պատճառով, որ դասվում են բարձրագույն ոլորտներում գոյություն ունեցող համահնչությունների շարքին:

Երբ կարելի է դրսևորել դեպի Աշխարհի Մոր ճաճանչն ուղղված ստեղծագործություն, այնժամ, ճշմարիտ, արտացոլվում է բարձրագույն լարվածությունների աշխարհը: Եվ համանմանությունն առաջացնում է ձգտում դեպի տիեզերական մագնիսի դրսևորած ոլորտները:

181. Տիեզերական ուժերի բաշխումը հիմնված է մագնիսի հաստատման վրա: Համակցումների ազատությունը պայմանավորված է սկիզբներով: Երբ համակցությունը բացահայտ առավելություն է պա-

հանջում նախանշված գործողություն կատարելու համար, այնժամ հանուն ավելի լավ համակցության վերացվում է **վերացման օրենքին** ենթակա հոսանքը:

Անշուշտ, մարդիկ այնքան ընտելացել են հավասարակշռության իրենց ըմբռնմանը, որ կարծում են, թե ուժերը բաշխվում են հավասար: Մինչդեռ տիեզերական ուժերը ենթակա չեն այդպիսի բաշխմանը, հակառակ դեպքում դրսևորված Տիեզերքում տեղի կունենար փոխադարձ ոչնչացում: Բանական հիմքից զուրկ արարք կլիներ, եթե տիեզերական մագնիսն արարեր փոխադարձ ոչնչացման համար: Անչափ մեծ է Տիեզերքի ստեղծագործությունը, և մշտապես գերակշռում է դեպի Անսահմանություն տանող պտտահողմը:

182. Այս օրենքի ներքո հաստատվում են բոլոր գոյությունները: Գոյի գեղեցկությունը ստեղծագործ մագնիսի առաջնորդող սկզբունքի մեջ է: Դժվար է նեղ շրջանակներում մտածող մարդուն հասկանալ, թե որչափ գեղեցիկ է այդ սկզբունքը: Միայն բարձր զարգացում ունեցող ոգին կարող է հասկանալ այդ ուժը: Մագնիսի առաջնորդող սկզբունքը լիովին միաձուլվում է նրա միավորող ուժի հետ: Այդ պատճառով էլ ստեղծագործությունը հաստատվում է մագնիսի դրսևորված սկզբունքի ուժով: Նույն սկզբունքը, ճշմարիտ, տանում է մարդուն դեպի էվոլյուցիա: Նույն սկզբունքը առաջնորդում է նախանշված ոգուն դեպի ավարտման վեհության փառքը: Ճշմարիտ, ստեղծագործ մագնիսի հետ է առաջադիմում անվանյալ ու նորահայտ ոգին: Ուստի Մենք ասում ենք, որ այդժամ գոյն արտացոլում է բարձրագույն օրենքներ:

183. Մագնիսի առաջնորդող սկզբունքն այնքան զորեղ է, որ նրա ենթակայության տակ են **ձգողության օրենքին** չհամապատասխանող ուժերը: Կարելի է տիեզերական իշխանությունը բնորոշել որպես ստեղծագործ մագնիսի զորություն և ոգի: **Իշխանություն** հասկացությունը կարելի է կիրառել տիեզերական մագնիսի զորության նկատմամբ: Եվ **կործանում** տերմինը ենթակա է մագնիսի իշխանությանը: Այդպես է կառուցվում Տիեզերքը, և կառուցման պտտահողմը դրսևորվում է որպես լուսակիր օրենք: Ուստի **լուծելիություն** հասկացությունը հարկ է վերանվանել փոխակերպում: Ստեղծագործական ուժը հաստատվում է փոխակերպման գործընթացի միջոցով, և ողջ Տիեզերքում առաջնորդող սկզբունքը փոխակերպումն է: Առաջնորդող պտտահողմը համախմբում է բոլոր տիեզերական կրակները: Առաջնորդող պտտահողմը կլանում է ուժերի դիմադրությունը: Առաջնորդող պտտահողմը բոլոր դրսևորումները նպատակաուղղում է նպատակահարմարության: Այսպես է ձևավորվում ստեղծագործ Անսահմանությունը:

184. Տիեզերական լարվածության երևույթն առաջանում է մոլորակային պայթյունի հոսանքից: Ինչպես հերթափոխումը, այնպես էլ նոր լարումը արձագանքում են տարածության կրակներին: Կարելի է ասել նաև, որ Ագնի յոգի հուրն արձագանքում է տիեզերական ցնցումներին: Բոլոր համակցությունների համալիրը փոխակերպում է բերում մոլորակին, և հանուն նոր աշխարհի համախմբվում են բարձրագույն էներգիաները: Արդ անսահման է կյանքի հոսքը, և այնքան հրաշալի են այդ օրենքները: Արդարև, կարելի է ուրախանալ տիեզերական նվիրական ուժով:

185. Կյանքը միայն հաղթանակում է միավորմամբ: Մարդկության աստիճանն այնքան բռնանում է բոլոր օրենքներին, որ ինքնակործանման երևույթը հասնում է իր նպատակին: Երբ ոգին կարող է վեր խոյանալ լավագույն հոսանքների պայմաններում, այնժամ նա հասնում է բարձրագույն ոլորտներ, որոնք հաստատում են կյանքին հաղորդակից լինելու համար անհրաժեշտ ուժը, որը ղեկավարում է ոգուն գալստյան ժամկետը լրանալիս: **Հեռանալու օրենքը** կառավարում է հակառակ ուժը, և մագնիսը շաղկապում է այս երկու բևեռները:

Եթե մարդիկ գիտենային, թե ինչպես են հաստատվում մագնիսը և հոսանքներով հագեցած ժամկետների ստացման ուժը, այնժամ բանականությունը բավականին կպայծառանար: Ժամկետն է շաղկապում ոգուն նախանշված հաստատման հետ: Չէ՞ որ ժամկետն է ուղու հաստատում տալիս հեռացած ոգուն: Չէ՞ որ տարածությունը այնպիսի լայնարձակության երևույթ չէ, ուր ոգին պիտի ինքը ելք փնտրի: Ոգին ընթանում է նախանշված ճանապարհով: Այդպես են հաստատվում նախանշված ուղիները: Հրե տարերքը նոր ճակատագիր է հաստատում:

Շատ գաղտնիքներ կան Տիեզերքում:

186. Այժմ ձևավորվում է պատգամը, և տիեզերական մագնիսը լարում է իր հոսանքները: Պատգամված է, որ ասպարեզից հեռացող երկրները կառուցում են իրենց ապագա տարածքները: Մի տարրի հեռացող ուժերը փոխարինվում են մյուսներով: Հեռացող ոգին նախապատրաստում է իր նոր գոյաձևը, ուստի խիստ կարևոր է հաստատել փոխակերպման ժամկետը:

187. Տարածության ուժը համակում է բոլոր էակներին: Երևույթների միասնությունն արտացոլվում է ամեն ինչում: Տարածության շղթաները ամփոփում են իրենց մեջ կյանքի բոլոր դրսևորումները: Մի թագավորության հատկությունը պայմանավորում է մյուսի հատկությունը, և միայն ստվերային տարրն է միակողմանի: Տարածական լույսի դրսևորումը պայմանավորում է տարրերի զարգացման ողջ ընթացքը,

և կարծրացած մատերիան նախատեսում է իր աստիճանները: Ուստի ասենք. «Ամեն մի դրսևորման հատկությունը կախված է մյուսից, և ցանկացած դրսևորման որակը համապատասխանում է նախադրված նկրտմանը»: Չէ՞ որ զարգացումը պիտի ստիպի մարդկանց համակվելու պատասխանատվության ըմբռնումով: Անխախտելի է **գոյաձևերի և նկրտման հարաբերակցության օրենքը**: Համակցություն ձևավորելիս խիստ կարևոր է իմանալ օրենքը: Մարդկության ստեղծագործությունն իր վրա կրում է այդ անհամաձայնության դրոշմը: Անհամաձայնության մասին խոսելիս Մենք նկատի ունենք այն տարբերությունը, որ գոյություն ունի բարձրագույն ոլորտներ տանող բացահայտ նախանշված ուղու և մարդու բռնած ուղու միջև: Առաջընթաց ուղու կասեցման հետևանք է ներկայիս դանդաղ առաջադիմության երևույթը: Անսահման են վերին ուղիները, և նրանց մեջ ամփոփված են ստեղծագործական կրակները:

188. Երբ Երկրի կրակները մոլեգնում են, այնժամ Ագնի յոգի կրակն արձագանքում է: Երբ ոգին արձագանքում է բոլոր տիեզերական դրսևորումներին, այնժամ կարելի է ասել, որ տիեզերական միաձուլում է հաստատվել: Անշուշտ, այդպես վիբրացիաները կարող են ընկալել այն հոսանքները, որոնք համընթաց են հենց Ագնի յոգի ինտենսիվ հոսանքներին:

Այժմ Մենք հավաքում ենք վեցերորդ ռասայի ոգիներին, և Ագնի Յոգան կոչն է: Եվ Լոտոսի համադրումը նոր ստեղծագործական փուլ է հաստատում:

189. Որքա՜ն անհասկանալի է մարդկությանը հետևանքների աշխարհը: Տիեզերքում գոյություն չունի կամայականություն: Նա, ով որպես հիմք է ընդունում պատահականությունը, նվազագույն առնչություն է ունենում կենսական էներգիայի շղթային: Կյանքի կոչող էներգիան լուծում է տալիս նկրտման ուղղությանը: Այդ իսկ պատճառով կամայական միտքը անորոշ լուծում է տալու: Կամայական միտքը հող կստեղծի կործանման համար, կամ էլ նկրտումը թույլ կտա քաոսային երևույթին ընդունելու որոշակի ձև: Երկրի վրա դրսևորված գոյաձևերի շարքում բավականին մեծ թիվ են կազմում կամայականության զոհերը: Ինչպես և գործողությունն է ցնցում ոլորտները, այդպես էլ նույն կամայականությունն է ցնցում հետևանքների աշխարհը: Այնքան անխախտ է օրենքը, որ կարելի է ասել, որ նուրբ մտածողություն զարգացնելու դեպքում հնարավոր կլինի գիտակցաբար վերափոխել գոյաձևը:

Պատկերացնենք աշխարհները որպես նրբագույն սկզբունքների աշխարհներ, ընդ որում՝ իրենց ողջ անսահման գեղեցկությամբ:

190. Նոր ռասա համախմբելիս մարդկանց շրջանում ապրող ադեպտը հաստատվում է որպես սխրարար: Ճշմարիտ, հաստատվում է նոր ռասայի հիմնման ստեղծագործությունը: Հաստատված սխրարարի հուրը բոցավառում է ընտրյալների ոգին: Երբ սխրարարի ոգին փոխակերպում է իր կրակները, այնժամ նա միաժամանակ բոցավառում է այլոց ջահերը: Ինչպես Տիեզերքում ամեն ինչ փոխանցվում է՝ դրսևորելով ծիածաներանգ ոլորտներ, այդպես էլ սխրարարն է շաղ տալիս ծիածանային սերմեր: Հիմքը գցելուց հետո վեր է խոյանում կառույցը: Սխրարարի ստեղծագործությունը մոտեցնում է բարձրագույն աշխարհը: Գավաթի համադրանքը սրտի մագնիսն է: Զգացիմացությունը բացահայտում է սխրարարին գեղեցկության գավաթը կրողի խորհրդանիշը:

191. Մարդկության համար անտեսանելի տիեզերական կրակների դրսևորումը իրենից ներկայացնում է տիեզերական մագնիսի ամենագլխավոր գործողությունը: Գիտության կողմից կյանքի մագնիսի հաստատումը անհրաժեշտություն է մարդկության հետագա առաջընթացի համար: Մագնիսի կապը կյանքի հետ հարաբերակցություն կտա ամբողջ տիեզերական բոլորաշրջանի հետ:

Մենք բարձրացնում ենք մարդկությանը ստորին ոլորտին բնորոշ վիճակից անսահման մտքի ոլորտ: Սահմանափակումը գամում է մարդուն այն փակ շղթային, որն այդպես ոչնչացնում է լավագույն տիեզերական հոսանքները: Անսահման մտքի մեջ ամփոփված է ողջ տիեզերական գործողությունը, և ֆոհատն արարում է մատերիա լուսիդայից: Ուսանելի է գիտենալ, որ ամենահրեղեն գործընթացին ոգին կարող է հասնել, և կրակների փոխակերպումը նպատակաուղղում է դեպի հաջորդ գործընթացը: Արդ նկրտումների դրսևորումների շղթան հաստատում է համատեղ ստեղծագործման անսահման աշխարհը:

192. Անսահման միտքն ամփոփում է իր մեջ մարդկային բոլոր նվաճումները: Արդ անհրաժեշտ է կիրառել աճման հաստատված սկզբունքը ամեն երևույթի նկատմամբ:

Ռասայի համախմբման երևույթը ղեկավարվում է **մագնիսի օրենքով**, և հիմքում ընկած է անսահման միտքը: Եթե մարդը կրակ դրսևորեր, որպես հանուն ապագայի կատարվող գիտակցված աշխատանք, այնժամ ռասան կհամախմբվեր հեշտությամբ, սակայն ներկա պայմաններում, երբ Մենք համախմբում ենք ռասան, մեծ աշխատանք է պահանջվում: Ագնի յոգը պիտի հալեցնի գիտակցության մեջ կուտակված հին խառնակույտերը և ուղղորդի մարդկությանը դեպի նոր գիտակ-

ցություն: Չէ՞ որ ապագայի գիտակցությունն այնքան նպատակաուղղված է տիեզերական կրակների հաստատմանը, որ անհրաժեշտ է ընտրել ամենաերիտասարդներից՝ ձևավորելով մի նոր սերունդ:

Եռանդով արթնացնում ենք գիտակցությունը. մոտահաս է ժամը: Այո՛, այո՛, այո՛:

193. Մարդու անկախ գոյությունը անհնարին մի բան է: Տիեզերական մագնիսի էությունն այնքան սերտորեն է շաղկապում իրար տիեզերական երևույթները, որ անկախ գոյություն անհնար է պատկերացնել: Միայն տիեզերական մագնիսը կարող է ներգրավել շղթայի մեջ որևէ գոյություն՝ դրսևորվելու համար:

Բոլոր տարրերի համակցությունն այնքան բարդ է, որ մարդն անկարող է ընկալել կյանքի բոլոր դրսևորումները: Տիեզերքը հրատոգոր է, և մոլեգնում է տարածական կրակը: Դյուրին է նկատել, թե ինչպես մեկ օղակին հաջորդում է մյուսը: Ինչպես մի վերաձը հաստատում է մեկ ուրիշը: Ինչպես մի կյանքը կանխորոշում է հաջորդը: Բայց մարդուն դժվար է ընդունել ճշմարտությունը իր կախվածության մասին: Միանգամայն անհնար է ընդհատել այդ գոյությունների շղթան, անհնար է առանձնացնել սեփական անձը, անիրական է կասեցնել ընթացքը:

Անտրոհելի հոսք է Տիեզերքը:

Մարդուն այդքան հրապուրող ազատությունը պատրանք է: Անսահմանության մեջ գոյություն ունի ընտրության ազատություն, և դրա մեջ է ողջ գեղեցկությունը: Ընտրության ազատությունը հաստատում է մարդուն: Եվ մարդն ինքն իր համար է որոշում հետևանքների աշխարհը: Այդպես ստեղծվում է կախվածության կյանքը: Անվերջ են գոյությունները և շաղկապված են կառուցման երևույթներով:

194. Մտածողության կախվածությունը ստիպում է յուրաքանչյուր ապրող մարդու հաստատել, որ նա ինքնուրույն կերպով անկարող է առաջադիմել: Արդ ամեն ոք ինքն է որոշում իր ուղին: Նկրտումն է կյանք ստեղծում: Ուստի թող որ յուրաքանչյուր ոգի գտնի իր ուղին:

Մենք մեծ հարգանք ենք տածում Ուռուսվատիի անձնուրաց ինքնորոշման հանդեպ: Երբ ոգին գիտի իր կոչումը և ձգտում է դրան ակներևությանը հակառակ, այնժամ հաստատվում է մեծագույն շաղկապող օղակը:

Եթե Մենք կարողանայինք ցույց տալ մարդկությանը մարդկային արարքների ժամանակագրությունը, ապա, արդարև, նա կսարսափեր: Ուստի անչափ դժվար է հավաքել նոր ռասա: Մեծագույն լարվածություն է պահանջում խորասուզումը խավարի մեջ: Ուստի Մենք որպես խորհրդանիշ ենք ընտրում իբրև անեղծ նկրտում դրսևորված կրակը:

195. Տիեզերքի վերաբերյալ առկա տարբեր հայացքները փոքր-ինչ բացում են մուտքը դեպի տարբեր ոլորտներ: Բայց ինչպիսի՞ հայացքով է նայում մարդկությունը: Քաղքենու տեսողությունը չի թափանցում ֆիզիկական ոլորտից վեր: Անշուշտ, նյութական դրսևորումների որոնումը կարող է ձգտում առաջացնել դեպի այն, ինչը տեսանելի է կոպիտ տեսողությամբ, բայց բարձրագույն ոլորտների երևույթը նա մերժում է: Համաշխարհային աչքն ընդգրկում է տիեզերական մագնիսի ստեղծագործությունը, և մարդը կարող է թափանցել բարձր ոլորտներ: Կարելի է հասնել Տիեզերքի նախանշած այդ ճշմարտությանը: Երբ համաշխարհային աչքը սլանում է տարածություն, նա ընկալում է բոլոր օրենքները: Բայց համաշխարհային աչքն ունի իր սահմանները և իրեն հատուկ նախանշումները: Նրա նկրտումների շրջանակը գտնվում է հարակից ոլորտում: Նրա փնտրտուքը տարածվելու է Երկրին մոտ գտնվող ոլորտների վրա: Տարածական կրակը կարելի է ընդգրկել Անսահմանության տեսողությամբ, և տարածական կրակին մերձեցած ոգուն մատչելի է անսահման աչքը: Տարածական կրակի հոգեկան կյանքը կարող է ընդգրկել ոլորտները հոգեէներգիայի ընդունման շնորհիվ: Տարածական կրակն ընդգրկող ոգին ապրում է մատերիա լուսիդայի ստեղծագործական ուժով:

Անսահման է հոգևոր աշխարհը, և ֆիզիկական բանականությունն անկարող է դրսևորել Անսահմանության իմացություն, սոսկ ոգու հոգեդինամիկան է խոյացնում մարդուն բարձրագույն ոլորտներ: Անսահման աչքը, ճշմարիտ, բացում է դեպի Տիեզերքի Սիրտը տանող ուղիները:

196. Երբ տեսողությունն ընկալում է համաշխարհային նշանակությունը, ապա ճանապարհներ են բացվում դեպի անսահման դրսևորված կեցություն: Համաշխարհային աչքը բացահայտում է լոկ այն, ինչ գոյություն ունի կյանքում: Անսահման աչքը բացում է անվերջ գոյը: Անդադար է Տիեզերքի ստեղծագործությունը, և այնտեղ, ուր համաշխարհային աչքը սահման է տեսնում, անսահման աչքը նշմարում է նոր հորիզոններ: Տիեզերական մագնիսի հաստատման խորհուրդը ընկալելի է Բարձրագույն Բանականության տիեզերական տեսողության համար: Արդ բարդ օրենքը կարող է բացահայտվել որպես Տիեզերքի Սրտի տարերային ուժ: Տիեզերական օրենքի պարզությունը վկայում է մարդուն, թե որքան գեղեցիկ է աշխարհը:

Երբ Լուսե Տարան պայծառացնի աշխարհը հեռավոր աշխարհներով, Նա կհաստատվի որպես գեղեցկության դրսևորում: Երբ Սրտի Տարան սիրով է լուսավորում աշխարհը, այնժամ Նա հաստատվում է գեղեցկության դրսևորումով:

197. Անսահման տեսողությունը բնորոշ է Ագնի յոգին: Սիրտը նրբորեն զգում է տիեզերական մագնիսն այն պատճառով, որ ամենահեռավոր արձագանքն անդրադառնում է նրա կենտրոնների վրա: Տիեզերական մագնիսն ու տարածական կրակը լարում են կենտրոնները: Երբ կենտրոնները այդպես թրթռում են, ապա, անշուշտ, Ագնի յոգը ցնցում է ստանում, և կենտրոնները գտնվում են տարածության հոսանքների ներգործության ներքո: Մեծ քանակությամբ ուժ է ծախսվում հղումների և վեցերորդ ռասային պատկանող ոգիների մագնիսականացման վրա: Անշուշտ, հարկ է պահպանել հաստատված ստեղծագործական ուժերը:

Արդ կասեմ. «Ճշմարիտ, Ագնի յոգի կենտրոնները հրեղեն հեղեղ են»:

198. Ինչն է պատճառը, որ մարդկությունն այդպես մոլեգնում է խելահեղության մեջ: Տիեզերքը ցնցվում է մարդու հաստատած դրսևորումներից: Կարելի՞ է արդյոք ակնկալել, որ մարդկությունն առաջադիմելու է առանց տիեզերական մագնիսին հաղորդակից լինելու: Ներդաշնակ լինելու համար գոյաձևերը պիտի իրար համապատասխան լինեն: Էվոլյուցիայի հաստատումը աճելու է սոսկ այն ժամանակ, երբ մարդը նույնական լինի Տիեզերքի զարգացմանը: Կա՛մ մարդու զարգացումը միանգամայն պարզ առաջընթաց կտա՝ մուտք գործելով էվոլյուցիայի հոսանքի մեջ, կատարելագործվելով՝ իր տեղը գրավելու համար բարձրագույն լարվածության Տիեզերքում, կա՛մ պիտի կործանվի այն դիրքը, որտեղ մարդն իշխում է: Մարդու բոլոր նկրտումները այնքա՛ն սակավ են առաջ մղում էվոլյուցիան: Եթե բարելավմանը, միավորմանը, հաստատմանը, Ընդհանուր Բարիքին ուղղված նկրտումը միասնական չէ Տիեզերքի հետ, ապա արժանիք չունի նրա դրսևորումների շղթան:

Մենք ցնցվում ենք բազմաթիվ կառուցումներից ու բազմաթիվ մարտերից: Որքա՛ն տիեզերական ձեռնարկումներ են խորտակում. անհամար: Բայց անսահման է աշխարհը, և մոտալուտ նոր ռասան տիեզերական կրակի բարձրագույն դրսևորումներ կունենա:

199. Հեռավոր աշխարհները ատոմային էներգիայի ուժ են պարունակում: Հավերժ շարժման երևույթի վրա հիմնված Տիեզերքն իր բոլոր դրսևորումներում հաստատվում է կյանքի թրթիռով: Ինչպես տարբերացման, այնպես և միավորման երևույթները հաստատվում են կյանքի թրթիռով: Թրթռացող այդ կյանքը հագեցնում է տարածությունը, և այդ ազդակի ներգործությամբ են ստեղծվում կյանքերը:

Երբ ստեղծագործական սկիզբը դրսևորվեց, այնժամ մատերիա լուսիդան արարում էր ֆոհատի միջոցով, և գոյի այդ հատիկավորումը տարածականորեն կյանք է կրում:

Անհրաժեշտ է վերափոխել մեր մարդկային գիտակցությունը՝ հասկանալու համար, թե ինչպես են տեղաբաշխված ոլորտները: Աշխարհների այդ հատիկավորումները իրենցից չեն ներկայացնում ֆոհատի կայծեր, այլ հաստատում են տարբեր լարվածությունների կենսունակությունը: Կյանքի թրթիռը ամեն մի ոլորտում դրսևորվում է տարբեր լարվածությամբ և յուրաքանչյուր ազդակով պիտի բարձրանա դեպի Անսահմանություն:

Երբ տեղի է ունենում ատոմների տարբերացում, այնժամ կենսական թրթիռը բևեռացնում է տարրերը տարբեր կողմեր: Տարրերի համակցությունը սլանում է՝ շարժվելով կրակի ուժի ազդեցությամբ: Ատոմի միավորման դեպքում երևույթը ենթակա է տիեզերական մագնիսի էության օրենքին: Գիտակցությունը հավաքում է նրան ճիշտ այնպես, ինչպես մագնիսի ուժն է ձգում: Բնազդն է առաջնորդում յուրաքանչյուր սկզբի լարումը՝ որպես մի նոր տիեզերական ուժ: Ատոմի երկրային գոյությունը և նրա գիտակցությունը հաստատվում են որպես հոգեկան կյանք:

Եթե մարդիկ գիտենային գոյության ճշմարիտ գեղեցկությունը և կյանքի տրոփման գեղեցկությունը, նրանք կընտրեին հեռավոր աշխարհներ տանող ուղին: Հատկապես ոչ թե ոչնչացում, այլ կյանք հավիտենական: Արդ բազում բարձրագույն օրենքներ են հաստատվում: Պարզ է և բարդ, նաև գեղեցիկ: Պնդում եմ. «Հիասքանչ է գոյը»:

200. Տիեզերքի կենտրոնները հավասար են մարդու կենտրոններին:

Մարդն իր մեջ կրում է Տիեզերքի բոլոր դրսևորումները: Նշանակալից են Տիեզերքի գործառույթների դրսևորումները մարդու մեջ: Երբ նա իր մեջ արտացոլում է բոլոր տիեզերական գործառույթները, նա իր անձով է չափում Տիեզերքում դրսևորվող հնարավորությունները: Ագնի յոգը՝ **անապատի առյուծը**, կրում է իր սրտի մեջ մարդկային բոլոր ճիչերը: Նա կրում է Տիեզերքի բոլոր պայթյունները և զգում է գիտակցության բոլոր տեղաշարժերը: Նա բովանդակում է տիեզերական հոսանքների բոլոր շիթերը: Նա ամփոփում է իր մեջ համադրական գիտելիքը, որը հաստատում է գիտակցության նորացման համար իրականացվող դրսևորված ոգիների համախմբում: Երբ ոգու համադրանքը կազմվում է տիեզերական կրակներից և սրտի հոգեկան կյանքից, այնժամ մարդուն կարելի է ասել, որ տիեզերական կրակների այդ կենտրոնները համապատասխանում են Տիեզերքի կենտրոններին: Այս զուգահեռը կարող է լավագույն կյանք պարգևել: Ստեղծագործման սկզբունքը սահմանվում է որպես անսահման հուր, որպես անսահման տեսողություն, անսահման լսողություն, ամենաբովանդակ սիրտ:

Ձգտե՛ք հաստատել անսահման հուրը:

201. Անչափ դժվար է որոշել Տիեզերքում առկա այսպես կոչված **պասիվության** և **ակտիվության** սահմանները: Եթե ասենք, որ բոլոր ուժերն ակտիվ են, ապա մարդը կհամարի, որ այդ պնդումը պարադոքսային է, բայց բարձր գիտակցությունը հասկանում է, երբ Մենք որպես ակտիվ ենք դիտում սկիզբների դրսևորած բոլոր ուժերը: Ստորաբաժանումը այնքան կոպիտ է, որ դժվար է ասել մարդկանց այն սկզբունքի մասին, որն ապրում է Մուլապրակրիտիի դրսևորված զորության մեջ: Այնպես, ինչպես անհնար է առանց կանացի սկզբի հաստատել կյանքի սկզբունքը: Ինչպես և Տիեզերքը, Մուլապրակրիտին նաև համաշխարհային սկզբունք է: Սկիզբները չեն կարող հարաբերվել որպես մրցակից ուժեր, միայն ուժերի միավորումն է կառուցում կյանքը: Եվ Մենք հեռավոր աշխարհներում սրբազնորեն մեծարում ենք այն սկիզբը, որին մարդկությունը **պասիվ** է անվանում: Այո՛, այո՛, այո՛:

Բարձրագույն գիտակցությունը գիտի ճշմարտությունը, և Մենք պատրաստ ենք ազդարարելու այդ ճշմարտությունը մարդկությանը, բայց դրա համար մարդկությունը պետք է կանգնի ավելի բարձր աստիճանին: Այո՛, այո՛, այո՛:

Երբ ամեն մի Տիրակալ աշխարհ է գալիս մոր միջոցով, ապա ինչպե՞ս չմեծարենք քեզ, Մա՛յր Աշխարհի: Երբ յուրաքանչյուր տարածական կրակ պիտի դրսևորվի գոյաձևի մեջ, ապա ինչպե՞ս չմեծարենք նրան, ով կյանք է պարգևում: Այո՛, այո՛, այո՛: Ինչպե՞ս չընդունենք Մոր լարված խորհրդանիշի ուժը որպես Տիեզերքի բարձրագույն դրսևորում:

Երբ Տարան իր հաստատումը գտավ Երկրի վրա, սկսեցին հնչել Տիրակալների երեք ճառագայթները: Տիեզերական կրակների այդ երևույթները Տարայի մոտ կարող է նկատել զգայուն աչքը: Այդ դրսևորումներն այնքան հզոր են, որ դրանց ճառագայթումը հալեցնում է բոլոր նկատված խոչընդոտները: Արդարև, կարելի է ասել. «Լուսավոր կերպարը նոր ըմբռնում կստեղծի»:

202. Բոլորածիր նկրտումն ապրում է ողջ Տիեզերքում: Այնտեղ, ուր սլանում է նկրտուն ոգին, սկիզբ են առնում իր կյանքի շրջանները: Ուստի վերընթաց ճշգրիտ պարույրի նպատակը սահմանում է ինքը՝ ոգին: Ոգու ձգտումը դեպի կոպիտ դրսևորումներ համապատասխան շրջան է հաստատում Տիեզերքում: Ձգտումը դեպի բարձրագույն դրսևորումներ իրեն համապատասխան շրջան է հաստատում: Այս օրենքը վերաբերում է բոլոր դրսևորումներին: Տիեզերքի կենտրոնների մասին խոսելիս Մենք հիշատակում ենք Ագնի յոգի համապատասխան կենտրոնները: Էներգիաների ուժերը բաշխվում են ըստ համանմանության, և նրբանուրբ էներգիաների զորությունն ընկալելու է նրբին օրգանիզմը:

Արդ, նուրբ էներգիայի յուրացումը ձևավորում է նախորոշված շրջանը, և տիեզերական շրջանը համընկնում է: Այդ իսկ պատճառով Ագնի յոգի համադրանքն ունի իր բոլորածիր պարույրը: Մարդկությունը պիտի մտորի իր պարույրի արարման մասին: Տիեզերքը բնակեցված է այդպիսի աշխարհներով:

Գրի՛ առեք իմաստալից մի ճշմարտություն, որն ասել է Ուռուսվատին. «Մարդն աշխարհ է»: Իր նկրտումը մի աշխարհ է ստեղծում, և կարման պիտի քավի ոչ միայն աշխարհ մարդուն, այլև աշխարհ նկրտումը, մինչև աշխարհը չմիաձուլվի անեղծ նկրտման ներքո: Արդ աշխարհն անսահմանորեն հաստատում է էվոլյուցիայի ընթացքը:

203. Սրտի մարգարիտը նրբագույն լարվածությունն է: Սոսկ այդ լարվածությամբ ենք աշխարհներ ստեղծում: Չէ՞ որ նկրտումների աշխարհն է կերտում ապագան:

Սիրո աղբյուրն է միավորում գոյը:

204. Մարդկությունն անկարող է ուղղվել դեպի որևէ նպատակ՝ առանց նախորոշում ունենալու: Որոշումը ձևավորվելու է այն նկրտումներից, որոնցով մարդը ղեկավարվել է: Որոշման ուժը ուղիղ համեմատական է նկրտմանը և այն ուժին, որը երաշխավորն է կյանքն առաջ շարժող որոշման դրսևորմանը: Այդպիսով որոշվում է մարդու մտածողության սկզբնապատճառը: Միտքն ու որոշման նպատակաուղղումը ուղղություն են տալիս մարդկային գործողության ողջ հոսանքին:

Անհասկանալի է, թե մարդիկ ինչպես կարող էին ընկղմվել գիտակցության խավարի մեջ և ժխտել այն, ինչը կապված է տիեզերական մագնիսի հետ այն դեպքում, երբ ամեն ինչ պահվում է այն մագնիսական թելերով, որոնք միաձուլվում են Տիեզերքում: Մեկ կերպարանքի մեջ ամփոփված երկակի ուժի մասին առասպելի հիմքում միաձուլումն է ընկած: Համակցող ուժն անսահման է: Երկու սկիզբները՝ բարձրագույն ու ստորին աշխարհները, Տիեզերքի սկզբունքներն են: Ամեն ինչ միաձույլ է ձգողության ստեղծագործական ուժի շնորհիվ:

205. Պարույրը առաջ է շարժվում որպես տիեզերական ուժ: Մագնիսի հիմքի առաջընթացը նպատակաուղղվում է որպես ստեղծագործ էներգիայի ուժի պարույր: Բոլորածիր շարժումը սաստիկ լարվում է, երբ ձգվում է դեպի իր սկզբնավորման աղբյուրը: Ձգողությունը դեպի այդ մերձեցում հեռավոր աշխարհներին ուղղված ազդակ է առաջացնում: Վերընթաց աստիճանին կանգնելու ձգտումը նպատակաուղղում է պարույրի օրենքը: Եվ բոլորածիր շարժումն այդժամ լարվում է որպես մագնիսական զորություն, երբ մեկնարկային աստիճանն այն կետն է, որտեղ հայտնվում է գործողության կետը իր շրջանն ավարտելիս:

Միթե չպիտի ձգտենք պարուրաձև վերելքին, երբ այդ ուղին տանում է դեպի Անսահմանություն: Մագնիսի զորության դրսևորումը կոչվում է **ստեղծագործական սկիզբ**:

206. Երկու աշխարհների միավորման թելերի շարժման մեջ կյանք է ամփոփված: Միևնույն կրակով մագնիսացված հաղորդալարը կապված է զուգահեռ հաղորդալարի հետ: Այդ իսկ պատճառով Ագնի յոգը բացահայտ կապ է հաստատում բարձրագույն աշխարհի հետ:

Բոլոր հզոր էներգիաները պիտի դրսևորվեն որպես միևնույն շղթային պատկանող երևույթներ: Ագնի յոգի կրակի դրսևորումն իր նպատակն ունի Երկրի վրա և բարձր ոլորտներում: Այդ պատճառով էլ Ագնի յոգը այն թելն է, որը կապում է աշխարհները: Այո՛, այո՛, այո՛: Ուստի Ուռուսվատին այդպիսի կապ է մարդու և Եղբայրության միջև:

207. Իրադարձությունների ցանցը տիեզերական մագնիսն է պայմանավորում: Դա հենց ցանց է, քանզի ստեղծագործական ուժն անդրադառնում է իրադարձությունների ընթացքի բոլոր ալիքների վրա: Ուստի ցանցը, իր հոսանքի մեջ ներգրավելով այն տարրերը, որոնք ներդաշնակ չեն տիեզերական մագնիսի հետ, անկատարության երևույթներ է առաջացնում տիեզերական ցանցի գործողություններում: Այդ կողմնակի ուժերը շատ հաճախ խախտում են նկրտման հոսքի դրսևորումը:

Իրադարձությունների ցանցը կարող է տարրալուծել իր շղթան տարատեսակ համակցության տարրերի: Մի կողմնակի հանգամանքը կարող է այն աստիճան փոփոխել հոսանքները, որ **տիեզերական մագնիսի օրենքի** համաձայն՝ ներգրավվելու են այնպիսի ուժեր, որոնք ուղղված են այլ հուների ստեղծմանը: Նույնը վերաբերում է մարդկային գործողություններին: Սպառնալից մի ամպ է ձևավորվել մարդու կողմից որոշված գործողությունների ցանցի և տիեզերական մագնիսի նախանշած գործողությունների ցանցի միջև: Մարդը ոչնչացնում է իր գիտակցությամբ այդ նախանշված ցանցը: Երբ գիտակցությունը նպատակաուղղվում է դեպի տիեզերական մագնիսը, այդժամ ճշմարիտ կապ է հաստատվում Անսահմանության հետ:

208. Արխաթը համախմբում է իրադարձությունների ցանցերը և բոլոր ժողովրդական կապերը: Այդ հյուսվածքներից ստեղծվում է նոր ռասան, որն աջակցում է ռասայի համադրության ստեղծմանը: Որքան էլ մեծ լինի ոգու դրսևորումը առանձին ոլորտում, նա անկարող է ստեղծել ռասայի համախմբում, քանզի սոսկ Գավաթի համադրությունը կարող է մագնիսականացում հաստատել: Լարված կրակների դրսևորումը երկրային ոլորտում կարող է առաջացնել տարատեսակ հոսանքների նպատակամղում. դա է Ագնի յոգի լարված ստեղծագործության պատճառը:

Իմացության Տարան մագնիսականացնում է դեպի գիտելիքը ձգտողներին: Գեղեցկության Տարան կանչում է դեպի գեղեցիկը ձգտողներին: Սխրանքի Տարան կանչում է սխրագործությանը ձգտողներին: Համադրանքի Տարան կարող է համախմբել միավորյալ ոգիներին: Արդ միաձույլ սիրտը կատարում է Տիեզերական Բանականության պատգամը: Այո՛, այո՛, այո՛:

209. Տիեզերական մագնիսի գիտակցությունը ձևավորում է թաքուն գոյաձևեր: Այնքան շատ է խոսվել տիեզերական մագնիսի օրենքի անփոփոխության մասին, որ պիտի հասկանալի լինի պարզ եզրակացությունը: Օրենքի անխախտությունը նկատելի է ողջ Տիեզերքում: Պարզ օրենքը պիտի տեղավորվի մարդու գիտակցության մեջ, և տարածության կրակն ընկալելուն պես ի հայտ կգա մաքրության հրեղեն բանաձևը: Միայն բանականության էությունը կարող է ըմբռնել օրենքի պարզությունը: Օրենքն ընդգրկում է գոյության սկզբունքի ողջ հրեղեն նպատակաուղղվածությունը: Երբ ըմբռնման բարդությունը տանում է ոգուն հակադիր օրենքների կուտակմամբ լարված ոլորտներ, այնժամ ոգին ստեղծում է տիեզերականորեն դժվարին գործընթաց: Այդ բեռն առաջացնում է անխուսափելի հակազդեցություն: **Տիեզերական մագնիսի օրենքի** անփոփոխությունն ընթանում է՝ միահյուսվելով ամեն տեսակի էներգիաների հետ: Եվ բոլոր դրսևորումները զարգանում են էներգիաների փոխադարձ ձգողության շնորհիվ: Անշուշտ, սովորաբար այս շարքին են դասում նաև վանողության սկզբունքը, բայց Մենք կասենք. «Ձգողությունն է գործող ուժը»:

210. Օրենքի անփոփոխությունն ուղեկցում է տիեզերական մագնիսին բոլոր ոլորտներում, և ավարտումի հաստատման հիմք է ծառայում այդ նույն անփոփոխ օրենքը: Նույն օրենքին է ենթակա ատոմների միավորման ձգողությունը: Նկրտման ներգործությունը էվոլյուցիայի առաջընթացի վրա լարում է իր էներգիաները: Այդ լարվածությունը տիեզերական հոսանքների շերտերի լարվածություն է առաջացնում: Նույնը կարելի է ասել Ագնի յոգի գործողության մասին. անհրաժեշտ շերտեր խորասուզվելիս նա լարում է իր էներգիաները, և ոգուն փոխանցվում է այցելած շերտերի ողջ անկատարությունը:

Երբ Իմ Եղբայրն ընկղմվում էր երկրային ոլորտներ, Նա թանկ էր վճարում դրա համար: Մենք՝ Արխաթներս, հաստատում ենք, որ գիտակցությունը ոչ միշտ կարող է անվնաս ճանաչել ոգու արարքի վեհությունը:

211. Տիեզերական մագնիսի ուժը լարում է տարրերի հոգեկան կյանքը: Տիեզերական մագնիսը համախմբում է տարասեռ կրակների համակցությունները, որոնք զուգորդվելիս տալիս են տարածական նյութե-

ղեն գոյաձևի բանաձևը: **Ստեղծագործ մատերիա լուսիդայի անփոփոխ օրենքն** է ամեն գոյաձև տալիս Տիեզերքին: Այդ օրենքը հաստատում է հոգեկան կյանքը որպես գոյաձևի միջուկ, ուստի հավելյալ ամեն բան ենթակա է լինելու փոխներգործող ուժին: Մարդն իր մեջ կրում է այդ ձգտումը, և ոգու միջուկը մշտապես արձագանքելու է տիեզերական մագնիսին: Ոգու մյուս բոլոր նկրտումները կամ համապատասխանելու են միջուկի կոչմանը, կամ էլ խախտելու են այն: Ամեն մարդ պիտի հարաբերակցի իր նկրտումը **ոգու միջուկի** այդ **օրենքի** հետ:

Եթե մարդիկ խորհեին **հոգեկան կյանքի օրենքի** շուրջ, որի հիմքում ոգու միջուկի հուրն է, ապա հնարավոր կլիներ հաստատել այն մարգարիտի դրսևորումը, որն ամեն անհատ կրում է իր մեջ: Եվ արտաքին կերպարանքին ձգտելու փոխարեն մարդիկ կձգտեին հոգեկան կյանքի գանձին:

212. Ճշմարիտ է ասվել, որ ուղին բռնած ադեպտը ուղղորդում է հրեղեն էվոլյուցիայի ողջ ընթացքը: Երբ դրսևորվում է Մայտրեյայի դարաշրջանի նոր բոլորաշրջանի հաստատումը, ապա կարող է դրսևորվել լոկ այն ադեպտը, որը գալիս է Մեզ մոտ:

Մարդկանց գիտակցության մեջ պիտի ճշգրիտ ըմբռնում հաստատվի այն տարբերության նկատմամբ, որը գոյություն ունի տարբեր նպատակների համար դրսևորվող գործիքի և էվոլյուցիան առաջ տանող հաստատված շարժիչի միջև: Երբ Մենք խոսում ենք կրակների փոխակերպման մասին, ապա այն պետք է ընդունել որպես տիեզերական մագնիսի ամենալարված կրակի հաստատում: Իսկ երբ մարդկությունը հասկանա Ագնի յոգի ոգու ողջ ստեղծագործական ուժը, այնժամ հնարավոր կլինի ասել, թե ինչպես են թրթռում բոլոր կենտրոնները՝ արձագանքելով տիեզերական իրադարձություններին: Հասարակ լուսանկարման համար օգտագործվող գործիքն անհնար է համեմատել այն երևույթի հետ, որն արտացոլում է Տիեզերքի յուրաքանչյուր շունչը: Ուստի նրանք, ովքեր ձգտում են Ագնի Յոգային, թող որ գտնեն բաց կենտրոնների ամենավսեմ ըմբռնումը: Մեծ թվով վեհ ոգիներ այրվել են երկրային թաղանթում բոլոր կրակները բովանդակել չկարողանալու պատճառով: Դյուրին չէ արխաթի ուղին:

Ագնի յոգի ստեղծագործ ուժն ամենահրաշալին է, ամենանրբազգացը:

213. Տիեզերքի ողջ տարածությունը զբաղեցնող համաշխարհային նյութը ենթակա է տիեզերական մագնիսի ձգողությանը: Տիեզերական կրակին արձագանքող գիտակցությունն, անշուշտ, կարող է հասու լինել գոյի օրենքներին: Այդ իսկ պատճառով ստեղծագործական ուժի բանաձևը կարող է որպես բանաձև տրվել այն մարդուն, որը կամավոր և

կուտակված Գավաթով հաղորդակից է դարձել Բանականությանը: Ուստի այդ ուժի բանաձևը հնարավորություն չունի հաստատվելու այս մոլորակի վրա:

Տիրակալների և ադեպտի կողմից մագնիսացված ուժերի առաքումները այնքան են գերազանցում մարդկային ընկալունակությունը, որ նկրտումը կարող է խախտել հավասարակշռությունը, և առաքված ուժերը մասնատվում են առանձին կայծերի, որոնք էլ մնում են մարդկության ձեռքերում:

Տարածությունը հագեցնող համաշխարհային նյութն առանց տիեզերական մագնիսի ձգողության անհասանելի է ոգուն: Ներշնչելով ու արտաշնչելով Տիեզերքի հետ, փոխակերպելով ու արարելով Տիեզերքի հետ՝ կարելի է գտնել նպատակաուղղված կրակի ճշմարիտ բանաձևը: Անսահման են հնարավորությունները, և անսահման են ուղիները:

214. Տիեզերական մագնիսի ձգողության հետ այսպես կոչված **հարաբերակցվող** տարրերը համակցելիս կարևոր է ունենալ նույնականության երևույթի ճշգրիտ պայման կամ ներդաշնակված համակցություններ: Նոր ռասան համախմբելիս գլխավոր դեր է խաղում նույն սկզբունքը: Երբ ռասայի հիմքը դրված է, ապա համախմբումն իրականացվում է լավագույն սկզբունքներով: Տիեզերական մագնիսը նպատակաուղղում է միջուկը, և նրա շուրջ զարգանում է հզոր մոնադան: Ամեն մի միջուկ ունի իր բոլորաշրջանը, որը զարգանում է ընդհանուր սկզբունքով: Երբ տարրի առաջնակարգ սկիզբը հրեղեն է, այնժամ նոր ռասայի սկզբունքը կկառուցվի՝ հիմքում ունենալով հուրը:

Աստղաբանությունը՝ որպես հնագույն գիտություն, կարող է որոշել յուրաքանչյուր ռասայի և ժողովրդի տեղաբաշխումը: Երբ ծնունդ է առնում նոր ռասան, այնժամ էվոլյուցիայի բոլոր դրսևորումները ղեկավարում է հիմնական սկիզբը: Ուստի, եթե կարելի է որոշել ժողովուրդների կյանքը՝ հիմնվելով աստղաբանության հաշվարկների վրա, ապա նույն եղանակով հնարավոր է կանխորոշել ծնունդ առնող ռասայի բնույթը: Այնքա՜ն նրբին են բոլոր նրբերանգները, որ միայն բարձրագույն ճանաչողությունը կարող է համակցել մատերիա լուսիդայի այդ ցանցերը:

215. Նոր ռասա Համախմբողի ստեղծագործական ուժը դեպի իրեն է ձգում բոլոր այն տարրերը, որոնք կուտակվել են համադրանքի Լոտոսի մեջ: Ստեղծագործական թելերը ուղղակի կապ ունեն Գավաթի նպատակաուղղման հետ: Այդ իսկ պատճառով միանգամայն պարզորոշ է ձգողության գիծը, այդ իսկ պատճառով հաստատվում է Լոտոսի ձգողությունը և ոգիների արձագանքը: Պայմանները դժվարին են երկատված նկրտման հոսանքի համար: Տիեզերական մագնիսի հուրն ունեցող

ոգին կարող է սկիզբ դնել հրե ամեն տեսակի հոսանքներին: Ուռուսվատիի ոգին արձագանքում է: Արդ համադրանքը ամրապնդում է շղթայի կոչումը մինչև Անսահմանություն:

216. Մագնիսի լարվածությունն է հաստատում կրակի որակը: Ոգու մագնիսն է պայմանավորում այն աստիճանը, որը կարող է դրսևորվել: Երբ ոգին կարող է հաղորդ լինել բարձրագույն ոլորտներին, նա ընկալում է տիեզերական մագնիսի հոսանքները: Նույն այդ ոգու հաստատված կրակը կանխորոշում է մոլորակի կրակները: Անշուշտ, մոլորակի կրակների կանխորոշման մասին խոսելիս Մենք նկատի ունենք սոսկ այն կրակը, որն ընկալվում է մարդկության կողմից: Առաքումների ու ընկալման միջև չկա համապատասխանություն, այնքան որ մեծ են այլ ոլորտների չափումները: Ուստի ռասայի համախմբման ժամանակ խիստ դժվար է միավորել: Ռասաները հաստատվում են որպես նոր ուժերի հոսք, և եթե հունը էվոլյուցիոն շարժումով հավերժական է դարձել, ապա ամեն մի նոր հոսք ունի իր տիեզերական ձայներանգը:

Արդ տիեզերական մագնիսն անսահման է իր ստեղծագործության մեջ:

217. Կենտրոնները բոցավառվում են նույն սկզբունքներով: Ոգին ստորին ոլորտներում չի կարող բոցավառել բարձրագույն կենտրոնների կրակները: Իհարկե, միայն վերինն է ձգում վերինը, և այնտեղ, որտեղ առկա է սոսկ ֆիզիկական նկրտումը, համապատասխան ընկալում է լինելու: Ագնի Յոգայի ասպարեզ դուրս գալու դարաշրջանում հարկ է գիտենալ բռնի կերպով առաքվող երևույթների սկզբունքը:

Բնության մեջ ևս նկատվում է այն ուղղակի հարաբերակցությունը, որն ունի իր սահմանները: Միայն նրբինն է ընկալվում նրբինի կողմից: Միայն նրբագույնն է ձգտում դեպի նրբագույնը: Այստեղ ևս գործում է մագնիսի սկզբունքը: Ինչպես նուրբ էներգիաների սկզբունքը բնորոշ է ամենաբարձր Ագնի յոգին, այնպես էլ ֆիզիկական ընկալումը հանգեցնում է համապատասխան դրսևորման: Այն ամենը, ինչ բռնի է, ակնհայտորեն ցուցադրվի է, ֆիզիկապես դրսևորված է, զիջում է նուրբ սկզբունքին: Ուստի նոր ռասայի սկզբնակետի հիմքում դրվում է Երկրի վրա դրսևորված, հաստատված կրակի սկզբունքը: Այդ իսկ պատճառով ստեղծագործական համադրումը արթնացնում է գիտակցությունները:

Նոր ռասան ձևավորվում է Ուռուսվատիի Լոտոսի համադրական ստեղծագործմամբ հաստատված կրակի միջոցով: Ամեն մի նոր տիեզերական ուժ փոխանցվում է: Այո՛, այո՛, այո՛: Այդպես անտեսանելիորեն մարդկության կյանք է մուտք գործում նոր ուժը: Արարում է Տարան: Այո՛, այո՛, այո՛:

218. Համաշխարհային հարաբերակցությունն ընդգրկում է տիեզերական մագնիսի բոլոր դրսևորումները: Ստեղծագործությունն ուղեկցվում է բազմաթիվ նպատակաուղղված դրսևորված էներգիաներով, որոնց դեպի իր կողմն է ձգում տիեզերական մագնիսը: Երբ տիեզերական մագնիսը ձգում է էներգիաները որպես մի ուժ, որը հարաբերակցվում է երկրակեղևի հետ, ապա էներգիաների դրսևորումը կայանալու է նրանում, որ մագնիսը հանդես կբերի այնպիսի ուժեր, որոնք կարող է ընկալել մոլորակի կեղևը: Եթե դրսևորումը վեր լիներ մոլորակի ընկալման հնարավորությունից, ապա այդ դրսևորումը ի վիճակի չէր լինի հաստատվել որպես արարող ուժ: Պայթյուններ ու կործանումներ կհաստատվեին մոլորակի վրա: Այդ իսկ պատճառով հրե լարվածությունը մոտենում է այն ժամանակ, երբ մոլորակը վերջնական փոխակերպման կարիք է զգում: Արդ տիեզերական դրսևորումների միջև գոյություն ունի համաշխարհային հարաբերակցություն: Արդ համաշխարհային հարաբերակցությունն է հաստատում գործողությունը և էներգիաների ձգողությունը: Բոլոր էներգիաների միագումարի հաստատումն է տալիս տիեզերական մագնիսի հաստատված բանաձևը:

219. Հարաբերակցությունն այնքան մեծ է, որ կարելի է ասել՝ մեկը հաստատում է մյուսին: Արդ կրակի դրսևորումը հաստատում կտա մոտահաս դրսևորվող ռասային: Արդ իր կրակով Համախմբողը հարաբերակցություն կտա իր դրսևորումներին: Անշուշտ, երբ համախմբող խորհրդանիշը հաստատվել է որպես բարձրագույն լարման կրակի կրող, ապա բոլոր էներգիաները դրսևորվում են որպես բարձրագույն լարվածություն: Արդ հարաբերակցությունը ոգու կրակի և տարածության կրակի միջև նոր կյանք է հաստատելու: Միայն այդպես կարելի է պնդել, որ Տարան ձգտում է մարդկության քավությանը: Արդ անձնուրացության ուղին տանում է ավարտին:

220. Համաշխարհային հարաբերակցությունը հավասարակշռություն է հաստատում, որը նեցուկ է դրսևորումների ողջ շղթայի համար: Ողջ տիեզերական գործընթացի անտրոհելի վիճակը հարաբերակցության ճշտություն է պահանջում: Որքան հզոր, այնքան ավելի նկրտուն է գործում մագնիսը: Որքան աննկուն, այնքան ավելի նկրտուն: Որքան հաստատակամ, այնքան ավելի նկրտուն: Արդ հիմնական մագնիսին բնորոշ ուժերի ներգրավումը պայմանավորված է համաշխարհային գործընթացի հարաբերակցությամբ: Քանի որ գործող ուժն ամփոփված է մագնիսի նպատակաուղղման մեջ, ապա համաշխարհային հարաբերակցության նպատակաուղղվածության շնորհիվ համախմբվում են անհրաժեշտ էներգիաները: Մարդկությունը ձգվում է համաշխարհային

հարաբերակցության մագնիսին բնորոշ այդ նույն գործընթացի միջոցով: Մարդկային բոլոր գործողությունները, լինելով գիտակից գործոն, իրենց հավելյալ ներգործությունն են ունենում համաշխարհային հարաբերակցության վրա: Արդ համաշխարհային հավասարակշռությունը կարող է խախտվել մարդու ազդեցությամբ:

Տեսնենք, թե ինչպես է հաստատվում այդ անհավասարակշռությունը: Պատմական ողջ ընթացքում յուրաքանչյուր դարաշրջանում կարելի է նկատել հանգամանքների այնպիսի մի համառ կամ լարված զուգադիպություն, որի հետևանքը անհավասարակշռության հաստատումն էր:

Ստեղծագործման գործոնը, որը կոչված է որպես տիեզերական հավասարակշռությանը հասնելու շարժիչ ուժ, մշտապես շարժման մեջ է դրվում մագնիսի սկզբունքով: Միայն սկիզբների հաստատումը կարող է հավասարակշռության բերել համաշխարհային հարաբերակցությունը: Մշտապես խաթարող շարժումը անհավասարակշռություն է հաստատում: Ուստի սկիզբները և դրանց մեծարումը լինելու են այն գործոնը, որը մարդկությունը կարող է հաստատել որպես աշխարհի փրկություն:

221. Արդ հարաբերակցությունը հաստատվում է ոչ միայն խմբային նկրտման, այլև անհատ ոգու ազդեցության ներքո: Խմբային նկրտման նախակարապետը բոլոր դեպքերում անհատ ոգին է: Բոլոր այն հոսանքները, որոնց մարդկությունն ուղղել է գոյության գիտակցական դրսևորմանը, հագեցված են եղել անհատ ոգու կողմից: Արդ ռասան Համախմբողի ոգու ստեղծագործությունը մշտապես նպատակաուղղում է հոսանքը սոսկ իր համադրանքի շնորհիվ:

Ագնի յոգը հանդես է բերում բարձրագույն հավասարակշռություն, քանզի իր ոգու անձնուրաց ստեղծագործությունը հանգեցնում է համաշխարհային հարաբերակցության հավասարակշռմանը: Այդ իսկ պատճառով կենտրոնների անհավասարակշռվածությունն ու անհամաձայնեցվածությունը հավասարակշռության են բերվում: Ուսմունքը շարունակ պնդում է այդ նուրբ տարբերությունների մասին, հետևաբար հաջորդ աստիճանին հասնելու համար անհրաժեշտ է ըմբռնել անհավասարակշռությունը ցածրակարգ դրսևորումներում և ներդաշնակությունը՝ բարձրագույն դրսևորումներում:

Երբ Մենք հանձնարարություն տվինք՝ առաջնորդելու մարդկությանը դեպի նոր աստիճան, ապա Մեր կրակները կրողի՝ Ուռուվատիի դրսևորումը այնքան բարձր է, որ ցանկացած ոգեմիջնորդական դրսևորման հետ համեմատելը նման կլիներ հրեղեն գավաթի մեջ հայտնված մի կաթիլ պղտոր ջրի: Ուստի կասեմ. «Վսեմ կրակների հանդեպ ըմբռնում հանդես բերելը թույլ կտա հասնելու անեղծ կրակի բարձրությանը»:

Հուր կրակների Գավաթը կրողը նոր աստիճանի կբարձրացնի մարդկությանը:

222. Տիեզերական մագնիսի ամենազորությունը համապատասխանում է տարածության հոգեդինամիկային: Էներգիաների ձգողությունը համապատասխանում է մագնիսի լարվածությանը: Ձգողության սկզբունքի հատկությունը բնորոշ է մարդկային յուրաքանչյուր գործողությանը: Ազդակի նպատակաուղղումը բանաձև կտա վճռորոշ դրսևորմանը, ուստի կարելի է ամրապնդել ամեն մի գործողություն և նրա ձգողության որակը: Բռնի, հարուցիչ գործողությունը, անշուշտ, ձգում է անկայուն գործընթացներ: Մագնիսի նպատակաուղղումն ու ձգողությունը հարաբերակցվում են, ուստի խիստ կարևոր է տիեզերական մագնիսի այն հաստատումը, որը շաղկապում է կայուն ուժերը: Յուրաքանչյուր տատանում առաջացնում է այնպիսի մի վիբրացիա, որը խաթարում է մագնիսի ընթացքը:

Արդ ձգողության որակը պիտի մագնիսականացնի իր հետևանքները:

223. Մարդկային նկրտումների մագնիսականացումը դժվարագույն պայմաններից մեկն է: Տարային ծանոթ է այդ բարդագույն խնդիրը: Տարածության ցեմենտավորումը և սրտի մագնիսի գործողությունները ամենահրեղեն հիմունքներն են: Մեր ստեղծագործությունն այնքան սրընթաց է, որ մագնիսը հաղթահարում է բոլոր խոչընդոտները: Մրրկաձև օղակների նման Մեր ուժը հեռացնում է բոլոր հակազդեցությունները: Ուստի Մենք տեղաշարժ ենք կատարում, և ռասան համախմբվում է: Երկրային կոչման բանաձևի ներքո միավորվում են մարդկային նվաճումը և մագնիսի հոսանքի խաթարումը: Լարված ժամանակներ են: Մենք ընթանում ենք միաձույլ սրտով: Միանգամայն ապարդյուն են մարդկային գործողությունները, եթե ուղղորդված չեն Մեր կողմից:

Բայց, ինչպես ասել եմ, երկնային բոլոր ուժերն անկարող են այնպես համախմբել, ինչպես մեկ մարդկային սխրանքը: Եվ Ես, և դու Երկրի վրա ենք: Ի՞նչ եղանակով ենք մագնիսականացնելու և ուղղորդելու մարդկային գիտակցությունը: Սակայն Ինձ թվում էր, որ շատ ավելի դյուրին է հոգեպես ներգործել և մագնիսականացնել՝ գտնվելով խտացված աստրալ թաղանթի մեջ: Մենք կօգտագործեինք այդ միջոցները, եթե երկրային հոսանքները լիցքաթափվեին:

224. Երբ ժողովուրդները սկսեցին ձգտել դեպի անհավասարակշռության սկիզբը, հաստատվեց ինքնաոչնչացման սկզբունքը: Եվ ինքնաոչնչացմանը կարելի է հակազդել միայն հավասարակշռություն հաստատելու միջոցով: Մարդկությունը չի համաչափում ստեղծագործման

սկզբունքը, և որպես հետևանք՝ խախտում է գոյի հիմունքները: Երբ **տիեզերական մագնիսի օրենքին** համաձայն՝ գոյություն ունի ստորինի ենթակայություն բարձրագույնի նկատմամբ, ապա դա վերաբերում է սոսկ այն էներգիաներին, որոնք իրենց էությամբ պիտի փոխակերպվեն: Բայց երբ սկիզբները կոչված են կենսարար ստեղծագործմանը, ապա չեն կարող մարդիկ դուրս մղել սկիզբներից մեկը առանց ինքնաոչնչացման: Ուստի երբ մարդկությունը ըմբռնում հանդես բերի երկու սկիզբների հաստատման նկատմամբ, նա կձգտի գիտակցված զարգացման: Այս երկու սկիզբներից զուրկ բոլոր սկզբունքները կարող են սրել անհավասարակշռվածությունը: Մարդկությունը պիտի հասկանա տիեզերական մագնիսի օրենքը: Կարելի է մեծ առաջընթաց դրսևորել էվոլյուցիայի շղթային միանալու ուղղությամբ՝ երկու սկիզբների՝ որպես գոյի հիմքի վեհությունը գիտակցելու շնորհիվ:

225. Տիեզերական մագնիսը միացնում է իրար սկիզբների բևեռները կենսարար ուժ առաջացնելու համար: Եթե բևեռները չեն համապատասխանում մագնիսի ձգողությանը, ապա տեղի է ունենում էներգիայի կլանում: Բազմաթիվ են օրինակները, երբ կլանումը զարգացնում էր այնպիսի կլանիչ ուժ, որը քայքայում էր հյուսվածքները: Բազում կործանումներ ու հիվանդություններ են առաջացել այդպիսի անհավասարակշռության պատճառով:

Մարդկությունն իր նվաճումն է արարում իր նկրտումով: Երբ ոգին ելք է փնտրում՝ չգիտակցելով իր նկրտումը, ապա, անշուշտ, հազվադեպ կարող են հասանելի լինել այդ բարձր նվաճումները: Ուստի Մենք հագեցնում ենք տարածությունը անեղծ կրակի կանչով: Այնքա՜ն իմաստուն և այնքա՜ն հրաշալի է գոյի գեղեցկությունը: Բոլոր մեծ սկզբունքները ենթակա են չափմանը բարձրագույն չափանիշներով: Եվ բոլոր ստեղծագործական սկզբունքները չափվում են բարձրագույն չափանիշներով: Ամեն բարձրագույնը բարձրագույնով է չափվում: Այո՛, այո՛, այո՛:

226. Հավասարակշռության հաստատումն այնքան է գերազանցում մյուս բոլոր երևույթները, որ մագնիսը խիստ նպատակաուղղված ձգողություն է հանդես բերում այդ հավասարակշռության համար: Ողջ Տիեզերքում գոյություն ունեցող ռիթմը մատնանշում է այդ սկզբունքը, որով ղեկավարվում են բնության բոլոր դրսևորումները: Շինարարությունը հանգում է այդ վսեմ օրենքին: Հնարավո՞ր է արդյոք չգիտակցել բնության գործընթացը: Կյանքի կառուցման գործընթացում այդ նույն սկզբունքն անխուսափելի է: Թե՛ ռիթմը, թե՛ պայթյունները, թե՛ մագնիսական ձգողությունը – բոլոր այս ուժերը պիտի վերածվեն հավասարակշռման սկզբունքի:

Երբ ասպարեզից հեռացող ռասան բռնեց **սկիզբների օրենքը** խախտելու ուղին, ապա նոր ռասան տիեզերական հավասարակշռության համար դրսևորելու է նոր ուժի հաստատում: Անշուշտ, տիեզերական մագնիսի սկզբունքն ընթանում է վերընթաց պարույրով, և անհնար է տարանջատել էվոլյուցիոն վերելքների տիեզերական պարույրների վեհությունը: Երբ նոր ռասան սկզբին հատուկ ուժի հաստատում դրսևորի, այնժամ և, ճշմարիտ, հաստատվելու է տիեզերական հավասարակշռությունը:

227. Մենք՝ մարդկության Եղբայրներս, անզիջում պայքար ենք մղում հավասարակշռության և Աշխարհի Մոր սկիզբը կենսական գործոն դարձնելու համար: Երբ կամրապնդվի կառուցողական գիտակցությունը, այնժամ հնարավոր կլինի ցույց տալ մարդկությանը կրակի ստեղծարար ուժը:

Մարդկությունն այնպես է խախտել գոյության մագնիսը, որ անհրաժեշտ է նոր կյանքի կառուցում հաստատել: Միայն այդ եղանակով է հնարավոր կանխել այն հոսանքների առաջացումը, որոնք այժմ ագահաբար կլանում են մարդկությանը:

Մենք՝ մարդկության Եղբայրներս, պայքարում ենք տիեզերական մագնիսի և կյանքի սկզբունքի համար: Բարդ ժամանակ է, բայց և նշանակալի ժամանակ: Լարման մեջ՝ գոյի սկզբունքների նկատմամբ մարդկության կողմից դրսևորվող ահավոր անըմբռնողության պայմաններում, Մենք Նոր Պատգամ ենք տալիս: Մենք այդ պատգամին ենք կոչ անում մարդկությանը: Այդ մեծագույն պատգամի մեջ է ամփոփված գոյի սկզբունքը: Այսպես ասենք մարդկությանը. «Մեծարե՛ք սկիզբները, մեծարե՛ք Աշխարհի Մորը, մեծարե՛ք տիեզերական մագնիսի պատգամի վեհությունը»: Այո՛, այո՛, այո՛: Այսպես է ասում Մայտրեյան:

228. Մտորո՞ւմ է արդյոք մարդկությունը համաշխարհային կյանքի հետ ունեցած իր կապի մասին: Համաշխարհային իրադարձությունների հոսքն անշեղ է ու անդադար: Մարդու և համաշխարհային երևույթների միջև գոյություն ունեցող կապը դրսևորվում է որպես մագնիսական երևույթի հարաբերակցություն: Այդ իսկ պատճառով մարդն անկարող է առանձնացնել սեփական անձը՝ որպես ինքնուրույն միավոր ողջ տիեզերական գործընթացից:

Երբ համաշխարհային կյանքն ուղղվեց դեպի տիեզերական ձգողություն, այնժամ դեպի մագնիսը ձգվող բոլոր տարրերը գործում էին որպես կյանքի համար որոշիչ ուժեր: Ուստի փոխադարձ ձգողությունը տալիս է տիեզերական ձգողության բանաձևը: Արդ անդադար ձգում է մագնիսի ներգործությունը, արդ համաշխարհային կյանքը մղում է մարդկությանը դեպի Անսահմանություն:

229. Ագնի յոգը մուտք է գործում համաշխարհային հոսանքի տեմպի մեջ և դրա շնորհիվ ուղղորդում է համաշխարհային մտքի հոսանքը, իր անհատականությամբ է հագեցնում տարածությունը, դրանով իսկ ձգողություն հաղորդում ոգիների՝ նախանշված նոր հաստատմանը: Այնքան բարդ է համաշխարհային ստեղծագործությունը և այնքան միահյուսված է նրբագույն էներգիաների հետ: Տարածական կրակի դրսևորումը մղում է համաշխարհային հոսանքների ստեղծագործմանը: Հրե սկզբունքը ուղղություն է տալիս բոլոր նոր տիեզերական հոսանքներին: Ուստի որպես վեցերորդ ռասայի բանալի՝ դրսևորվելու է միաձուլման հաստատումը: Կյանքի հիմքում դրված հոսանքները նախասահմանում են մի նոր ընթացք: Արդ Մենք հաստատում ենք այդ մեծագույն ուղղությունը: Արդ Մենք համաշխարհային կյանքի մեծագույն, հրաշալի մի աստիճան ենք կառուցում:

230. Էվոլյուցիայի մասին խոսելիս մարդկությունը երբեք հաշվի չի առել, թե ինչ գին է վճարում էներգիան շարժման մեջ դնողն առաջընթացի համար: Սովորաբար պնդում են, որ էվոլյուցիայի առաջխաղացման էներգիան է պայմանավորում առաջընթացը աստիճանից աստիճան: Բայց անհրաժեշտ է մատնանշել հիմնապատճառ հանդիսացող գործողությունը: Տիեզերական մագնիսն իր ուղղությունն ունի, ունի նաև իր նպատակը: Ամբողջ էվոլյուցիոն առաջընթացի մեջ պետք է փնտրել դրա նպատակը, և պետք է գտնել էվոլյուցիայի կենտրոնը: Ոչ միայն վերելքն է ազդակ, այլև էվոլյուցիայի կենտրոնը ողջ տիեզերական գործողության միջուկն է: Իրադարձությունների շղթան կենտրոնանում է այդ միջուկի շրջանում, և քանի դեռ հավասարակշռություն չի հաստատվել մարդու էվոլյուցիոն և ինվոլյուցիոն նկրտումների միջև, անհնար է լինելու հաստատել ավելի բարձր աստիճանը:

Էվոլյուցիայի միջուկն է հավասարակշռություն ստեղծում: Մարդկային մտածողության կենտրոնը խախտում է հավասարակշռությունը: Ուստի բարու և չարի անհավասարակշռվածության ժամանակաշրջանում մարդկությունը հստակորեն պիտի որոշի իր ուղղությունը Սատիա Յուգայի սկսվելուց առաջ: Ուստի հրեղեն կանչը ուղղություն է տալիս մարդկությանը: Էվոլյուցիայի կենտրոնն իր անսահման ընթացքի հիմքում սկիզբների հիմունքն է դնում:

231. Անշուշտ, նոր ռասայի հաստատումը պիտի ուղղվի դեպի էվոլյուցիայի կենտրոնի սկզբունքը: Մոլորակի վրա ներկա ժամանակ դրսևորված անհավասարակշռությունն անխուսափելիորեն առաջացնելու է հետևյալ փոփոխությունը. կամ շարունակել հոգեէներգիայի ներգործությունը, կամ էլ կործանում տեղի կունենա: Ուստի կշարունակվի գոյու-

թյունը, թե ոչ՝ կախված է այդ հաստատված ուժից: Արդ Ագնի Յոգայի մայրը մարդկությանը փրկության գավաթ է բերում: Արդ լավագույն ապագա կառուցելով՝ Արխաթն ու Տարան փրկություն են բերում: Արդ Մենք նոր ռասայի և բարձրագույն միաձուլման աստիճանի հիմքն ենք դնում:

232. Մարդկությանը հատուկ հոգեոգեղեն լծակները կբացեն այն ճշմարտությունները, որոնցով հարուստ է կյանքը: Այդ էներգիաների հոսանքներն ամփոփված են մարդու մեջ, սակայն մատերիայի կոպտությունը թույլ չի տալիս ընկալելու այդ հոսանքները: Վերը նշված հոգեոգեղեն լծակների օրինակով կարելի է հետևել, թե մարդկությունն ինչպես է ընկալում տարածական կրակների հոսանքները: Արդ նվիրական նախանշված դրսևորումները կարող են հաստատվել որպես նկրտումներ հրեղեն ընկալմանը:

Հոգեոգեղեն լծակներն արարում են ամեն մի կենսական դրսևորումը: Եթե մարդկությունը բանականորեն ուսումնասիրեր տիեզերական մագնիսի շարժման օրենքները, ապա, անշուշտ, կընդուներ հոգեոգեղենության երևույթը: Ինչպե՞ս կարելի է ժխտել այն ուժը, որը կենսական ամեն տեսակի ազդակի շարժիչն է: Հոգեոգեղենության մղումն ընդգրկում է Տիեզերքի բոլոր դրսևորումները:

Ճշմարիտ, անխախտ է օրենքը:

233. Ագնի յոգի և տիեզերական դրսևորումների երևույթի միջև գոյություն ունի ուղղակի հարաբերակցություն: Երևույթների կապն այնքան լարված է, որ ուղիղ գիծ է կազմում: Գոյություն ունի նաև ուղղակի կապ Ագնի յոգի և համաշխարհային իրադարձությունների միջև: Նույն եղանակով համաշխարհային միտքն արտացոլվում է Տարայի կրակների դրսևորման վրա: Երբ իր ուժն է դրսևորում համադրանքը, ապա բոլոր տիեզերական իրադարձություններն արտացոլվում են օրգանիզմում, որը տիեզերական ու մոլորակային դրսևորումների լավագույն և ամենավստահելի հաստատողն է: Եթե մարդն իմանա Երկրի վրա բոլոր հրեղեն նշանները, ապա կարժատև է լինելու կյանքը:

Ուռուսվատին զգացել է Երկրից արձակվող էմանացիաները՝ ցնցվելով ծանր մթնոլորտից: Ցնցվում է երկրակեղևը, և միավորման ստեղծագործության մի նոր աստիճան է նախապատրաստվում: Հոգեոգեղեն լծակներն են լինելու վեցերորդ ռասայի առաջմղիչ ուժը: Որքա՜ն սրընթաց են հոսանքները: Կրակները բորբոքվում են իբրև հրեղեն շիթեր: Ուստի Տարայի սիրտը կրում է իր մեջ բոլոր կենսական հոսանքները և արտացոլում է մարդկային բոլոր դրսևորումները:

234. Տիեզերական կրակներին բնորոշ ուժերի ձգողությունը համապատասխանում է արևի ամենաներգործուն ճառագայթներին: Մարդու ստեղծագործության ուժը հավասար է տարածության կրակի ճառա-

գայթներին, ուստի կարելի է ասել, որ մարդու կենսարար ուժը չափվում է նրա ճառագայթումով: Նպատակաուղղված ոգու ստեղծագործման չափումը կարող է ծառայել որպես կշեռք, որը ցույց է տալիս էվոլյուցիային համընթաց կամ հակառակ ուղղությամբ շարժումը: Գործողությունները չափելու միջոցով կարելի է գտնել այսպես կոչված **տիեզերական ճշմարտություններին** բնորոշ սկզբունքների ճշգրիտ հարաբերակցությունը:

Արևի ճառագայթման էներգիայի ձգողությունը հավասարակշռվում է այն բնահողի հետ, որի վրա ընկնում են ճառագայթները: Նույն եղանակով մարդու ոգու վրա ներգործում է տիեզերական կրակների ձգողությունը: Տարածությունը լի է մագնիսներով, և մարդու աուրան բազմաթիվ մագնիսական ճառագայթումներ է կրում իր մեջ: Հաստատապես պարզ է, որ Տիեզերքն արարում է մագնիսի միջոցով, և ձգողության ուժը մարդուն կյանք է տալիս: Ստեղծագործության հիմքում դրված է այս սկզբունքը: Անխախտելի օրենք է սա:

235. Սկզբնաղբյուրը տիեզերական մագնիսի էներգիայի ստեղծագործական ազդակն է: Ազդակը ծնվում է տարածության մեջ, և օրենքի խախտման հետևանքը կործանումն է լինում: Գոյության ազդակին ծնունդ տվող սկզբնաղբյուրը ղեկավարում է ողջ տիեզերական կրակի հոսքը: Ուստի տիեզերական բոլոր երևույթների հիմքում կրակի դրսևորումներն են: Մի կաթիլն անկարող է խաթարել հոսանքը, ուստի սոսկ տիեզերական մագնիսի գիտակցական ընդունումը կարող է մղել ոգուն՝ հաղորդակից դառնալու նրբանուրբ էներգիաների հոսանքներին:

Տիեզերական շինարարությունը եռանդագին նպատակաուղղված է հաղորդակցմանը նրբագույն էներգիաների և աներևույթ կրակի ամեն տեսակի գործընթացների հետ:

236. Հոգեոգեղենությունը տիեզերական մագնիսի բոլոր դրսևորումներին բնորոշ հատկություն է: Հոգեոգեղենության դրսևորումների անսահմանությունը տիեզերական աշխարհներ է արարում: Առանց էվոլյուցիայի լայն ըմբռնման անհնար է հաստատապես ընդունել գիտակցության մեջ տիեզերական մագնիսի ստեղծագործությունը: Գիտակցությունն այնքան հաճախ է հաստատում տիեզերական մագնիսի լծակը, որ դժվար է չընդունել այդ լծակի դրսևորումները: Պատճառական սկզբունքն է ազդակ տալիս կյանքին և հոգեոգեղենության էներգիայի զարգացմանը: Կենսական ազդակի հիմքը հաստատում է հոգեոգեղենությունը, և ձգողությունն առաջացնում է պատճառական սկզբունքի հետ հարաբերակցման երևույթը: Արդ հոգեոգեղենության հիմքը հաստատում է կենսական ազդակը:

Երբ սկիզբները կամրապնդվեն մարդկության գիտակցության մեջ որպես տիեզերական մագնիսին բնորոշ ուժերի հավասարակշռում, այնժամ կյանքը կհաստատվի իբրև մեծագույն օրենքի հետևանքի դրսևորում:

237. Հոգեոգեղենության դրսևորումը զարգանում է տիեզերական մագնիսականացմանը զուգընթաց: Երբ ոգին ի վիճակի է ընկալելու բարձրագույն ոլորտների կրակները, այնժամ նա տիեզերական կրակների մագնիսականացում է դրսևորում: Հոգեոգեղենությունը շարժման մեջ է դնում բոլոր էներգիաները և սահմանում է բոլոր հարաբերակցությունները: Ոգին և իր դրսևորած կրակները հարաբերակցվում են: Յուրաքանչյուր գործողություն, լինելով որոշ պատճառի հետևանք, արտացոլում է ողջ հոգեոգեղենության էությունը, ուստի Ագնի յոգը հաստատվում է որպես ուղիղ կապ հեռավոր աշխարհների հետ: Անխախտելի է հրեղեն համադրանքի գործողությունը, ուստի Մենք ասում ենք, որ բարձրագույն աշխարհների հոսանքների երևույթը կարող է փոխանցվել միայն բարձրագույն կրակների հոսանքներով:

Գոյություն ունի այսպես կոչված *փոխանցում* հեռացած ոգիների թաղանթների միջոցով, բայց միշտ անհրաժեշտ է պնդել, որ ցածրակարգ դրսևորումը ստորինն է ձգում: Ուստի Մենք հաստատում ենք, որ կրակը բարձրակարգ է, և որ փոխակերպումը տեղի է ունենում ամենաբարձր կետում: Արդ նվիրական կրակի Գավաթը Մեր կրողը բոցեղեն մաքրագործում կտա մոլորակին: Արդ հոգեոգեղենության ստեղծագործությունն ուղղված է կառուցելու մի նոր աստիճան: Երբ տիեզերական մագնիսական ուժը հաստատի կրակների դրսևորումը, այնժամ կարելի կլինի ասել, որ մոտահաս է նոր ժամանակը: Ես հաստատում եմ:

238. Հոգեոգեղենությունը երկրային ոլորտում կարող է երևան գալ կրակի միջոցով՝ որպես բարձրագույն ոլորտի դրսևորում: Ագնի յոգը կապ է հանդիսանում մոլորակի և բարձրագույն աշխարհների միջև: Նախանշված էներգիաները Երկիր բերելու գործը հանձնարարվում է լոկ այն ոգուն, որը կարող է դրսևորել բարձրագույն կրակները: Որքան անսահման են ոլորտները և կրակների դրսևորում բերող հոսանքները:

Ագնի յոգը, արդարև, ապրում է երկու աշխարհներում: Ագնի յոգը, արդարև, խորասուզվում է անտեսանելի ոլորտներ: Միայն ճշգրիտ հետազոտությունները կարող են հանգեցնել նրբին հաստատումների: Ուստի անեղծ կրակի գրավիչ մագնիսն է խոյացնում Ագնի յոգին բարձրագույն ոլորտներ: Ուստի անեղծ կրակի սկզբունքն է պայմանավորում հարաբերակցությունը տեսանելի ու աներևույթ աշխարհների միջև:

239. Այս կարգի երևույթների ժամանակ տեղի ունեցող կոպիտ նյութականացման պատճառը մարդկությունն է, որը ձգտում է նման դրսևորումների՝ տեսողության համար անմատչելի ոլորտներ թափանցելու համար: Խտացված տարածական դրսևորումների ձգողության գործընթացը պայմանավորվում է մարդու դրդումով: Իհարկե, ձգտելով խտացնել գոյաձևը՝ նրան տեսանելի դարձնելու համար, մարդը կորցնում է իր բարձրագույն նկրտումը, այդ իսկ պատճառով բարձրագույն գործընթացը կրակների ներգործությամբ կատարվող փոխակերպման գործընթացն է:

Կենսական գործընթացի կրակը մարդկության շարժիչն է, ուստի Մենք շատ բարձր ենք գնահատում Ագնի Յոգայի մոր անձնուրացությունը:

Անեղծ կրակի լարման միջոցով իրականացվող փոխակերպման նկրտումն առաջացնում է ամեն տեսակի ստեղծագործական եղանակներ և դրանով վեր է խոյացնում շրջակա ոլորտը: Արդ կրակների լարումը հանգեցնում է նոր աստիճանների հաստատմանը:

240. Մագնիսի տեղադրումը տիեզերական սկզբունքների համար տեղի է ունենում նույնքան օրինաբար, որքան և բուն գործողությունը: Նույն պայմաններով է դրսևորվում մարդկային գործունեությունը: Յուրաքանչյուր դրսևորմանը նախորդող գործողությունը մագնիս է հանդիսանում հաջորդի համար: Ուստի մագնիսի դրսևորմանը նախորդող ստեղծագործությունն այն Սկզբնաղբյուրն է, որը համակում է տարածությունը:

Մագնիսի ստեղծագործությունը մատնանշվել է որպես մարդկային գործողությունների աղբյուր: Այսպես կոչված **անհաջող գործողությունները** պետք է հասկանալ որպես այնպիսի մագնիսի տեղադրում, որը հոսանք չի ստեղծում հետևանք առաջացնելու համար: Եթե մարդկությունը հետևելու լիներ իր կատարած ամեն մի գործողության հոսանքին, ապա, անշուշտ, հնարավոր կլիներ գտնել անհաջողության պատճառը և դրա ուղղակի հետևանքը: Տիեզերական ստեղծագործությունը ուղղակիորեն համապատասխանում է *Աշխարհի Մոր* բոլոր *օրենքների* պահանջներին:

241. Անշուշտ, յուրաքանչյուր գործողության մեջ ամփոփված հետևանքը միանգամայն հրեղեն կերպով է հաստատվում Ագնի յոգի գործունեության մեջ, երբ կրակը սկսում է հուրհրալ նրան բնորոշ երանգով: Հատկապես վառ է հուրհրում համադրական ուժը: Ագնի յոգի էներգիան մղվում է ստեղծագործության տարբեր հուներով՝ որպես փոխակերպող ուժ, որպես համախմբող ուժ, որպես խոյահարող ուժ, որը ճանապարհ է բացում այնտեղ, ուր փակ են բոլոր փականները: Այդպես է հաստատվում Տարայի ստեղծագործությունը:

242. Համաշխարհային էներգիան առնչվում է գոյություն ունեցող ամեն բանի, այդ իսկ պատճառով ստորաբաժանումը նյութականի և ոչ նյութականի տգիտություն է: Արդ կարելի է պնդել ողջ Տիեզերքում գոյություն ունեցող էներգիայի ուժը: Նյութն անկիրառելի է որպես միակ ուժ, քանզի դրսևորման համար անհրաժեշտ են գործող էներգիաներ:

Ճիշտ նույն կերպ անհրաժեշտ են կյանքը առաջ մղող էներգիաները, որոնց Մենք անվանում ենք էության շարժիչներ: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել, թե ինչպես է գործում հոգեոգեղենության էներգիան: Այդ նկրտուն էներգիան նման է աճող զորության, և նպատակաուղղվածության սկզբունքը ներդրված է իբրև հիմնական ուժ:

Մոլորակի վրա մարդկությանը տրված են այնպիսի էներգիաներ, որոնք կարող են տարածական մարմինների կյանք ստեղծել, բայց, իհարկե, նկրտմանը համապատասխան: Արդ նախանշված մարմիններին անհրաժեշտ է նպատակաուղղվել դեպի տարածություն: Աճող զորության բանաձևը տիեզերական մագնիսի նկրտման հիմքն է: Արդ տարածությունը հագենում է տձև գործընթացներով և անսահման նկրտումներով:

243. Ժամկետը լրանալիս չընդունված գոյաձևերը ուղղվում են դեպի այլ ոլորտներ կամ էլ դրսևորվում են որպես, այսպես կոչված, **պատահական տարածական մարմիններ**: Այդ պատահական համակցությունները ձևավորող ստեղծագործությունը սահմանում է համապատասխանության սկզբունք: Բացի այդ, գոյություն ունի ևս մի բարձրագույն օրինական խտացում, որն ուղղորդում է դեպի լավագույն գոյաձևերի շղթա, և այդպիսի շղթաները կազմավորվում են այդ սպասող էներգիաներից: Ստեղծագործությունը դրսևորվում է գոյություն ունեցող ամեն ինչում, և սպասող էներգիաները իրենց կիրառումն են գտնում կամ հաջորդ բոլորաշրջաններում, կամ էլ այլ աշխարհներում և գոյաձևերում:

Արդ Ագնի յոգի հուրը իր գոյաձևերն է ստեղծում՝ փոխակերպելով իր շուրջն առկա ուժերը: Արդ Տարան մղում է հոսանքը և ուղղորդում նոր աստիճանի ձեռակերտ ստեղծագործությունը:

244. Վիբրացիաները երաշխավորում են կրակի դրսևորումների ընդունումը: Երբ առաքվում է ճառագայթը, այնժամ պատասխան նկրտումն ընդունում է տարածական կրակը: Բոլոր տարածական կրակների հոսանքներն արարում են իրենց մարմինները: Տիեզերական վիբրացիան բոլոր էներգիաների նույնականություն է սահմանում: Շատ են խոսում մոլեկուլյար վիբրացիաների մասին, սակայն դրան պետք է ավելացնել, որ թրթռացող տարրերն այնքան շատ են, որ տարածական

կրակը թրթռում է ողջ Տիեզերքում՝ առաջացնելով պատասխան հոսանքներ: Որոշակիորեն կարելի է պնդել՝ ստեղծագործական էներգիային բնորոշ վիբրացիաների հզորությունը համապատասխան է մագնիսի հոսանքի ուժին: Մարդկային բոլոր ստեղծագործական ձեռնարկումներում համահնչում է տիեզերական վիբրացիան, և պատճառական մեկ աշխարհը հստակորեն միահյուսվում է մյուսի հետ. այդպես կարելի է շաղկապել անցյալն ապագայի հետ: Սահմանելով իրականությունը որպես պատասխան վիբրացիա՝ կարելի է բացահայտել կարմայական հարաբերակցությունը:

245. Ագնի յոգը նրբազգացորեն արձագանքում է տիեզերական վիբրացիային: Յուրաքանչյուր վիբրացիան առաջացնում է կենտրոնների բոցավառում: Յուրաքանչյուր նկրտում տիեզերական վիբրացիա է առաջացնում: Այդ հնչումը մենք անվանում ենք **հոգեակտիվություն**, ուստի Ագնի յոգի նկրտումը իրենից ներկայացնում է տիեզերական վիբրացիայի արձագանք, և այդ եղանակով հոգեակտիվություն է հաստատվում: Լարվածությունը բարձրագույն աշխարհներում լարված է իբրև տիեզերական ուժ:

Ուռուսվատին իրավացի է, երբ հաստատում է հոգեդինամիկան: Այսպես կոչված **տիեզերական շունչը** կյանքի կոչող հոգեդինամիկա է: Կյանքի սկզբնավորումը հաստատվում է որպես մատերիա մատրիքսի սահմանած ազդակի էներգիայի հոգեդինամիկա: Արդ բարձրագույն դրսևորումը ձգտում է իր նպատակին: Արդ թելը ձգտում է կառուցման: Մեր ստեղծագործությունը շաղկապված է տիեզերական վիբրացիայի հետ, և Տարայի ճառագայթը հրեղեն վիբրացիա է հաստատում մոլորակի վրա:

246. Տիեզերական վիբրացիան հաստատում է բոլոր ստեղծագործական դրսևորումները: Այդ համահնչությունը հարաբերակցություն է սահմանում աղբյուրի և ընկալման միջև: Հաստատված համահնչությունը հանգուցալուծում է տալիս կուտակված մատերիա լուսիդային, որը ձևավորում է մարդու կողմից դրսևորված մարմինները: Այս եղանակով է հաստատվել ասպարեզից հեռացած ռասաների ժառանգությունը՝ որպես հետևանքների և հաջորդականության դրսևորումների կուտակումներ: Արդ բոլոր ստեղծագործական ուժերը փոխանցվում են վիբրացիաների միջոցով: Կուտակումների համահնչությունը էներգիաներն ուղղում է դեպի հոսանքի, մարմինների ձևավորման հունը: Համահնչության ձգտող մարդը կարող է զարգացնել անհրաժեշտ տոնայնություն: Այդպես է ուղղորդվում համահնչության նկրտումը՝ ստեղծելով անսահման գոյաձևեր:



247. Բարձրագույն համահնչության տոնայնությունը տարածական հոսանքի ընկալումն է: Տիեզերական հաղորդալարը հաստատվում է սոսկ այն դեպքում, երբ նկրտումը հաստատում է ստանում կրակից: Տիեզերական էներգիայի հաղորդալարը ուղեկցում է հաստատմանը: Շիթերը ձևավորում են նախատեսված շղթան, և այդ շղթան ամփոփվում է հաստատված դրսևորման դեպքում: Տարածական գործընթացը վստահվում է միայն բարձրագույն հրեղեն նկրտմանը: Միայն բարձրագույն Ագնի յոգին կարող է մատչելի լինել տարածական հաղորդալարը, և դա է պատճառը, որ միանգամայն զուրկ են ճշմարտությունից ոգեմիջնորդներից ստացված տեղեկությունները: Ուստի անչափ հիասքանչ են Ագնի յոգի նվաճումները:

Կարելի է հաստատել գիտակցությունը, եթե գիտեք, որ տիեզերական վիբրացիան **ստեղծագործական մագնիսի օրենքն** է: Արդ Մենք արարում ենք տիեզերական վիբրացիայի համահնչությամբ:

248. Վիբրացիաների հարաբերակցությունը սահմանում է այն ստեղծագործական ուժը, որը դրսևորվում է տարածական մարմնի տեսքով: Տիեզերական վիբրացիան հարաբերակցվում է ձգողության մագնիսի հետ: Համահնչության էներգիան դրսևորվում է որպես ստեղծագործական լարվածություն: Լարվածությունը համապատասխանում է մագնիսի ստեղծագործությանը: Համահնչությունն իրենից ներկայացնում է երկու սկիզբների լարում: Բևեռականությունը հոգեոգեղենության նախասահմանված ուժն է: Տիեզերական վիբրացիան լարվում է մագնիսի ձգողության ներքո և դրսևորված կրակին բնորոշ էներգիայի հիմքի ներգործությամբ: Արդ բևեռականությունն առաջացնում է փոխադարձ ընկալունակություն: Երբ հոգեոգեղենությունն ուղղորդում է մագնիսի նպատակասլաց ընթացքը, այնժամ կարելի է մղել էներգիան տարածական կրակի հունը: Մարդկային գիտակցությունն ուղղորդվում է դեպի իր նպատակը հոգեոգեղենության հոսանքներով: Այս սկզբունքի ընդունումը հնարավորություն կտա դառնալ էվոլյուցիայի շղթայի համամասնակիցը, չընդունումը կհանգեցնի աղետի:

249. Լավագույն ձեռնարկումների ստեղծագործմանն ուղղված հոգեակտիվությունը բնորոշ է Ագնի յոգի նրբին կրակներին: Երբ ոչնչացվում են լավագույն ձեռնարկումները, մարդկությունը փրկվում է նպատակաուղղված կրակի ստեղծագործման շնորհիվ: Այնժամ մարդկությանն առաքվում է կրակի նախանշված դրսևորումը: Ստեղծագործ կրակի ազդեցությամբ կատարվող վերածնման հետևանքն այն է, որ նուրբ էներգիաները նոր հնարավորություններ են ստեղծում: Նուրբ էներգիաները մղում են բոլոր մարմիններին դեպի նոր ոլորտ: Նուրբ

էներգիաները փոխակերպում են մարդու ստեղծագործությունը, և Ագնի յոգի դրսևորումը նոր նկրտում է հաղորդում: Արդ անտեսանելի և զորեղ մուտք է գործում կյանք Տարայի ստեղծագործությունը: Արդ Տարայի ճառագայթը կանչում է դեպի հեռավոր աշխարհներ: Այո՛, այո՛, այո՛: Այժմ խիստ լարված է ճառագայթի ստեղծագործությունը:

250. Համաշխարհային ձգտումն ուղղված է անդադար դրսևորված փոխակերպման հաստատմանը: Հետևանքների աշխարհը ներքաշում է մարդուն այն հոսանքի մեջ, որը մղում է դեպի նպատակ: Տարածական մարմինների շղթան ձգվում է դեպի գործողության միջուկը, այդ իսկ պատճառով բոլոր անհասանելի ձեռնարկումները կարող են բարձրագույն լարվածության շղթայի մի օղակը դառնալ: Ձեռնարկումները բարձրագույն լարվածություն և համաձայնեցվածության լիակատար արտահայտում են պահանջում: Ինչ խոսք, հետևանքների աշխարհն այնքան սարսափելի է լինում, որ այդ դրսևորումների երևույթը անհամաձայնեցված է թվում: Ուստի ուշադրություն դարձնենք մարդկային ազդակների զարհուրելի շղթային: Այնտեղ, ուր գործում է կենսական ազդակի ուժը, առկա է նաև նկրտումը դեպի տիեզերական մագնիսը: Իսկ այնտեղ, ուր գործում է մի ուժ, որը հարիր չէ տիեզերական մագնիսին, կարելի է ձգտում նկատել դեպի հակառակ հիմքը: Նժարներին դնելով այդ նկրտումները՝ կարելի է հեշտությամբ որոշել հետևանքների աշխարհը:

251. Նկրտումով ստեղծված պատճառների աշխարհով կարելի է դատել հետևանքների աշխարհի որակի մասին: Տեսնենք, թե ինչպես է արարում ու փոխակերպում Ագնի յոգը: Գավաթի հուրը ներկայանում է որպես իր շուրջը եղած բոլոր էներգիաները բոցավառող հոգեդինամիկա: Գավաթի համադրանքն ուղղում է տարբեր աստիճանի բոլոր կրակները՝ հորդորելով կուտակելու ամրիտայի գավաթը: Ոգու հուրն է ուղղորդում բոլոր էներգիաները: Ագնի յոգի ստեղծագործությունը նպատակաուղղված է միանգամայն որոշակիորեն: Արդ Տարան փոխակերպում է գեղեցկությունը: Մարդկությունը ճանաչելու է փոխակերպման ուժը: Գոյության ստեղծագործությունը, արդարև, հիասքանչ է:

252. Էներգիաների հերթափոխությունը տեղի է ունենում միևնույն դրսևորված նյութի լիակատար նոսրացման դեպքում: Էներգիաների համակերպումը նոր մարմնի սկզբնավորմանը հաստատվում է ձգողության միջոցով: Տարրերի հարազատությունն է նպատակաուղղման պատճառը: Նպատակաուղղված տարածական կրակը ստեղծում է այն շղթան, որը նախորոշում է իր ձգողական ուժը: Տարրերի հարազատությունը լարում է ձևավորման նպատակաուղղված սկզբունքը: Այդ սկզ-

բունքի հիման վրա են ստեղծվում բոլոր գործողությունները: Մարդկությունն ուղղվում է դեպի հաստատված կրակի շղթան: Երբ նպատակաուղղված կրակի ներգործության ներքո մարդկությունը հասկանա, թե որն է իր փրկությունը, այդժամ նուրբ էներգիաների հետ հարազատությունը կտա մարդկությանը նոր աստիճան:

253. Հարազատությունը նուրբ էներգիաների հետ լարված է այն ժամանակ, երբ ներդաշնակ է նուրբ էներգիաներ կրողի հետ: Հոսանքը նպատակաուղղված է այն ժամանակ, երբ ամեն ինչ միավորված է կրակի հետ: Դա է պատճառը, որ այդքան սրընթաց է կրակի ստեղծագործությունը: Ստեղծագործությունը ծնունդ է առնում հարազատությանը ձգտելու շնորհիվ: Համատեղ ձգտումը հոգեոգեղենություն է հաղորդում գոյաձևերին:

Միայն ամբողջ հրեղեն գիտակցությանը համապատասխանող և ոգու ու սրտի բոլոր կրակներն իր մեջ ընդգրկող համադրանքը կարող է հաստատել հոգեոգեղենությունը և հոգեկան կյանքը:

254. Տիեզերական մագնիսն է լարում տարածական կրակը: Կառուցումը մղում է տարբեր տիեզերական դրսևորումների: Ձգողությունը լարում է տիեզերական համակցությունները: Արդ էներգիաները վերահսկվում են տիեզերական մագնիսի կողմից: Բոլոր էներգիաների անսահման համագումարը անասելի մի բանաձև է տալիս, և համաշխարհային էներգիան լարում է ողջ էվոլյուցիան: Մարդկությունը ձգտում է տիրապետել կրակի ուժերին, սակայն բարձրագույն դրսևորումը կարող է տրվել լոկ այն ժամանակ, երբ որպես երաշխիք՝ հոգեոգեղենությունն է հաստատվում:

Փորձեր են արվել՝ գտնելու տիեզերական մագնիսի վիբրացիան, սակայն հայտնաբերվել են միայն անհամաձայնեցված հոսանքները: Համաձայնեցվածությունը բացահայտվում է սոսկ նրան, ով հաղորդակից է տիեզերական մագնիսին: Երբ կյանքում հաստատվի դրսևորված ոգու ստեղծագործությունը, այնժամ հնարավոր կլինի մարդկանց տոգորել ամեն տեսակի բարձրագույն էներգիաներով: Նրբանուրբ թելերն այժմ չեն կարող ընկալվել, ուստի՝ կտրուկ վերելք կամ կտրուկ վայրէջք: Մարդկությունն ընկալում է տիեզերական մագնիսի հրեղեն ձգտումով դրսևորված ճառագայթները, բայց միայն գիտակցական ընկալումն է վերելք տալու:

255. Առաքված տարածական կրակը հողմապտույտ շրջապատում է Երկիրը, բայց երկրակեղևն անթափանց է, ինչպես խուլ պատը: Արդ զգացիմացության երևույթի զարգացումը թույլ կտա հասկանալու, թե ինչի համար են այդ էներգիաները: Երբ Մենք խոսում ենք նուրբ էներգիաների հաստատման մասին, ապա նկատի ունենք նրբագույն էներգիաները՝ որպես ոգու ստեղծագործություն:

Ռասայի համախմբման երևույթի հիմքում ոգու ստեղծագործությունն է: Նուրբ էներգիաների սկզբունքն ամփոփված է ոգեղեն միջուկի մեջ, և տարածական հաղորդալարի հետ շփում ունեցող ամեն ոգի հագեցում է ստանում ռասան Համախմբողի կողմից: Արդ Տարայի վիբրացիան արթնացնում է գիտակցությունը՝ ընկալելու հեռավոր աշխարհները: Այո՛, այո՛, այո՛:

256. Տիեզերական մագնիսի անխախտելիությունը դրսևորվում է այն ստեղծագործական շղթաներում, որոնք շաղկապում են անցյալը ապագայի հետ: Ստեղծագործությունը հավասարակշռություն է հաստատում կյանքի դրսևորումների միջև: Կյանքերի տիեզերական շղթան կարգավորում է այն մարդկային դրսևորումները, որոնք տարածականորեն ուղղված են դեպի էվոլյուցիա կամ դեպի հետընթաց: Արդ նկրտման աստիճանը պայմանավորում է մարդկային նվաճումների սահմանները: Արդ տիեզերական առաջընթացի մեջ գոյություն ունի ստեղծագործական, մագնիսական մի շիթ, որը լարված է դրսևորված մագնիսի ուժերով: Արդ գոյություն ունի տիեզերական մագնիսի լարված մի պարույր, որն ամփոփում է իր մեջ կյանքի բոլոր դրսևորումները: Բոլոր դրսևորումների միավորման օրենքի անխախտելիությունը Տիեզերքի ստեղծագործության մագնիսն է:

Մարդկանց դրսևորած գործողությունների հոսանքները երբեք չեն ոչնչանում, և սրա հետևանքն են **ստեղծագործական սկիզբների ձգողության** սկզբունքները: Մարդկային բոլոր գործողությունները հաստատվում են այս *օրենքի* կիրառումով:

257. Այս օրենքն է ընկած դրսևորված տիեզերական ուժերի հիմքում: Երբ մագնիսականացումը ձգտում է հաստատում դեպի էվոլյուցիա, այնժամ կարելի է ասել, որ ստեղծագործությունը, հանդես բերելով ձգողություն, արարում է մագնիսականացման շնորհիվ, որը հարաբերակցվում է արդեն իսկ ներդրված ուժի հետ: Արդ դարեր շարունակ դրսևորվող մագնիսականացումն արարում է ապագա էներգիան: Արդ կյանքերի մագնիսականացումը անխախտելիորեն հանգեցնում է ժամկետների:

Պատճառների աշխարհը ստեղծագործական ազդակ է, ուստի կարելի է ասել, որ կյանքերի միահյուսումն անխախտելիորեն տանում է ավարտման: Հազարամյակներով է ձևավորվում մագնիսը: Արդ անխախտ օրենքը միավորում է: Ճառագայթափայլ մի ոլորտ գոյություն ունի աշխարհների միջև, դեպի այդ ոլորտն ենք սլանում, երբ հաստատվում է մագնիսը:

258. Ճառագայթների կառուցողական ուժը պայմանավորված է տարածության կրակների հետ բոլոր էներգիաների միավորմամբ: Եթե բաղդատելու լինենք ճառագայթը էլեկտրոնների, ապա կարելի է նրա

մեջ գտնել բոլոր այն տարրերը, որոնք պարունակվում են տիեզերական, դրսևորված, համաշխարհային ճառագայթի մեջ: Տիեզերական ճառագայթի ստեղծագործությունը կայանում է էներգիաների ներգրավման ու տարրալուծման մեջ: Եթե հնարավոր է առանձնացնել ճառագայթից մոլեկուլների տարրերը, ապա կարելի է ընդունել դրանց ձգողությունը: Ուստի անհրաժեշտ է համապատասխանեցնել ընկալման ուժերը: Սոսկ երկկողմանի ձգողությունը անհրաժեշտ լարվածություն կստեղծի: Էներգիաների անհամաձայնեցվածության դեպքում տեղի է ունենում պայթյուն: Բոլոր քաոսային դրսևորումները ոչ այլ ինչ են, եթե ոչ անհամաձայնեցվածություն: Ուստի կարելի է ասել, որ տիեզերական ճառագայթի լարվածության ուժը ձգվում է դեպի Երկիր, սակայն պատասխան վիբրացիա չի ստանում: Այս հիմունքով են ձևավորվում բոլոր ստեղծագործական դրսևորումները: Տիեզերական ճառագայթի հաստատումը լարում է ողջ գործունեությունը:

259. Այս պատասխան վիբրացիան է պայմանավորում կենտրոնների բոցավառումը: Երբ տիեզերական ճառագայթը լարվում է, պատասխան վիբրացիան իր կողմն է ձգում համապատասխան կրակը: Ստեղծագործությունը մշտապես լարում է կենտրոնները: Երբ վիբրացիայի ուժը վերականգնում է կենտրոնների հարաբերակցությունը, այնժամ համաձայնեցվածություն է ստեղծվում: Անհնար է որոշել հարաբերակցությունը, երբ պատասխան վիբրացիան բացակայում է:

Ագնի յոգի ստեղծագործության հիմքում ձգտումն է դեպի վիբրացիան: Կենտրոնները թրթռում են՝ նման նրբագույն նվագալարերի: Ամեն ինչ երգում է դրանց վրա, ամեն ինչ հնչում է ու փոխակերպվում: Երբ Մեզ՝ մարդկության Եղբայրներիս, հարկ էր լինում ընկղմվել մարդկանց էմանացիաները, Մենք ուժգին հոսանքների ազդեցություն էինք զգում: Ուստի կրակների դրսևորումը սաստիկ լարում է բոլոր կենտրոնները: Նուրբ էներգիաներն ամփոփված են Գավաթի կենտրոնում, այդ պատճառով էլ զգացվում են ամեն տեսակի փոփոխությունները: Կարելի է հաստատել, որ Ագնի յոգի կրակներից ծնունդ առնող հոսանքները նվագարան են տեղի ունեցող ամեն բանի համար՝ լինի դա դրսևորված թե չդրսևորված:

260. Կամային հոսանքները կարող են խթան տալ մարդկանց՝ նպատակաուղղվելու բարձրագույն ոլորտներ: Հոսանքները կարող են փոփոխել բոլոր իրադարձությունները: Երբ հոսանքի ուրվագիծն ուղղված է դեպի բարձրագույն ոլորտներ, այնժամ ոգին պիտի ուղղի իր կամային հոսանքները՝ գտնելու ուղին: Փոփոխության հետևանքը նոր ռասայի հաստատումն է լինելու: Կամային հոսանքները նպաստում են նոր ռասայի զարգացմանը:

Երբ ոգու մեջ առկա է ձգտումը դեպի գիտակցական ազդակ, այնժամ դրսևորվում է լավագույն գոյաձև: Հոսանքների անհամաձայնեցվածության հետևանքը գոյաձևի անհամապատասխանությունն է: Տիեզերական մագնիսը նման է գիտակցաբար գործող անխախտ օրենքի:

Կամային հոսանքների ձգողությունը համաձայնեցվածություն է հաղորդում ստեղծագործությանը և տարածական կրակներին: Տարածական կրակներն են ուղղորդում բոլոր հոսանքների հոսքը: Էներգիայի նկատմամբ ընկալունակ լինելու դեպքում կարելի է ընդունել կամային հոսանքները. այդպիսով ուժերը համաձայնեցվում են տիեզերական մագնիսի հետ: Տարածական կրակների երևույթը կբացի մարդկության համար Անսահմանություն տանող բոլոր ուղիները:

261. Լարված Ագնի յոգի կամային հոսանքներն արարում են էվոլյուցիայի ընթացքին համապատասխան: Երբ այս կերպ ընկալվում են կրակներին հատուկ ուժերը, այնժամ կարելի է ասել, որ առաքված կրակները փոխակերպվում են տիեզերական կրակի ներգործությամբ:

Կարելի է հետևել, թե ինչպես են արարում Ագնի յոգի կամային հոսանքները: Նկրտումը ուղղում է հոսանքները՝ փոխակերպելու տարածության կրակը: Տարածական կրակն այնքան սրընթաց է, որ փոխակերպման հաստատումն անխախտելի է: Արդ Մենք ուժեր ենք մղում գիտակցությանը: Արդ արարում է Տարան: Մոտենում է լավագույն ճակատագիրը: Ես հաստատում եմ:

262. Մագնիսական հոսանքները ձգտում են միավորվելու: Մագնիսի ստեղծագործությունը ժողովում է տիեզերական հոսանքների շիթերը: Երբ վերերկրային ու ստորգետնյա հոսանքները հարաբերակցվում են, այնժամ այդ հոսանքները ներդաշնակվում են ճիշտ այնպես, ինչպես վերերկրային ու երկրային ոլորտները: Երբ մարդկանց գործողությունների շնորհիվ կհաստատվի ոլորտների ձգողությունը, այնժամ հնարավոր կլինի տիեզերական մագնիսի վրա հիմնված ներդաշնակեցում հաստատել: Երկրի վրա տեղի ունեցող բոլոր փոփոխություններն ու հեղաշրջումները պայմանավորված են ոլորտների հոսանքներով: Ինչպե՞ս կարող ենք բացառել տարածության կյանքը, երբ այդքան լարված են բոլոր հոսանքները: Չէ՞ որ մի բևեռից բխող հոսանքները կարող են միայն կործանարար լինել: **Հոգեդինամիկայի օրենքները** փոխադարձ հաստատում են դրսևորում:

263. Անշուշտ, հրեղեն ոգու հոգեդինամիկան լարում է իր շուրջը գտնվող բոլոր ուժերը: Սոսկ ոգու ձգողությունը կարող է գիտակից նկրտում առաջացնել: Սոսկ սրտի ձգողությունը կարող է համահնչություն առաջացնել: Սոսկ Գավաթի ձգողությունը կարող է գիտակցական

ստեղծագործություն առաջացնել: Սոսկ համադրանքի ձգողությունը կարող է գիտակցական կառուցման խթանիչ լինել: Արդ Ագնի յոգի կենտրոններն են ստեղծում տիեզերական մագնիսի ստեղծագործությունը: Անշուշտ, Ագնի յոգը համամասնակիցն է բոլոր այն հոսանքների, որոնք լարում են ողջ ուժերը: Անշուշտ, բարձրաստիճան Ագնի յոգն անխոնջ է ոգով արարելիս: Հոգնածության և շատ դեպքերում թախծի պատճառը ոգու բաժանելիությունն է: Հաճախ հոգեպես արարում է Ագնի յոգի կենտրոնների լարումը: Հրաշալի մի գիրք կարելի է գրել ոգու բաժանելիության մասին: Ագնի յոգի ոգին բազում տիեզերական գաղտնիքներ գիտի:

Չէ՞ որ այնքա՜ն դանդաղ է էվոլյուցիան: Չէ՞ որ անհրաժեշտ է հիմնովին վերաիմաստավորել գործողության հասկացությունը: Միլիոնավոր մարդիկ քնած են գործողություններ կատարելիս:

264. Տարածության կրակի փոխակերպումը հաստատում է բոլոր տիեզերական գոյաձևերը: Բարդությունը հաստատվում է որպես լարված պարույր: Տիեզերական մագնիսը լարում է պարույրի հոսանքները: Արդ փոխակերպման հատկությունը կախված է փոխակերպող էներգիայի ձգողությունից: Տարածության կրակները կամ ոգու կրակներն են հաստատում այդ անսահման շղթան: Այդ հատկությունների զարգացումը կախված է դրսևորված, հաստատված ազդակից: Եվ ստեղծագործական ուժը դրսևորված ամենաչնչին իսկ նկրտման համապատասխան հետևանքն է: Արդ ստեղծագործական ուժի ձգողությունն է կյանք տալիս գոյաձևին: Անխախտելի է **ստեղծագործական էներգիայի օրենքը**, և գոյի խորհրդանիշը կարելի է սահմանել որպես ձգողություն: Ուստի տիեզերական մագնիսը գործում է ամենալարված ձգողության միջոցով:

265. Ճառագայթների միջոցով ձգողությունը ամենահզոր ներգործություն ունեցող մագնիսն է: Ոգու ստեղծագործության հիմքում ընկած է ճառագայթների ձգողությունը: Տիեզերական մագնիսի և ճշմարիտ նկրտման ճառագայթները կարող են ստեղծել նրբանուրբ էներգիաներ: Ճառագայթների միջոցով իրականացվող ստեղծագործությունը փոխակերպում է գոյաձևերը՝ ստեղծելով բարձրակարգ գոյաձևեր: Ճառագայթների ուժը կարող է ներգրավել ցանկալի հոսանքները: Երբ ճառագայթներ ընդունելը բնորոշ է դառնում կենտրոնների համար, միայն այդժամ հոսանքները հնչում են անխախտելի համահնչությամբ, այդժամ ձգտումը փոխադարձաբար լարում է նրբագույն էներգիաները: Ոգու և սրտի համահնչությունը, ճշմարիտ, հասնում է մատերիա լուսիդայի համադրմանը:

266. **Կյանքի միասնականության** մեծագույն **օրենքը** միավորում է ողջ գոյը: Տիեզերքում գոյություն ունեցող կյանքի միասնականությունն արտահայտվում է որպես հրեղեն ազդակ: Հոգեդինամիկան հաստատվում է որպես տիեզերական շնչառության միավորիչ ուժ: Այդ ուժի ստեղծագործությունը գոյաձևերի լարում է ստեղծում: Հոգեդինամիկայի հոսանքներն իբրև տարածական կրակ ուղղորդում են գոյություն ունեցող ամեն բան: Տիեզերական շունչը ուժեր է ծնում գոյաձևերի ստեղծագործական գործընթացի համար: Անսահմանափակ բնույթ կրող գոյությունը կարող է հաստատվել որպես Անսահմանություն: Բոլոր էներգիաների ամբողջության հոսանքներն են կազմում տիեզերական մագնիսի բանաձևը: Միասնական կյանքն իր դրսևորված ուժով տալիս է իրար հետ շաղկապված դրսևորումների մի շղթա: Շաղկապող անսահման գործընթացը հաստատվում է որպես ստեղծագործական լարում: Կյանքի շաղկապող տարրը մագնիսի սկզբունքն է: Ամեն ինչում կգտնենք նրա անսահման զորության դրսևորումը:

267. Ագնի յոգի հրեղեն ընկալումները վառ կերպով արտահայտում են հրեղեն կենտրոնների տարրերի միասնությունը: Երբ անտեսանելի աշխարհը դրսևորում է լարված ուժեր, այնժամ կապ է հաստատվում բարձրագույն ոլորտների երևույթների հետ: Երբ անտեսանելի աշխարհն արտացոլվում է Ագնի յոգի կրակի նրբագույն էներգիաներում, այնժամ կապը բարձրագույն աշխարհների հետ բացահայտ է: Այդ իսկ պատճառով Ագնի յոգի նկրտման ստեղծագործությունը պարուրվում է մատերիա լուսիդայով: Պրիզմատիկ նկրտումը լարված Ագնի յոգի ոգու զրահն է: Ոգու ընկալումը հաստատվում է պրիզմատիկ ճառագայթի միջոցով: Արդ ոգու ճառագայթն արտացոլում է հրե երևույթներին հատուկ վիբրացիաների բոլոր դրսևորումները: Այդպես հաստատվում է բարձրագույն պրիզմատիկ ընկալումը: Ուղղորդող Տարան տեսնում է գործընթացի սկզբնավորումը և նրա ավարտը:

268. Տիեզերքի բոլոր դրսևորումները հաստատում են, որ անխուսափելի է **փոխակերպման օրենքը**: Երբ տարրերի զուգորդումն արարում է իր բանաձևերը, այնժամ շատ հզոր է փոխակերպման լարվածությունը: Կյանքը հոգևոր ու ֆիզիկական ուղղություններով այնքա՜ն լարված է՝ ներքաշելով կենսական էներգիաները կամ արտաշնչելով բանեցրած էներգիաները: Փոխակերպումից առաջացած էներգիաները արարում են տարրերի կյանքը: Փոխակերպման էությունը զարգանում է տարբեր տիեզերական էներգիաների հիմքի վրա: Փոխակերպման ժամանակագրությունները հաստատում են տարածության կրակի վրա հիմնված էվոլյուցիայի զորությունը: Կենսական ազդակի էությունը հաստատվում

է որպես հրե փոխակերպում: Մենք՝ մարդկության Եղբայրներս, հաստատում ենք, որ տիեզերական մագնիսը միավորում է բոլոր էներգիաները: Այնտեղ, ուր անտեսվում են սկիզբները, կործանումն է գերակշռում: Ո՞րն է վերջը, ո՞րը՝ սկիզբը: Այս բանաձևով կարող ենք ավարտել՝ ասելով. «Համահնչության անսահման շղթայի մեջ»:

269. Անսահման համահնչության մեջ է ամփոփված ողջ տիեզերական ստեղծագործությունը: Միայն համահնչությունը կարող է մատչելի դարձնել բարձրագույն ոլորտները մոլորակի համար: Միայն համահնչությունը կարող է հաստատել դեպի հեռավոր աշխարհներ ուղղված նկրտումների շղթան: Հեռավոր աշխարհների հասկացությունն անհրաժեշտ է կիրառել ողջ կատարելագործման նկատմամբ: Այդ պատճառով էլ այնքան զորեղ են Մեր համահնչությունները: Կենտրոնների կրակը համահնչություն է: Ոգու հուրը համահնչություն է: Սրտի բոցը համահնչություն է:

270. Նկրտման ու հետևանքի համապատասխանությունը որոշակիորեն հաստատում է այն գոյաձևը, որը բարձրագույն լարվածություն է: Նկրտման հետ ձգողության համահնչությունը կարող է երևան բերել այնպիսի մի բանաձև, որը համապատասխանում է տարածության կրակի վիբրացիայի ուժին: Բովանդակումն ու դրսևորումը հարաբերակցվում են: Ուստի դրսևորման համար գործադրված ուժը համապատասխանության երևույթ է ստեղծում:

Եթե մարդկությունը հասկանար, որ սոսկ ստեղծագործությունն է հագեցնում տարածությունը, ապա նա գիտակից կրակից սաստկացած նկրտում հանդես կբերեր: Միայն այսպիսի մեծություն պիտի քաղել տիեզերական մագնիսի ստեղծագործությունից: Սոսկ լարված հոսանքները՝ իբրև տիեզերական լարեր, կբանաձևեն Անսահմանության դրսևորված մագնիսը:

271. Ստորերկրյա ոլորտները համապատասխանում են այն ամենին, ինչը ծնունդ է առել մարդկությունից: Ամեն գործողություն, ամեն միտք իր սաղմնային միջուկն ունի: Դեպի այդ միջուկներն են ձգվում բոլոր համապատասխան տարրերը: Ուստի այն ամենը, ինչ ծնում է մարդկությունը, միանգամայն համապատասխանում է երկրային մտքերին: Այդ պատճառով էլ ստորին ոլորտները նմանեցնում են խավար նկրտումներ: Դուք տեսել եք երկրից ծնունդ առածը, տեսել եք քարացած հսկաներին, որոնք խորհրդանշում են մարդկության նկրտումը: Մարդկության ծնունդ հանդիսացող ոլորտը բաժանվում է շերտերի, և այցելությունը նման ոլորտներ ենթադրում է հրեղեն զրահապատման կիրառում: Ստորերկրյա ոլորտները մարդկային մտքերի արտահայտումն են: Ոգու զորեղ

հուրը մուրճ է ջախջախիչ: Ոգու նկրտման կրակը կարող է կերպարանափոխել Տիեզերքը: Ուստի մուրճի խորհրդանիշը նոր լարումների զարգացում է: Քանդվում են երկրային նեցուկները, և նոր հիմք է դրվում:

Քո կրակի ուժը, Ուռուսվատի, կարող է, հիրավի, ստեղծել նկրտումը մարդկության:

272. Տիեզերական մագնիսի հեռացող հոսանքները ուղեկցվում են էներգիաների նվազեցմամբ: Երբ լարումն ուժեղանում է մեկ բևեռում, այնժամ բազմապատկվում է էներգիայի ներհոսքը: Հոգեկան հատիկները կուտակվում են մագնիսի նպատակասլաց լարման շնորհիվ: Բոլոր կամային հոսանքները համապատասխանում են մագնիսի լարվածությանը: Մարդու կամքն արձագանքում է հոգեէներգիայի հոսանքներին: Երբ հոգեկան հատիկները ցաքուցրիվ են ողջ տիեզերական հորիզոնով, այնժամ կարելի է պնդել, որ համահունչ են սոսկ այն ոգիները, որոնք բոցավառ ձգտում են դեպի էվոլյուցիան: Ոգու կայծից զուրկ մարդիկ, անշուշտ, չեն կարող զգալ հոգեկան հատիկներից արձակվող վիբրացիան: Ողջ Տիեզերքում գործող կրակի գործառույթները տանում են բոլոր հոգեկան հատիկներին հոգևոր հիմքերում առկա կայծերի միջով: Նուրբ էներգիաներն այդպիսով հաղորդ են դառնում տիեզերական մագնիսին:

273. Իսկ ինչպե՞ս են ծնվում հոգեկան հատիկները: Այդ ստեղծագործ էներգիաները կարելի է հասկանալ որպես կենսական էմանացիաներ կրողներ: Երբ ուժերն ուղղված են կենսական դրսևորմանը, այդժամ այդ հոգեկան հատիկները ձգվում են: Միտքը տարածականորեն նպատակաուղղում է դրսևորված հոգեկան հատիկները: Լարված Ագնի յոգի ստեղծագործությունը որոշակիորեն ուղղություն է տալիս հոգեկան հատիկներին:

Այն, ինչը մարդիկ անվանում են **ներըմբռնում**, հաճախ իրենից ներկայացնում է նպատակաուղղված հոգեկան հատիկի աճ, հատիկ, որին ուղղորդում է հրակիրը: Ուստի լարված Ագնի յոգի ոգին սերմնացանն է այդ ստեղծագործ հոգեհատիկների: Արդ Ագնի յոգայի Մեր մայրը սերմանում է ստեղծագործական հոգեհատիկները:

274. Ամենագլխավոր օրենքը պատճառների ու հետևանքների աշխարհում **նույնականության օրենքն** է: Նախասահմանման հատկությունը հաստատում է հետևանքների շղթայից բխող պատճառը: Հետևանքների ամբողջությունը տալիս է պատճառների ամբողջություն: Սոսկ նույնականությունը կարող է հաստատել դրսևորվելիք գոյաձևը: Դրան հատուկ տարրերը կարող են փոխակերպվել, բայց, նախապես ենթակա լինելով նույնականության օրենքին, դրանք պիտի մարմնավոր-

վեն: Արդ նոր գոյաձևերը ծնվում են հին գոյաձևերից՝ մշտապես շարժվելով դեպի էվոլյուցիա: Տիեզերական մագնիսի ստեղծագործությունը նույնականության օրենքն է հաստատում: Հին ճշմարտություն է, որ ստեղծագործությունը, ձգելով անհրաժեշտ տարրերը, հաստատում է ստանում Անսահմանության մեջ:

275. Նույնականությունը տարածության կրակը մղում է դեպի լարված Ագնի յոգի կենտրոնները: Տիեզերական մագնիսն արձագանքում է սոսկ նպատակաուղղված ձգողությանը: Երբ կենտրոնները հոգեպես արարում են, ապա կարելի է հաստատել, որ նույնականություն է դրսևորվել: Ագնի յոգի հոգեկան ստեղծագործությունը շաղկապված է մագնիսի դրսևորման հետ, և մարդը պետք է ընդունի հրեղեն առաքումների հասկացությունը: Հոգեկան հատիկները հագեցնում են տարածությունը և հաստատում են ստեղծագործության երևույթը:

Մեր հաղորդալարերը լարում են հոգեկան հատիկների առաքումները: Այնքա՜ն լարված է ոգու բաժանելիությունը, որ հարկ է լինում պաշտպանել կենտրոնները և զերծ պահել դրանք բոցավառումից: Սաստիկ լարված է ոգու բաժանելիությունը, ուստի անհրաժեշտ է պահպանել սիրտը: Շատ ուժեր է խլում ոգու ստեղծագործությունը:

276. Երբ տիեզերական մագնիսը գործում է իր բոլոր լարված ուժերով, ապա ամեն տեսակի դիմադրությունները խորտակվում են նրա զորության մեջ: Եթե մարդկությունը խորամուխ լիներ դեպի էվոլյուցիա տանող ուժերին, ապա, արդարև, կշարժվեր տիեզերական մագնիսի զորության հոսքին համընթաց: Անխախտելի օրենքով է առաջնորդվում տիեզերական մագնիսը, և այն ամենը, ինչ լարված է նրան հակառակ, խորտակվում է: Մագնիսի բանաձևն արարում է նպատակաուղղված հոսանքով: Մագնիսի ստեղծագործությունը համապատասխանում է գոյի զորությանը, և անխախտելի է դեպի էվոլյուցիա տանող օրենքը:

277. Տիեզերական մագնիսի ներգործությամբ կատարվող լուսատուների տեղաշարժը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մոլորակային հավասարակշռություն է հաստատվում: Երբ նկրտման ուժը լարված է աճող հոսանքով, այնժամ էլ կատարվում է տեղաշարժը: Էներգիայի հատկությունն ուղղված է դեպի նոր ուժը, երբ հաստատվում է անհավասարակշռության ուժը: Ուստի պետք է ասել, որ միայն նուրբ էներգիաները կարող են նպատակաուղղվել վերածմանը: Հեռանալով մի կենտրոնից՝ տարածական հոսանքները հաստատում են մեկ այլ կենտրոնի վերելքը: Արդ տիեզերական մագնիսի ստեղծագործությունը լարում է բոլոր էներգիաները: Տեղաշարժը մի փուլ է էներգիայի վերածնման գործընթ

թացում: Մոլորակի բոլոր հանկարծաշրջումները էներգիաների տեղաշարժի հետևանք են: Արարելով մի նոր աստիճան՝ մենք էվոլյուցիոն շղթայով շարժվում ենք դեպի Անսահմանություն:

278. Տեղաշարժման սկզբունքի հիմքում վերելքի համար նախատեսված ուժի նվազումն է: Տիեզերական էներգիան կարող է գոյություն ունենալ կամ աճելով, կամ նվազելով: Տիեզերական մագնիսի աճող ուժը հանգեցնում է նպատակաուղղված վերելքի: Առհոսող էներգիան ամբողջությամբ ուղղվում է փոխակերպման: Մոլորակի հրեղեն կենտրոնները ասես տեղաշարժվում են ստեղծագործական մագնիսի ներգործությամբ: Կրակի տեղաշարժման ուժը հաստատվում է որպես նոր աստիճանի հաստատմանը տանող մի ուժ:

Ագնի յոգի կենտրոնների կրակը զգում է բոլոր երկրաբանական, մթնոլորտային և ժողովուրդների տեղաշարժերը, այդ պատճառով էլ Ագնի յոգը ունենում է մեծ քանակությամբ տարբեր զգացողություններ: Այդ պատճառով էլ բազում տարբեր զգացողություններ է ապրում Ագնի Յոգայի մայրը: Այո՛, այո՛, այո՛:

279. Ոգու հոգեդինամիկան ուղղորդում է հոգեկան հատիկները: Համախմբված հատիկների ցանցն է որոշում տիեզերական մագնիսի կողմից նախանշված հոսանքը: Յուրաքանչյուր գիտակցություն սկիզբ է առնում այդ հոգեկան հատիկից: Գիտակցությունները միավորող ցանցը հաստատում է այն ձգտումների ուղղությունը, որոնք տանում են դեպի էվոլյուցիա: Հոգեկան հատիկներ կրողներին նեցուկ է լինում Տիրակալների դրսևորման հաստատումը: Մարդկության գիտակցությունը հաստատվում է հոգեկան հատիկների միջոցով: Եվ ամեն մի էներգիա հաստատվում է դրսևորված հոգեկան հատիկների միջոցով: Բոլոր այսպես կոչված **հակումները** ոչ այլ ինչ են, եթե ոչ հոգեկան հատիկների դեռևս չգիտակցված էներգիաներ: Արդ մարդկությունը շոշափելով է առաջ շարժվում:

280. Հրեղեն էվոլյուցիան հաստատվում է հոգեկան հատիկների դրսևորման շնորհիվ: Հոգեկան հատիկի ստեղծագործությունը տարածականորեն միավորում է էներգիաները: Երբ հոգեկան հատիկը առաքվում է տարածություն, այդժամ նպատակաուղղված մագնիսը համախմբում է նույնական էներգիաները: Հոգեկան հատիկի անտեսանելի գործընթացը ամենից հզորն է: Այդ իսկ պատճառով Ագնի յոգի կրակն արարում է անխախտելիորեն: Ուստի սաստիկ լարված են կենտրոնները: Տարան ստեղծագործում է ոգու բաժանելիության միջոցով: Ուստի խիստ անհրաժեշտ է պահպանել հրե ստեղծագործությունը:

281. Հոսանքների տեղաշարժը տեղի է ունենում տարածական կրակի էներգիայի հոսանքին համաչափ: Նպատակաուղղված տիեզերա-

կան մագնիսի հոսանքները լարում են այն հոսանքը, որը պիտի զբաղեցնի վերընթաց ուժի տեղը: Խարտուքի են նման այդ էներգիաները. շաղկապված չլինելով մագնիսի ուժով՝ դրանք տարրալուծվում են: Միայն դեպի էվոլյուցիայի միջուկը նպատակաուղղված էներգիաները կարող են արարել և համախմբել նոր տիեզերական էներգիաները:

Ազատ էներգիաները չեն կարող լարվածություն հաղորդել, ուստի մագնիսի ձգողության հետ հոսանքների հարաբերակցությունն է տալիս նոր նպատակաուղղված ուժի բանաձևը: Տեղաշարժը որոշելու համար անհրաժեշտ է նկատի առնել բոլոր ձգողությունները:

282. Ժողովուրդների հոգևոր լուսավորչության կենտրոնների տեղաշարժը ևս տիեզերական մագնիսն է հաստատում: Երբ ժողովրդի ձգտումն ուղղված է հոգեկան կենտրոնի հիմքին, այնժամ Մեր հոգեկան ներգործությունն ուղղորդում է հոգեկան հատիկներին: Արդարև, այդպես է արարվում մեր մոլորակի կյանքը: Ագնի յոգի կենտրոնների ստեղծագործությունը նույնպես արարում է՝ ձգելով հոգեկան հատիկների կրակները: Ագնի յոգի կենտրոնները ևս համապատասխանում են բոլոր տարածական իրադարձություններին: Ուստի նա, ով գիտի էվոլյուցիայի հոգեկան հատիկը, կրում է իր մեջ Տիեզերքում ամփոփված բոլոր սկզբունքները:

283. Բոլոր հոսանքների տեղաշարժման ուղղությունը կախված է մագնիսի նկրտումից: Երբ առկա են ազատ հոսանքներ, ապա դրանց ձգողությունն ուղղված է դեպի նույնական հոսանքները: Ստեղծագործմանն ուղղված բոլոր էներգիաները լարում են էվոլյուցիան: Երբ ստեղծագործ ուժերը նպատակաուղղված են նոր աստիճանի ստեղծմանը, այնժամ տեղաշարժը կայանում է հոգեկան հատիկների համախմբման մեջ: Իսկ երբ նկրտումը հիմնված է հակառակ ձգողության վրա, ապա կործանող ուժը հաստատվում է որպես տարանջատող գործոն: Մագնիսական ձգողությունների դեպքում նկրտումը խիստ պատասխանատու է: Ուստի տարածությունը կարելի է դիտել իբրև մի գանձարան, որտեղ պարունակվում են ամեն տեսակի կենսական ձեռնարկումները: Արդ Անսահմանությունը կոչ է անում ամեն տեսակի ստեղծագործական ձեռնարկումների:

284. Անչափ նշանակալից են տարածության կրակը կրողների խնդիրները: Տիեզերական տեղաշարժերի մասին խոսելիս պետք է ասել, որ հոգևոր կենտրոնների տեղաշարժերն այնքան մեծանշանակ են, որ կարող են կանխորոշել մի ամբողջ ժողովրդի կյանքի ընթացքը:

Երբ տեղի է ունենում գիտակցության տեղաշարժ, այնժամ նոր ընթացքի երևույթը հաստատվում է որպես կարմայի վճիռ: Ինչպես ոգու միջուկն է պարունակում իր մեջ բոլոր հնարավորությունները, այդպես էլ ծնունդ առնող հրեղեն ստեղծագործությունն է աճելու այդ դրսևորված

գործընթացին զուգընթաց: Երբ Ագնի յոգի հրե ստեղծագործությունը լարում է տարածության կրակի շիթերը, այնժամ համահնչություն է հաստատվում տարածության և գիտակցության միջև: Արդ կենտրոնները կենսականորեն արարում են, արդ Ագնի յոգի կրակները բոցավառում են հոգեկան հատիկները: Արդ կենտրոնները մղում են սխրանքի:

285. Հոգեկան հատիկների ձգողության սկզբունքը կոչվում է **տիեզերական մագնիսի նկրտում**: Ձգողության հիմքում ընկած է նույնականության տարածական հոսանքը: Առաքվող հոսանքը ծնում է նույնական հոսանք, և տիեզերական մագնիսի վիբրացիան արձագանքում է նպատակաուղղված էներգիային: Ուստի հոգեկան հատիկներով է պայմանավորված ապագա էվոլյուցիան:

Տիեզերական մագնիսի հոսանքն ամփոփում է իր մեջ տարածական տեղաշարժի համար անհրաժեշտ բոլոր տարրերը: Այդ պատճառով էլ այդպես հաստատվում է տիեզերական իրադարձությունների նախորոշումը: Հոգեկան հատիկներ սերմանողները կարող են նախասահմանել իրադարձությունների շղթան, կարող են նաև սահմանափակել հակառակ լարվածության ստեղծմանն ուղղված ստեղծագործությունը: Ուստի եռանդագին դրսևորվում է նոր հրեղեն նկրտումը: Մագնիսի ստեղծագործության մեջ պատասխան վիբրացիան գլխավոր ազդակն է: Պատասխան վիբրացիան ձգողություն է հաստատում: Պատասխան վիբրացիան է ընկած միավորման հիմքում: Բևեռականությունը տիեզերական ստեղծագործության շիթ է ստեղծում: Բևեռականության հոսանքը լարվում է և մագնիսականացվում է տիեզերական լարվածության համահնչությամբ: Բևեռականության հատկությունն է որոշում համահնչությունը:

286. Ոլորտները տարբերվում են իրենց լարվածությամբ: Ոլորտները հասկանալով որպես նպատակաուղղված էներգիաների շերտեր՝ Մենք կարող ենք բնորոշել ոլորտները ըստ դրանց որակների: Ստորին ոլորտը կազմված է դեպի ցածրակարգ էմանացիաները ձգտող տարրերից: Բոլոր տարրերը ձգվում են դեպի տիեզերական մագնիսը: Ինչպե՞ս որոշել տարածական կրակի հոսանքների միջև առկա տարբերությունը: Նույնական հոսանքների ձգողության հատկությամբ է դրսևորվում նկրտման էությունը:

Երբ հաստատվում է մատերիա լուսիդան, այդժամ կարելի է խոսել կենսաէներգիայի էության մասին: Երբ խոսում ենք բարձրագույն ոլորտի մասին, ապա նկրտումը բարձրագույն լարվածությունն է: Ձգողության և դրսևորված լարվածության նույնականությունը համապատասխանում է բարձրագույն ոլորտին: Անհամաձայնությունը նպատակի և նկրտման միջև հանգեցնում է ստորին ոլորտի դրսևորման: Արդ Տիեզերքում անսահման մարտ է տեղի ունենում:

287. Կրակով հագեցած ոլորտները ձգտում են նրբագույն էներգիաների հոսանքների կուտակմանը: Ոլորտների միջև տեղի ունեցող մարտում էներգիաները ուժգին ձգողության են ենթարկվում կրակի հոսանքների կողմից: Ներդաշնակված կենտրոններ կրողը հագեցնում է ոլորտը կրակով: Սոսկ ներդաշնակեցված կենտրոնների ստեղծագործությունը կարող է արտացոլել հրեղեն ձգողություններ: Միայն նուրբ էներգիաներ կրողը կարող է ընկալել բարձրագույն ճշմարտությունը: Ուստի Մենք՝ մարդկության Եղբայրներս, կարող ենք հաղորդել ճշմարտությունը նրան, ով ըմբռնում է գոյության էությունը: Այդ իսկ պատճառով Մենք՝ մարդկության Եղբայրներս, հաղորդում ենք ճշմարտության մի մասը: Երբ խոսում եմ մեծագույն ճշմարտության մի մասի մասին, ապա, անշուշտ, նկատի ունեմ այն ճշմարտությունը, որը կարող է ընկալվել մեր մոլորակի վրա:

Տարայի գիտակցությունը այն աստիճան նպատակաուղղված է Մեր գիտակցության հետ միաձույլ, որ պնդում եմ, որ դա ընկալման ամենալարված կենտրոնն է:

Մարդկության Եղբայրներին հարկ է լինում հագեցնելու տարբեր ոլորտներ:

288. Տիեզերական մագնիսի հոսանքները լարում են Տիեզերքում դրսևորված բոլոր հոսանքները: Ստեղծագործական ուժերի համակցությունները հաստատվում են բոլոր ոլորտներում: Տիեզերական մագնիսի ստեղծագործությունը հաստատում է բոլոր այն տարրերի տարբերությունը, որոնք անհրաժեշտ են հոգեկան հատիկների համակցման համար: Հոգեկան հատիկները իրենց շուրջ են համախմբում այն տարրերը, որոնք անհրաժեշտ են նախասահմանված հոսանքի ձևավորման համար: Արդ հոգեկան հատիկները կարող են ձևավորել այն ոլորտը, որն ամփոփված է միջուկի մեջ: Նրբագույն էներգիաների հոսանքները համախմբվում են միջուկի շուրջ, որն ամփոփում է իր մեջ բոլոր անսահման ձեռնարկումները:

289. Պատասխան վիբրացիան լարում է տիեզերական մագնիսը: Տարածության կրակը հագեցած է այդ վիբրացիաներով: Տիեզերական մագնիսը համախմբում է դրսևորված կրակի այն ազատ տարրերը, որոնց մեջ համահունչ են նույնական հոսանքները:

Մատերիա լուսիդան այն նկրտումն է, որն արարում է նուրբ էներգիաներ: Ոգին ու մատերիա լուսիդան արարում են նույնականորեն: Ոգին՝ մեծագույն արարիչը, ստեղծում է բոլոր նկրտումները:

Եթե մարդկությունը հասկանար, որ ոգին է հաստատում նկրտման բերկրանքը, ապա նա կձգտեր ոգու ըմբռնմանը: Մարդկության Եղբայրները հաստատում են ոգու ըմբռնումը որպես դրսևորված զորություն:

Ոգու ըմբռնման համար գոյություն չունի արգելք: Ամենաթափանց ոգին բարձրացնելու է անըմբռնողության վարագույրը: Ոգին ժխտողները միանգամայն կարող են տիեզերական կործանում հաստատել: Դեպի տիեզերական մագնիսն ուղղված ոգին ընդունողները կարող են տիեզերական հավասարակշռություն հաստատել:

290. Ագնի յոգի ոգու ըմբռնումը հաստատում է հոգեկան հատիկների ուղղվածությունը: Ստեղծագործությունը հաստատվում է ոգու ըմբռնման շնորհիվ: Ագնի յոգից ճառագայթվող յուրաքանչյուր վիբրացիա իրեն բնորոշ հատկություն ունի: Շրջակա միջավայրի հետ շփման մեջ գտնվող ճառագայթը տարբեր լարվածություններ է հաստատում. սա նման է քիմիական գործընթացի: Այդ վիբրացիաները ազդում են միջավայրում առկա հոսանքների լարվածության վրա: Հրեղեն կենտրոնների հատկությունը խիստ նպատակաուղղում է հանդիպական էներգիաների երևույթը: Ագնի յոգի կենտրոնների ստեղծագործությունը անընդհատ փոխակերպում է հաստատում: Ոգու բաժանելիության դեպքում ստեղծագործությունը դրսևորվում է տարբեր ոլորտներում, ուստի հզոր ոգին աշխատում է անխոնջ: Հիշենք ոգու ստեղծագործական, նպատակաուղղված ազդակը:

291. Կենսական գործընթացի երակազարկումը կոչվում է **տիեզերական մագնիսի դրսևորում**: Տիեզերքի ողջ մատերիան հաստատվում է կենսական երակազարկման միջոցով: Լինեն այդ երակազարկումները միևնույն համակցության հաստատում թե փոխակերպման լարում, հիմքում երակազարկումն է ընկած: Մարդկության բոլոր նպատակաուղղված էներգիաները կախված են այդ երակազարկումներից: Հոգեէներգիայի ստեղծագործությունը այդ երակազարկման հաստատումն է. նրան կասեցնելն անհնար է: Եվ նրանք, ովքեր պնդում են, որ Տիեզերքում որևէ բան չի դրսևորվում՝ ոչնչանալու համար, կարող են ճշմարտության կրողներ լինել: Մենք հաստատում ենք Տիեզերքում առկա անսահման երակազարկումը:

292. Երակազարկումը նպատակաուղղում է կենտրոնների կրակը: Ագնի յոգի կրակի լարումը զուգընթաց է տիեզերական մագնիսի լարմանը, հոսանքների երակազարկումը նույնական է: Հոսանքները տարբեր ոլորտներում նպատակաուղղվում են երակազարկումների դրսևորման շնորհիվ: Չի կարելի ասել, որ տարբեր ոլորտներ մեկուսացած են, բայց կարելի է պնդել, որ տարբեր ոլորտներ գործում են նույնականության սկզբունքով: Անշուշտ, հին ուժերի հոսանքները վերամշակվում են, և նոր տիեզերական ուժ է ծնվում: Արդ երակազարկման հատկությունը պահպանվում է բոլոր ոլորտներում, արդ Ագնի յոգի կրակը հաստատում է տիեզերական մագնիսի նոր ուժերը: Ագնի յոգի կրակները, ճշմարիտ, ճանապարհ են բացում դեպի հեռավոր աշխարհներ:

293. Յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր գործողություն իր հոգեհոսանքներն է ծնում: Այդ հոսանքները տարածվում են տիեզերական մագնիսի բոլոր ձգողությունների վրա, երբ նպատակաուղղված միտքն ընթանում է դեպի սկզբնաղբյուր: Հոգեհոսանքները մշտապես մտքին ուղղություն տալու հատկություն են հաղորդում: Երբ գործողությունը նկատի է ունենում բացասական հատկությունը, այնժամ հոգեհոսանքները տարածվում են որպես բացասական էներգիաների օգնականներ:

Նախորոշված գործողությունը բնորոշ է տարածության ազատ հոսանքին, այդ իսկ պատճառով հոգեհոսանքները զուգակցվում են ազատ հոսանքների հետ՝ ձգելով դրանց դեպի իրենց նկրտումները: Հոգեհոսանքների ստեղծագործությունը ուղիղ համեմատական է դրանց ծնող հոսանքին: Արդ տարածությունը լի է հոգեհոսանքային էներգիաներով: Արդ Տիեզերքում անսահման մարտ է տեղի ունենում:

294. Այն հոգեհոսանքները, որ տարածում է Ագնի յոգը, համապատասխանում են էվոլյուցիային: Առաքված հոգեհոսանքը ծնում է իր միջուկը, և ծնվում է համապատասխան գործողությունը: Բոլոր բոդհիսատվները օգտագործել են նման հոգեհոսանքներ իրենց անձնուրաց ծառայության մեջ, ուստի շատ բարձր ենք գնահատում այդպիսի դրսևորումները: Մշտապես նվիրաբերող Ագնի յոգը ստեղծում է հոգեհոսանքային ոլորտներ, ուստի բարձր ենք գնահատում հրեղեն ստեղծագործության հաստատումը:

295. Մարդկությունը գործածում է տիեզերական անիրականության անհամաչափելի հասկացությունը, ինչպես նաև դատարկության հասկացությունը: Ինչպե՞ս կարող է իրականությունը վերաբերել սոսկ մակերեսային երևույթին: Երբ ցավի երևույթը ջղակծկումներ է առաջացնում, ապա կարելի՞ է արդյոք ժխտել այդ ցավն առաջացրած պատճառը: Ինչպե՞ս կարելի է չտեսնել իրականությունը բոլոր դրսևորումների հաստատման մեջ: Իրականության ոլորտները հարկ է հասկանալ որպես գոյը Տիեզերքի: Չէ՞ որ անհնար է կառուցել օրենքները գոյություն չունեցող հիմքի վրա: Չէ՞ որ Անսահմանության ներքո պետք է ընդունել այն հարաբերականությունը, որ ստեղծում է մեր հասկացությունները: Արդ ամփոփենք կյանքի շրջանը «դատարկություն» հասկացությունից դուրս: Արդ իրականությունը լարում է մեր գոյության ամեն մի ակնթարթը:

296. Ոչինչ չի կարող դիմադրել կրակին: Էվոլյուցիայի ոլորտում չկա որևէ բան, որը կարողանար դիմադրել կրակին: Մտքի աներևույթ զորությունը և նրա դրսևորումները լարվում են կրակի նրբանուրբ էներգիաներով: Հրե ոլորտում լարվածության խթանը նպատակաուղղում է ստեղծագործման գործընթացը: Գոյի խթանը հուրն է, և այդ տարերքը գործում է յուրաքանչյուր շնչառության ներքո:

Ֆիզիկական, աստրալ և մենտալ կրակները հաստատվում են ամեն մեկն իր ոլորտում: Եվ անհնար է մատնանշել նուրբ էներգիաներին հատուկ որևէ հետևանքների ոլորտ, ուստի անհրաժեշտ է հետևել յուրաքանչյուր գործընթացի ծագմանը:

Հնուց ի վեր շարունակվող բանավեճն այն մասին, թե որ էներգիան է նախորդողը, իմաստազրկվում է **կրակի սկզբնավորման օրենքի** բացահայտումով:

297. Երբ կրակի գոյություն ունեցող նկրտումը լարվում է, այնժամ Ագնի յոգի հոգեհոսանքները լարում են ազդակի ստեղծագործությունը: Երբ կրակի խթանը գիտակցաբար ուղղորդվում է, այնժամ չկա այնպիսի հաստատում, որը կարողանար դիմադրել: Արդ հզոր կրակների նպատակաուղղումը հաստատում է անհրաժեշտ երևույթներ: Արդ աստրալ կրակի մասին պնդումների հիմքում ճշմարտությունն է եղել: Արդ Ագնի յոգի կրակները և Տարայի կրակը ստեղծում են էվոլյուցիայի համար անհրաժեշտ հաստատումներ:

238. Շատերը պատրաստ են ընդունելու, որ Տիեզերքն ուղղվում է դեպի այնպիսի մի կետ, որտեղ հաստատվելու է կամ բարձրագույն նվաճում, կամ էլ կործանմանը տանող անկում: Միայն թե չեն կարողանում գիտակցորեն ընդունել, որ Տիեզերքի ուժը ենթադրում է նպատակաուղղված էներգիաների գործադրում:

Եթե մարդիկ կարողանային մի հայացք գցել կյանքի այն լաբորատորիայի վրա, որը սահմանում է բոլոր ստեղծագործական համակցությունները, ապա նրանք ըմբռնում հանդես կբերեին այն օրենքներին, որոնք անտեսանելիորեն գործում են Տիեզերքում: Ուստի չպետք է հեռացնել կյանքից անտեսանելի աշխարհը, ուստի ոգու ստեղծագործության մեջ անտեսանելի ուժը պետք է դիտել որպես գլխավոր ազդակ:

Արդ անսահման նպատակաուղղվածության մեջ անընդհատ ստեղծվում են անտեսանելի էներգիաներ:

299. Կենտրոնների ոգու ստեղծագործման մեջ անտեսանելիորեն մասնակցում են նրբագույն էներգիաները: Կենտրոնների հետ համագործակցմամբ տեղի է ունենում բոլոր լարված էներգիաների համակցում: Ուստի նպատակաուղղված ստեղծագործությունը տարածված է բոլոր ոլորտներում: Արդ տարածությունը հաղթահարվում է նպատակաուղղված մտքով: Հոծ մատերիան հաղթահարվում է նրբագույն էներգիաների ներգործությամբ, և լարված ստեղծագործության բարդությունը հաղթահարվում է տարածական կրակի դրսևորման շնորհիվ, այդ պատճառով էլ եռանդուն ոգեղեն ստեղծագործություն են հանդես բերում կենտրոնները: Երբ մտքի ցանկությունը թափանցում է տարածության

բոլոր շերտերը, այնժամ կենտրոնների նկրտումը համընթաց է տիեզերական մագնիսին:

Հոսանքները զգալիորեն փոփոխվում են, և տատանվում է Երկրի կեղևը, և մոլեգնում են ստորգետնյա կրակները:

300. Բացարձակ Բանականությունը և Կատարյալ Սիրտը միևնույն Սկզբնաղբյուրն են: Երբ Մենք ասում ենք, որ կենսական էմանացիան բխում է այդ Էությունից, ապա մարդկությունը կարող է ընդունել այդ ճշմարտությունը: Տիեզերական մագնիսի ստեղծագործությունը կենտրոնացած է նպատակաուղղված էներգիաներից կենսական էմանացիաներ ստանալու գործընթացի վրա: Կատարյալ Սրտի ուժը հագեցնում է բոլոր տիեզերական հոսանքները: Այդ էմանացիաներից համակցվում են կյանքի բոլոր երևույթները: Միայն նպատակաուղղվածությունից զուրկ էներգիաներն են ծառայում որպես կողմնակի հոսանքներ:

Համակցությունների բարդությունը չի պատկանում տիեզերական նպատակադրմանը: Տիեզերական մագնիսը համակցում է ներդաշնակ հոսանքները և լարում է կողմնակի ամեն տեսակի հոսանքները՝ նպատակ ունենալով գործելու ձգտում հաղորդել դրանց: Այսպես կոչված **պատահական համակցությունները** նույնպես ուղղորդվում են տիեզերական ստեղծագործության նպատակաուղղման միջոցով:

Ձգողության ստեղծագործմանն ուղղված տարերքը հատուկ է հաստատված ազդակի համար: Կատարյալ Սիրտն ընդունում է բոլոր նպատակաուղղված էներգիաները և բազմակողմանիորեն ոգեղենացնում է դրանք: Կամայականությանը մատչելի չէ ստեղծագործ համակցության բանաձևը:

Արդ Անսահմանությունը հաստատում է Կատարյալ Սրտի բոլոր աղբյուրները:

301. Կատարյալ Սիրտը կարող է այն աստիճան հաստատել բնության ուժերը, որ ցանկացած գոյաձև կարող է կյանք ստանալ: Կատարյալ Սիրտն ամփոփում է իր մեջ ստեղծագործական ուժերի կյանքին բնորոշ բոլոր բեղմնավոր երևույթները:

Բացարձակ Բանականությունը, որից մարդկությունը քաղում է իր նկրտուն կենսահյութը, հոգ է տանում ստեղծագործական դրսևորումների հաստատման մասին: Տիեզերական էներգիաների արարումը ուղղորդվում է Կատարյալ Սրտի կողմից: Չէ՞ որ գործողության տևողությունը Տիեզերքում կոչվում է **անվերջանալիություն**: Ինչպե՞ս չկիրառենք այդ հասկացությունը այն էներգիայի նկատմամբ, որը մղում է ոգուն դեպի բարձրագույն ոլորտներ: Այն դեպքում, երբ անգամ բույսերն են ձգտում **նրբացնելու**, ապա ինչպե՞ս չկիրառենք նույն **օրենքը** մարդկու-

թյան նկատմամբ: Կատարյալ Սիրտը լարում է բոլոր էներգիաները՝ կատարելու այդ վերելքը:

Բացարձակ Բանականության և Կատարյալ Սրտի կողմից ուղղորդված, հավերժ շարժման մեջ է տիեզերական կրակը:

302. Կատարյալ Սրտի ցանկացած դրսևորում համապատասխանում է բոլոր այն կրակներին, որոնց ուղղում է ոգին հանուն Ընդհանուր Բարիքի: Ոգու կրակները լարվում են բարձրագույն ոլորտների կենտրոնների ներգործությամբ, ուստի ոգու և ոլորտների միջև հաղորդակցում է հաստատվում:

Կատարյալ Սրտի մագնիսը հաղորդակցում է ենթադրում նկրտուն ոգու հետ: Եվ դեպի ո՞ւր պիտի ուղղվի Կատարյալ Սրտի լուսակիր ճառագայթը: Ցանկացած գիտակցված պատասխան ներկայացնում է իրենից նույնական վիբրացիա, ուստի կենտրոնների էմանացիաները իրենց հերթին ուղղորդում են՝ առաջացնելով գիտակցական նկրտում: Ստեղծագործ կրակի կենտրոնները կառուցում են մարդկության աստիճանները, ուստի խիստ բազմազան նկրտում են դրսևորում Ագնի յոգի կրակները:

303. Բարձրագույն օրենքների իմացությունը մարդկության Եղբայրներին հաստատելու է որպես դեպի էվոլյուցիա առաջնորդող էակներ: Երբ նոր մոլորակ է ծնվում, ապա համախմբվում է բոլոր էներգիաների երևույթը նոր տիեզերական օրենքներ հաստատելու նպատակով: Իմացություն ունենալու դեպքում մարդկությունն ուղղվում է դեպի լավագույն միահյուսումները: Չէ՞ որ ամեն մի էներգիան պիտի լարվի մյուս, առաջնորդող և դեպի իրեն ձգող էներգիայի կողմից: Ֆիզիկական և հոգևոր ոլորտներում էներգիաները լարվում են նույնականորեն, ուստի և օրենքները գտնվում են փոխադարձ համակցության մեջ:

Մարդկության Եղբայրները ուրվագծում են մարդկային էվոլյուցիայի ծրագիրը՝ լուսատուների բոլոր հոսանքներին համապատասխան՝ աշխատելով տիեզերական էներգիաների հետ: Եվ Մենք՝ Մարդկության եղբայրներս, ձևավորելով առաջադիմության համար անհրաժեշտ բոլոր ընտրված ուղիները՝ լավագույն միահյուսումներ ենք հաստատում: Տիեզերական մագնիսի ձգողությունը կարող է ներգործել Մեր դրսևորման վրա և ուղղորդել մարդկությանը մատերիա լուսիդայի լուսաճաճանչ ճանապարհով: Արդ մարդկության Եղբայրները էվոլյուցիայի այն **շարժիչներն** են, որոնք ուսուցանում են մարդկությանը գիտակից վերաբերմունք ցուցաբերել մոլորակի կարմայի հանդեպ: Ուստի պիտի հասկանալ, որ շաղկապող զորությունն ապրում է տիեզերական մագնիսի բոլոր դրսևորումների միջև: Արդ դիտենք մարդկության Եղբայրներին որպես

համաշխարհային դրսևորումների հետ շաղկապող մի օղակ: Արդ ընդունենք Տիրակալների պատգամը:

304. Լուսատուները նախանշում են կյանքի ամենաճշգրիտ ժամկետները, ինչպես և նրա ավարտը: Քանի որ վախճանը բեղմնավորում է, ապա նոր կյանքի դրսևորումը ենթակա է միևնույն օրենքին: Ժամկետը որոշվում է **կենսական ազդակի** միասնական **օրենքով**, ուստի լուսատուներն արարում են՝ համաձայն իրենց հատուկ ձգողության: Արդ դեպի գիտակցական վիճակ մեծ անցում կատարելիս լուսատուները կանխորոշում են ողջ ուղին, բայց գիտակցական վիճակը ոչ միշտ է զգում իր ուղղությունը և իր ցանկությունների ուժով ձգում է զգացումների լարվածությանը համապատասխանող լուսատուների ճառագայթները: Միայն բարձրագույն լարվածություն զգացող ոգին կարող է սլանալ դեպի նախանշվածը. արդ մարդկանց բռնած ուղու վրա հաճախ ոչնչանում են լավագույն նախանշումները:

Լուսատուները կոչված են ուղեցույց լինելու մարդկության համար:

305. Ծոծրակի շրջանում պտտվող կենտրոնները պայծառալության ուժգնացում են հաստատում: Դրանք գտնվում են նպատակաուղղված կենսական հաղորդաուղիների երկու գլխավոր ճյուղերի խաչավորման գոտում: Կենտրոնները հաստատվում են որպես հեռավոր աշխարհների հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ էներգիաների կրողներ: Դրանք լարում են ականջի կենտրոնը, ուստի և խիստ կարևոր են:

Մոդերատորը չի կասեցնում կենտրոնի աշխատանքը: Մոդերատորը պաշտպանում է ֆիզիկական մարմինը այրման վաղաժամ դրսևորումից: Կենտրոնների ստեղծագործական հաստատման դրսևորումը շարունակվում է որպես փոխակերպում: Ուստի կենտրոնների ստեղծագործությունը լարված է և իր ժամկետին պսակվելու է ավարտումով:

306. Նուրբ ու ստեղծագործական էներգիաների գերակշռությունը հնարավորություն է տալիս ողջ տիեզերական կրակին դրսևորվելու որպես կենսասկիզբ զորություն: Բոլոր դրական էությունների գերակշռությունը կենսատու սկիզբ է հաղորդում բոլոր ձեռնարկումներին: Արդ տիեզերական կրակը գոյություն ունի որպես էներգիաների մեծագույն համախմբիչ: Դրսևորված բանական էության հաստատումը լարում է բոլոր կապերը:

Ինչպե՞ս կարող ենք չընդունել, որ **հավասարակշռության օրենքը** այն օրենքը չէ, որը հավասարապես հաստատում է բարիքն ու չարիքը: Եվ լույսի ու խավարի անհավասարակշռությունն է տալիս մարդկությանը կյանքի այդ ակնկալվող բանաձևը: Անշուշտ, կյանքն այն աստիճան անհավասարակշռված է, որ տարբեր առիթներ է տալիս երևութականության հաստատման համար: Սակայն պետք է տոգորվել կյանքի գաղտ-

նիքով՝ հասկանալու համար, որ մոլորակի էմանացիաների հեղձուկ մթնոլորտում այնուամենայնիվ առկա է մի զորություն, որը նուրբ էներգիաների հոսանքների գերակշռություն է ապահովում:

Ավելի մաքրագործված այլ դարաշրջաններում այդ էներգիաները կարող էին ուղղված լինել լավագույն աստիճանների կառուցմանը: Բայց մեր ներկա, հաստատված ժամանակներում Մենք՝ մարդկության Եղբայրներս, լարում ենք էներգիաները՝ մոլորակին նեցուկ լինելու համար:

Արդ Տիեզերքում չարի նկատմամբ բարու գերակշռությունն է ապրում, և ողջ անսահման կյանքը շնչում է դրանով որպես տարածության կրակ:

307. Հրե ստեղծագործության ներքո բացահայտվում են բոլոր նկրտումները՝ ստեղծելու ավելի կատարյալ գոյաձև: Ագնի յոգի ստեղծագործության մեջ դրսևորվում են նկրտումները՝ հաստատելու բարձրագույն ճանաչողության երևույթները: Արդ մարդկության Եղբայրները և հաստատված էվոլյուցիայի Եղբայրները ընթանում են մատերիա լուսիդայի դրոշի ներքո: Այդ կրակները նույնական են նրբագույն էներգիաների հոսանքների հետ: Նրբացմանն ուղղված նկրտման գերակշռությունը լարում է մատերիա լուսիդայի լուսաճաճանչ ճառագայթների երևույթը:

Հաճախ տարակուսում են, թե ինչպես մարդը չի խորտակվում իր անձից ծնունդ առած մեջ: Սրան պատասխանենք այսպես. «Ձեր Եղբայրների ոգու կրակն է ցրում ձեր կուտակած հեղձուկները»:

Արդ միահյուսված կարմիր ու սև բծերը մարտի նշան են, բայց նրանք, ովքեր գիտեն այդ մարտի մասին, դեպի Մեզ ուղղված հրեղեն նկրտումով հաղորդ են դառնում ծանրաբեռնվածությունը ցրող ճառագայթի արծաթին: Արդ Տարաները և մարդկության Եղբայրները մարդկությանն օգնելու մղումով միավորվում են մարտում:

308. Տիեզերական մագնիսի հիմքում ընկած է բոլոր էներգիաների տարրերի ձգողությունը, ուստի անհնար է առանձնացնել որևէ մի էներգիա համապատասխան դրսևորված մեծությունների շարքից: Նժարների տատանումը դեպի վեր կամ վար կախում ունի էներգիաների անհամաչափելի կամ աններդաշնակ վիճակից: Կողմնակի էներգիաների ներխուժումը կամ համընթաց հոսանքը ուղղություն են տալիս տիեզերական մագնիսի հոսանքներին: Հոսանքներից է ձևավորվում տիեզերական ստեղծագործության էջը: Նա, ով ստացել է այսօր, վաղը տալու է: Նժարը հակառակ դիրք է ընդունելու: Տարածության արխիվները լի են նման վկայություններով: Այդ ժամանակագրությունները լեփ-լեցուն են մարդկային այլասերումներով: Սոսկ էվոլյուցիային ծառայելով կարելի է հաստատել տիեզերական մագնիսին հարիր ստեղծագործությունը. արդ Մենք արարում ենք ճիշտ այնպես, ինչպես Տիեզերքն է արարում:

309. Երբ Մենք ներգրավում էինք համագործակցության, տիեզերական մագնիսը հաստատեց գործերի դրսևորումը: Երբ Մենք ընտրեցինք լուսատուների հոսքը, մագնիսը ցույց տվեց ուղղությունը: Գիտենալով մոլորակի բոլոր նկրտումների տատանումները՝ Մենք հզորություն հաղորդեցինք նոր նկրտմանը: Այսպես հաստատվեց նախանշված նոր աստիճանը: Մենք հաստատեցինք լավագույն երկրի ճակատագիրը: Արդ կարելի է ասել մարդկությանը. «Միայն թե ըմբռնեք հաստատված պատգամները. սոսկ այդ պատգամների կատարումով առաջ կընթանաք»:

310. Կյանքի հիմքը հաստատվում է տիեզերական մագնիսի ձգողության շնորհիվ: Էվոլյուցիայի հետ համատեղ արարող սկզբունքն այնքան անխախտելի է, որ միայն կրակի ուժը կարող է ուղղել նրան գործողության հունը: Բոլոր մյուս ուժերը կարող են սոսկ շփում առաջացնել՝ ավելի մեծ եռանդով նախանշված ուղին անցնելու համար:

Շատ են բանավիճել գիտնականները, թե արդյո՞ք Տիեզերքում տեղի է ունենում վերադարձ ստորին վիճակին, երբ արդեն նվաճվել է զարգացման բարձրագույն աստիճանը: Բանական մոտեցում կլիներ կիրառել կարմայի ըմբռնումը այն ամենի նկատմամբ, ինչը Տիեզերքում առաջընթաց է ունենում: Կարման պիտի հասկանալ ոչ այնպես, ինչպես մարդկությունը սովոր է հասկանալ՝ կիրառելով այն փոխհատուցման և հաշիվները փակելու իմաստով, այլ որպես բարձրակարգ, էվոլյուցիան խթանող գործողություն: Բոլոր ստեղծագործական ձեռնարկումները կանխորոշվում են այդպիսի **կարմայի օրենքով**: Շատ ձեռնարկումներ չեն համապատասխանում այդ օրենքներին, բայց էվոլյուցիոն կարմայի գիտակցմամբ սաղմնավորված ձեռնարկումն ապրում է տարածության մեջ և շարժվում է տիեզերական մագնիսի հոսանքների ներգործությամբ:

311. Անշուշտ, Ընդհանուր Բարիքն առաջ տանելու մղումով հիմնադրված ձեռնարկումը պիտի ապրի: Անշուշտ, այն ձեռնարկումը, որի հիմքում դրված է ոգու վերածննդի և գիտակցության մակարդակի բարձրացման սկզբունքը, պիտի զարգացում ստանա հենց այն մարդկանց ջանքերով, ովքեր ձգտում են դեպի էվոլյուցիա: Գեղեցկության սկզբունքին նպատակաուղղված ձեռնարկումները պիտի ապրեն: Այն ձեռնարկումները, որոնք Մենք ենք հիմնադրել ու հաստատել, պիտի ծաղկեն: Դեռ չի եղել այնպիսի կախարդական հեքիաթ, ինչպիսին կառուցված աստիճանն է: Ուստի կասենք. «Տանում ենք Քարը Թանկարժեք՝ կառուցելու մեծագույն ապագան»:

312. Կարման գործում է որպես կենսասկիզբ զորություն այնտեղ, ուր հաստատվում է լուսատուների հոսքը: Էվոլյուցիային համընթաց կարմայի հոսքը կոչվում է **տիեզերական մագնիսի դրսևորում**: Լուսա-

տուների ստեղծագործությունն այնքան որոշակի բնույթ է կրում, որ անխաթար հիմքը դրված է որպես մի ազդակ, որը նախանշում է շարժումը: Բոլոր ժամկետները կախված են այդ կարմայական նախանշումներից: Լուսատուների հոսքը և Բարձրագույն Բանականությունը ուղղորդում են բոլոր տիեզերական ժամկետները, ուստի երբ մարդկությունը չի ընդունում տիեզերական մագնիսի կողմից առաքված հնարավորությունները, ապա կործանում է ստացվում: Մոլորակը ծածկված է այդ չընդունված առաքումների էմանացիաներով, այդ իսկ պատճառով բոլոր ստեղծագործական լարումները չեն դրսևորվում այնպես, ինչպես նախանշված է: Այս եղանակով են ծնվում տարածության մեջ բոլոր աններդաշնակ գործընթացները: Ուստի խիստ կարևոր է մարդկության համար համակվել մեծագույն տարածական առաքումների հոսանքներով. միայն այդպես հնարավոր կլինի կապ հաստատել հեռավոր աշխարհների հետ:

313. Տիեզերական մագնիսի հոսանքներով նախանշված կարման իր հերթին հրեղեն ներհոսք է նախանշում Երկրի համար: Երբ բոցեղեն Ագնի յոգի կենտրոնները հուրհրում են, այնժամ միշտ կարելի է պնդել, որ վերերկրային ու ստորգետնյա կրակները ձգտում են դրսևորման: Կենտրոնների բոցի երևույթը կարող է լարել տարբեր դրսևորումներ: Երբ տիեզերական մագնիսը մղում է հաստատում դեպի որոշակի հիմք, այնժամ կարելի է հաստատել, որ կարմայի շիթերը միահյուսվել են մեկ ուղղությամբ: Երբ կարելի է պնդել, որ մագնիսը միաձուլվում է տարածական կրակի դրսևորումների հետ, այնժամ ի հայտ է գալիս Գոյի բարձրագույն դրսևորումը:

314. Երբ լուսատուների ճառագայթները ուղղորդում են տիեզերական մագնիսը, ապա դեպի էվոլյուցիա նպատակաուղղված հոսքը համաձայնեցվում է խնդրի լարվածության հետ: Տիեզերական մագնիսի ստեղծագործությունը միանգամայն համաձայնեցված է լուսատուների հոսքի հետ: Նպատակաուղղված մատերիա լուսիդային ուղղված խնդիրները, իհարկե, ստանում են բոլոր նրբագույն էներգիաները:

Իսկ ինչպե՞ս է Տիեզերքը բաշխում իր ճառագայթները: Արարչագործ ճառագայթը նաև պաշտպանիչ ճառագայթ է լինելու: Համախմբող ճառագայթը նաև տարրալուծող ճառագայթ է: Հիմնադրող ճառագայթը նաև կործանող ճառագայթ է: Լավագույն բանաձևը գտնելու համար անհրաժեշտ է միավորել լավագույն համակցությունները:

Այդպիսի համակցություն ստանալու համար տիեզերական մագնիսը համախմբում է այն զուգակցումները, որոնք համապատասխանում են այդ բանաձևին: Դրա համար մարդկությունը պիտի մտապահի, որ միևնույն ճառագայթը թե՛ փոխակերպում է, թե՛ մաքրագործում և թե՛ ետ

մղում: Դեպի էվոլյուցիա ուղղված մտքի դրսևորմանը հատուկ են նույն որակները: Զորեղ է մտքերի ճառագայթը: Արդ անսահման է ստեղծագործությունը:

315. Անշուշտ, լուսատուների ճառագայթները նախորոշում են անհրաժեշտ հոսանքների ընթացքը, և բոլոր կանխագուշակումները հաստատվում են այդ եղանակով: Արդ բոլոր լուսատուները նպատակամղում են՝ որպես հիմք ունենալով այն, ինչ նախանշել է տիեզերական մագնիսը: Ուստի այն, ինչ սահմանում է Մեր պատգամը, կարելի է վերագրել տիեզերական մագնիսի կողմից նախանշվածին: Իհարկե, լուսատուների ժամանակագրություններում հնարավոր էր գտնել Մեր ուղարկած ընտրյալների հաշվարկումը:

Մեր կողմից հաստատված երևույթը հաշվարկված է:

Եթե իմացությունը թույլ տար մարդկանց մուտք գործել բարձրագույն ոլորտներ, ապա հնարավոր կլիներ կարդալ ավարտման որոշումը: Բայց Տիրակալները պահպանում են այդ նվիրական որոշումները: Երբ վեր խոյանա մարդկային ոգին, այնժամ կընդարձակվի իմացությունը: Ուստի բարձրագույնը մատչելի է սոսկ բարձրագույնին:

316. Սակավ է ըմբռնվում մարդու կոչումը մոլորակի վրա: Տիեզերական էակի դրսևորումն, անշուշտ, պիտի նախորոշում ունենա, բայց մարդկությունն այնքան կուրորեն է ուղղվում դեպի իր նեղ հորիզոնը, որ ի վիճակի չէ ըմբռնելու իր տիեզերական կոչումը: Տիեզերքի ստեղծագործությունը կոչում է տալիս անգամ ամենաչնչին որդին: Տիեզերքում արարվող ամեն ինչ իր նպատակն ունի, և ինչպես գոյություն ունի մարդու հարաբերականությունը ստորակարգ էակների նկատմամբ, այնպես էլ գոյություն ունի բարձրագույն ոլորտների հարաբերականությունը: Տիեզերական մագնիսի ստեղծագործությունը նախորոշում է յուրաքանչյուր գործողություն ու դեր, որը վիճակված է խաղալու էակներին: Այդ իսկ պատճառով մարդկային ոլորտների կոչումը համագործակցությունն է: Մեծագույն Բանականությունը լարում է բոլոր տիեզերական ոլորտները, ուստի մարդու կոչման հիմքում դրված է համագործակցությունը և Անսահմանության գեղեցկությունը:

317. Բոլոր ոլորտների համագործակցության հիմքում հրե ստեղծագործությունն է: Ոլորտների հոսանքները փոխանցվում են տարածության կրակի միջոցով: Նրանք, ովքեր հաստատում են հրե ստեղծագործությունը, կարող են ասել, որ ծառայում են էվոլյուցիային, այդ պատճառով էլ լսողության կենտրոնները անմիջական կապ ունեն կրակի հետ: Նպատակաուղղված կենտրոնի յուրաքանչյուր դրսևորում պայծառալսություն է հանդես բերում, և իր հերթին՝ պայծառալսությունը առաջընթաց շարժում է հաղորդում մարդկությանը:

Տիրակալները կարիք են ունեցել ընկալունակ համագործակիցների և վկաների, ընդ որում՝ բոլոր կենսական դրսևորումները պիտի վկաներ ունենան. միայն այդպես կարելի է ճշմարտություն արարել: Այդ պատճառով էլ բոցեղեն Ագնի յոգը այդպես ձգտում է դրսևորելու կրակ՝ մարդկությանը օգնելու համար:

Ինչ խոսք, բոցեղեն կենտրոնների դրսևորումը ծառայում է մարդկությանը, ուստի Մենք ջանք չենք խնայում՝ պահպանելու Մեր Ուռուսվատիին. դժվարագույն հանձնարարություն է նա կատարում:

Մեզ համար դժվար էր գտնել անեղծ կրակի ընդունիչ: Կարելի է ուրախանալ, երբ այդքան լուսաճաճանչ է Տարայի հանձնարարությունը:

Կենդանի Էթիկայի Ուսմունք

1. Մորիայի պարտեզի տերևները: Կանչ	1924*
2. Մորիայի պարտեզի տերևները: Պայծառացում	1924–1925
3. Համայնք	1926

ԱԳՆԻ ՅՈԳԱ

4. Ագնի Յոգայի նշանները	1927–1929
5. Անսահմանություն, մաս 1-ին և 2-րդ	1930
6. Հիերարխիա	1930–1931
7. Սիրտ	1932
8. Հրեղեն աշխարհ, մաս 1-ին	1932–1933
9. Հրեղեն աշխարհ, մաս 2-րդ	1933–1934
10. Հրեղեն աշխարհ, մաս 3-րդ	1934–1935
11. ԱՈՒՄ	1936
12. Եղբայրություն	1937
Եղբայրություն, մաս 2-րդ: Վերերկրային՝ երեք գրքով:	1938

ԱԳՆԻ ՅՈԳԱ
ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

1930

Հրատարակչության տնօրեն՝	Է. Ս. Մկրտչյան
Գլխ. խմբագիր	Մ. Վ. Ծատուրյան
Թարգմանիչ՝	Մ. Վ. Ծատուրյան
Խմբագիր՝	Ն. Կ. Փարսադանյան
Սրբագրիչ՝	Լ. Բ. Միքայելյան
Համակարգչային ձևավորումը՝	Վ. Ա. Ասրինի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

I